



ՖՐԻԴՐԻԽ ՊԱՐՐՈՏ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ

FRIDRICH PARROT

REISE ZUM ARARAT

Übersetzung aus dem Deutschen von
ARA ARAKELJAN

JEREWAN
«NAIRI»
2006

ՅՐԻԴԻԻՆ ՊԱՐՐՈՏ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ

Գերմաներենից թարգմանությունը՝
ԱՐԱ ԱՐԱԷԼՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
«ՆԱԻՐԻ»
2006

Հրատարակված է
պետական պատվերով

Պարրոտ Ֆ.

Պ 366: Ծանապարհորդություն դեպի Արարատ / Թարգմ. գերմ.
Արա Առաքելյանի / Ֆ. Պարրոտ, Եր.: Նաիրի, 2006.-
188 էջ:

4703010100

Պ ----- 2006
705(01)2006

ԳՄՆ 84.4Գ

ISBN 5-550-01347-9

© «Նաիրի» հրատարակչություն, 2006

ԹԱՐԳԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Դորպատի համալսարանի ֆիզիկայի երեսնամյա-
յա պրոֆեսոր Չիրդիրյի Պարրոտը 1829 թվականի գար-
նանը մի խիզախ ձեռնարկում է ծրագրում ուղևորվել
Հայաստան և քարձրանալ բիրիական Արարատ լեռան
գագաթը: Մինչ այդ նա դեկավարել էր մի շարք արշա-
վախմբեր, եղել էր Ալպերում, Պիրենեյներում, Արիսում,
Կովկասում և այլուր: Այս ճանապարհորդությունը, սա-
կայն, առանձնահատուկ պիտի լիներ այն իմաստով, որ,
գիտական մի շարք հարցերի պատասխան տալուց բա-
ցի, պետք է պարզեր համայն աշխարհի բրիտոնյանե-
րին հետաքրքրող մի խնդիր. ի՞նչ է, արդյոք, Նոյի տա-
պանը Արարատ լեռան վրա:

Ծանապարհորդությունը, որ թեև ձգձգվում է ավելի,
քան ծրագրվել էր և ուղեկցվում այլևայլ վտանգներով ու
խոչընդոտներով, ի վերջո, պսակվում է հաջողությամբ:
Պարրոտի «Ծանապարհորդություն դեպի Արարատ»
գիրքն այդ ուղևորության արդյունքն է, մի գիրք, որն իր
լրջությամբ ու խորությամբ գիտական իսկական իրա-
դարձություն էր իր ժամանակին և է մինչև այսօր:

Դրանով, նախ՝ գիտնականների և լայն հասարա-
կության սեղանին է դրվում մի ուսումնասիրություն, որը
բնագիտական, պատմական և ազգագրական վիթխարի
և հիմնականում հավաստի տեղեկություններ է պարու-
նակում Անդրկովկասի մասին:

Կարևոր է և այն, որ գիրքը հրաշալիորեն է ներկա-
յացնում ոչ միայն Պարրոտ գիտնականին՝ բնագետին,
պատմաբանին, բժշկին, համբարանին ու ազգագրագե-
տին, այլև մարդուն, իր ժամանակի լուսավոր անուննե-
րից մեկին, որը Գյոթեի և Հումբոլդտի հոգեզավակն է, և

որի համար կարևոր են ու բանկ նաև քրիստոնեական մարդասիրության ու մշակույթի արժեքները:

Ի վերջո, պատասխան է տրվում նաև Արարատ լեռան աստվածաշնչյան առեղծվածին, որ՝ այո, Նոյի տապանը կարող էր իջած լինել այս լեռան վրա:

«Ճանապարհորդությունը» հատկապես բանկ է մեզ համար: Այն ոչ միայն մեծաբանակ ու արժեքավոր նյութ է պարունակում հայերի և Հայաստանի մասին, կարելի է չասել աշխարհի ուշադրությունը շրջելով Արարատի ստորոտին ասարող մեր ժողովրդի ու նրա պատմության վրա, որի կարիքն այնքան զգուս էր հայ մարդը և որը, իրոք, լուսավորության բերուն ծիլեր տվեց ամենուրեք, այև, ըստ էության, Խաչատուր Աբովյանի մասին պատմող առաջին ծավալուն փալեոգրաֆիոն է:

Գիրքը, երկու մեծածավալ հատորներով, առաջին անգամ հրատարակվել է 1834 թվականին Բեռլինում: Թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով: Սակայն, որքան էլ տարօրինակ է, այս գրքի ամբողջական և լիարժեք թարգմանություն մենք դեռ չունենք:

1835 թվականին գրքից մի նշանակալի հատված թարգմանեց Խաչատուր Աբովյանը, այն բեև կատարված է մեծ փարպեությունը, սակայն, լինելով գրաբար, հայ հասարակության համար մնում է, գրեթե, անձանոր:

1990 թվականին «Հայաստան» հրատարակչությունը լույս բնծայեց գրքի՝ «Դորպատից Արարատ» վերնագրով համառոտված տարբերակը:

Սույն հրատարակչությանը, կարծում եմ, մեր ուշացած և համեստ երախտագիտությունը կարող ենք բերել Ֆրիդրիխ Պարրոտի հիշատակին:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես հնում, այնպես էլ մեր օրերում, որ կարող են, արդարև, բնախուզության համար անենաօգտակար ժամանակները համարվել, երբ կառավարությունները հսկայական միջոցներ, իսկ գիտնականներն իրենց հանգիստն ու անգամ կյանքն են գոհաբերում գիտական արշավախմբեր կազմակերպելու համար, նման ձեռնարկումները, այդ թվում և սա, որի մասին խոսք է գնալու, ունեն իրենց արդարացումը: Սակայն այս անգամ, ի նպատակ այս ճանապարհորդության, մեր նկատառումներն ու նպատակներն առավել քան առանձնահատուկ ու տարբեր էին մյուսներից: Երբ դեպի լեռները կատարված սովորական շրջագայությունն անգամ օգուտ է բերում գիտությանը և բնությունը սիրող մարդուն պարզապես է բարձր հաճույք, երբ լերկ քարածայրը կամ փոքրիկ բլուրն իսկ, որ հեռու են ընկած մարդու ավերող ձեռքերից, իրենց մաքուր ու բնական տեսքով դիտողի սիրող ցնում են զմայլելի հույզերով, հետևաբար՝ ի՞նչ զգացումներն կարող էին ծնվել քրիստոնեյալի կրճքի տակ, երբ նա իր հայացքն ուղղեր Նոյյան սուրբ լեռանը, այն լեռանը, որն իր մեջ ամփոփում է մի փառավոր, քայց և մինչև օրս անհայտության բողոճ ծածկված բնաշխարհի ամբողջ գազվությունը՝ զուգորդված այն յուրահատուկ հետաքրքրության հետ, որ կա մարդկության պատմության այդ ամենահին և ամենամեծ հուշարձանի ու վկայի, մարդկային ցեղի փրկության համար Աստուծ անմիջական ձեռնարկումներից մեկի նկատմամբ:

Արդարացի կլիներ, որ այդ վեճն նպատակին հասնել անձնաթանակվորը և ոչ թե նա, ում բախտը կրեեր պատահական դիպվածով: Եվ այն մեծ դժվարությունները, որ անվայամաճորեն պետք է առաջանային դեպի Արարատ ճանապարհորդելիս, քանի դեռ նա մնում էր իբրև քրիստոնեական աշխարհը թշնամական երկրից բաժանող մի սահմանանշան,

շատ բնագետների ստիպում էին առայժմ ետ կանգնել իրենց նպատակներին, ինչպես և ինձ, երբ քսան տարի առաջ Կովկասում, Կազբեկ լեռան գագաթին փորորկայի, ձնաբեր անպեղ մի պահ ցրվեցին դեպի հարավ և հեռու-հեռավում հայացքիս առաջ բացվեց կլորանիստ, բարձր ու մենավոր մի ձյունե գմբեթ: Հավանաբար, Արարատի արծաթափայլ գագաթն էր:

Կնքվեց Թուրքմենչայի դաշնագիրը, քրիստոնեական տարածքներն ընդարձակվեցին մինչև Արաքսի այն փղը, և Արարատը Ռուսաստանի սահմանաճիղը դարձավ դեպի Պարսկաստանն ու Թուրքիան: Բայց լեռան հարավային և հյուսիսային լանջերին դեռ թափառում էին քուրդ ավազակախմբերը: Այսպես բռնկվեց պատերազմը Ռուսաստանի և Բարձր Դռան միջև: Ռուսական արծիվը ինձ անցավ Աբարատից այն կողմ, Բայազետի փաշայությունը շրջապատվեց, և անհնազանդ ավազակախմբերը բլվեցին հեռու: Հինն արդեն ժամանակն էր, որ հազուրդ տալիս դեպի Լյարդ թուղ մեր քնած երազներին և մի նպաստավոր պահի կշռադատելիք մեր անելիքներն ու միջոցներն այնպես, ինչպես որ պատշաճ էր այս ճանապարհորդությանը:

Տեղական պայմաններին անմանոթ լինելը և այն վախը, որ խաղաղությունը դեռ նոր է հաստատվել, իսկ գրավված երկրամասը կարող է նորից անցնել մուսուլմանների ձեռքը, և քրիստոնյա ճանապարհորդները պատերազմական իրադրության պատճառով ստիպված կլինեն վերադարձվել հետ, ինձ հուշում էին մեծ չափեր չտալ ձեռնարկման ծրագրին: Ես ուզում էի բավարարվել միայն անենաանհրաժեշտ բնագիտական սարքերով և ճանապարհի ընկնել սեփական ծախսով՝ ինձ հետ վերցնելով պարոն պրոֆեսոր ֆոն Էնգելսարդտի՝ աշակերտներից մեկին՝ պարոն Բեհագել ֆոն Ադելսլոդնին՝ որպես հանքաքարի և ծանրաչափի վրա ինձ աշխատակցի: քանզի այնքան մեծ ին նպատակիս հասնելու իմ ցանկությունը, որ պատրաստ էի մուլինակ 3500 վերստանոց՝ ճանապարհորդության համար անհրաժեշտ բոլոր գոհողություններն անել, միայն թե, որպես հավատացյալ քրիստոնյա և փորձառու ճանապարհորդ, կարողանայի տեսնել Սուրբ Լեռը: Մինչ այս, մինչ այն, մեր համալսարանից հայտնվեցին ևս երկուսը՝ բնագիտության ուսանողներ պարոնայք Յուլիուս Հեհնը և Կալո Շիմանը, որոնք ցանկություն հայտնեցին ուղեկցել ինձ. առաջինն առաջարկեց

իր ծառայությունը նյութեր ժողովելու բուսաբանության, երկրորդը՝ կենդանաբանության վերաբերյալ, ընդ որում՝ երկուսն էլ իրենց հնարավորության սահմաններում, մասնակցություն ունեցան ճանապարհածախսի համար գումար մուծելուն:

Վերջապես մեր ձեռնարկումը շատ նշանակալից չափով ընդլայնվեց պարոն պրոֆեսոր Ստրուվեի՝ շնորհիվ, որին մի շատ նպաստավոր առիթ էր ներկայացել օգտակար լինել աստղագիտությանը, ինչպես նաև երիտասարդ մի աստղագետի: Նա միջոցորդ եղավ իշխանությունների առաջ, որ փիլիսոփայության թեկնածու, նույն Ստրուվեի ջանքերով նաև աստղագիտական կրթություն ստացած պարոն Վասիլի Ֆյոդորովը թույլտվություն տաճան արշավախմբին մասնակցելու, և այդ նպատակով ոչ միայն աստղագիտական մի շարք կարևոր սարքեր հայթայթեց, այլև կարողացավ բավականին գումար ստանալ արքունի գանձարանից՝ ճանապարհածախսի իր մասը մուծելու համար: Դրանով հնարավորություն ունեցանք ինչպես տեղաբնի չափումներ կատարելու, այնպես էլ Արարատ լեռան բարձրությունը եռանկյունաչափական մեթոդներով որոշելու և ճոճանակային մի շարք փորձեր դնելու համար:

Այս ծրագրերի մասին կառավարության բարեհաճությամբ տեղյակ էր պահվել Նորին Գերագանցություն Կայսերական մեծությունը, որն էլ գոհունակությամբ հաստատել էր դրանք: Ինքը՝ Կայսերական մեծությունը, իր բարեհաճությունն արտահայտելով մեր ձեռնարկմանը, գրաստորներ քողել էր հետևյալ մակագրությունը. «Լիովին հաստատում եմ նախագիծը: Թող որևէ փորձված, հավատարմի Ֆելդեգեր ճանապարհորդներին ուղեկցի և ձառայի նրանց մինչև վերադարձ»: Միաժամանակ, պարոն Ֆյոդորովի համար հատկացվել էր 1600 ռուբլի արծաթ՝ որպես ճանապարհածախս և գործիքներ ձեռք բերելու գումար: Երկու առաջնակարգ աստղագիտական ժամացույցներ ձեռք բերվեցին ժողովրդական կրթության նախարար իշխան Լյևենի բարի հոգացողությամբ: Դրանցից մեկը գնեցինք Կայսերական ծովակալությունից, մյուսը Ս. Պետերբուրգի Գիտությունների Կայսերական Ակադեմիան տվեց փոխարինարար՝ ի նպաստ ճանապարհորդության: Իմ տրամադրության տակ էր դրվելու կայսերական ֆելդեգերներից մեկը՝ պարոն Շյուցը, որ մի ջանակ և վերին աստիճանի եռանդուն մարդ էր: Եվ այս անբող ձեռնարկման պաշտպանությունն ու

հովանավորությունը հանձնարարվելու էր Անդրկովկասյան գավառների գլխավոր հրամանատար, Երևանի կոմս պարոն Պասկևիչին:

Թե ինչպիսի հայրական հոգատարությամբ էինք շրջապատված մենք ամբողջ ճանապարհորդության ընթացքում, պարզ կդառնա իմ հետագա շարադրանքից, սակայն, առաջ ընկնելով, ինձ բույլ եմ տալիս հիշատակելու Նորին Կայսերական մեծության երախտագիտությունը մեր նկատմամբ՝ որպես փոխհատուցում մեր կատարածի: Ինձ պարզևատրեցին Մուրբ Աննայի երկրորդ կարգի շքանշանով: Թողողիտը, որը պարոն Ֆյոդորովը օգտագործել էր մեծ զգուշությամբ ու արդյունավետությամբ, նվիրեցին նրան: Ֆյոդորովը ստացավ մահ 300 ռուբլի արծաթ, որ մնացել էր մեր ձեռքին: Վերջապես խիզախության և եռանդի համար որպես նվեր ադամանդյա մի մատանի ստացավ մեր ֆելդեգերը:

Մեծ էր նաև իմ աշխատակից ընկերների մասնակցությունն այս ճանապարհորդության խրախուսմանը: Պրոֆեսորներ Քոն Էնգելհարդտը, Էշշուրը, Լեքեդուրը և Ստրովսեն եռանդորեն ձգտում էին նախապատրաստել իրենց սաներին մինչև մեկնելը, և մեր վերադարձից հետո էլ նրանց սիրահոժար օգնությունը շնորհարեց: Պարոն պրոֆեսոր Կրուզեն, այն հույսով, որ ինքը նույնպես հինավուրց աշխարհագրության համար իմ ճանապարհորդությունից մի որևէ օգուտ պետք է բաղի, ինձ հանձնեց այդ նպատակով անձամբ իր կողմից արված նկարագրություններն ու բարխեզներն այն տարածքների, որոնք տեսնելու միայն հավանական հույս ունեի ես:

Նույնպես լքված և քայքայված մարտիկներ էին կարծես նաև այն քանի որ հարյուր ռուբլուց ավելի մարտիկներ էին եղել հիվանդարանի մեր անկողնուստում: Երբ քայքայվելով ժամը չկարող էր հարյուր ռուբլուց ավելի մարտիկներ քայքայված թողնելուստում: Այն պահից, որքանով կարող էին լինել հիվանդարանի մեր անկողնուստում:

ԴՊՐԱՍԻՑ ԿՈՎԿԱՍ

Մենք Դորպատից⁴ դուրս եկանք 1829 թվականի մարտի 30-ին⁵, երեկոյան ժամը ութին: Մինչ այդ, քավական երկար ժամանակ գրադվեցինք ճանապարհորդության համար անհրաժեշտ բնակատեղան սարքեր նախապատրաստելով: Դրանք էին ամբողջական ճոճանակային սարքը, տասը դույնամանոց խտորման կողմնացույցը, նույն մեծության հակման կողմնացույցը, ճանապարհորդական երեք ծանրաշափերը և մի նուրբ կշեռք: Դրանք բոլորն էլ պատրաստվեցին մեր համալսարանի մեխանիկ Բրյուկների հմուտ ձեռքերով, շատ արժեքավոր էին ճշգրտության տեսակետից և բույլ էին տալիս եղած լավագույն սարքերը, որոնք սովորաբար նման ձեռնարկումների ժամանակ օգտագործվում էին ճանապարհորդների կողմից, ապահովության համար վերցնել մեզ հետ:

Դորպատից մեր մեկնումը շատ վշտացրեց ինձ և ավելի շատ ոչ թե առհասարակ ժամանակի, այլ բարենպաստ եղանակը ձեռքից բաց բողձելու պատճառով, քանի որ ես գիտի, և դա հաստատված էր փորձով, որ աշխարհագրական և տեղանքի դիրքով անսովոր այդ շուգ տարածքներում բնապատմական ուսումնասիրություններ կատարելու համար վաղ գարունը, անգամ փետրվար ամիսը, ոչ միայն աննանպատասվորը կարող են լինել, այլև միակ նպատակավոր եղանակը, որովհետև արդեն հունիս ամիսը սկսած՝ արևի կիզի ճառագայթների տակ, հողի և օդի խիստ չորության հետևանքով անբողջ քուսկանությունը կարծես սկսում է մեռնել, անտառներից ու ջրերից գոբլ տափարակները և լեռնալանջերը ծածկվում են չորացած խոտով: Դրանց արձանները, որ բարձրանում են միայն շատ հազվադեպ եկող անձրևներից, նվազ գործություն են ստանում, այդ պատճառով էլ կենդանական աշխարհը շուգից ու էրազայից ապաստան է գտնում, մի մասը՝ հողի մեջ, մի մասն էլ՝ Փոքր Ասիայի ու Կովկասյան լեռների գո-

վաշունչ անկյուններում: Հենց դրանից է նաև այս կողմերում մարդկանց կենսական ուժերի պակասը:

Սմոլենսկից Օրյոլ ճանապարհին մեր փոստային ձիերը պակասեցին, և դա ստիպեց մեզ ուղղությամբ վերցնել դեպի Մոսկվա, որպեսզի Վյազմայի մեծ ճանապարհով առաջ գնալու լավ հնարավորություններով և առանց խոչընդոտների Կուրսկի, Խարկովի ու Բախմուտի վրայով շարժվեինք հարավ դեպի Նոր Չերկասկ, ուր և բարեհաջող հասանք մայիսի 9-ին: Եվ այն, ինչը մեզ մինչև Սմոլենսկ հասնելը, թեև քիչ, բայց օգնում էր, այդտեղից սկսած՝ մեզ համար ամենամեծ խոչընդոտը դարձավ: Խոսքը ձմեռնավերջի մասին է: Եվրոպական Ռուսաստանի կենտրոնական շրջանում՝ Սմոլենսկի և Կալուգայի նահանգներում, որտեղ մենք գտնվում էինք, սկիզբ են առնում կայսրության մեծ ու քաղցնազան գետերը, ընդ որում՝ այս վայրերում, որ ծովի մակերևույթից բարձր են շուրջ 1000 ոտնաչափ, աղբյուրները դուրս են հորդում գրեթե ամեն կողմից: Այդ գետերը ձմռան և գարնան միջև տեղի ունեցող կլիմայական փոփոխությունների պատճառով ամբողջովին դուրս են գալիս իրենց հունից և փակում ողևորների ճանապարհը, եթե չհաշվենք միայն հենց նոր քաղցված մեծ մայրուղին: Եվ այդ կատաղի ջրերը հաղթահարելու, նրանց վրայով անցումը գլուխ բերելու համար գրեթե ամենուրեք անհրաժեշտ է ունենալ հատուկ պատրաստված լաստ կամ մեծ նավ, քացի այն, որ այդպիսի անցումները միշտ էլ կապված են ժամանակի կորստի, չարչարանքի և վտանգների հետ: Իսկ նա, ով հետը շատ իրեր ունի կամ, այսպես ասած, իր անձի վրա վստահ չէ, լավ կանի տարվա այդ եղանակին Կենտրոնական Ռուսաստանով ոչ մի ճանապարհորդություն չձեռնարկի, այլ սպասի գարնան վերջնական գալու, երբ գետանցները հեշտանում են:

Խարկովում ես ծանոթացա մի քանի դասախոսների և հասարակաբանական գիտնականների հետ, մեծ հաճությամբ այցելեցի բժշկական հաստատություններ, եղա ինչպես վիրաբուժական, այնպես էլ ծննդաբերական բաժանմունքներում, ունկնդրեցի բժշկագիտական գերագանց դասախոսություններ: Վերջապես ինձ և պարոն ֆոն Բեհագելի համար հաճելի ժամանց եղավ այցելությունը հարևան Նիկիտովկայի քարածխի հանքավայրերը, որոնք թեև քաղցածրիվ են, սակայն չնչին հզորություն ունեն:

Խարկովից սկսած՝ մեր ճանապարհն անցավ առանց նշանակալից դժվարությունների: Եղանակը մեծ մասամբ պարզ էր և հաճելի, և չոր խճուղով մենք առաջ էինք ընթանում ցանկալի արագությամբ: Այդ պատճառով էլ առաջին անգամ այստեղ էր, որ սկսեցի մտածել այն մասին, որ ես, իրոք, դեպի Արարատ լեռը տանող ճանապարհի վրա եմ, և այդ միտքը, առաջին անգամը լինելով, շատ եռանդ ու գործություն տվեց ինձ: Այդուհանդերձ, ես հույս ունեի տրամադրությանս տակ եղած ժամանակից մի քանի օր տրամադրել մեր ճանապարհից մի փոքրիկ, բայց շատ օգտակար շեղում կատարելու համար, որն ինձ պիտի տաներ Նովոդոնսկից դեպի արևելք՝ Կալմիկական տափաստանները, Մանիչ գետի հանելուկային ընթացքն ուսումնասիրելու, մի գետ, որի վերաբերյալ խնդիրները կապված Սև և Կասպից ծովերի համեմատական քարձորությունների հետ, արժեքավոր էին բոլոր առումներով: Եվ եթե ճշմարիտ է, որ այդ երկու ծովերի միջև մի ժամանակ կապ է գոյություն ունեցել, ուրեմն, հավանաբար, այդ տարածքները իրենց վրա դեռևս պետք է որ կրեին անցյալի պատմության նկատելի հետքեր և ցածրադիր լինելու հետևանքով՝ ամենայն հավանակալությամբ, մինչև վերջին ժամանակներս էլ ծածկված են եղել ջրով:

ԿԱՆՄԿԱԿԱՆ ՏԱՓԱՏԱՆՈՒՄ

Լայնատարած հարթավայրը, որ սկսվում է Նովոչերկասկից և Մամիչ գետի երկու կողմերով մինչև Կասպից ծովը հասնելով՝ անընդհատ ընդարձակվում է, բնակեցված է զանազան ազգություններով, բայց գլխավորապես՝ կալմիկներով: Սրանց արևմտյան հատվածը բացառապես բնակվում է Դոնի երկրամասի և Աստրախանի հասանդի միջև, իսկ արևելյան մասի տիրույթները կալմիկների հետ կիսում են տրոխմենները⁶, կարանդայները և քրիստոնյա հայերը, որ այս վայրերի մյուս բնակիչների նման ապրում են բաժառական կյանքով: Այս երկրի միջով ձգվում են նաև կապակապան փոստակայանների մեծ ու փոքր շարքերը, որոնք, Նովոչերկասկից սկսած, միմյանցից 20 վերստ հեռավորությամբ, անցնում են Մամիչի նախահարավային, ապա՝ հյուսիսային ափով և, ի վերջո, հասնելով Մամիչ մեծ լիճը՝ Աստրախանի սահմանների երկարությամբ քեփվում են հյուսիս: Փոստային իսկական հարմարություններ, իհարկե, այս կողմերում չկան: Փոստակայանից մինչև փոստակայան կամ կալմիկական մի գեղախմբից մինչև մյուսը կարելի է գնալ միայն ձիով: Այդ պատճառով էլ ես մեր երեք ուղեկիցներին սարքերի մեծ մասի և մնացյալ իրերի հետ մեր ուղեառյուղ Ստավրոպոլի վրայով ուղարկեցի Մոզդոկ, իսկ ինքս պարուն ֆոն Բեհագելի և ֆելդեգերի հետ ուղևորվեցի տափաստան:

Նովոչերկասկից, որը մենք բողոքեցինք մայիսի 10-ին, Մամիչ հասնելու համար պետք է անցնեինք Դոն գետը: Դոնը այդ օրերին, ինչպես որ նրա սովորությունն է, մոտ քսան ոտնաչափ բարձրացել էր և այնպես էր դուրս եկել ափերից, որ իր վտակների ու ճյուղերի հետ միասին տասից քսան վերստ լայնությամբ մի ծովակ էր դարձել՝ իր մեջ առնելով Մամիչի գետաբերանը:

Առաջին և իսկապես մարդավայելի ընդունելությունը գտանք Դոնի այն ափին, Պրոտոպոպսկայա խուտորում, իսկ երկրորդը՝ քսանհինգ վերստ այն կողմ, Մամիչի ափին, Բալաբին խուտորում, ծառայությունը բողած երկու սպաների կողմից: Այստեղից սկսեցինք հետևել Մամիչ գետի ընթացքին՝ մոտենալով նրան այնքան, որքան կարող էինք: Մենք առաջ էինք գնում անցնելով տափաստանով մեկ սիոված կալմիկական աուլներով, որտեղ, մեր ձեռքին եղած պատվիրագրերը ներկայացնելով, առանց առարկության ստանում էինք պահանջված քանակի թե՛ ձիեր և թե՛ ուղեկողներ: Ուղևորության ամբողջ ընթացքում չափումներ էինք անում Մամիչ գետի քերտրյան վերաբերյալ, այդ պատճառով ես ստիպված էի նշտապես իմ ընկերներից հեռու գտնվել տաք-քսան վերտի սահմաններում: Եվ մեզանից յուրաքանչյուրը, որոշակի մի ժամի հասնելով իր նշանակետին, նայում էր ծանրաչափը, և առաջ անցնում, որպեսզի հաջորդ նշանակետում նույնպես կրկնվեր այդ բոլորը: Մենք հույս ունեինք, որ մեր դիտարկումներն այդպես շարունակվելու էին մինչև Կասպից ծովը: Այդ օրերին մենք իրար կարողանում էինք տեսնել և հաջորդ օրվա անցնելիք ճանապարհի մասին խորհրդակցել միայն գիշերները: Այդ դիտարկումները մեր կարճ ուղևորության ինժնական նպատակն էին, այդ պատճառով էլ այդևս ժամանակ չէր մնում ուշադրություն դարձնելու այլ երևույթների վրա:

Կալմիկները վարում են բաժառական կյանք, և հենց այդ հանգամանքից են մեծապես կախված նրանց սովորությունները: Կալմիկներն այնքան ամուր են կապված իրենց բաժառական կյանքին, որ, ինչպես ինձ հավատացնում էին կալմիկի հոգևորականները, համաձայն իրենց կյանքի օրենքների, նրանք ոչ թե չեն ցանկանում ամուսնը խոտ հավաքել ձուռան սաստիկ սովից իրենց ձիերին ու անասունների հոտերը փրկելու համար, այլ որ այդ բանը նրանց կարող էր մոտեցնել ինչ-որ օտար ասպեղակերպի:

Կալմիկի բաժառական կյանքի համար անփոխարինելի միջոց է ծածկասայրը, տափաստանի շարժուն, թեթև, բայց և դիմացկուն ու ապահով տունը, որ սայլի արագություն ունի և կենց սայլի վրա էլ տեղավորված է՝ հարմարեցված ու կեսավորված երկու հոգու համար: Իմ չափած ծածկասայրերը մեծ

մասանք ունեին տասնյոթ ոտնաչափ կամ երեք սաժեն լայնությամբ, աղբաստեղծիքը ավելի փոքր էին, իսկ հարուստներինը, և, հատկապես, իբրև սրբատեղիներ օգտագործվող ժամկասայերը ավելի մեծ էին: Հարթ գետնի վրա գծում են կանոնավոր շրջանագիծ, դրա մեջ տեղավորում են ընդարձակ, բթամատի հաստությամբ ունեցող ոտենու ճյուղերով հյուսված և խաչուկները կաշվի բարակ թուկերով մկրատած և հանգուցած վանդակապատերն այնպես, որ դրանք կարելի է կենտրոնային իրար միացնել և հավաքել: Միացման տեղում կաշվում է քարակ տախտակներով երեսպատված երկփեղկ դուռը: Տանիքի կմախքը, որ ծագարի ձև ունի և պատրաստված է երկայնակի և շրջանաձև իրար միահյուսված ճառագայթանման ճյուղերից, գոտիներով կամ քեղերով ամրացվում է ուղղահայաց վանդակապատի վերին եզրին, որը վերևում ավարավում է բուրձանձև, մոտ երեք ոտնաչափ⁷ լայնությամբ ունեցող բացվածքով: Վերջինին ամբողջում է ամբողջականություն է հաղորդում փայտյա շրջանակը: Այս շրջանակի մեջ են ճառագայթաձև ագուցվում ճյուղերից յուրաքանչյուրը: Թերությունը ձգված մի քանի գոտիները ծածկել համար ծառայում են իբրև հենարան, հետո այդ ամենը տանիքն ու կողքի պատերը, պատվում են շտամձած թաղիքով, միաժամանակ, լավ ձգելով գոտիները՝ ուժեղացնում են դրանց ամբողջությունը: Թաղիքի մի կտոր հատկացվում է այն նպատակով, որ ցանկերայն իեսպրում նրանով հնարավոր լինի ծածկել կրոր բացվածքը: Իսկ դա անում են ոչ թե մինչև բացվածքը բարձրանալով, այլ թուկով թաղիքը հնտորեն նետելով բացվածքի վրա: Ըստ ժամկասայերում ես տեսա, որ քառակուսի թաղիքը բացվածքի վրա գցվում է մի երկար փայտի միջոցով, ընդ որում՝ ոչ ամբողջությամբ այն փակելու, այլ կիսով չափ՝ միայն քամոց ու անձրիկի պաշտպանվելու համար:

Հատակի մեջտեղում այն տեղն է, որտեղ կրակ են անում: Դա լույսի և ջերմության միակ աղբյուրն է այս բնակարաններում և միաժամանակ օջախ, որի վրա եփվում է ուտելիքը և թորվում օդի: Այս կենդանական օդին նրանք տասնում են կովի բքվեցրած կաթից, որը նաև նրանց հանապազօրյա ուտելիքն է, սովորական բորձան միջոցով պղնձի կաթախի մեջ, որն ունի ծածկոց և փողարկ: Թորում են ամեն օր և այնքան, որքան պահանջվում է: Դա կոչվում է Araca, և այն մուրր ու թունդ

դարձնելու համար թորում են երկու անգամ: Երկրորդ անգամ բորածին կամփկներն անվանում են Dan: Սա շատ թունդ և ջրի նման բափանցիկ, ոգելից խմիչք է: Բացի այդ, նրանք օգտագործում են կարագ, որ կոչվում է Kaimak, ծիու բքվեցրած կար կամ Tschigan, որ անունը խիստ զովացուցիչ է: Ուտում են նաև մակարոլված կաթ, որը թաղիք տանքի վրա ամուսը չորացնելուց հետո պահում են ձմռան համար՝ իբրև հացի պես շատ անհրաժեշտ ուտելիք:

Կամփկների թեյը գալիս է Չինաստանի հյուսիսային գավառներից՝ խոշոր, բթամատի հաստությամբ ունեցող, իրար ամուր կպցրած սալիկների ձևով, և բաղկացած է թեյատուցիկի հին տերևներից կամ էլ, որ շատ հավանական է, բոլորովին ուրիշ բույսերի տերևներից, որոնք, սակայն, խմելիս թեյի համ և տեսք են ունենում: Այդ սալիկներից կտրում են ուզած չափով, գցում են ջրի մեջ, եռացնում կրակի վրա, ավելացնում են մի քիչ կարագ կամ ճրագու, ինչպես և աղ, և հենց որ տերևները փափկում են, դրանք բափում են և ուտում այդ ապուրանման ուտելիքը կաթի հետ կամ առանց կաթի՝ ուշադրություն չդարձնելով կաթը թափում է, թե՛ թթված, քանի որ այն միշտ դրված է լիմուս տաք, ծխամած ծածկասայրերի մեջ, փայտե կեղտոտ տաշտակներով կամ բազաններով, և դրանցից կաթ խմողն էլ խմում է երբ ուզենա և ինչպե՞ր ուզենա: Այս ամենին ավելացնելով և միսը, հատկապես ոչխարի, որ ուտում են խաչած, խոքոված և տապակած, կարելի է մոտավորապես լրիվ պատկերացում կազմել կամփկների խոհանոցային կարիքների ու պահանջմունքների մասին: Հաջող, որ նրանք օգտագործում են իրենց կենցաղում, քանի փտկանակումներով և չնչին քանակով ձեռք են բերում ռուսներից: Երանց ամբողջ հոգան ու ցավը իրենց հոտերը բազանցնել է, դրա մեջ են նրանք տեսնում իրենց պահանջմունքների լիովին բավարարումը: Չանազան կենդանիների մազը նրանք օգտագործում են բարձեր, թաղիքե ծածկոցներ, ամուր պարաններ ու գործոքող պատրաստելու համար, մորթիներից պատրաստում են հագուստ և տանքի ծածկեր, կաշին, որ նրանք առանց դժվարության դարսղում են բքված կարով և կրով, օգտագործվում է ծածկասայրերի գանազակ կարիքների և հատկապես ծխաաթրեր պատրաստելու համար: Կաշվից պատրաստում են նաև փոքր, ճամփորդական ջրամաններ, որ կոչվում են Berba, միայն թե այդ նպատակի համար օգտագործվում է մամլած կաշի: Կարը օգտագոր-

ծում են կերակրի, օդու և դարաղելու համար, միըը սննդի համար, և, վերջապես, գոմարը՝ իբրև անփոխարինելի վառելանյութ:

Թեև ամռանը հոտերը տափաստանում առատ ուտելիք ունեն, բայց ձմռանը ստիպված են կեր հայրաքյել՝ որն ինչպես կարող է: Այդ պատճառով էլ կալմիկները, ընդհանուր առմամբ, շատ պարսպ օրեր են անցկացնում, և ամռանն ու ձմռանը արոտավայրերը փոխելը այն միակ իրողարձուրթյունն է, որ կատարվում է նրանց միապաղաղ կյանքում:

Գավառների առումով կալմիկներն ընդունում են բուդդայական կրոնը, բայց սխալ կլիմի կարծել, թե Մամուլի գետի ավազանի կալմիկների շրջանում առհասարակ լայն տարածում ունեն այդ դավաանների օրենքները: Ինչպե՞ս կարող էին նրանք այդ օրենքների մասին հստակ և իմննավոր պատկերացումներ ունենալ, երբ կրոնական ոչ մի դաստիարակություն չէին ստանում, եթե չհաշվենք միայն կիրակի օրերին անփոփոխ ձևով կրկնվող ժամերգության ծեսերը և մեկ էլ այն, որ տոնակատարությունների ժամանակ ներկա էին լինում նույն ժամերգություններին և անգիր աղոթքներ ու ընթերցանություն լսում սուրբ գրքերից մի լեզվով, որ նրանք չէին հասկանում, տեսնում էին ծխական արարողություններ, որոնք հավատացյալների համար նույն արժեքն ունեին, ինչ որ անհավատների: Քահանաներ և ժամերգության համար անհրաժեշտ հարմարություններ ոչ բոլոր խառնուցներում կան, այսպես են կոչվում ծածկասայրերից բաղկացած թափառող գյուղերը: Ժամերգության տեղերը, որ կոչվում են մենաստաններ, ցրված են այստեղ ու այնտեղ: Դրանք հեռվից էլ անզամ ճանաչելի են ուղևորի համար: Տափարակ դաշտի մեջ գտնվող խառուցի մեջտեղում տասը կամ տասներկու խոշոր և մաքուր ծածկասայրեր բլրաձև շրջան են կազմում, որտեղ ոչ մարդիկ կարող են երևալ իրենց առտնին գործերով և ոչ էլ անասուններ՝ արածելու համար: Այդպիսի մենաստաններից մեկում պատերից կախված էին դիվային կերպարանքներ ունեցող պատվածքայունների պատկերներ: Այդտեղ մեծ ակնածանքով պահպանվում էր մի սրբապատկեր, որ ձուլված էր պղնձից և նրանց գլխավոր աստվածն էր: Այն ավելի շատ մտան էր կնոջ: Այդպիսին էին մյուս նկարները, որ պատկերում էին չորս կամ վեցձեռնակ արարածներ և այլ զարմանահարալ աններբերություններ: Սնդուկների մեջ դրված էին սուրբ գրվածքներ, որ, հավանաբար, ու-

դարկվել էին Մոնղոլիայից կամ Տիբեթից և հասկանալի էին միմյանց հավատացյալների, ավագ քահանային կամ լավային, բայց գուցե, լավագույն դեպքում, միայն ընթերցելի: Ժամերգությունը, որին ներկա գտնվելու հաճույքն ունեցա, դատելով այդ օրվա փորձից, այնքան էլ հանդիսավոր չէր: Կալմիկներն այն հանդուժանքն ունեն, որ իրենց լաման և քահանաները, որպես օրենք, աղոթում են ողջ կալմիկ ժողովրդի համար, և, ինչպես պահանջում է կրոնական պարտքը, այլ քան չեն անում, բան օր ու գիշեր իրենց չարչարելով կարճ աղոթքներ են սերտում: Դրանք ամեն մի կարևոր գործի ժամանակ, իբրև կախարդական խոսք, արտասանում են կալմիկները՝ առանց նույնիսկ գաղափար ունենալու դրանց մասին:

ՄԱՆԻՉԻՑ ԹԻՖԼԻՍ

Մեր հետագա ճանապարհորդությունն ընթացավ Մանիչ մեծ լճի հյուսիսային կամ աջ ափի երկայնքով: Մանիչ մեծ լիճն ասելով՝ պետք է հասկանալ նույն Մանիչ գետը իր լայնացման տեղում, որտեղ նրա երկարությունը, անկասկած, մի հիսուն վերստ կլինի և գտնվում է Սև և Կասպից ծովերի համարյա մեջտեղում: Այս լայնացման տեղից դեպի արևմուտք, գետի հյուսիսային ափին տարածված են բազմաթիվ մանր ու մեծ աղի լճեր, որոնցից ամենամեծը կոչվում է Գրոզգոնե և քարտեզների վրա, հավանաբար, նշված է Նոր աղի լիճ անունով: Այս յոթ վերստ երկարություն և մեկ վերստ լայնություն ունի: Այս լճերը կապված են իրար հետ և շուգ ամիսներին, այսինքն՝ մայիսից մինչև օգոստոսի վերջը, ծածկվում են մեկ դույն հաստությամբ աղի շերտով, որ քիչերով լցնելով՝ նավակները՝ տեղի բնակիչները հաճում, կուտակում են ափին և մինչև տուն տեղափոխելը՝ լավ ծածկում են երեզներով: Այս գործով զբաղվում են մասնավոր վարձակալները, որոնք, տասանոց վճարելով, դրա իրավունքը ձեռք են բերում Գոնի իշխանություններից: Այս լճերն ինձ համար հետաքրքիր էին նրանով, որ շատ համոզիչ կերպով ապացուցում էին հետևյալը. ամառն ուժեղ ջերմության շնորհիվ առաջացող գոլորշացումը և դրա հետևանքով ջրի գերհագեցումը աղով վերջինիս արագ բյուրեղացման հետևանքն է: Այս լճերն այնքան ծանձաղ են, որ փոքրիկ նավերը, որոնց մեջ բանվորները աղ են հավաքում, անընդիստ քավում են լճի հատակին և իրենց հետևից երկար ժամանակ տեսանելի ակոսներ են թողնում, հետևապես նման լճերը ներկայանում են իբրև վիթխարի մակերևույթի ունեցող թավաներ, որոնց մեջ աղաջուրը, տարանախու հետևանքով, կարողանում է շատ հեշտությամբ ընդունել խտացման պահանջող ատոիճանը: Դրան հակառակ, ցուրտ և անձրևային ամառը ջրի ավելորդ քանակության պատճառով աղի բյուրեղացումը կատարվում է

միայն չնչին չափով կամ էլ առհասարակ դադարում է: Երկարածիզ Մանիչ լճի արևելյան ափին հասնելով՝ մենք, փաստորեն, կտրեցինք՝ անցանք Սև և Կասպից ծովերի արանքում ընկած տարածքները: Բայց, այդտեղից սկսած, արդեն առաջ գնալ հնարավոր չէր, քանի որ Գոնի երկրամասի ասիմանը և դրա հետ էլ կազակական պահակակետերի անվերջանալի շարքերը թեքվում էին դեպի հյուսիս: Ես խուսափեցի կարանդ գայներով և ավագակ տրուխներներով բնակեցված երկրամասերով անցնելուց, քեև Աստրախանի իշխանություններից կարող էի հուսալի պահակախումբ խնդրել:

Գիտակապ մի առանձնի՜ք հողվածում ես շարադրել եմ այն հիմնական դրույթները, որոնցից հավանական է դառնում, որ Սև և Կասպից ծովերը մի ժամանակ միասնական են եղել, սակայն հետագայում ետ են քաշվել՝ իրենց հետևից թողնելով ցածրադիր մի հարթավայր, որը հիմա էլ դեռ, իբրև մնացորդ այդ միասնության, ջրային մի բաց երակով՝ Մանիչով, համարյա կապված է երկու ծովերին: Մի քանի անգամ, երբ մեր կամիկական ձիերով բաց երկնքի սակ կտրելի՝ անցել ենք այդ անընդգրկելի հարթավայրը, իմ հոգու մեջ ծնվել է այն վիթխարի ծովի պատկերը, որ ժամանակներ առաջ այնպես լավ է այդ հողի վրա: Սակայն հազարամյակներ առաջ գոյություն ունեցած այդ միասնականության գաղափարը առավել չափով համակեց ինձ, երբ ուղևորության ավարտին մեր ձիերը շրջեցինք դեպի աջ և ստանք Մանիչ գետն այն տեղում, որտեղ նա բաժանվում է երկու մասի: Այստեղ նա երկու ոտնաչափից ավելի խորը չէ և հոսում է մեծ ու փոքր լճերի, այս անգամ նաև բազմաթիվ ճախիճների ու կավախողի միջով, քանի որ մայրտղ օրը տեղատարափ անձրև էր եկել: Դա մի խոսուն ապացույց էր անցած ժամանակների և կարևոր փաստ՝ խոսելու համար մեր երկրագնդի վրա տեղի ունեցած փոփոխությունների և դրանց հետ կապված՝ նրա բնակիչների մտքերի ու զգացմունքների բարեշքյունների մասին:

Գաղարած անձրևից հետո և մարդկային բնակատեղից հեռու, մենք մի փոսոր գիշեր անցկացրինք Մանիչի ափին՝ բաց երկնքի տակ: Շատ ուրախություն ու զարմանք պատճառեց մեզ այն, որ ճաշից գետի այն ափին առյուծի մի ամբողջ խումբ տեսանք՝ 150 ռուս սայլապաններով, որ Աստրախանից օդի էին տանում Ստավրոպոլ: Սայլերն ընթանում էին կանոնավոր

շարքով՝ մեկը մյուսի հետևից շարված: Պատերազմական իրադրությանը վախել այս կարգապահությունը պատահական չէր: Այդ մարդիկ, իրոք, բշնամական հարձակման էին սպասում, քանի որ մեզ հանդիպելուց մի քանի ժամ առաջ, հազիվ հասած լինելով Մանիչի հովտին, զինված մարդիկ քարավանից խել էին տաար գոյգ եզ: Սա լավ խրատ էր մեզ համար, և մենք հասկացանք, որ չափից դուրս համարձակություն և կուռույթուն կլինեն մեր կողմից մեզ և մեր գործի հաջողությունը նման մարդկանց ձեռքը մատնելը: Այնպես որ, հաջորդ գիշերը, երբ տրոխմենների սուլներից մեկում ընդունելության փոխարեն բշնամանք և կասկածելի ինչ-որ բան նկատեցինք, ավելի հարմար գտանք մի քանի վերստ հեռանալ օտար սայլերից և գիշերել խտտավետ տափաստանում:

Միայն քարարական առկերից մեկում, ուր իջանեցինք, բշնամանքի փոխարեն քարեխանայան ընդունելություն գտանք, հետո էլ լավ ճանապարհեցինք: Ռուսական առաջին գյուղը, ուր մենք մտանք, կոչվում էր Պետրովկա⁵: Սա տեղավորված էր Ապլաուս գետի ափին, լեռների արանքում: Դոնակայա Բակա գյուղում (Բակա՝ ռուսերեն նշանակում է նեղ հովիտ) ծառերն արդեն կանաչել էին, շուրջըրըր գեղեցիկ բնություն էր և երկար սպասված լեռնային կազորիչի օդ: Մոտերքում նաև մի գեղեցիկ, աղի լիճ կար, որի ջուրն օգուտագործում էին: Վաղ առավոտյան մենք բողեցինք այս վայրերը, և շուտով՝ վաղորդյալ արևի թույլ շողերի տակ, իր ամբողջ մեծությամբ ու շուրջը, գազաբից մինչև համարյա ստորոտը մեզ երևաց հրաշափառ էլբրուսը՝ Կովկասյան լեռնաշխարհի բարձրաբերձ իշխանը: Մի պահ մոռացվեց տափաստանային միօրինակ, տաղտուկ կյանքը, և լեռներն արբնացրին մեզ: Փոստային հարմարություններ չավագան, ճանապարհներին մեզ այլևս վտանգներ չկային, և մեր ֆելդեգեբը բավականին աշխուժացավ: Եվ, իրոք, մի երեք քառորդ ժամում, առանց արտակարգ ջանքերի, մենք անցանք քսաներեք վերստ:

Մոզրկում ողջ և առողջ գտնելով մեր ուղեկիցների՝ մենք նորից միացանք և ուղևորվեցինք Կովկասյան լեռների կողմը, դրոնք արդեն մի քանի տարի է, ինչ ոչ թե Մոզրկից, ինչպես նախկինում, այլ Եկատերինոգրադից սկսած պահպանվում էին հետևակ զինվորների մի փոքրիկ, բայց շատ անհրաժեշտ պահակախմբի կողմից: Առավելագույն անվտանգության ա-

պահովության համար՝ մեզ տրամադրվելու էր նաև 15-20 տղամարդուց բաղկացած մի ցուկա (հենց այդքան էլ ստացանք), բայց դա նաև ժամանակի առավելագույն կորուստ էր Եկատերինոգրադից՝ Վլադիկավկազ հասնելու համար: Ռուս գյուղացիներից, խաղաղ չերբեզներից և կայազորների սպաներից միշտ կարելի էր էժան գնով ձի վարձել: Դա կազմում էր 105 վերստ, և մենք յուրաքանչյուր ձիու համար վճարում էինք տասը ռուբլի: Ճանապարհը մեզ աննկատ հասցրեց մի բարձր տափարակի, որ բաժանված էր Ուրուխ, Բելայա և Արդոն արգրեքազ գետերով, իսկ Եկատերինոգրադից Վլադիկավկազ տանող ճանապարհի կեսին, Բելայա և Ուրուխ գետերի արանքում, նաև Կովկասյան լեռնաշղթային զուգահեռ ձգվող մի բարձր լեռնաբազուկով: Դա մեզ համար բարձրավանդակներ էլնելու մի գեղեցիկ նախափորձանք էր, մի բան, որ ճանապարհորդներին անխուսափելիորեն սպասում է լեռներից:

Վլադիկավկազը, ինչպես որ հնում, այնպես էլ հիժա, ամենակարևոր և անփոխարինելի ռազմական կայանն է, ուր շտապում են ամենքի՝ փախչելով կարակաբարդիների և չերբեզների հետապնդումներից: Երբ երկու սայլերն էլ միանգամայն շարքից դուրս էին եկել և քեռ կլինեին մեզ համար լեռնանցի ժամանակ, այդ պատճառով էլ դրանք թողեցինք Վլադիկավկազում, և քանի որ ճանապարհորդներն առանց այդ էլ օգտվում էինք կազակական ձիերից՝ յուրաքանչյուր վերստի համար մի պղծնադրամ վճարելով, ուստի ավելի արագ առաջ գնալու և մեր իրերը տեղափոխելու համար վարձեցինք ռուսական երեք սայլ, ու շատ հարձակ էին: Դրանք թեև չունեն փափուկ նստատեղիներ, բայց դրա փոխարեն շատ դիմացկուն են և ճանապարհորդներից թիչ հոգսեր են պատճառում: Դրանց լծող յուրաքանչյուր ձիու համար մինչև Թիֆլիս (190 վերստ) մենք վճարեցինք 45 ռուբլի՝ պարտավորվելով վճարել նաև այն օգնության համար, որի կարիքը պիտի ունենայինք Խաչխապն անցնելիս: Դա մենք վճարեցինք Քոբիում, այդ սարի ստորոտում: Վլադիկավկազից մինչև Քոբի 70 վերստ է՞: Ով այս ճանապարհով մի անգամ անցել է, չի կարող մոռանալ այն սքանչելի տպավորությունը, որ իրենց բազմազան գեղեցկություններով Դարյալի ու Լաքարի մոտ բողոնում են այս ու այնտեղ թարձրացող քարաժայռերը, նրանց վրա աներկյուղ կա-

ռուցված գյուղերն ու ավազակաց բերդերը, ցրտաշունչ լեռնանցներն ու դեպի Թեբեք գահավիժող ժայռաբեկորները, որ ամպրոպի որոտումունք են արձակում, Կարգեխի ու Քոբիի միջև աննկատ բարձրացող լեռնառձկանները՝ իրենց վրա փոփած վրացական և օսեթական բազմաթիվ գյուղերով, և ապա վեհուրեն բարձրացող Կարգեխի գագաթը: Գորիից կարելի է երկու ժամում հասնել Խաչխարի կատարը, որտեղից ճանապարհը փոքր-ինչ բարձրանալով ժամում է դեպի Գուշ լեռը: Այստեղից էլ՝ Կեչաուրիից, երեք ժամում կարելի է հասնել հարավային լանջին տեղավորված ռազմական առաջին կայանը: Առհասարակ, այս ճանապարհը հաշվում են 16 վերստ: Նրա ամենաբարձր գագաթը՝ Գուշ լեռը, ծովի մակերևույթից 7534 փարիզյան ոտնաչափ բարձրություն ունի (2446 մ), այսինքն՝ հավասար է ս. Բեռնար մեծ լեռան բարձրությանը: Այդ նույն Խաչխարի վրա, որտեղ մի բարձր թարև իսաչ է կանգնեցված ի պատիվ գեներալ Երմոլովի, ճանապարհը բարձրանում է մինչև 7425 ոտնաչափ (2412 մ): Խաչը երեսուն ոտնաչափ բարձրություն ունի: Ով որ ամռանը Քոբիից գնում է Խաչխար, չպետք է մոռանա այս կողմերում փնտրել հանքային աղբյուրը, որ ընկած է Քոբիից 4-5 վերստ հեռավորության վրա, այն տեղում, ուր Տեարի-Իժկայի գետի աջ ափը շատ բեր, համարյա զառիթափի նման իջնում է ցած: Ներքևում, գետի ջրերին անմիջապես մոտիկ, կրաքարե ժայռի ճեղքից բխում է աղբյուրը: Նրա ջուրը հարուստ է ծծմբով, ամխաթթուներով և հրաշալի համ ունի: Ամռանը ջրի ջերմաստիճանը 5,4 աստիճան է, իսկ ձմռանը՝ 4,6:

Կովկասյան լեռների հարավային լանջերը, որտեղից ճանապարհը մտնում է Արագլիի հովիտ, տաք են, հարուստ փարթամ ծառատեսակներով, լավ մշակված ու բնակեցված են և ի հիմանի շինությունների, մասամբ եկեղեցիների, մասամբ էլ աշտարակավոր և պարսպապատ լեռնային վայելչատես սանրցների մնացորդներով, որ ակամա ջերմ փափագ են արթնացնում՝ իմանալու նրանց ծագումը, ճանաչելու նրանց կառուցողներին: Որքան որ բույլ էին տալիս պայմանները, կապված ժամանակի սղոթյան հետ, ես խախտառու էի ավելի շատ բան ուսումնասիրել, նկատել, փնտրել հին ժամանակների մասին պատմող նյութեր, այսինքն՝ հին գրեթե կամ էլ բնորոշ զար-

դանմուշներ: Սակայն այդպիսի նյութեր ոչ մի տեղ չգտա: Դա ինձ ստիպեց ենթադրել, որ ես, հավանաբար, հին ժամանակների հուշարձաններ գտնելու համար ղեռնա բավարար կարողություններ չունեմ: Դրա համար անհրաժեշտ են նախնական պարապմունքներ և ուսումնասիրություններ, որոնք կարող էին սրել իմ տեսողությունը, հնարարի մասին ճշգրիտ գիտելիքներ, պատկերացում այդ երկրի լեզվի մասին, ինչպես նաև երկար տարիների ծանոթություն տեղի բնակիչների հետ¹⁰:

ԹՖՆԼԻՍՈՒՄ

Հունիսի 5-ի լույս 6-ի գիշերը մեր փոքրիկ քարավանը մտավ Անդրկովկասյան գավառների մայրաքաղաք Թիֆլիս¹¹։ Այդ անունը ծագում է վրացերեն Թրփիլ բառից, որ նշանակում է տաք, և հավանաբար կապվում է քաղաքում գոյություն ունեցող տաք աղբյուրների կամ էլ վրաց թագավորների նախնին նատավայր Մցխեթ քաղաքի համեմատությամբ ավելի տաք կլիմա ունենալու հետ։ Մցխեթը տեղադրված է Կովկասյան լեռների լանջին և ավելի ստանաօդ է։ Թիֆլիսը կառուցվել է արձանիստ է դարձել մեր բվարկությունից առաջ 455 թվականին, Վախթանգ 10-րդ Գորգասալ թագավորի օրոք։

Մեր կողմերում, առհասարակ, մի առանձնահատուկ և մշտական հետաքրքրություն են առաջացնում Թիֆլիսի մասին լսելն ու այնտեղ լինելը՝ առանց հաշվի առնելու տեղի հեռավորությունը, ոչ էլ, մանավանդ, մնամ հետաքրքրության պատճառով։ Եվ շատ զարմանալի է, որ երբ Թիֆլիսում այդ քաղաքի մասին անբավականության խոսքեր ես ասում դրանք եկածներին, նրանք անհասկանալիորեն լռում են, հավանաբար, վախենալով խրտուեցնել այն օտարականներին, որ եկել են այս կողմերը բախտ ու երջանկություն որոնելու։

Թիֆլիսը, իր աշխարհագրական դիրքի և տեղանքի շնորհիվ, անշուշտ, կարող էր դառնալ աշխարհի ամենահարպուրիչ վայրերից մեկը, եթե միայն նրան շրջապատող բլուրները, որ շատ հարմար են ծառայատան համար, այդքան կանաչագուրկ ու մերկ չլինեին և այդ պատճառով էլ՝ գրկված բարեբար աղբյուրներից ու գետակներից։ Դախաբանայի առկից բացի, որ գալիս է արևադարձային հովիտներից և տաք աղբյուրների միջով անցնելով՝ լցվում է Հուրը, մի փոքրիկ առու էլ ցած է իջնում Նարիկլալայից (բառացի՝ Զարե բլուր)։ Այդ բնական առկից քաղաքի այգիներին կարգուկանոնով, մշտապես ջուր հասցնելու նպատակով քաղաքի ոստիկանությունը ջուրը բաց է թող-

նում ժամաչափով։ Մի խոսքով, քաղաքը շրջապատող բլուրները նպաստում են, որ զոգավորությունների վրա կենտրոնանա արևի ջերմությունը, բացի այն, որ Կովկասյան լեռների հարթավային լանջերն էլ իրենց հերթին են անդրադարձնում ջերմություն և կասեցնում հյուսիսից և հյուսիս-արևելքից փչող սառը քամիները։ Սնա սա է պատճառը հեղձուցիչ այն շոգի, որ կարծես չիկացած վառարանից փչում է մարդկանց դեմքին և, ամենայն հավանականությամբ, ծծում մաղձախտ իիվանդությունը, որ հանդիպում է Հայաստանի և Վրաստանի շոգ շրջաններում։ Վրացիների մայրնավոր բարեմասնությունները նույնպես, աղբյուր, կարծանանային եվրոպացիների ուշադրությանը և եռանդորեն դեպի այս կողմերը կձգեին մարդկանց, եթե նրանց արտաքին կեցվածքին համապատասխան լինեք մերքին, հոգևոր կյանքը։ Վրացի տղամարդիկ ամենուրեք ուշադրություն կցրվանեին, եթե իրենց մայրնավոր ութին և կանքի գոլությունը միացնեին մահ միտքը՝ օգտակար աշխատանքների և սերը՝ հոգևոր առաջադիմության հանդեպ։ Եվ վրացի կանայք, անշուշտ, կանացի գեղեցկության ամենարժր գնահատանքին կարծանանային, եթե միայն բնությունից իրենց դեմքին շնորհված բարեմասնությունները չափից շատ սնվուրելով և առողջությունն էլ անհարմար զգեստներով ու անհոգ փաթեմություններ ժամանակից շուտ չկորցնեին։ Արդյունաբերական գործունեության և կենցաղի բարեշրջմանն ուղղված միտքը նույնպես այստեղ ամենուրեք բացակայում է։ Իր հեռավոր պատմությամբ և արևելյան իմաստություններով Թիֆլիսը կարող էր հույժ ցանկալի լինել եվրոպացիներին, եթե այն, ինչը երևու հազար տարի շարունակ պարսիկներին, թուրքերին և կովկասյան վայրի ցեղերին անքիվ զոհեր տալով և մեծ ջանքերի գնով չի ցանկացել կորցնել վրացին, ինչը չկարողացան ոչնչացնել ո՛չ կիսալուսինը, ո՛չ էլ հեթանոսները, այսինքն՝ նրա ազգային բնավորությունը այսօր հանկարծ չկորցնի օտարների հետ խաղաղ, բարեխառնական հարաբերություններում։ Օտարների՝ Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի օրհանկին չհետևելու, ներկա օրերի պահանջը հաշվի չառնելու հետևանքով վրացին այսօր դեռ շատ անկատար հողագործություն ունի, քիչ արդյունք են տալիս դաշտավարությունը, գինեգործությունը, այգեգործությունը։ Ջրաղացաչինությունն այնքան հետ է, որ նուրբ այլուրն իրենց մոտ ստանալու փո-

խարեն բերում են Ռուսաստանից: Նա իր հին սայլն այդպես էլ պահում է անգարդ ու կոպիտ, ինչպես որ կար ոսկե դարում: Վրացին ամբողջովին խուզում է իր գլխի մագերը և այդ պատճառով էլ այրող արևից քաջաշուպակվելու համար կրում է ոչխարենի մեծ փափախ, բայց դա շատ է խանգարում գինի խմելուն, քանի որ արյունն անընդհատ դեպի գլուխն է մղվում: Ամեն օր քիֆիացին գնում է շոգ բաղնիք, որը շատ կեղտոտ է պահվում, և իր մարմինը ժամերով հանձնում է շոգու տաք ու բմբեցնող ազդեցությանը: Այս ամենը ազգային սովորությունն է և գալիս է հնուց: Սակայն որտեղից է այն ամառ փողկապը, որ իր արևելյան հանդերձների հետ կրում է քիֆիացան վաճառականը: Կամ ինչո՞ւ է հաճոյանով վրացուհին սովորական կանացի բողի փոխարեն արդեն ֆրանսիական գլխաշոր կրում: Ի՞նչ է ապավում քիֆիացան տներին հարմարավետ, հողի տափակ տանիքներին, որոնց վրա խոտ է բուսում: Թիֆլիսը պարտական է որանց նրանով, որ չգիտի՝ ինչ բան է հողեղը, քեւ այստեղ էլ սաստիկ ամպրոպներ են լինում, և ամեն տարի ուժեղ շոգից կտուրների չորացած խոտերը կրակի բաժին են դառնում: Ինչո՞ւ արևելյան այս կտուրներին, որ այդպես հարմար են տեղանքին և հաճելի տեսք ունեն, աստիճանաբար փոխարինում են հյուսիսի այդուսապատ, քեք տանիքները: Այդպես էլ վրացին, ժամանակակից քաղաքակրթության ազդեցության տակ, մի օր ողբալու է վրացական ողջ բարբերի մայրամուտը:

Վրացիները շատ վաղ են ընդունել բրիտանությունը, ըստ պատմական տեղեկությունների՝ դեռևս չորրորդ դարում, բայց նրանք դրանից չկարողացան ստեղծել մի ուժ, որ մաքրագործեր ժողովրդին և փոխեր նրա կյանքը, քանզի դարձի գալուց մինչև մեր օրերը վրացիների ինչպես քաղաքական, այնպես էլ քաղաքացիական կյանքը եղել է լոկ պատրիզ պատերազմների մի անվերջանալի շղթա, և նրանց ավերությունը, հաճախ ներքին գժտություններից տապալված, բայց և շուտով էլ վերականգնված, մատուցել է հունական կայսրերի, արաբների, Չինգիզ Խանի, Թամարյանի, բյուրքերի ու պարսիկների գորբերի հարվածներին: Նման կացությունից հոգնած՝ Վրաստանն իրեն նետեց Ռուսաստանի գիրկը և նրանից ստացավ երազած խաղաղությունը: Վրաստանում, որտեղ ոչ գրել է ոչ էլ կարգով գիտեն, մինչև հիմա եղած կամ նոր արդյունագործական ճյու-

ղերի ստեղծման ամեն մի փորձ հազարավոր խոչընդոտների է հանդիպում կամ ձախողվում է շտապելուց, քանի որ յուրաքանչյուր ոք իր սկսած գործը ցանկանում է անձամբ տեսնել փայլուն հաջողությանը պատկան: Վրաստանն իր մեջ եռացող, քառասյին ուժերի և կայսրության կողմից իր ծառայողներին արտոնություններ տալու շնորհիվ Ռուսաստանից և մյուս վայրերից շատ մարդկանց է հրապարտում, բայց նրանք բոլորն էլ՝ պետական խորհրդակցանից մինչև հասարակ զինվորները, մի քանի շաբաթ շանցած, արդեն այնպես են կարոտում իրենց հայրենիքը, ասես կարոտում են կորսյալ դրախտը:

Անդրկովկասյան գավառների կառավարի կոմս Յոհան Պասկևիչ Երևանցին, որին Նորին Մեծության կողմից հանձնարարված եր ընդունել մեզ և պաշտպանության տակ առնել, մեր ժամանակն օրը Թիֆլիսում էր: Նրա ներկայությունը բյուրքերի դեմ, բաց դաշտում շատ բան էր վճռել: Իր առջև ունենալով եռակի անգամ ուժեղ բշմամուն՝ նա սովորականի նման վտահել էր իր զինվորների քաջությունը և հմտորեն տեղաբաշխելով ուժերը, իրաք հաջողոր կարուկ հարվածներով, մոտ չորս շաբաթում գրավել էր Ախալցխան, հարթել էր Տրսպիգոնի փաշայի Քեղդիչի մոտ, սանձել էր Արաքսի ափի քրդերին և այլ մեծամեծ քաջագործություններ էր կատարել, ուրոնց շնորհիվ շուտով Էրարունը և նրա հետ նաև ամբողջ Անատոլիայի բանալիներն իր ձեռքն էր վերցրել:

Մեր ժամանակն մասին կոմսը (այստեղ շատ կոմսեր է արքայազները կան, սակայն թագավորությունում բոլորը գիտեն, քե ով է կոմսը) հայտնել էր գեներալ-արյունասուն, զինվորական նահանգապետ Ստեփան Ստրեկալովին: Գեներալ Ստրեկալովն ամեն առիթով, բանիվ և գործով աշխատում էր սպացուցել իր անկեղծ ուշադրությունն ու սերը գիտության և գիտական ձեռնարկների հանդեպ: Հենց գեներալին տված իմ առաջին այցելության ժամանակ էլ մանրամասնորեն տեղեկացա Կովկասում տարածված այն չարագույժ լուրերին, ուրոնց համահայն՝ Երևանում և նրա շրջակայքում բռնկվել էր արևելյան ժանտախտ: Այն մոլեզվում էր փետրվար ամսից և արդեն 3000 մարդկային կյանք էր տալիս: Նման հանկարծակի բոքը կարող էր կտորել անգամ ամենախիզախ մարդու քաջությունը, մանավաճ որ մեր ծրագրերը խափանվում էին արդեն իշխանությունների կտրուկ արգելքով: Մենք ստիպված

էինք հնազանդել անխուսափելիին և չցանկանալով կասկածի տակ ղնել մեր ամբողջ գործի հաջողությունը՝ պետք է մնայինք հեռավոր Թիֆլիսում և ժամանակը խոհեմորեն ծախսելու նպատակով կատարել զանազան օգտակար աշխատանքներ:

Այս պարապմունքների հետ միաժամանակ իմ ուշքն ու միտքը, բնականաբար, միշտ զբաղված էին Երևանի նահանգում տարածված ժանտախտով: Հիմնվելով բժշկական այն տեղեկությունների վրա, որ Նորին Գեղազանցություն զենբալ-հահանգապետն ամեն անգամ քարեհատում էր հաղորդել ինձ, կարելի էր համոզվել, որ ժանտախտ հիվանդությունը, ինչպես որ հատուկ է իր բնույթին, մաղձախտանյարդային տեղեկից հետո տարածվում է ոչ թե մթնոլորտային միազմայի, այսինքն՝ թունավոր գոլորշացումների, այլ վարակի միջոցով: Այդ դեպքում կարող էինք հույս ունենալ, որ խելացի կազմակերպելով մեր ճանապարհորդությունը բնակավայրերի միջով անցնելիս, հնարավոր է խուսափելիք վարակվելուց: Բացի այդ, պաշտոնական տեղեկություններից իմանալով, որ հիվանդությունը, ինչպես իր սաստկության, այնպես էլ տարածման տեսակետից, նկատելիորեն նվազել է, մենք պատրաստվում էինք նորից շարունակել մեր ճանապարհը, եթե մեր համբերությունը կրկին փորձության չեմբարովեր: Հիմա էլ մեր ուշադրությունը հրավիրվում էր այն մտավախության վրա, որ տարվա ամենաշոգ ամսին, այսինքն՝ օգոստոսին, այդ կողմերն ուղևորվել չի կարելի: Մարդիկ, որոնց ես վստահում էի ինչպես իմ ձեռնարկի նկատմամբ ցուցաբերած անկեղծ հետաքրքրության, այնպես էլ օժանդակության համար, ինձ լրջորեն զգուշացնում էին հուլիսի վերջին ճանապարհորդություն ձեռնարկելու աննպատակահարմարության մասին, քանի որ ցերեկային այրող շոգը գիշերներն էլ չի նվազում այնքան, որ զոնե փորքինչ հնարավոր լինի դիմանալը, և որ այդքան երկար ժամանակով իրեն այդ շոգի ազդեցությանը հանձնելը կնշանակեր ենթարկվել ջերմախտի ակնհայտ վտանգին, որն արդեն այնքան շատ, հատկապես օտար ճանապարհորդների կյանք է խլել կամ առնվազն երկար ժամանակով զրկվել կենսական ուժերից: Որքան էլ որ քիչ էր ցանկությունս իմ անձին վերագրելու այս մտահոգությունը, մի մարդու, որի մարմինն արդեն ընտելացել էր զանազան եղանակների ազդեցությանը, բայց ականաձանքս ուղեկիցներիս նկատմամբ, որոնք իրենց

չափելության պատճառով ավելի մեծ չափով էին ենթակա վտանգին, ինձ պարտավորեցնում էր անհալ իրազեկ ու բարյացակամ մարդկանց խորհուրդները և հնազանդորեն սպասել այն ժամանակին, երբ նախասահմանությունը ինձ հնարավորություն կտար հասնելու իմ նպատակին: Բայց և այն հաստատ վճիռն ունեի, որ եթե անհնարին դատնար դեպի Արարատ իմ ճանապարհորդությունը այնպես, ինչպես որ ես էի ծրագրել, ապա թողնելու էի թե՛ ընկերներիս և թե՛ իմ գիտական արբերը՝ մեծ-մեծակ չտապելու այնտեղ, դեպի ուր այնպես անդիմադրելիորեն ձգտում էր իմ սիրտը՝ գոհանալով նրանով, որ կարող եմ զոնե մի քանի ժամ մտոկիցից ու արթնից նայել նրան՝ Սուրբ Լեռանը:

ԹԻՖԼԻՍԻՑ ԷՏՄԻԱՐՆԻՆ

Սեպտեմբերի 1-ի երեկոյան, այսինքն՝ Դորպատից դուրս գալուց ուղիղ հինգ ամիս եւ ուղևորության համար սահմանված ամբողջ ժամանակի կեսն անցնելուց հետո մենք թողեցինք Թիֆլիսը: Պետք է ենթադրել, որ Թիֆլիսից մինչև Արարատ, ափսիս ճիշտ՝ մինչև Արևուտի գյուղը, որ գտնվում է լեռան հյուսիսարևմտյան լանջին, 280 վերստ է, ներառյալ մահ ճանապարհի ոլորաններն ու վերելքները, այսինքն՝ 230 վերստ մինչև Էջմիածին եւ մոտ 30 վերստ էլ այնտեղից մինչև Արևուտի: Այս ենթադրությունն անմիջական չափումների վրա չի հիմնվում, քայքայեալ այն համարում եմ բավական ճշգրիտ, քանի որ այն ժամանակվա ճանապարհորդության պայմաններում հաստատապես ընդունված էր չորսուկես վերստը մի ժամում հաշվարկը, և ես ամեն տեղ ճշգրտորեն չափել եմ դուրս գալու եւ տեղ հասնելու ժամանակը, եւ միայն երկու անգամ է արդյունքը մոտ վեց վերստով սխալ դուրս եկել:

Այս ճանապարհի վրա թեև կանոնավոր կարգով տեղավորված են փոստակայաններ՝ միշտացնից սովորական հեռավորության վրա եւ կողակներով պաշտպանված, սակայն ուղևորների արագ տեղափոխման համար նախընտրելի են փոստային կամ հեծկան ձիերը: Հետո միայն, մեր վերադարձին, տեսնեմք, որ մի քանի տեղերում սկսել են արդեն, այսպես կոչված, քառանիվ սայլեր կամ փոստային սայլակներ գործածել, որոնց լծելու համար գյուղացիներից կանխիկ գումարով ձիեր էին վարձում: Սակայն սրբանք էլ դեռ մի կարգին լծվել չգիտեին և ամեն մի վերելքի վրա շատ շուտ խրտուում ու փայխ էին տալիս: Մեր արշավախմբի պապառույթյան եւ բնագնական սարքերը անվտանգ տեղ հասցնելու համար մենք 450 ուրլուր (թրթադրանով) վարձեցինք երկու ռուս իրենց ֆուրգոններով՝ յուրաքանչյուրը երեքական ձիով: Դրանք պետք է տեղ հասցնեին մեր իրերը եւ ճանապարհորդողներինք երկուսին: Մյուս երեք ճանապարհորդների համար Թիֆլիսում գնել էինք հեծկան ձիեր՝ յուրաքանչյուրը 20-25 արծաթ ուրլուր¹²:

Այս երկրորդ ձեռնարկիս համար ես հենտ շատ ու շատ զրջացի, քանի որ ամռան արտակարգ շոգի ու երաշտի պատճառով Արարատի վրա խոտն ու բուսականությունը ամենևին չորացել էին և շատ հազվադեպ էին հանդիպում: Դրանով մենք բազում չարարանքներ պատճառեցինք մեր ֆելդեկերին, որն ստանձնել էր արշավախմբի վերջագործի պարտականությունները:

Ես օգտագործեցի այս ճանապարհորդությունը Թիֆլիսից մինչև Արարատ փոստակայան առ փոստակայան ծանրաշափական գնումներ կատարելու համար այն նպատակով, որ եթե մեր բախտը բերեր և կարողանայինք լեռան բարձրությունը ստորոտի համեմատությամբ չափել, այն չափերից միայն այն տարբերությունը, որ կա Թիֆլիսի եւ ծովի միջև՝ վերջինիս նկատմամբ Արարատի ճշգրիտ բարձրությունը ստանալու համար, որքան որ դա թույլ էին տալիս գիտությունս առկա պայմանները: Պետք է կանխապես ասեմ, որ մեզ հաջողվեց դա ասել, ընդ որում՝ պարոն ֆոն Քեիսպելն անձամբ հանձն առավ ամբողջ տարածության վրա միշտ մի փոստակայան ինձնից անաչ գնալ, որպեսզի սահմանված ժամին միաժամանակյա դիտարկումներ կատարեինք: Իսկ դա, առանց ժամանակի գզալի կորստի, հնարավոր էր կատարել, եթե նա, ով առջևից էր գնում, յուրաքանչյուր փոստակայանում լրացներ-թողներ մի տեղեկանք, ող հետևից եկողը կարողանար ստանալ և ուսումնասիրել:

Թիֆլիսից դուրս գալով և անցնելով մի հարթավայրով, որը շուրջ 600 ռոմանչափով բարձր էր Քուտ գետից, ճանապարհը մտնում է Խրամիի հովիտ: Սա Քոի ծանձաղ, բայց լայն վտակն է, որի վրա ամհիշելի ժամանակներում կառուցված մի հին կամրջի մնացորդներ կան: Եվ այստեղից սկսած՝ ճանապարհն անընդհատ բարձրանում է մինչև Ալավերդու կոնաձև լեռները, որոնց հարավային լանջերին հենց Ալավերդի գյուղն է ու դեռևս հույների կողմից շահագործված պղնձի հանքավայրերը: Թիֆլիսից մինչև 50 վերստ հեռավորության վրա հողը բավականին մշակված է, հատկապես շատ են խաղողի այգիները: Շարունակելով ճանապարհը դեպի վեր, ըրտեղ պակաս է հովիտների ջերմությունը եւ գետինն ավելի խոնավ է, հանդիպում են ծառաստանների, բայց սկզբում երևում են բիտուտեր եւ հետո միայն վիթիարի մայրիկներ: Դա շատ անպատկառ է և հակառակ տպավորություն է թողնում երկի այն պատճառով,

որ մարդ առհասարակ բարձր լեռների վրա ցրտի պատճառով ծառերի մեծությունն ու ուժը չի կարողանում տեսնել: Թիֆլիսից ուրսուն վերստ հեռավորության վրա հանդիպեց առաջին մեծ լեռնաշղթան, որը Ալավերդու կողմերում կրում է քարայրական Աղսրոյուկ անունը: Ճանապարհն անցնում է այդ լեռնաշղթայի ժայռածեղքերով, որտեղ բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է 5459 փարիզյան ոտնաչափի: Այս լեռնաշղթայի հարավային լանջերը, ասում են, շատ պողպատառ են և առողջ ու մեղմ բնություն ունեն: Այս վայրերը հենց դրանով էլ հայտնի են և կոչվում են Լոռի: Այն դեռ հին ժամանակներից լիքն է եղել հայկական գյուղերով, վանքերով ու բերդերով, իսկ ռուս-պարսկական պերջին պատերազմին հայոց կարողիկոսի պատսպարանն էր:

Ճանապարհն Աղսրոյուկի բարձունքներից իջնում է Լոռվա հովիտը, որպեսզի շուտով նորից բարձրանա, քայց այս անգամ՝ ավելի վեր: Բզովդալի լեռնաշղթայից, որ 6268 փարիզյան ոտնաչափ բարձրություն ունի, ճանապարհը մտնում է մի խոր, զովաշունչ և խիստ անտառապատ հովիտ, ապա դուրս գալիս մի քաջ դաշտավայր, որտեղ Կիչլակ և Համաճուր գյուղերն են: Այստեղից էլ ուղղություն է վերցնում դեպի երրորդ՝ ամենաբարձր լեռնապարհ: Դա Փամբակն է՝ Էրզրումի և Կարսի միջև ընկած Մողանդուղի ճյուղավորումներից մեկը: Այս լեռնապարհ, որը բնւ 7355 փարիզյան ոտնաչափ բարձրություն ունի (2400 մ),

Գեղարդի ժայռավոր վանքը Արարատ լեռան դիմաց (Արիս)



անցանք ավելի քեթ, քան նախորդ երկուսը, քանի որ սայլերի ճանապարհը բարենորոգ վիճակում էր (ձիով գնալու դեպքում բնւ ճանապարհը կարճ կլիներ, քայց քեթությունը մեծ էր):

Փամբակի բարձունքից 12 վերստ հեռավորության վրա մեք հանդիպեցինք ժամանակավոր կարանտինի, որ դրվել էր երևանի նահանգում տարածված արևելյան ժանտախտի առաջն առնելու համար: Մեզ, որ այնտեղ գեր վայրերից մտնում էինք հիվանդությանը բռնված երկրամաս, այս հաստատությունը արգելք չեղավ շարունակելու ուղևորությունը, ընդհակառակը, գիշերելու համար մեզ առաջարկեցին իրենց վրանները և առհասարակ ընդունեցին շատ բարեկամաբար: Կարթավայրը, որտեղ մենք գտնվում էինք, բաթարերեն կոչվում էր Բաշ Ապարան, իսկ ռուսներն անվանում են Ապարանալո: Հյուսիսում այն հասնում է մինչև Փամբակի ստորոտները, որը, Հռի և Արաքսի միջև ընկած, դեպի հարավ-արևելք ձգվող մի լեռնաշղթա է: Ապարանալոյից արևմուտք բարձրանում է մի հսկա, առանձնավոր լեռնազագաք՝ գառիթափ լանջերով, քեև բավականին մեկուսի, քայց Փամբակի հետ կապված: Դա այս ամբողջ տարածքում հայտնի և ամենաբարձր լեռն է՝ Արագածը: Պարոն Յողորդովի եռանկյունաչափական հաշվումներով նրա բարձրությունը Արաքսի հովտի համեմատությամբ 10148 փարիզյան ոտնաչափ է, իսկ մեր ծանրաչափական հաշվարկների համաձայն՝ այդ հովտից մինչև Սև ծովի ջրի հայելին 12811 փարիզյան ոտնաչափ (4180 մ): Նրա հյուսիսային կողմի մեծ գոգավորություններում մշտնջենական ձյուն կար, հարավային կողմում նույնպես դեռ օգոստոս ամսին ես տեսա, որ առանձին տեղեր ձյունածածկ են: Ասում են, թե ձյունը այդ տեղերում մնում է մշտապես: Բաշ Ապարանից մեծ հեռավորության վրա, այս ամբողջ ճանապարհին առաջին անգամ, եթե երկինքը մաքուր է, դեպի հարավ նայելիս, երևում է Արարատը: Ես դեռ Փամբակից իջնելիս հույս ունեի նրան տեսնել և անհամբերությամբ սպասում էի այդ հիասքանչ տեսարանին: Սակայն Արագած լեռան մի մասը ծածկում էր տեսողաշող, այլապես պետք է որ այդ բարձունքից Արարատ լեռան առաջին հայտնությունը մի փառավոր տեսարան լիներ: Լեռան հեռակա պատկերով սքանչանալու մեր ոգևորությունը խանգարեց մաև մի բանձր անկ, որ բարձրանալով՝ ծածկեց նրա խառնելան մա-

սը: Ես շատ զարմացած էի՝ տեսնելով նրա հյուսիսարևելյան կողմը ոչ այնքան գաղտնիքով, որքան որ ներկայացվում էր Շահապարհորդների կողմից, ուստի անհիմն գտա նրա վրա բարձրանալու անհնարինության մասին կարծիքը և չկարողացա բացթողնել զգալիորեն հասնելու իմ շրջապատումը:

Մենք Էջմիածին ճանապարհվեցինք Ապարան գետի¹³ ընթացքին զուգահեռ: Այս գետի հունը հրաբխային ժայռերի մեջ ընկած մի ուղղաձիգ ճեղքվածք է, և տարածքն էլ կաշվում է իր անհունով: Սակայն ճանապարհին, ժամանախաղի պատճառով ստիպված էինք գզուշորեն շրջանցել այն բոլոր գյուղերը, որտեղ իշխում էր ժամատասարը կամ էլ նոր պիտի սկսվեր: Մենք հարկատրված էինք գիշերն անցկացնել բաց երկնքի տակ՝ Արագած լեռան դեմ հանդիման, մի մեկուկի բլրի հարթավայրերի վեճին, վրանի մեջ պատասպարվելով անձրևից, որ գալիս էր ամբողջ գիշեր: Երեկոյան փոքր-ինչ ուժ առանք՝ տաք ընթրիք ուտելով, որ պատրաստեցինք մեր ունեցած պաշարներով և պարոն Շիմանի խփած բռնուններով: Կրակ արեղցինք մեր ունեցած փայտով, մի քիչ էլ, մեծ չարչարանքով, հավաքեցինք Ապարանի ձորից, քանզի այս վայրերն առհասարակ ամայի են ու անտառազուրկ:

Բլրաշատ հարթավայրը, որի միջով անցանք, մշակված էր միայն Կարպիչայի կողմերում (այստեղ այսպես են անվանում բաթարները Ապարան գետը): Հնուներ էրևում են հնամենի բերդեր, գյուղեր և հայկական վանքեր: Ապա մտանք Արարսի հովիտ՝ 30-40 վերստ լայնությամբ մի դաշտավայր, որ քիչ է մշակված և լիքն է հայկական ու քաթարական գյուղերով և հատկապես հայ հոգևորականներով հարուստ վանքերով¹⁴: Դրանց թվին է պատկանում նաև հռչակավոր Էջմիածինը՝ իր հարակից վանքերով և գյուղերով՝ կաթողիկոսի, սուրբ Սիմոնի և հայ բարձրաստիճան հոգևորականության նստավայրը: Դա մի կենտրոնատեղի է, որտեղից ճառագում են հայոց դավանանքի լույսերը և դեպի ուր աշխարհի գանգազան անկյուններից, որտեղ ապրում են հայերը, հոսում են փառաբանության ու օրհանանքի պտուղները: Դրանք այնքան առատ են, որ այս բարձրագույն կաթողիկոսական արտի գանձերն ու փայլը կարող էին չափվել Հռոմի պապական արտի փառքի հետ, եթե միայն պարսիկ տիրակալները հնուց անուի չօգտվեին այդ գանձերից, մասամբ օրինական կարգով, մասամբ էլ, հանգա-

մանքներից ու իրենց զանկություններից ելնելով, բռնի, ինչքան որ կամենային: Հավանաբար դա է պատճառը, որ այստեղ հայկական հավատը համբերտարությունը գոյություն ունի իսլամի կողքին և զարգանում է անհամեմատ ավելի լավ պայմաններում, քան թե Փոքր Ասիայի թուրքական զավառներում, որտեղ հայերն իրենց հավատը գործածելու համար դաժան ճնշումների ու արգելքների են հանդիպում, նման ճնշումներից պարսկահայերն ազատ են: Դրանք երբեմն այնքան խիստ են, որ հայերը, իշխանությունների դժգոհությունը չառաջացնելու համար, ստիպված են լինում իրենց հանդերձանքն ու կենցաղը, որքան հնարավոր է, հարմարեցնել օտար օրենքներից ու սովորություններից: Ես մի անգամ դրա ականատեսը եղա, երբ, ի գործանման իմ, Էջմիածին այցի եկած մարդիկ տեսա, որոնք իրենց տեսքով և հանդերձանքի ճոխությամբ, փաթթոցներից մինչև կոշիկները, երևելի թուրքերի տպավորություն էին բողբոսում, սակայն հայեր էին, և որքան հիշում եմ, Բայազետից եկած: Բայազետում, Էրզրոմում և թուրքական մյուս հայաբնակ քաղաքներում քրիստոնեական եկեղեցիները պարտավոր են լինել առանց զանգակատների ու զանգերի: Իսկ Դուրահի արգելքը խոզի մսի նկատմամբ հայերի մեջ այնպիսի խստություն է ի կատար անվում, որ նրանց իշխանության ներքո այս շատ օգտակար կենդանու պահելն արգելված է ամենուրեք: Պարսիկները, սակայն, այս գործում ավելի հանդուրժող են: Էջմիածնում, օրինակ, ազատորեն պահում էին այդ կենդանուց մի քանի հատ, բայց, այնուամենայնիվ, վանքի շրջափակ պարիսպներից դուրս չէին բողբոսում: Երևանում՝ պարսկական զավառների գյուղերում և վանքերում, հայերին թույլատրված էր կանոնավոր կարգով կատարելու իրենց կրոնական արարողությունները, ունենալ իրենց եկեղեցիները, հոգևոր առաջնորդներին՝ կրելու իրենց կրոնական հանդերձանքը: Ասում են, թե այժմյան պարսից Հուսեյն խան Սադրաբը խրախուսում է քրիստոնեությունը և մինչև անգամ ներկա է եղել պատարագի պարարողության: Երբ Շահ Աբբասը, թուրք ձեռքին մտել է Էջմիածին, մի քանակաբժեք ճրագ է կախել եկեղեցում, որ մինչև այսօր էլ այնտեղ է: Սուլա Շահը եկեղեցի մտնելիս մաշիկները լայն բողբոսում էր դռան հետևում ճիշտ այնպես, ինչպես մզկիթ այցելելիս: Ուշագրավ է, որ ճանապարհորդ Թավերնյեյն դեռևս 175 տարի առաջ քրիստոնեության նկատմամբ իսլամի երկու

գլխավոր աղանձների՝ թուրքական Օճաթի և պարսկական Ալու միջև եղած այս կարևոր տարբերությունն ընկալել է ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես որ հինմա ներկայացրեցի ես:

Փոստակայանն առ փոստակայան կատարված մեր ծանրապահական ճշգրիտ շափումների համաձայն՝ Էջմիածինը գտնվում է Սև ժուլից 2867 փարիզյան ոտնաչափ բարձրության վրա, մի ընդարձակ հովտում, որ շքջայտաված է փոքրասիական Տավրոսի լեռնաշղթայի՝ երկու իրար զուգահեռ՝ հյուսիսային և հարավային ճյուղավորումներով, որոնք իրարից բաժանվում են Էրզրումի մոտերքում: Հյուսիսային ճյուղն սկսվում է Էրզրումից, Կարսի շրջքը մի մեծ աղեղ է կազմում Սողանլուղ անունով և վիթխարի պատվար դառնալով Արաքս և Քուռ գետերի միջև՝ գնում-կորչում է Արցախի հարթավայրում: Այս լեռնաշղթայի մեջ են առնվում վերը նշված Փամբակի լեռները, Արազածի բարձր գագաթները և, հավանաբար, էլի որիշ շատ նշանավոր լեռնագագաթներ, քանի որ հոկտեմբերի կեսին, երբ դեռ ձյուն չէր դրել լեռների վրա, Արարատի դիմացի հովտից ես հեռվում տեսա մի լեռնապար, որ անընդմեջ ձգվում էր արևմտյան, հյուսիսարևմտյան ուղղությամբ, 83,5 աստիճանից մինչև 87 աստիճանը: Այն ծածկված էր ձյունով և, հավանաբար, Սողանլուղի արտակարգ բարձր լեռնագագաթներից մեկն էր: Տավրոսի լեռնաշղթայի հարավային ճյուղը, որից հենց Արաքս գետի աղբյուրներն են սկիզբ առնում, վերջինս բաժանում է հսկայտակ ընթացքով իտաղ Եփրատից և ապա կարճ ընդհատումներով միանում Արարատ լեռանը:

Էջմիածինց մի քանի հարյուր մետր հյուսիս ընկած է հայկական մի մեծ գյուղ՝ Վաղարշապատ անունով¹⁵, որ հաճախ կոչվում է նաև Էջմիածին: Այնտեղ ապրում է 300 ընտանիք: Փոքր-ինչ ավելի հեռու՝ Արարատի դիմաց, ս. Գայաննի վանքն է, իսկ Երևան տանող ճանապարհի վրա, մոտ երկու վերստ հեռու դեպի արևելք՝ ս. Հռիփսիմնի փոքրիկ, բայց շատ գեղեցիկ վանքը: Մոտ քսան վերստ դեպի արևելք գտնվում է Երևանը, որից այն կողմ էլի կան գյուղեր, վանքեր, այդ թվում և ս. Գրիգորի Խոր Վրիթալը, որ շատ մեծ հույակ ունի հայոց մեջ:

Մեծ Արարատը Էջմիածինց հեռու է 50 վերստ: Այստեղից ուղիղ դեպի հարավ՝ մոտ 15 վերստ հեռավորության վրա, կա- վա և կրաքարե հունով և բավականին արագ ընթացքով հոսում է Արաքսը: Այն ընդամենը մի քարրկնեց լայնություն ունի, և ա-

ռանձին տեղերում այնքան ծանծաղ է, որ կարելի է անցնել ձիով առանց վարանելու: Նա այս կողմերում պետք է որ ներառեր վերը նշված Ապարան գետը, դա էին հաստատում նաև քարտեզները, այնպես որ ես սխալ գուշակություններ չէի անում: Սակայն հսկայտակ սպասածի, նրա գետաբերանը չէր երևում: Գետի ջուրը, հավանաբար, կորչում էր՝ բաժին դառնալով այն բազմաթիվ ջրանցքներից, որ կառուցում էին դաշտերը ռոռգելու և բնակիչների կարիքները հոգալու համար: Ուստի նրա հունը հիմնականում մնում է չոր, և նա, այսպես ասած, սպառված է լինում, մինչև իր գետաբերանին հասնելը: Ես դա հսկայտակ այն ժամանակ, երբ արդեն հեռացել էիք այդ վայրերից: Ամեն ինչ շատ պարզ էր, այդպես էին մտածում նաև իմ ընկերները: Հեռվում Էջմիածնից մոտ վաթսուս վերստ հյուսիսարևելք, երևացող լեռներից այն կողմ մի բարձրադիր լիճ կա, որ բարբառելու ժողնում են Գ-ոկչա: Հայերը, սակայն, նրան անվանում են Սևան, այդպես են անվանում և վանքին, որ գտնվում է կղզու վրա: Այս լիճն ամենուրեք մեծ հռչակ ունի հայոց մեջ իր բազմաթիվ, շատ հին, բնև այժմ մասամբ լքված վանքերով, որ կան նրա ավերին: Հայտնի է և իր ձկնառ առատությամբ, որանք թվում նշանավոր է հատկապես մի տեսակը՝ սաղոմ իշխանը, որ չորացվելով ուղարկվում է հեռու երկրներ վաճառքի: Այս լիճի է սկիզբ առնում Ջանգունը, որ անցնում է Երևանի կողքով և Արաքսի գլխավոր վտակն է:

Արաքսի լայնատարած ու հավասարաճիստ դաշտը, որտեղ գտնվում է Էջմիածինը, աչքի համար այնքան էլ հաճելի տեսարան չի ներկայացնում, եթե չհաշվենք շրջակա լեռները, քանի որ գուրկ է ամեն տեսակի բուսականությունից: Դա երևում է հատկապես ամռանն ու աշնանը, երբ տապից ու այրող շոգից խտտերի ու կանգների աճը դադարում է: Ծառեր հանդիպում են միայն վանքերում և գյուղերում, սակայն որանք էլ, քացի մի քանի ընկուզենիներից ու բրգանձան բարդիներից, նվազ ապրաբախիտ են և սակավատերև, քիչ բարձրություն ու զովություն են պատճառաւոր շրջապատին, ուստի և քիչ են ձգում մարդկանց: Կան թրեմիններ, նեղտերև ուռիներ, ծիրաննի և խճճալի փշատեխին՝ երկար, կապիտ ու անգաղղ ճյուղերով և անհյութ, արմավի անանկող պտուղներով: Երկարադրծական բույսերից առավելագույն մշակումը է բամբակ, տգկանից, որի ձեթն օգտագործում են իբրև վառելիք, սեխ, դդում, ձմերուկ,

ծխախոտ, ինչպես և բրինձ, որ այս կողմերում առավելապես հանդիպում է Մև ջրի ցածրալիք ու ճահճոտ ավերից: Ցանճում են մահ գործն ու գարի: Խաղողի որոք, որ մեծ բանակությամբ մշակվում է Երևանի մոտերքում՝ շրջակա բլուրների վրա, այս դաշտում քիչ է հանդիպում: Հայոց մեջ իր տարածվածությամբ և կարևորությամբ՝ իբրև պահի կերակուր, շատ հարգի է քունջուրը, որի մանր սերմերից այստեղ շատ հաճել ձեք են ստանում: Անասնակերներից հատկապես բարձր է գնահատվում առվույտը, որը շատ է օգտագործվում ոչ միայն սննդարարության համար, այլև որ բազմամյա է և միշտ կայուն բերք է տալիս՝ համարյա առանց մշակություն պահանջելու, բացի հեճելուց:

Այս վայրերի հայկական ու մուսուլմանական գյուղերի տեսքը հավասարապես անգարդ է ու անշոր: Տները, որ շինված են կավից, նույնպիսի կավաշեն և տափակ տանիքներ ունեն: Պատուհանների փոխարեն միայն մի քանի քառանկյուն, փոքրիկ անցքեր են արվում, այն էլ հիմնականում բակի կողմից, որտեղից և մեծ մասամբ տան մուտքն է: Գյուղական բակերը շրջապատված են կավաշեն պարիսպներով, և դրանց արանքներով անկարգ ու խառնիխուռն դեպի չորս կողմ են ձգվում կեղտոտ ու ծուռուծուռ փողոցները: Կատաղի շները, որ հաճախ անսովոր չափով մեծամարմին են և սարսափազոր, ցանկացած եկվորի կարող են խանգարել տուն մտնել: Մանավանդ դժվար է բարբարների տուն մտնելը, եթե եկվորը քրիստոնյա է, և տանտերը չի ցանկանում տնից դուրս գալ: Այս գյուղերն ընդհանուր ոչինչ չունեն այն գրավչություն և իրապտույնի հետ, որ ունեն եվրոպականները: Մի ծայրից մինչև մյուսը և տների հիմքից մինչև կառուր միևնույն նյութից պատրաստված լինելով՝ միապաղաղ երանգի այդ հողե շինվածքները դեռ հեռավոր անմիջապես նկատվում են և բնավ գյուղի տպավորություն չեն բողճում: Կարող են նույնիսկ աննկատ մնալ, եթե նրանց չմատնեն հատուկեետ ծառերը: Նույնիսկ զարնանը, երբ հողը հագնում է իր բնական կանաչ հանդերձները, այս գյուղերն իրենց կեղտոտ ու գորշ տներով և պարիսպներով, հավանաբար, այլ տպավորություն չեն բողճում, քան արբակույտի: Իսկ եթե հաշվի ենք առնում մահ այս հեռավոր հովտի ամառային խիստ շոգերն ու երաշտը, ապա դժվար հասկանալի է դառնում, թե ինչու Էջմիածնի հիմնադիրներն

այդ նպատակի համար չեն ընտրել մի ավելի առողջարար, գեղեցիկ և ոչ պակաս պտղաբեր լեռնային վայր Մևանի ավերից, վերը հիշված Լոռիում կամ այլուր: Հայ մատենագիրներն այդ կապակցությամբ հայտնում են, որ այն վայրերում, որտեղ հինա Մայր Տաճարն է կանգնած և ճիշտ այն տեղում, որտեղ մինչև այսօր էլ մարմարյա տախտակներով ծածկված հնադարյան քարե պատեր են մատնացույց արվում, համբարձվելուց հետո Փրկիչն է իջել մարդկային կերպարանքով տուն Գրիգորին՝ հայոց Լուսավորչին հայտնելու իր կամքը, որ ցանկանում է այլտեղ, հանուն ճշմարիտ և անխախտ հավատի, կառուցված տեսնել մի տաճար, և տաճարի տեղը ցույց է տվել երկնային լույս-ճառագայթով: Այդ պատճառով էլ հայերը վաճառք կոչում են Etschmiadsin, այսինքն՝ Միածինը իջավ, և նրա հիմնադրումը հաշվում են երրորդ դարի վերջից: Թաքարները, սակայն, վաճառք կոչում են Երեք եկեղեցի, մի անվանում, որը նրանք քրիստոնեական շատ եկեղեցիների են տալիս, մեկը, օրինակ, Բայազետում: Ի՞նձ հավանական է թվում, որ անվանումը կապվում է Երրորդության հետ, որի մասին ուսմունքը մուսուլմաններին շատ կարևոր է թվում իրենց հավատի համեմատությամբ քրիստոնեականի ստորերությունը ցույց տալու համար:

Էջմիածին չհասած՝ մոտ երեսուցից վերտալ վրա, վերջին գիշերակացից հետո, ծանրաչափական գնճումներ կատարելու նպատակով ես բաժանվեցի մեր խմբից և մի գինվորի ուղեկցությամբ սկսեցի առաջ ընթանալ անճամոք վայրերով, որտեղ քիչ ժամանակ առաջ դեռևս թափառում էին քրդական ավազակախմբերը, և որը դարձել էր պատերազմական մեծ բախումների թատերաբեմ: Կիսալուսնի և Խաչի բանակները ծեր Արարատի հայացքի ներքո կոլվում էին Երևանի բերդին տեղ դառնալու համար: Հեռվում գյուղեր ու վանքեր էին երևում, մշակովի դաշտեր այն կողմերում չկային: Ծանր մի անպարուկ, որ քարձրանալով՝ արդեն ծածկել էր Արարատի զագաթը և իմ գլխավերևում օրորվում էր երկնային թանճոր ծածկոցի նման, ճանապարհներից քշել-փախցրել էր մարդկանց ու կենդանիներին, և միայն փոքրամարմին մի վանական էր, պարեգոտի մեջ փաթաթված, փորձում իր պարսկական ծիով փախչել վերահաս անձրևից: Նա մի գնճող հայացք նետեց ինձ վրա, ապա քաղցրությամբ ողջունեց, և երբ ես նրան ձայն տվեցի՝

ուտերեն հարցնելով Էջմիածնի, վանքի ու Հայ Հովսեփի մասին, նա մեծ պատկառանքով ցույց տվեց ճանապարհը՝ ձեռքը պարզելով դեպի հարավ: Ամպրոպի դղրոյունը ես չէի լսում: Ես մտրոջույին տրվել էի իմ առջև փոված դաշտի տպավորությամբ, իմ ձեռնարկած գործի ցանկալի նպատակներին, իսկ երբեմն էլ մտրովս անցնում էին հին-հին ժամանակները, երբ այստեղ, այս դաշտում, մարդկային մեծ բազմություններ էին շարժվում և մեծամեծ գործեր էին կատարվում: Եվ կարող էր, արդյոք, այլ կերպ լինել: Մի՞թե ես Արարատ լեռան ստորոտին չէի, որտեղ քրեհեղեղից ցամաքած ու պապակ գետնի վրա դեռևս պարզորոշ գագաթում էին քրեհեղեղի հետքերը, այն լեռան, որի երկնամեծ գագաթին երբևէ փրկություն գտավ մարդկային ցեղը: Մի՞թե ես Արաքսի հովտում չէի, որտեղ հանգրվանեց հալածական Հաննիբալս այն բանից հետո, երբ Իտալիայի դաշտերում վատնելի-սպառել էր իր կենսատառ ուժերը: Մի՞թե ես մտրեբում չէի հնամենի Արտաշատի՝ Հին Հայաստանի մեծ ու փառավոր մայրաքաղաքի, որտեղ նստում էր Հռոմից արքայական թագ ստացած Տրդատ Պարթևացին, նա, որը ջանք չէր խնայում վերացնելու քրիստոնեության առաջին ու սակավ ցանկված սերմերը, մինչև որ ինքն էլ իր կյանքի վերջում Գրիգոր Լուսավորչից ընդունեց քրիստոնեական հավատի լույսը: Մի՞թե ես կանգնած չի պարսպի մոտ կաթողիկոսական աթոռանիստ Էջմիածնի՝ հայ ժողովրդի հավատի կենտրոնավայրի, այն ժողովրդի, որի հուզում քրիստոնեության կրակը չնեռավ՝ սկսած իր դրսերան առաջին իսկ հարյուրամյակներից, չնայած ամվերջ հալածանքներին ու անարգանքներին, չարարանքներին ու արհամարհանքներին, որ կար նրա դավաճողների նկատմամբ: Եվ չնայած այն դաժան պատերազմներին, որ պարբերեց, հռոմեացիները, պարսիկները և բուրբերը մղում էին միմյանց դեմ այն երկրին տիրելու համար, աստվածային խոսքը ոչ թե վերացավ, այլ, թեև հաշմված ու աղավաղված, պահպանվեց նոր ու բախտավոր ժամանակների համար:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆՔԻՆ

Սեպտեմբերի ուրին կեսօրից հետո ես հասա վանք, որի դռները հյուրընկալորեն բացվեցին իմ առաջ: Ես հարկ չէի համարել Թիֆլիսի իշխանություններից Էջմիածնի Նորին հոգևոր մեծության անունով հանձնելու մահաբարական նամակ խնդրել, այլ բավարարվել էի Թիֆլիսի մի հայ վարդապետի անձնական նամակով: Նրա անունն էր Հարություն Ալանդարյան, իր ժողովրդի լուսավորության համար ապրող մի հազվագյուտ մարդ, որի՝ զերեք մեծ-մեծակ Թիֆլիսում հայկական մի վարժարան հիմնելու և այն տնօրինելու ծառայությունը հայտնի էր ամենրից:

Իմ անունը հաղորդեցին հայր Հովսեփին, որ վանքի կառավարչն էր և գտնվում էր տանը: Նրա անունն էր վարդապետ Հովսեփ, որդի տեր Մարութի (հոգևորականի): Ես նրան գտա հիվանդ, մի առանձին անկյունում, մահի մեջ պառկած: Ինձնձեցի նամակն և մինչ դուրս կգայի ծանրաչափ զննելու, բարձմանիչ կանչեցին, բամբ որ վարդապետը ինձ համար անհասկանալի հայերենից քացի ոչ մի լեզու չգիտեր: Թարգմանիչը մի ջանի վաճառակ էր՝ սարկավազի աստիճանով, որն իր կրթությամբ ու, հատկապես, լայն գիտելիքներով պարտական էր վարդապետ Հարություն Ալանդարյանին: Նա իր գլխից ու ինկալից հայացքով, ինչպես և համեստ պահվածքով շատ հաճելի տպավորություն բողեց ինձ վրա: Երբ վերադարձա սենյակ, այնտեղ եկան ևս մի քանի վարդապետներ: Դրանք տարիքն առած մարդիկ էին՝ պատկառազույց կեցվածքով, և փոքրինչ հետաքրքրասիրություն կամ հարցասիրություն անգամ չէին դրսևորում օտարականին երևալու վերաբերմամբ: Սպասավորները լուռ ներսուղորս էին անում՝ հնազանդությամբ կատարելով հանձնարարությունները և միշտ դրան մոտ բողեղելով հաստ ներբաններ ունեցող իրենց մաշիկները: Նրանք կամ կանգնած էին հարձալից հեռավորության վրա կամ էլ անաղ-

մուկ, բրդյա գուլպաներ հագած, բայց մեծ եռանդով շարժվում էին գորգածածկ հաստակի վրայով: Երևի թե նրանց համար ներքևի չէր Արարատ բարձրանալու իմ մտադրությունը: Մենք մեկն մյուսից որոշ հեռավորության վրա աղեղնածև ցատել էինք հիվանդի անկողնի շուրջը և պահի հանդիսավորության պատճառով խոսելու նյութ չէինք գտնում: Եվ երբ վարդապետ Մանվելը ցանկացավ իմանալ, թե արդյոք Ալանդարյանն ինձ Ռիֆլիսում պատշաճ ձևով է ընդունել ու վերաբերվել, իմ կաշկանդվածությունն անցավ, և ես պատասխանեցի.

– Նա ինձ ընդունեց ոչ թե մեծ շուքով ու զանազան ձևակալություններով, այլ հասարակ ու սրտաբաց, ինչպես բարեկամն է ընդունում բարեկամին:


Ապա առանց ուշացնելու ցանկացա տեղեկանալ՝ արդյոք վանքում կամ մոտակայքում կարո՞ղ եմք որևէ օրևան գտնել իմ և ընկերներիս համար, որոնց սպասում էի: Ինձ շատ սիրալիք պատասխանեցին, որ այն տունը, որտեղ էիմա գտնվում եմք, դրված է մեր տրամադրության տակ և որ մեր իրերի, ձիերի և մարդկանց համար մույնպես, ինչպես որ հարկն է, հոգ կտարվի: Այս խոստումները կատարվեցին ամենապարտաճանաչ ձևով, և մենք փորձով ճանաչեցինք այս վանականների հյուրասիրությունը, որի մասին դրվատանքով տեղեկացնում է դեռևս Թավերյնեն, ի պատիվ և հուրախություն որի՝ այստեղ այն ժամանակվա կարողիկոսը նույնիսկ գոնշակոյիվ է կազմակերպել: Դա մի գվարճություն է, որ ի շարք այրոց, ասե՛ք՝ ավագ և ջախել վանականների միջև ձնագնդու խաղ, լարախաղացություն և կամ արջ խաղացնել, չնայած վանքի խոստակեցությունը, ամեն տարի տեղի էին ունենում Բարեկեղանի օրերին:


Այցելության եկածները հետացան: Մինչև իմ ճամփորդական ընկերները տեղ կհասնեին, հայր Հովսեփը կարգադրեց թեյ մատուցել, ապա գիշերվա համար մեծ սենյակում փոքրով անկողին պատրաստել տվեց գորգերով, բարձերով և վերմակներով: Ինձ համար առանձնացրին մի փոքրիկ խոց, որ տեղավորված էր վերնահարկում: Այստեղ մահճակալ կար դրված, և խաղողի կախյալ ողկույզներն ու խնձորներն անուշ բուրմունքով էին լցրել շրջապատը: Արդեն մեկ շաբաթից ավելի կլինեք, ինչ մենք ոչ մի գիշեր չէինք կարողացել կարգին հանգատանալ: Ուստի բարեկեցիկ կյանքով ապրող այս վանականների ջերմ հյուրընկալությունը և անհոգ դադարը շատ հաճելի էր մեզ համար:

Իմ տրամադրությունը հաջորդ օրը պայծառ եղանակի շնորհիվ էլ ավելի բարձրացավ: Ես դուրս եկա դաշտ՝ վանքի պարսպից հեռու, ազատության մեջ մի հայացք գցելու Արարատին, որն այստեղ առաջին անգամ երևաց ինձ իր ամբողջ շքեղությամբ՝ ամենափոքրիկ ամպի շղարշով անգամ չծածկված: Ես ավելի մոտեցա նրան, որպեսզի լսեցե՛րի ընդհանուր որպիսության և հյուսիսարևմտյան լանջի վրա գտնվող տխրահուշակ խորխորատի առկայության մասին բավարար տեղեկություններ ստանամ:

Այս վանքը, որ, արդարև, հայտնի է աշխարհին, մի քանի հարյուրամյակ ի վեր ոչ մի էակն փոփոխություն չի կրել: Դա երևում է ծերուկ Թավերյնեի¹⁶ տեղեկություններից և այն նկարագրություններից ու նկարներից, որ 1673 թվականին պատեհություն է ունեցել անելու Շարիինը¹⁷: Ոչնչով չէր փոխվել նաև Գայանեի փոքրիկ եկեղեցին, որ Էջմիածնից մի հրացանազարկ հեռավորության վրա է: Նա ճիշտ և ճիշտ այնպիսին էր եղել, ինչպիսին որ կա իմ նկարում, միայն թե այն տարբերությամբ, որ հիմա, մյուս եկեղեցիների մնան, բլնամական հարձակումներից պաշտպանվելու համար, շրջապատված էր բարձր պարսպով: Վերջինս Շարիենի օրերում բացակայում էր:

Արարատից 50 վերստ հեռավորության վրա գտնվող Էջմիածինը (Պարբուտ)





Էջմիածնի վանքը և Վաղարշապատը մոտ 1680-ին (ըստ Շարդենի)

Պարսիսպը, որ ոչ լրիվ ուղղանկյուն բառանկյան տեսքով շրջապատում էր Էջմիածինը, որքան հիշում եմ, ամենաբիշը մի երեսուն ոտնաչափ բարձրություն ուներ և ինչպես Երևանի բերդը կառուցված էր չորացրած կղմինդրից, ապահովված էր հրակնատներով, անկյունային մասերում տեղավորված էին աշտարակները և յուրաքանչյուր կողմում երկու մեծ և երեք փոքր մուտքեր ուներ: Նրա պարագիծը կլիներ շուրջ երկու վերստ: Արևելյան, մասամբ նաև հարավային պարսպի մոտ տեղավորված էին գոմերն ու այրուղը: Պարսպից բավականին դեպի ներս, ազատ տեղերում և փոքրիկ պարտեզների մեջ մի և

երկհարկանի բազմաթիվ տներ կային: Այստեղ էր (արևմտյան կողմում) կաթողիկոսի վեհարանը, արքեպիսկոպոսի, վարդապետների, սարկավազների ու սպասավորների կացարանները, ինչպես և հյուրանոցը, գրադարանը և վարժարանը, որտեղ իմ այցելության օրերին ոչ ոք չէր սովորում: Բացի դրանից, պարսպի ներսում էին գտնվում նաև ահագին ամբարները և մեծ սեղանատունը: Սա ցածրիկ, մրին ու չափազանց երկար մի շինություն էր՝ պատերի տակ դրված սեղաններով և տաշած բարե նստարաններով, հավանաբար ոչ պակաս, քան հարյուր մարդու համար: Այստեղ բոլոր վանականները, ի բացառյալ կաթողիկոսի և մի շատ ծեղ արքեպիսկոպոսի, միասին նստում էին ճաշի: Կար նաև մեծ փուռ, բաղնիք և այսպես ասած, շու-

կա, որտեղ առևտուր էր կատարվում: Վաճառում, գնում և զանազան արհեստներով էին զբաղվում գյուղացիները, որ ապրում էին մոտակա Վաղարշապատ գյուղում և վաճը էին գալիս միայն ու միայն ցերեկվա ժամերին:

Ամբողջական, ամրոցի նման շրջափակ պարսպի ներսում, շինություններից ազատ մի տարածքում տեղավորված էր ամենագլխավորը՝ Մայր Տաճարը, որը կառուցված էր կանոնավոր քառակուսի քարերից և հիշեցնում էր մեծ խորանարդ մեջտեղում բարձրացող կարճ աշտարակով, վրան՝ կոնաձև գմբե: Այս ամենը կառուցված էր այնչեղ, որ տաճարի ստացել էր խաչի տեսք, հատկապես այն պատճառով, որ արևմտյան կողմում ավելացված և իբրև գլխավոր մուտք ծառայող կից կառույցը բավականին առաջ էր եկել: Տաճարի դիրքն այնպիսին էր, որ նրա չորս պատերը ուղղված էին դեպի աշխարհի չորս կողմերը: Մեծ սեղանը տեղավորված էր արևելյան կողմում, գլխավոր մուտքի դիմաց: Եկեղեցու ներսը զարդարված էր ճոխ սրբապատկերներով, գորգերով, ոսկեպատ և արծաթապատ հարդարանքներով, ժամներգության պարագաներով, ջահերով ու կանթեղներով, սակայն փոքր-ինչ պակաս էր լույսը, քանզի առանց այն էլ ոչ մեծ պատուհանները պատերազմի տարուց ի վեր փակված էին:

Այս տաճարի նամենագլխավոր զարդերը և ճշմարիտ զանձերը, որոնց է պարտական հայերի մեջ ունեցած իր մեծ հռչակի համար, մի քանի սուրբ մասունքներն են, որ պահպանվում են առանձին-առանձին, լավ փակվող փոքրիկ սնդուկներում և միայն առանձնահատուկ առիթներով, սուրբ հաղորդության նպատակով, ամբողջական համայնքների, գյուղերի ու վանքերի համար պահպանիչ կամ օգնական աղոթքներ ասելիս, ինչպես և օտարականներին ցույց տրվող մեծարանքի բերմունքներով է, որ հանվում ու դրվում են սեղանին՝ ի յոթ բոլորի, թե միշտ աղոթքների ու մի տեսակ վաճառքային ուղեկցությամբ, որն ինձ անկատար թվաց: Իսկ ինչ որ ես լսեցի և հայտնի եմ դարձնում այդ առարկաների մասին (ինչպես Շարդենի, այնպես էլ Թուրքոթուրի մոտ դրանց վերաբերմամբ զանազան, բայց երկու դեպքում էլ այժմեականից շեղվող տեղեկություններ կան), սրանք են.

1. Գեղարդը այն սուրբ նիզակի, որով հռովմեացի զինվորը խցել է Հիսուսի կողը: Սա եղածներից ամենամշանավորն է,

որը սակայն ես չտեսա, քանի որ այդ օրերին որոշ ժամանակով տեղափոխվել են մեկ ուրիշ վանք: Չճայած դրան, ես վստահեի մարդկանց նկարել տվի նրա ճիշտ պատկերը, ինչպես որ այն այստեղ պատկերված է, ապա քրիցի կարել տվեցի պատկերվածի համաձայն՝ հատկապես այն մեծ տարբերությունը ցույց տալու համար, որ այս Գեղարդն ունի Թավերնեի տեսած ու պատկերած Գեղարդից: Ամբողջ Գեղարդը, հավանաբար, երկու թգաչակի երկարություն ունի, խիստ ժանգոտված է և վրան փոքրիկ խաչ է փորագրված:

2. Սուրբ Հակոբի աջը՝ ներառված բնական մեծությամբ արծաթյա, սակայն ոսկեգոծ ձեռքի մեջ: Բթամատն ու ցուցամատը թեքված են դեպի իրար, և նրանց արանքում շրթայից կախված է Նոյի տապանի փայտից մի կտոր: Դա մի փոքրիկ, մուգ գորշավուն, շատ լավ պահպանված փայտի քառանկյուն կտոր է և մի կողմի վրա փորագրություն ունի: Սա այն մասունքն է, որով սրբազան վանականներից մեկը հրաշքներ է գործել: Այդ մասին ես հաճույքով պատմելու եմ հետո:

3. Աջը, առաքելատիպ սուրբ Գրիգորի, որ հայոց լուսավորիչն է: Սա նույնպես, ինչպես և ճախորդը, ձեռքի նմանություն ունեցող բոլորապատվածք ունի, որի մեջ էլ պետք է որ խաչը լինի:

4. Սուրբ Պողոս առաքյալի մատի ծայրը, որ մումիայի կամ չորացրած դիակի մատի տեսք ունի և ամրացված է փոքրիկ, ոսկե ու արծաթե բոլորապարզ մասնատուփի մեջտեղում:

5. Սուրբ ճահատակ Հռիփսիմեի գանգի մի կտորը: Մեր ժամանակն հաջորդ օրը կանոխ մեզ այցեցեցին երեք արքեպիսկոպոստեր և մի քանի վարդապետներ, որոնք կաթողիկոսի և բոլոր վանականների անունից հանդիսավորապես բարի գալուստ մաղթեցին մեզ և ծանուցեցին, որ վեհափառը շատ կորախլամար անճամար տեսնել մեզ: Մինչ մեր այցելությունը, Ամենայն Հայոց Առաջնորդ Հովվի մասնակցությամբ կատարվեց հանդիսավոր պատարագ, որին ներկա էին մեծ բվով բարձրաստիճան հոգևորականներ, բոլորն էլ հազամ թակամբոժեք, մետաքսյա գգեստներ՝ զարդարված ոսկով ու արծաթով, ձեռքներին՝ ականալուռ եպիսկոպոսական գավազաններ:

Երբ ժամներգությունն ավարտվեց, մեզ տարան կաթողիկոսի մոտ: Մենք բարձրացանք վերին հարկարածնի մի ընդար-

ձակ, բայց գրեթե դատարկ սենյակն, որտեղ իրար դեմ դիմաց երկու շարքով միայն արտոնք էին շարված: Շարքերի վերջում հատուկ մի գահավորակի վրա նստած էր կաթողիկոսը, նրա ձախ կողմում տեղավորված էին արքեպիսկոպոսներն ու վարդապետները: Մեզ հրավիրեցին նստելու կաթողիկոսի աջակողմյան արտոնքին, մի բան, որն իր իմաստով շատ հարգի է այս կողմներում և, անշուշտ, մեծ պատիվ էր մեզ համար: Կաթողիկոսի գահավորակի հետևում կանգնած էր այն նույն ցահեղ պարավազը, բարձրանալու համար: Սուրբ Հայրը էփրեմ ակնունց ուներ, քաջահիմք՝ Էփրաիմ և կրում էր կաթողիկոսական աստիճան, որ օտարները բարձրանում են հայրապետ (Patriarch): Բայց դա այստեղ մի ավելի ցածր կոչում է և տրվում է հեռու ընկած, օրինակ՝ Երուսաղեմի կամ Կ. Պոլսի քեմերի առաջնորդներին: Կա ինձուներեք տարեկան էր, փորձառույամբ հարուստ մի մարդ, որ ձեռք էր բերել Հնդկաստան կատարած ճանապարհորդությամբ, և վաստակաշատ, որին հասել էր առաքիթի վարքով, գլխավորակապ ազնվամտությամբ, անշահախնդրությամբ և քրիստոնեական խոնարհությամբ: Կաթողիկոսի խոսակցությունը մեզ հետ անհետաքրքիր չէր չուրջ էր, և երբ նրան հիշեցրի ինձ գալու հատուկ նպատակը՝ կապված իր և ինձ համար, անշուշտ, կարևոր Արարատ լեռան հետ, ապա շատ անորոշ ու առը պատասխան ստացա: Եվ հրաժեշտի խոսքերը, որ այդ պատվարծան մարդն ասաց մեզ՝ օրհնանքի բառերով, ամենացանկալին էին ամբողջ այցելության ընթացքում:

Երեկոյան քեյին, որ մեր պատրաստակամ տանտերը՝ հայր Հովսեփը կարգադրեց մատուցել, մեզ հետ էին նաև կարճ ժամանակով այցելության եկած մի քանի վարդապետներ: Ինձ չէր հասցրվում խոսքարկոց անել նրանց հետ, ինչպես որ առհասարակ զրույց են անում այն մարդիկ, ովքեր իրար են հանդիպում հեռուներից գալով և ապրում են կյանքի զանազան դասանակներում: Բացի սարկավազ Աբովյանից, մասամբ և վարդապետ Մանվելից ու աստեղադպիր Հոհաննեսից, որ փոքր-ինչ հասկանում էին ռուսաց լեզուն, մյուսներից ոչ մեկը որևէ եվրոպական լեզվով չէր կարող խոսել: Բայց դա բոլորովին էլ զարմանալի չէր, երբ ի նկատի ես առնում այն հանգամանքը, թե որպիսի ներամիտք ու կտրված կյանքով են ապրում այստեղ, որի պատճառով շատերը նույնիսկ իրենց կես-

դարյա վաճակաճան կյանքի ընթացքում ոչ մի անգամ վաճակի պարիպանքից չուրս չեն կարողանում գալ: Մակայն առավել զարմանալին այն է, որ նրանց մոտ խիստ բերի է նաև հին լեզուների իմացությունը: Դա ինձ համար մեծ հուսախաբուրյուն էր, քանզի հույս ունեի, թե այստեղ արևելյան լեզուներին իմ անձամբ լինելու կօգնի լատին լեզվի իմացությունը: Հատկապես շատ ցավալի է, որ բոլորովին մոռացված է հույն ու հռոմեացի ընտիր մատենագիրների գործերի ընթերցումը, որոնցից, այնուամենայնիվ, կային վաճակի գրադարանում: Գիտական պարապմունքներից ես այստեղ համոզվեցի միայն հայոց պատմության ուսուցման, եթե միայն գիտական պարապմունքը կարելի է համարել այն, որ հայ վաճակաճաները հայերենով զրված հայոց պատմության գրքերը կարդում են՝ առանց դրանց նկատմամբ քննական վերաբերմունքի, քանզի որ դրանց ստեղծողները այդ պատմությունները պատմում են սեփական հեղինակությամբ և կամ էլ անստույգ ավանդությունների հիման վրա:

Հայոց մեջ իրենց պատմության ամենաընտիր և ամենահին աղբյուրներից մեկը համարվում է Ագաթանգեղոսի մատյանը: Ագաթանգեղոսը եղել է Տրդատ թագավորի աստեղադպիրը, ապրել է մեր վերկարկության երրորդ դարում, և քանի որ հայոց այրուները հայտնաբերված է միայն հինգերորդ դարում, վարդապետ Մեսրոպ Մաշտոցի կողմից, ինչպես պատմում են, երազում, սուրբ աչի տեսիլքի համաձայն, որը նրա աչքերի առաջ պատկերել է տառերի բոլորազմերը, ուստի ընդունված է, որ Ագաթանգեղոսն իր պատմությունը գրել է կամ հուսանալու հայերենով, կամ ամբողջովին հունարենով: Շատ հայտնի է Մովսես Խորենացու ժամանակագրությունը, որը, բացի հայերենից, հրատարակվել է նաև լատիներեն և ռուսերեն:

Հետևելով Մովսես Խորենացու և մյուս ոչ նույնքան հայտնի մատենագիրների վկայություններին, հայերը հավատում են, որ իրենց ազգի ծագումը գալիս է Հայկից, որ Հաբեթի սերունդներից մեկն էր և բաբելոնյան աշտարակաշինության օրերին բողոմու-գալիս է Արարատ լեռան կողմերը և այստեղ հիմնում հայկական թագավորությունը: Դա է պատճառը, որ հայերն այսօր էլ իրենց ոչ թե արմեն, այլ Haigh են անվանում: Արմեն անունը նրանց տվել են օտարները հայոց թագավոր Արամի անունով, որ շատ գորավոր պատերազմող է եղել: Այս Հայկի

չորս եղբայրներից, որ եկել են նրա հետ, հայերը հետևեցնում են նաև վրացիների և մյուս կովկասյան ժողովուրդների ծագումը:

Չափազանց հետաքրքիր է:

Հետագայում հայերի պատմությունը մեծ մասամբ ներկայանում է իբրև մի տխուր պատերազմ, որտեղ ընչաքաղց հարկաւաններն ու քրիստոնեության բշմամիներն այս գեղեցիկ երկիրն ու նրա՝ իլամին ու հեթանոսությանը ընդդիմադիր ժողովրդին դարձնում են իրենց անլուր դաժանության ու բարբարոսության զոհը, թեև հայերի պատմության մեջ էլ ինչ չեն լուսավոր կետերը, հիացմունքի արժանի խիզախության, կրոնի և հավատի նկատմամբ հաստատականության օրինակները, ինչպիսին յույց տվեցին հինգերորդ դարի ազնիվ կաթողիկոս Հովսեփի և քաջագործ իշխան Վարդանը՝ իրենց պայքարով և հաճում սուրբ գործի իրենց մահով: Բայց այս վեհանձն այրերի զոհվելուց հետո ժողովուրդը բշմամու ձեռքին իրեն զգաց ավելի բշվառ ու մենակ և բախտի կամքին հանձնված: Դրա տխուր հետևանքը եղավ հավատի անկումը և հայոց եկեղեցու ներսում ծայր առած երկպառակությունը, որ տևում է մինչև այսօր: Դա է պատճառը, որ Կիլիկիայի Միս քաղաքում գոյություն ունի առանձին կաթողիկոսություն, իսկ մի ուրիշն էլ, որ յոթ հարյուր տարի առաջ հիմնվել էր Վանա ծովի Ադրամար կղզում, 1831 թվականին Պոլսի հայերը Էջմիածնից ուղարկված պատրիարքի ձեռքով վերադրին:

Այո, հայոց հոգևորականների և աշխարհականների մի ոչ աննշան մասը նվիրված է հռոմեական կաթոլիկ հավատին: Այդ երևույթը սկսվել է շուրջ հարյուր տարի առաջ վարդապետ Մխիթարի ջանքերով, մի մարդու, որ ոգևորված ազնիվ ձգտումներով, ցանկանում է իր ժողովրդի մեջ տարածել գիտություն, առաքինի բարբեր և հավատ: Բայց նա չկարողացավ իր նպատակին հասնել Հայաստանում: Տեղի հոգևորականությունն ընդդիմացավ նրա նպատակներին, և նա հեռացավ Հայաստանից ու իր անձը պահպնել նվիրելով՝ ընդունեց քեներիկոյանների ուխտը: Նա նախ ապրում էր Մորեայում, իսկ հետո, երբ Վենետիկի հանրապետությունը նրան նվիրեց ս. Դավաթ կղզին, տեղափոխվեց այնտեղ: Անշուշտ, այս ճանապարհով նույնպես, Մխիթարը չէր կարող օգնել իր ժողովրդին ավետարանական մաքուր հավատի դարձնելու, սակայն հիշե-

լի մնաց նրա մեծ, անգամ Էջմիածնի ուղղափառ հոգևորականության կողմից ընդունվող ծառայությունը: Նա Վենետիկում հիմնեց սեփական տպարան, որով կարողացավ հոգալ հայերենով շատ օգտակար և ուսանելի գրքերի շքեղ ու ճաշակավոր տպագրության գործը: Միայն թե շատ ցավալի է, որ այդ գրքերը և, հատկապես, Սուրբ Գրքից ժողովրդի համար մատչելի չեն, քանի որ գրական հայերենն անհասկանալի է նրան, ընդ որում՝ ներկայիս ժողովրդական լեզուն նրանից տարբերվում է ամբողջովին: Եվ ինչպես ուղղափառ Էջմիածնի հոգևորականները, այնպես էլ Վենետիկի հայ կաթոլիկները անսամախ են այն բանում, որ ժողովրդական լեզվով Սուրբ Գրքի տպագրությունը անբույլատրելի մի նորարարություն կլիներ: Դրանով կարելի է բացատրել այն, թե ինչու Բազելի միսիոներական հաստատության ազնիվ անդամներին, որ քնակություն էին հաստատել Անդրկովկասյան Շուշիում, շիպողվեց իրենց իսկ կողմից պատրաստված Նոր կտակարանի արևելահայ, աշխարհաբար լեզվով տպագրությունը, թեև նրանք Էջմիածնի սուրբ Սիմոնից քախանձագին կերպով խնդրել էին ձեռագիրը՝ ի նկատի առնելու, քննելու և սրբագրելու համար:

Միայն սա բավական է հասկանալու համար առհասարակ, թե ինչ է Հայաստանում ժողովրդի նախկավոր, որպեսզի հեռավոր լինի դեմ նետել սնահավատության և անձնապաշտության բողբ, մի բան, որ նրան դատապարտել է հազարամյա բշվառության: Իսկ այն ձևը, որով Հայաստանում քահանան, ժողովրդական լեզվով ասած, տերտերը, այսինքն՝ հոգևոր տեղը, կարգ է ստանում, ապացույց է այն բանի, որ հայերի մեջ քրիստոնեական ճշմարիտ կրթության մասին դեռևս խոսք լինել չի կարող: Յուրաքանչյուր աշխարհական մարդ, եթե նա արդեն ընտրվել է համայնքի կողմից, և նախատեսված քառասուն օրը ծով պահելով ու ժամագրքեր սերտելով՝ անցկացրել է որևէ վանքում, կարող է արբեյակոսյանի կողմից քահանա օծվել, իրավունք ունի պատարագելու, մկրտելու, պատկառություն կատարելու և մահաներծի վերջին օծումը կատարելու: Այստեղ ամենից առաջ կարիք կա հիմնելու քահանայական մի վարժարան, քայց որը լինի գոտու ազգային, հայկական հաստատություն, որպեսզի Սիմոնի կողմից հաստատվող նրա սաներն իրավունք ունենան հուսալու, որ ազգը կկուսահի իրենց:

ՎԵՐՋԻՆ ՊԱՏՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս համառոտ դիտարկումներից հետո, որ մենք կատարեցինք հայոց ներկա վիճակի վերաբերմամբ իբրև այն ազգի, որը Նոյյան սուրբ լեռան շրջակայքում ապրում է անհիշելի ժամանակներից, լավ է այտուհետև մեր հայացրը դարձնենք մեր գործերին:

Մեր արշավախումբը վաճառում մի փոքրիկ համայնում ստացավ: Դա հիմնականում վերաբերում է վերև արդեն հիշված ջահել սարկավազին, Խաչատուր Աբովյան անունով, այսինքն՝ Խաչատուր որդի Աբովի¹⁸: Արարատի ստորոտին գտնվելու մտազին օրվանից նա կամեղին միացավ մեզ, և օգնում էր մասամբ իբրև արշավախմբի անդամ և, մի տեսակ, վանքի ներկայացուցիչ հայկական բնակավայրերում հատուկ հանձնարարություններ կատարելու համար, մասամբ էլ հայերենի, ռուսերենի, քաթարերենի և պարսկերենի իմացությամբ անվիտարիների դաճեցալով մեզ հասնել: Բացի այդ, երիտասարդն ինքն էլ ցանկություն ուներ մեզ ուղեկցելու համար թույլտվություն ստանալ և այդ մասին այնքան սրտաշարժ ձևով հայտնեց մեզ, որ ես հասկացա նրա անկեղծ ու եռանդուն շահագրգռությունը մեր գործի նկատմամբ, որի բարեխաղող ավարտման համար նա կարող էր մեծապես օգտակար լինել: Եվ իմ սպասումների մեջ ես հուսախաբ չեղա: Առաջին ժամից մինչև վերջինը, ամենատարբեր հանգամանքներում նա իրեն այնպես էր պահում, ասես, թե մեր գործերը նաև իր գործերը լինեին, և իր եռանդուն հարցափորության, համանա հակումների, սակավապետության, չափավորության և բարեպաշտության շնորհիվ ոչ պակաս, քան հոգու պայծառության, քաջարտության և դիմացկունության համար շահեց մեր հարգամքն ու մեր շնորհակալությունը:

Նրանից բացի մինչև Արարատի ստորոտը մեզ ուղեկցում էին նաև մի վարձու առաջնորդ և մի քանի կամավորներ: Այդպիսով, մենք բոլորս միասին, սեպտեմբերի 10-ին ցերեկվա ժամը 10-ին կարողիկոսի, նրա 12 եպիսկոպոսների և արքեպիսկոպոսների, շուրջ քառասուն վարդապետների և մեծաբանակ սարկավազների հետ դուրս եկանք Մայր Տաճարից և շարժվեցինք դեպի հարավ՝ ս. Գայանե վանքի և հայկական երկու գյուղերի միջով դեպի Արաք գետը: Դաշտերն այստեղ հարթ էին, կիսով չափ մշակված, կիսով՝ անմշակ: Դրանք ծածկված էին խոտով և տափաստանի տպավորություն էին թողնում:

Մեր երկու ընկերները խիստ տաքերկվում էին մնացածներից իրենց տոնակալ զգեստներով: Նրանք զինված էին իրենց գլուխ և հեծել էին պարսկական աշխույժ ձիեր: Նրանք խոսեց հուզմունքն արտահայտում էին մրցավազքով, կատակ խաղեքով և բարձր կանչելով:

Ժամը չորսից հասանք Արաքսի ձախ ափին, և պետք է կորեինք-անցնեինք նրա արագահոտ ալիքները, քանի որ այս կողմերում ոչ կամուրջ և ոչ էլ որևէ տեսակի լաստ կար: Գետի վրա նշված չէր նաև անցման որևէ տեղ, որտեղով հնարավոր լիներ հասնել այն ափը: Արաքսն անցնելու համար ուղևորն իր հույսը պետք է դնի Երևանից Նախիջևան տանող ճանապարհի կամրջի վրա, որն այստեղից հեռու է 5-10 վերսա: Մեզ ուղեկցողները ոչ մեկը նույնպես տեղանքին այնքան ծանոթ չէր, որ վտահեղինք նրան և սիրտ անեինք ջուրը մտնել սարքերի ու գործիքների հետ: Մենք մոտեցանք մոտերքում գտնվող խրճիթերին, որ տեղավորված էին թխուտների մեջ և փորձեցինք օգնություն խնդրել, սակայն բնակիչների մեջ չկարողացանք գտնել բավարար պատրաստություն ունեցող մեկին, որն ի վիճակի լիներ օգնել մեզ: Ստիպված էինք ինքներս մեզ փորձել:

Երբ թաքարներից մեկը՝ քրջե հազուստներով ու աղետի տեսքով, սակայն հստակ խեղքով և պատրաստակամ սրտով մի մարդ, հանդիպեց մեզ և տարավ մոտ երկու վերստ հեռու, որտեղ գետը թեև լայն էր, սակայն ջրի բերած վազակի և քարերի պատճառով ավելի տանձաղ էր: Այստեղ մա մեզնից խնդրեց ձիերից մեկը, որպեսզի փորձի գետի խորությունը և հունի անբութությունը: Երբ հասավ մյուս ափը, իմ մտքով անցավ, որ նա կարող է ձին առնել ու հեշտությամբ փախել, ինչպես

վում, և բժում է, որ անուճը սագում է նրան, քանի որ հունը շատ խորն էր և տորֆի նման սև գույն ուներ: Առավել կարևոր էր այն, որ նրա երկու ափերը՝ մի քանի հարյուր բայր լայնությամբ, ծածկված էին բարձր ու խիտ եղեգնուտներով, որից գետի հունը մշտապես ստվերների մեջ էր: Այսպիսի Սև ջրեր գոյություն ունեն նաև Արաքսի հովտում, գետի և լեռան միջև դրանք բազմաթիվ են, բոլորն էլ՝ համանման բնությանը, ձկնառատ և, հավանաբար, բոլորն էլ Արաքսի կողքային հոսանքներն են, որ հոսում են այս լայնատարած դաշտի ցածրադիր մասերով՝ հետո կրկին միանալու Արաքսին, այսինքն՝ դրանք նույնպես, անտարակույս, մնացորդներն են այն վիթխարի ջրիեղեղի, որ մի ժամանակ ծածկել է այս վայրերը և հետագայում հոսման ելք գտել: Այս գետերը հայերի և քարայրների համար ծառայում են իբրև ամենանպաստավոր տեղեր՝ բնակավայրեր կառուցելու և, հատկապես, բրնձի դաշտերն առատորեն ոռոգելու համար, քանի որ բրնձը, ինչպես հնուց է հայտնի, անհրաժեշտ հարմարություններից բացի պետք ունի և մեծ քանակությամբ ջրի, որի տակ էլ աճում է:

Արդեն մթնում էր, երբ հասանք Սև ջրին: Մենք պետք է գիշերեինք, բայց քանի որ մինչև գիշերվա լրիվ վրա հասնելը դեռ մի փոքր ժամանակ կար, ուստի որոշեցինք անցնել գետը: Թեև դա կապված էր ժամանակի կորստի և վտանգների հետ, բայց գետն անցնելով՝ հաջորդ օրը մենք ազատ կլինեինք գետանցից: Չույզ գերաններով և ծառի ճյուղերով հյուսված լաստը, որ ունեինք, լողացող կամուրջ կարող էր ծառայել միայն հետիոտների համար, բեռնված ձիերի համար այն շատ երեքուտ կլիներ, իսկ եռաձի սայլերի համար՝ բոլորովին անհարմար: Մտտերքում եղած քփերի, մացառների ու հատկապես ահագին քանակությամբ չոր եղեգների միջոցով լավ ամրացրինք լաստը, ծանր սարքերի արկղերն այն կողմն անցկացրինք ձեռքով, իսկ թեթևները՝ ձիերին բարձրած: Չիստարվին անցկացրինք դատարկ, մի ձի լծած, մենք էլ անցանք ոտքով՝ ձիերի սանձից բռնած և մեր հետևից քաշելով: Շուտով, երբ անցել էինք մյուս ափը, որ նույնպես ճահեռոտ էր ու խիտա եղեգնապատ, հարմար մի բլուր ընտրեցինք, որտեղ կարող էինք բարեհաջող ճամբար խփել և կրակ վառել՝ հանգիստ սպասելով հաջորդ օրվան: Հաջորդ օրը բացվեց և նրա հետ էլ նորացավ մեր ուրախությունը, քանի որ ուղիղ մեր հայացքի առջև՝ հարա-

վարձնայան կողմում, իր ամբողջ պարզությանը բացվեց վիթխարի լեռնազագաքը: Ես չկարողացա այդ բանկազին ժամերն օգտագործել՝ անելու նրա ճեպանկարը: Այն ժամանակ, երբ պարոն ֆոն Բեհազելը զբաղված էր դրանով, իմ ուշադրությունը գրավեցին ձիբանագույն որդերը, որ այս ու այն կողմ էին շարժվում չոր ավազազետնի և կարճ խոտերի վրայով: Նրանց մեծ-մեծ բներում մի տեսակ ամուր ու կարճ բույս արմատներ կային, բույս, որն առատորեն աճում է այս կողմերում և կոչվում է ոգնախոտ: Միջատներն այնքան շատ էին, որ կարելի էր դրանցից, առանց դժվարության, բավականին շատ հավաքել: Դա նորություն էր, որ բոլորովին էլ անօգուտ չէր կատար լինել Ռուսաստանի արդյունաբերության համար, ընդ որում՝ այս գավառներից, գործի պատշաճ կազմակերպման դեպքում, կարելի էր մեծ եկամուտներ ստանալ: Դրա առավելությունը Պարսկաստանում կազմակերպվող արտադրության նկատմամբ ակնհայտ է նրանով, որ իբրև որդան կարմիրի և առհասարակ կարմիր գույնի տարատեսակների հունք, ներկայումս այս կենդանիներից մեծ քանակությամբ չորացնում ու բանկ գնով վաճառում են Արևելյի բոլոր քաղաքներում: Բոսորագույնը, որը հիմա գործածում են Եվրոպայում, ստացվում է ամերիկյան գոշենիլ միջատից: Այն ապրում է Մեքսիկայում, ս. Դոմինգոյում, Յամայկայում, Բրազիլիայում և այլ երկրներում, առավելապես կակտուսակերպ բույսերի վրա, հողից վերև, այդ պատճառով էլ կենդանաբանության մեջ կոչվում է *Coccus cacti*: Պարսկական քոսուր գույնը սրանից փոքր-ինչ տարբեր է, և, հավանաբար, ստացվում է *Coccus polonicus* տեսակից, քանի որ այն գտնվել է նաև Լեհաստանում և մինչև ամերիկյանի հայտնագործումը, երկար ժամանակ այնտեղից էր մատակարարվում Եվրոպային: Գոշենիլ միջատի արու ծագելը թշուղ է և ներկի համար պիտանի չեն: Այդ նպատակի համար օգտագործում են հատկապես չոր ծագելը, որ բալի կլրիզի մեծությամբ ունեն և շատ մանր ոտքեր, որոնցով շարժվում են սողալով: Դրանք հատապտղի նման փափուկ են և լիքը լցված մաքուր, մթնանյութի զույն ունեցող արյամբ, քաշվածման ու կնճռապատ մաշկի պատճառով արևի տակ չեն փայլում, այլ բաց, հաճելի երանգ են ստանում: Չորացնելիս կուչ են գալիս և դառնում կորեկի հատիկի չափ և ստանում են կապտավուն երանգ: Բոսորագույն ներկն ստացվում է դրանցից լուծույթ

պատրաստելով՝ անպայման հետը խառնելով թթու և մեկ էլ քոտորագույն պտտաչ: Վերը նշված բույսերի արմատների մեջ են գտա նրանց բները՝ լիքը լցված երեք, չորս, տասը և քսան շատ նուրբ, թրթի մմանուրյուն ունեցող թաղանթապարկերով: Դրանք պատրաստված էին միջատների մեծուքյանը համապատասխան և անկարգ կերպով կուտակված էին իրար վրա: Հարսնյակավորման այս վիճակում դրանք ծնունդը ոչնչանում են, իսկ գարնանը բներից դուրս են գալիս նորերը՝ ջահել, ծիրանագույն միջատներ: Արարատից իջնելուց անմիջապես հետո ես շնորհաց Անդրկովկասյան գավառների կառավարելու կրճատ Պասկևիչի Երևանցուն տեսելիացնել այս հայտնագործության մասին և ասածս ապացուցել հետս վերցրած բույսերի ու այդ միջատների մի քանի օրինակներով: Դրանցից ես հանձնեցի նաև արքունական սենեկապետ պարոն Պելչինսկուն, որն այդ օրերին կառավարելուս համեմարարությանը շրջում էր այս գավառներում և նպատակ ուներ տեղեկանալու արդյունաբերության վիճակի մասին:

Մենք ճանապարհ ընկաք միայն երեկոյան ժամը ութ անց կեսին, երբ ազատվեցինք այս զբաղմունքներից և պատրաստ էինք շարունակելու մեր ճանապարհը: Տարածքը, որով հիմա առաջ էինք գնում, Արաքսի հովտի տափարակների մնաց այլևս հարթ չէր, այլ բարձրաձուլ էր, սկզբում անձնա, իսկ հետո ավելի կտրուկ՝ բազմապիսի վերելքներով ու վայրէջքներով: Կարճ ասած՝ դա սկիզբն էր, առորտը վիթխարի այն լեռան, որի վրա մենք ոտք էինք դրել: Արահետը, որ առանց այդ էլ բոլորովին ճանապարհի մնաց չէր, շուտով դարձավ նաև քարքարոտ և խիստ թեք այնքան, որ ձիերն արդեն մեծ դժվարությամբ էին քաշում սայլերը: Շուրջբոլոր փշրված քարերի մեծամեծ զանգվածներ էին թափված, և հասկանալի էր, որ այդպես այլևս չենք կարող առաջ գնալ:

Մենք շուտ եկանք հայկական Արևուտի գյուղի կողմը, որ Արարատ լեռան ստորոտին գտնվող միակ բնակավայրն է: Այն ունի 175 ծուխ, քարեղեն եկեղեցի՝ առանձին բահանայով, և շատ ունեւոր մի տանուտեր: Բոլոր տները քարեղեն են, արևելյան ձևի տափան և կավե հարթ կտորներով: Օդի և լույսի համար լուսամուտների փոխարեն անցքեր կալին բացված դեպի փողոցի կողմը: Բոլոր ագարակները ցանկապատված էին քարե պարիսպներով: Բնակիչները անասուններ են ձիեր են պա-

հում, ցանում են ցորեն, բայց քանի որ գյուղամերձ դաշտերը քարքարոտ են, դաշտամշակությամբ զբաղվում էին փոքր-ինչ հեռու ընկած հանդամասերում: Ունեւորներն ունեն նաև խաղողի այգիներ, որ կլայած են գյուղին: Սակայն այս վայրի ամենակարևոր պարզվող և կյանքի իսկական աղբյուրը փոքրիկ գետն է, որը, սկսվելով Արարատի սառցադաշտերից, ցած է իջնում նրա հյուսիսարևելյան խորխորատում: Դրա հենց վերջնամասում էլ՝ տափարակի վրա, տեղավորված է Արևուտին: Այդ խորխորատի ժայռերից մեկից, գյուղից քիչ վերև, մի հրաշալի աղբյուր է բխում, որի ջուրը խմում են: Աղբյուրն ունի ավազան և քարե տաշտեր՝ սովորագուրկ արտոներից և արևային կիզի հովիտներից վերադարձող հոտերի համար: Երեկոներին այստեղ երևում են նաև բազմաթիվ ջահել աղջիկներ, որ զվարթ խաբուզորույցով հավաքվում են՝ աղբյուրից կծերով ջուր տանելու: Արևուտի շրջակայքում փշող հովը շատ ավելի մեղմ է, քան Արաքսի հովիտինը: Նրա բարձրությունը Արաքսից քեև աննշան է, սակայն մեծապես ազդում է Արարատի սառցե գագաթի մոտիկությունը, և նրանից փշող սառն օդի հոսանքը նշանակալից չափով զովացնում է օդը և մեղմացնում կլիման: Դա է պատճառը, որ Արևուտին Երևանի հարուստ մարդկանց համար ժամանակ առ ժամանակ տարվա շոգ եղանակներին դառնում է հանգստավայր: Նույնիսկ պարսկական խան Սարդար Հուսեինը պատաշան չի համարել Արևուտի դիմացի բուրդների վրա մի մշտական ապարանգ-ամառանոց կառուցել՝ իր ողջ ընտանիքի ու պալատականների համար բազմաթիվ սենյակներով և բոլոր այն հարմարություններով հանդերձ, որ պահանջում է արևելյան ճոխությունը, չնռաճալով պարիսպներն ու աշտարակները: Այն օրից, երբ պարսիկներն այս վայրերը զիջել են ռուսներին, այս գեղեցիկ անկյունը դարձել է անընկալ ու անօգտագործելի, և եթե չգտնվի սրտացավ տեր, ապա կավերվի իսպառ:

Արևուտին հավատացյալ հայերի համար առանձնահատուկ արժեք ունի նաև որպես սրբավայր: Ըստ ավանդության՝ դա հենց այն վայրն է, որտեղ Նոյն իր որդիներով ու բոլոր այն կենդանիներով, որ իր հետ ունեւոր տապալանից դուրս գալուց և լեռնագագաթն իջնելուց հետո, կանգ էր առել: «Եվ Նոյը մի սեղան շինեց Եհովայի համար և առավ բոլոր մաքուր անասուններից և բոլոր մաքուր թռչուններից և սեղանի վրա աղջակեզներ մատուցեց» (Ծննդոց, Ը 20): Այդ վայրը հիմա մատուցույց

են անուս այնտեղ, որտեղ կանգնած է եկեղեցին: Եվ Արկուռիի խաղողի այգիները հենց այն այգիներն են, որոնց մասին Սուրբ Գրքը ասում է. «Եվ Նոյը սկսեց հողագործ դառնալ և մի այգի տնկեց» (Ծննդոց, Թ 20): Մյաժամանակ ուշագրավ է, որ քեև եկեղեցու կառուցման տարին անորոշ է, սակայն պիտի որ շատ հին ժամանակներից վերաբերի, և գյուղի հայկական անվանումը ուղղակի կապ ունի այդ դեպքերի հետ, քանի որ Arghabel հայոց լեզվում նշանակում է տնկել, դնել, իսկ argb նշանակում է տնկեց: Եվ Urri նշանակում է խաղողի որբ: Այնպես որ վերը նշված պատմությունը ճորտի հայտնագործությունը չէ:

Հենց այդտեղ էլ՝ խաղողի այդ նշանավոր այգու մոտ, Արկուռիից մի չորս վերտու ցած, կեսօրից առաջ ժամը 11-ին մենք կանգ առանք և սկսեցինք խորհել, քե ինչ կերպ շարունակենք մեր իրերը սայլերով տեղափոխել, ինչպես որ մինչև այստեղ հասցրել էինք: Հնարավոր օգնությունը մենք կարող էինք գտնել գյուղում, բայց դա պետքում էր գգուշություն, քանի որ արևելյան ժամտախոը չէր խնայել նաև Արարատին մերձ գյուղերը, քեպեսև այս կողմերում այն ուժգնությունը չէր ունեցել, ինչպես մյուս բնակավայրերում: Դա երևաց այն բնակիչների խոսքից, որոնց հետ մենք գրուցեցինք: Բայց նրանք էլ, բժշկական միջամտությունից և դեղերից վախ ունենալու պատճառով, ասում էին, որ աղետն արդեն, իբր քե, անցել է, բայց այդ դեռևս կար, քեև մի քանի տներում հիվանդներն ակցել էին կազորովել: Սարկակազ Արուվանի հետ ես առաջ անցա և դուրս գալով ճանապարհից՝ խնդրեցի, որ ինձ մոտ շտապ կանչեն տանուտերին: Նրա անունը Ստեփան աղա էր, դեռևս պարսկական իշխանության օրոք մեծ հեղինակություն ունենալով, վաստակել էր այդ ժամանակներից շատ ազդեցիկ և ժառանգական համարվող մեղիք պատվանունը, որը նույնն է, քե վերակացու: Նրա արտաքինը ինձ վաստաություն ներշնչեց, առավել ևս դուրսակա էր նրա վճռական ու եռանդուն պարաստակամությունը մեզ օգնելու համար: Նա անմիջապես հրամայեց մտերներում արածող 15-20 եզները բոլորն էլ կապել ու ցած տանել՝ մեր իրերը բարձրում համար, ապա ինքն էլ իջավ այնտեղ, որտեղ մեր արշավախումբն մեր իրերն էին: Ծանփորդական կաթսայով ջուր բերեցինք, մեջը մի մեծ կտոր բլրորակիք լցրեցինք, որպեսզի դրանով մեր իրերին դիպչող գյուղացիներն իրենց ձեռքերը լվանային և ցողվեին, մի քան,

որ նրանք սկզբում այնքան էլ հաճույքով չէին ստեղծում անել, սակայն երբ մեր զինվորները սկսեցին վլացվել, նրանք առանց դժվարության կատարեցին նույնը և դեռ զինվորներին էլ օգնում էին: Եզներից միայն ուրի կարիքն ունեինք մենք, այդ պատճառով էլ ընտրեցինք ամենատեղեղները, նրանց վրա զգված բոլոր պարանոցներն ու փուլերը լավ ցոլեցինք քրով և հետո միայն բեռնեցինք: Մինչ գյուղացիները մեզանից առաջ ճանապարհ կընկնեին, հյուրասեր Ստեփան աղան մեզ հրավիրեց իր խաղողի այգին և հաճույքով թույլ տվեց, որ ցերեկվա ճնշող տապն ու այդու ծարավը վլանեինք զով աղալարների տակ, Հայր Նահապետի խաղողի այգու համեղ ու արդեն հասուն պտուղներով՝ հուրախություն մեր հոգու: Ապա քարձանցած՝ շտապեցինք մեր իրերի հետևից՝ վաստահորեն անցնելով գյուղի միջով, բայց և խոսափելով մարդկանց հետ բոլոր տեսակի խոսակցություններից ու կապերից: Ստեփան աղայից հանգստացուցիչ տեղեկություն անուկով Արարատի վրա իջևանելու և մնալու հնարավորության մասին՝ ես ազատ արձակեցի մտավկացի մեր ուղեկիցներին, որոնք քեև հավատարիմ ու հանրեբաստար էին, սակայն փոքր-ինչ բանկ էին ճստու:

Լեռան վրա բնապատմական ուսումնասիրություններ կատարելու համար հարկավոր պայմաններն ստեղծելու, դրանց ճշգրտությունն ապահովելու և ոչ պակաս չափով ժամանակի կորուստ չտալու նպատակով անհրաժեշտ էր, որ այդտեղ կամ էլ գոնե մոտիկ որևէ վայրում մի կացարան ունենայինք, որտեղ ճանապարհորդները իրենց ուղեկցուների և գործիքների հետ կարողանային որքան հնարավոր է երկար ժամանակով և հուսալի օրևան գտնել: Այդ խնդրին ես դեռևս Թիֆլիսում էի հատկ ուշադրություն դարձրել և կարողացել էի Արկուռի գյուղի և նրա շրջակայքի մասին Կախեթի իշխան Ալ Շավճավաճեցի, նրա հետ ծանոթանալուց հետո, տեղեկություններ ստանալ: Նա պարսկական պատերազմի ժամանակ կառուցել էր Երևանից Բայազետ տանող ուազմական ճանապարհը և մեծ հեղինակության հետ ձեռք էր բերել նաև այս վայրերի լավ իմացություն: Սակայն Երևանի նահանգում մասնախախտ ապարությունը խառնեց ին բոլոր հաշիվները և սուպեց այլ տեղեկություններ հավաքել: Բայազետը, որ թուրքական նույնանուն փաշայության կենտրոնն է Արարատից հարավ, նրանից հեռու էր ընդամենը 30 վերստ: Այնուամենայն կարող էինք ստանալ այն օգնությունը, ինչը մեզ չէին կարող տալ սովորական

գյուղերը: Բայազետ քաղաքը խնայել էր կործանարար ժամատախտը, որը, սակե, հենց մեր ծրագրերը խանգարելու համար էր լույս աշխարհ ընկել: Բայազետն ինձ համար կարևոր էր նաև մեկ այլ նկատառումով: Երբ ես Թիֆլիսում էի, Էրզրումի գործերի հրամանատարի և մի քանի այլ փաշաների հետ՝ որպես գերի, այնտեղ էր գտնվում նաև Բայազետի փաշան՝ Մեհմեդ Փահլուլը: Նա բանտային կալանքի տակ չէր, այդ պատճառով էլ առանց դժվարությունների ինձ հաջողվեց գնալ նրա մոտ և ծանոթություն հաստատել: Այդ մասին չխոսել ես չէի կարող, և ահա փոքր-ինչ ուշացումով մի քանի խոսք եմ ավելացնում Թիֆլիսում անցկացրած իմ օրերի մասին: Արեւելյան այդ մեծ փաշայությունը մյուսների համեմատությամբ այն առավելությունն ուներ, որ այն ժառանգական էր փաշայի ընտանիքի համար: Փաշայի հետ բնական պայմաններում ծանոթանալու համար ես ոչ մեկին չհանդրեցի իմ մասին կանխավ ծանուցելու նրան կամ ուղեկցելու ինձ, այլ մի երեկո՝ ժամը 5-6-ի արանքում, իբրև բոլորովին անձանոթ մի մարդ, մտա նրա բնակարանը: Առաջին հարկում գտնվող ծառաներն ինձ հասկացրին, որ իրենց տերը աղոթում է, սակայն խոստացան իմ մասին հարդորել նրան: Ես շնորհակալություն հայտնեցի նրանց և նստեցի սպասելու: Ծուռով փաշան ավարտեց աղոթքը: Նա բարձրահասակ, ճուրղ կազմավորվ մի մարդ էր, և արևելյան սատրապի իր հանդերձներով, քեթև, աշխույժ, բայց հաստատ քայլերով ընդառաջ եկավ ինձ: Նա ինձ ողջունեց իր լեզվով և այնպիսի վարքությամբ ու հաճեցի դեմքով, որ, չնայած բուրբերեմի իմ անգիտությունը, ես չկասկածեցի, որ նրա համար բարի էլ ինչ էր և նրա հետևից մտա այն փոքրիկ սենյակը, որտեղ աղոթք էր անում: Մենյակի երկու պատերի մոտ գետնին դրված էին բարձր: Մենք նստեցինք իրար մոտիկ: Երբ թարգմանիչը եկավ, ես կարճ ասացի, քե ով եմ և որն է իմ գալու նպատակը: Այդ ամենի մեջ ամենակարևորը և հաստատապես ամենագնահատելիս այն էր, որ իմ ձեռնարկած գործը գտնվում էր Մեծ Կայսր Նիկոլայի հովանավորության ներքո, որի հանդեպ նա ցուցաբերում էր անկեղծ և սրտազին հարգանք, քանզի նա հաճույք էր ունեցել ճանաչելու Նորին Մեծություն՝ որպես հաղորդի և հավառակորդի, կատավարման ոգին: Սպասավորները մեզ ծխախոտ և ծխանորձ բերեցին թուրքական տվորության համաձայն՝ մի երկար, խողովակաձև, կավաշեն, փոքրիկ աման՝ ծխելու համար մի կտոր շի-

կացած ածուխ վրան: Ամանը դրված էր ափսեի մեջ, որ գորգը չարվի: Բերեցին նաև սև սուրճ՝ փոքրիկ, նրբազեղ, գավաքի ձև ունեցող բաժակներով, դրված արծաթե պնակների մեջ, ինձ համար՝ շաքարով, փաշայի համար՝ առանց շաքարի, ինչպես որ ընդունված էր թուրքերի մոտ: Այսպես ջերմ գրուցելով՝ անցավ մի քանի ժամ, և մենք բաժանվեցինք՝ կրկին հանդիպելու ցանկությամբ: Ես նրան այցելեցի ևս մի քանի անգամ, երբեմն մենակ, երբեմն էլ՝ ուղեկիցներիս հետ: Նա ինքն էլ ուրախամունդ էր մեր այցելություններով, երկնոներին վարձանուն էր՝ մեր հեռադիտակով նայելով աստղերին, բայց առանձնապես մեծ բավականությամբ էր արտահայտվում հարվածային փակնով իմ ստորճանակի մասին, որը նրան հույժ գարնացրել էր և շատ ուրախացրել: Նա չէր կարող հավատալ, որ ստորճանակի առանց կայծքարի կարող է կրակել: Պատրաստելով ստորճանակը՝ ես նրան խնդրեցի մի անգամ փորձել: Նա կարգադրեց որոշակի հեռավորության վրա ճրագ տեղադրել և կրակեց՝ հանգցնելով ճրագը և ցուցադրելով քե՛ իր հնուությունը և քե՛ ստորճանակի ուժը: Առաջին այցելության ժամանակ ինձ համար գարնանայի էր, որ այդքան ուշադիր մարդը, երբ ես նրան հարցրեցի Արարատի մասին, ոչ մի հետաքրքրություն չցուցաբերեց: Ես նրան ցանկանում էի հարցնել այն ամենի մասին, ինչ վերաբերվում էր լեռանը, սակայն նա մտալիվ ես ասաց, որ ռիճե՛ չգիտի և առիասարակ չի հասկանում, քե ինչ է նշանակում Արարատ: Ես գլխի ընկա, որ թուրքերին այդ բրիտանական անունն անձանոթ է և անմիջապես տվեցի հիշաձև Ազրի դաղ անունը, որից հետո միայն փաշան հասկացավ ցանկությունն և խոսեց մեծ բավականությամբ: Նա ասաց, որ անհնար է նրա վրա բարձրանալ, և որ իր հայրը նույնպես մի անգամ փորձ է արել բարձրանալ այդ լեռը: Երբ ես նրան հայտնեցի իմ ցանկությունը, որ կարիքի դեպքում կուզենայի լեռը բարձրանալ Բայազետի կողմից, այսինքն՝ հարավից, նա լիովին համաձայնեց ինձ հետ՝ հանգստացնելով այն կասկածներից, որ ունեինք տեղի բնակչության նկատմամբ: Ընդ որում նա ինձ հանձնեց մի նամակ, Բայազետում ապրող իր ընտանիքին հանձնելու և այն օրհնի համար, որ կարող էր ճանապարհին ինձ մեծ չափով օգնել:

Ինչ վերաբերվում է Արարատ լեռան լանջին կացարան ունենալուն, ապա Թիֆլիսում լուսամիտ ու սիրագորով վարդապետ Հարություն Ալամդարյանը մեզ ասել էր հայկական մի

փորձի վանքի մասին, որ պետք է գտնվելիս լինել Արարատի հյուսիսային լանջին, հավանաբար, Արկուտի գյուղից ավելի վերև, բայց ինձ չէր կարող տեղը որոշակի ասել, քանի որ ինքը չէր եղել այդ կողմերում: Եվ այդպես տատանվելով, թե ո՞րը կետք է ընտրել՝ Արարատի հյուսիսային՝, թե՞ հարավային կողմը, քրիստոնեական վանքը, թե՞ մուսուլմանական բաղաբը, ես հասա Էջմիածին, որտեղ հույս ունեի գտնել վերջնական վճիռը և գտա: Արկուտի վերևի վանքը, որի մասին Ալամդարյանն ինձ տեղեկություն էր տվել, իրոք գոյություն ուներ, և ըստ վանականների պատմածի՝ բավականին ընդարձակ էր մեր պահանջները բավարարելու համար, նամանավանդ, որ անմասն էր մնացել Արկուտի հասած ժամտախտից: Այստեղ արդեն ինձ չէր կարող տատանել ոչ մի երկրորտանք, թե որ կողմը գնամ: Պետք էր գնալ սուրբ Հակոբ: Արկուտի միջով ճանապարհը բարձրանում էր դեպի վանքը, որ գյուղից հեռու էր մոտ երեք վերստ: Այստեղ էլ, ահա, սեպտեմբերի 11-ի երեկոյան կողմ, վանքի պարիսպների մոտ կանգ առավ մեր քարավանը: Բակ մտնելիս առաջինը ողջունեցի այն հոգևորականին, որ ելավ ինձ ընդառաջ: Պատվարծան մի ծերունի էր նա՝ բարձր հասակով և այնպիսի դիմագծերով, որոնք ոչ թե տառապանք, այլ հանգստություն և ազնիվ հնազանդություն էին արտահայտում: Գլուխն ակտր էր, պարսկական գերիշխանության վերացման օրվանից ազատ սափրվելու տիան ծանրությունից և ծածկված հնդկական սև կտորից կարված սրածայր վեղարով: Երկար, ճերմակահեր մորուք ուներ, մեծ, խոր ընկած աչքեր, որ մեզմ հայացքով նայում էին դեպի ինչ-որ ավելի գեղեցիկ ու մաքուր աշխարհ: Կապույտ կտորից կարված պարզ, համարյա մաշված հանդերձներով, պարսկական բրդյա զովպաների վրա միայն մի գույգ անշուք մուճակներ հագած այդ ծերունին սուրբ Հակոբ վանքի վանահայր Կարապետն էր: Մի ձեռքում՝ տերողորմյան, մյուսը կրծքին ծուռ դրած և փոքր-ինչ խոնարհվելով՝ նա խոր և թույլ ձայնով հայերեն տվեց իր պատասխանը իմ հարգալից ողջույնին:

Մեր օթևանն արագ աչքի անցկացնելուց հետո, որ վանահայրը խնդրեց անել, եզների վրայից իջեցրինք մեր իրերը և նախապես հավաքեցինք վանքի սրահում, որտեղ դրանք զգալի տեղ բռնեցին: Շուտով ազատ արձակեցի մեզ ուղեկցող գյուղացիներին, և մինչ կավարտեինք տեղավորվելը՝ բերել տվեցի զինու տիկը, որում դեռ Կախեթից բերած անխառն զինի կար և

բաժակը լցնելով՝ սիրով հյուրասիրեցի նախ՝ ծերունուն, ապա՝ ըստ կարգի նաև մյուս բոլորին՝ կրկնելով մի բանի անգամ, մինչև որ վերջին բաժակը դատարկվեց, և կարմիր կախեթականին փոխարինելու եկավ հայր Նահապետ Նոյի ոսկեզույնը: Մեր պատվարծան տանտերը չէր խուսափում բարձր տրամադրության ուրբալ գեղունաներից, թեև նրա հեզաբարո էությունը ամեն ակնբարբի, ամեն հարաբերության մեջ, ինչպես մեր հետագա շփումների ընթացքում, այնպես էլ իիմա, մնաց անփոփոխ: Պարզապես մի նուրբ ջերմություն էր գծագրվել նրա դեմքի խորշումներից և հայրախնամ բարեհաճության նշանն էր երևում նրա հոգելից հայացքի մեջ՝ առ յիս:

ԱՐԱՐԱՏԸ ԳՐՔԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՆՎԱՐՆԵՐՈՒՄ

Այս լեռն Արարատ անունը կրում է արդեն երեք հազար երեք հարյուր տարուց ի վեր, քանի որ նա հիշատակվում է գրքերից հնագույնի՝ Մովսեսի Շննդոց գրքում, որտեղ ասված է. «Եվ յոթներորդ ամսում՝ ամսի տասնևկուրտորդ օրը տապալանը Արարատ սարի վրա նստեց»։ Մյուս հիշատակությունները մի քանի հարյուրամյակ հետո գրված Հին կտակարանի ներքոհիշյալ էջերում են։ Եսայի 37, 38 և Բ Թազավորաց 91, 39 գրքերում խոսվում է Արարատ երկրի, իսկ Երեմիայի 51, 27 վրտխներում՝ Արարատյան քաղաքի մասին։ Իսկ հայտնի պատմագիրներից ամենավաղագույնը՝ Մովսես Խորենացին, հաղորդում է, որ մի անբողջ երկիր այդ անունն էր կրում, և հայոց հին քաղաքներից մեկի՝ Արա Գեղեցիկի անունով էլ լեռը կոչվել Արարատ։ Արա Գեղեցիկը, անկասկած, ապրել է Քրիստոսից 1750 տարի առաջ և բարեղմացիների դեմ մի արյունալի ճակատամարտում, որ տեղի է ունեցել Հայաստանի դաշտավայրերից մեկում, սպանվել է։ Դաշտը նրա անունով կոչվել է Արայի արատ, այսինքն՝ Արայի կործանում։ Մինչ այդ անվանվել էր նաև վայրը Ամասիա իշխանի անունով, որը Հաբեթի վեցերորդ սերունդն էր, և նրա անունով լեռը կոչվել է Մասիա։ Բայց սա եզակի անվանում է, որով հայտնի է միայն հայոց մեջ, քանի որ թեպետև Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ այն այլ կերպ չի անվանվում, քան Արարատ, սակայն ժողովուրդը պահպանել է Մասիա անունը, իսկ մյուսը չգիտի։ Անգամ այն հայերը, որ ապրում են Նոյի սուրբ լեռան մոտերքում, չգիտեն Արարատ անվան մասին, մնան այն եվրոպացիներին, որոնք անտեղյակ են Մասիա անվանը։ Բնակարանարար, Արարատ անվանը անճանոթ են նաև քուրդերն ու պարսիկները։ Առաջինները, ինչպես վերևում նշել են, լեռանն արաբերեն անվանում են Ազրի դադ, այսինքն՝ գառիթափ լեռ։ Եվ քանի որ արաբերենն ընդհանուր լեզու է, ուստի քրդերը,

պարսիկները, իրենք իսկ՝ հայերը, երբեմն գործածում են այդ անունը։ Ոմանց կարծիքով՝ պարսիկների մոտ այս լեռը պետք է որ ունենա նաև Կուռ-ի-Նուռ անունը, այսինքն՝ Նոյի լեռ։

Դաշտավայրի հարավային հատվածում, որն ունի հիսուն վերստ լայնություն և այնքան երկարություն, որից միայն 100 վերստ է տեսանելի, և որի միջով աղեղնաձև անցնում է Արարատ գետը, բարձրանում է Արարատ լեռը՝ բաղկացած երկու գագաթից՝ Մեծ Արարատից և Փոքր Արարատից, որը կից է մեծին։ Մեծ Արարատը հյուսիսարևմտյան կողմում է, իսկ փոքրը՝ հարավարևելյան։ Նրանց գագաթները ուղիղ գծով իրարից հեռու են 10,5 վերստ, և երկուսի ստորոտներն էլ միասխառնվում են իրար լայնատարած մի հովտում, որ հոտերի համար ծառայում է իբրև արտոսավայր, իսկ ավազակ քրդերի համար՝ իբրև լավ քարստոց, որտեղից նրանք հարմար ու ապահով կապ են պահպանում հյուսիսային և հարավային կողմերում ընկած զավառների հետ։

Մեծ Արարատի զագաթը գտնվում է հյուսիսային լայնության 39 աստիճան 42 րոպեի և արևելյան երկայնության 61 աստիճան 55 րոպեի տակ՝ ըստ Ֆեբրոյի։ Նրա բարձրությունը 16254 փարիզյան ոտնաչափի է կամ ծովի մակերևույթից հինգ վերստ, իսկ Արարսի դաշտի համեմատությանը՝ 13530 փարիզյան ոտնաչափ կամ էլ մոտ չորս վերստ։ Լեռան հյուսիսարևելյան լանջը կունենա մոտ քսան, իսկ հյուսիսարևմտյանը՝ մոտ երեսուն վերստ երկարություն։ Հյուսիսարևմտյան լանջի վրա դեռ հեռվից աչքի է ընկնում խոր ու մաշայաղեն վիղը, որ մի քանիսը մեմանցնում են հանգած խառնարանի, բայց իձն թվում է, որ ավելի մնան է ճեղքի, կարծես թե լեռը վերևից ներքև պատռված լինի։ Գագաթից ներքև ուղղահայաց գծով մտն սնել, իսկ թեթությանը՝ շուրջ չորս վերստ նրան ծածկում է հավերժական ձյունի ու սառույցի շերտը՝ կտրտված լեռան իջվածքներին ու բարձրություններին համապատասխան։ Լեռան հյուսիսային կողմի վրա 13390 փարիզյան ոտնաչափ բարձրությունից (ծովի մակերևույթից մոտ չորս վերստ բարձրության վրա) քարացած և միայն փոքրաթիվ ժայռատանձենով ընդմիջվող մի սառցե պատյան է ձգվում մինչև գագաթը և նրա վրայով, բայց փոքր-ինչ պակաս երկարությանը, իջնում հարավային կողմի վրա՝ դա Արարատի արժարափայլ գագաթն է։

Փոքր Արարատը գտնվում է հյուսիսային լայնության 39 աստիճան 39 րոպեի և արևելյան երկայնության 62 աստիճան

9 բուսական տակ՝ ըստ Ֆերրոյի: Նրա զագաթը ծովի մակերևույթից բարձր է 12284 փարիզյան ոտնաչափ կամ 3 3/4 վերստ, իսկ Արաքսի հովտից բարձրությունը կազմում է 9561 փարիզյան ոտնաչափ կամ մոտ երեք վերստ: Չնայած զգալի բարձրությանը, նա մշտապես իր վրա ձյուն չի կրում, հովտներերին, սեպտեմբերին, հավանաբար, նույնիսկ օգոստոսին լիովին ազատվում է դրանից: Նրա լանջերը շատ թեք են, ավելի թեք, քան Մեծ Արարատինը: Նա գրեթե իսկական կոնի ձև ունի և բազմաթիվ ձորակները, որ զագաթից ճառագայթաձև իջնում են ցած, նրան տալիս են շատ յուրահատուկ ու հրապուրիչ տեսք:

Թեպետև երկու Արարատներն էլ այլ լեռների շարունակություն չեն, այլ կանգնած են առանձին իրենց վիթխարի հասակով, բայց բոլորովին կտրված չեն մյուս լեռներից: Նրանց հարավարևմտյան փեշերը կորչում են Բայազետի ու Դիաղիմի բարձրավանդակներում, որտեղից սկիզբ են առնում Եփրատի արբյուրները: Մեծ Արարատի հյուսիսարևմտյան փեշը երկար բլրաշարով տարածվում է Արաքսի ափով: Նրա մեջ աչքի են ընկնում մի քանի կոնաձև, շատ սրածայր զագաթներ: Այդ լեռնաշղթայի արևմտյան ծայրը հասնում է Արաքս գետը սկզբնավորող աղբյուրներին, բոլորում է Էրզրումը և ապա, ինչպես Արաքսի աջ ափը, այնպես էլ ձախը, զարդարում է մի լեռնապարով, որ առանձին տեղերում, օրինակ Կարսի մոտ, շատ մեծ բարձրության է հասնում: Հոկտեմբերին, երբ միայն Մեծ Արարատի զագաթն էր ծածկված հավերժական ձյունով, ես այդ լեռնապարի վրա տեսա զագաթներ, որոնք ձգվում էին շուրջ քսան վերստ և ծածկված էին զգալի հաստությամբ ձյունով: Դրանք, հավանաբար, Սողանլուղի լեռներն էին, Տավրոսի լեռնաշղթայի ճյուղավորումներից մի քանիսը, որ վկաներն էին Կարսի, Հասանկալայի և Էրզրումի հերոսամարտերի, ինչպես որ Արարատը վկան էր Երևանի և Բայազետի հերոսամարտերի:

Հրաշալի ու համակող է այն տպավորությունը, որ թողնում է Արարատ լեռը բոլոր նրանց վրա, ովքեր ի վիճակի են գտնել փոքր-ինչ զգալու բնության այս մեծաքանակ ստեղծագործության գեղեցկությունը: Եվ զգալուն սիրտ ու ճարտար գրիչ ունեցող շատ ճանապարհորդներ են փորձել վրձնով ու գրչով շունչ տալ այդ տպավորությանը:

Արարատ լեռան առաջին նկարները ես գտնում եմ Շարդեհի մոտ՝ յոթերորդ և իններորդ պոնոնե տախտակների վրա:

Առաջինը, որ արված է Երևանից, ամբողջովին ձախողված է, իսկ երկրորդը՝ արված Էջմիածնից, ըստ ուրվագծի և ստահագման, այնքան էլ վատը չէ, և ավելի հարազատ է, քան նոր ժամանակների մի շարք նկարներ: Թուրքները նյութը պատկերել է հողով և որքան հեմարավոր է՝ ճշգրիտ, նրա ուրվանկարների յուրաքանչյուր գծը կարելի է ցույց տալ բնության մեջ, բայց արտասովոր չափազանցությամբ, որը գայթակղված երևակայության արդյունք է: Մոռիերը երկու Արարատներն էլ պատկերել է արևելյան կողմից, բայց նկարի մեջ բնության ձևերին հարազատ չի մնացել, այլ ավելի շուտ հետևել է այն


Արարատի պատկերը՝ արված Թուրքների կողմից (մոտ 1780)





Արարատը՝ ս. Հակոբ վանքով (Պարբոտ)

տպավորությանը, որ նրա զգայուն երևակայությունն ստացել է վիթխարի լեռան տեսքից: Բացի այն, որ Փոքր Արարատը



պատկերված է շատ փոքր, ասես, մի լեռի, մատնոցաչափ ծայր լինի, իշխում է նաև լեռների եզրագծերի շափից դուրս կանոնավորությունը, ինչը Մորիերը համարում է միմիայն այս լեռանը յուրահատուկ արժանիք: Իր երկրորդ ճանապարհոր-

դրքյան մասին պատճառ գրքի 237-րդ էջում նա գրում է. «Այն բանից հետո, երբ անցել էինք Աբրահամի դաշտավայրը, վայելեցինք Աբրահամ լեռան հրաշափառ պատկերը: Ավելի գեղեցիկ բան, քան նրա ձևերը, ես չէի տեսել, ավելի ապշեցուցիչ, քան նրա վիթխարի մեծությունը, չկա: Նրա համեմատությամբ կողքի բոլոր լեռները ուշահամում են: Նրա տեսքը կատարյալ է իր բոլոր մասերում: Ոչ մի անհարթություն, ոչ մի անբնական ելուստ: Ամենուրեք ներդաշնակություն է, և ամեն ինչ բլուրն է՝ միավորված է միայն մեկ նպատակի մեջ՝ ցուցադրելու այս վսեմագույն հրաշքը»:

Կորովամիտ և իմաստուն հետազոտող Քեր-Փորտերը հավասար հաջողությամբ և շատ գեղեցիկ ձևով պատկերել է երկու Աբրահամներն էլ: Ինչ վերաբերում է լանջերի թեքությանը, ապա պետք է ասել, որ շատ է անցել բնականի սահմանից: Հատկապես շատ անհաջող է ստացվել Փոքր Աբրահամի գագաթը, որը ասեղի սուր ծայրի տպավորություն է թողնում:

Մ. Ֆոն Կոցերուն իր երգիծական ճամփորդական նոթերում փորձաբիլ, բայց հետաքրքիր նկարագրող էջեր ունի, դրանց բվում և Աբրահատ պատկերող մի նկար: Երկու լեռների հիմնական գծերը չի կարելի չընդունել, սակայն թեքությունները, հատկապես Մեծ Աբրահամին, ինչ-որ տեսողական խաբկանք են ստեղծում, մի բան, որ բնորոշ է առանձին լեռներ պատկերող բոլոր նկարներին: Այստեղ նույնպես շատ մեծ է լանջերի թեքությունը, և Փոքր Աբրահամ ավելի բարձր է ստացվել, քան պետք է: Գեղեցիկ և բնորոշ են լեռան շուրջը պատկերված անպերը:


Վիլյամ Օվսելեյը իր արժեքավոր ու հանգամանալից տեղեկություններում, որ արդյունքն էին նրա 1810, 1811 և 1812 թվականներին ձեռնարկած ճանապարհորդությունների, մի քանի խոսք էլ հաղորդում է Աբրահատ լեռան մասին և տալիս նրա երեք փոքր նկարները: Դրանցից հատկապես մեկը, որ արված է Երևանի հարթավայրից, թեև հազիվ երկու դյույմ մեծություն ունի և գրեթե ոչ մի մանրամասնություն չի պարունակում, այնուամենայնիվ, կարծում են, որ մինչև այսօր արված գրաֆիկական աշխատանքներից լավագույնն է: Այդ նկարի մեջ երկու լեռներն էլ երևում են իրենց կատարյալ ու անթերի գծերով և բարձրությունների ճշգրիտ հարաբերակցությամբ:

Դրանցից բացի, ես Աբրահամի պատկերով տեսել եմ նաև պղնձե փորագրություններ, որոնք ստեղծվել են ոչ թե իբրև ու-

ղեկցող նկարներ ճամփորդական նկարագրությունների համար, այլ որպես առանձին գործեր՝ արված մեծ չափերով: Դրանցից մեկը պատկերում է երկու Աբրահամները՝ Էջմիածնի վանքի հետ միասին: Այն, ընդհանուր առմամբ, բոլորովին էլ վատը չէ, սակայն առանձին մանրամասներ անհաջող են:

Պղնձե մեկ այլ փորագրության մեջ երկու լեռները Էջմիածնի վանքի հետ պատկերված են իբրև միատեսակ և թեք կոներ: Սա ինչպես արվեստի, այնպես էլ բնականության տեսակետից անարժեք գործ է: Դրան հակապես, վերջերս ստեղծվել են Աբրահամները պատկերող շատ գեղեցիկ փորագրություններ՝ մեծ չափերով և առաջին պլանում՝ հայ գաղթականներով, ինչն ավելի հետաքրքիր է դարձնում դրանք: Նկարիչը՝ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի բազմավաստակ անդամ պառոտ Մաչկովը, որի վրձին շնորհիվ Կովկասի և Անդրկովկասյան երկրների գեղեցիկ անկյունների վերաբերյալ մի մեծ շարք է ստեղծվել, այս թեման նույնպես պատկերել է շատ գրավիչ ձևով, միայն թե երկու Աբրահամներն էլ առաջին պլանում չեն, որի հետևանքով հույժ պակաս է մեծության տպավորությունը: Այն չի ավելանում նաև լանջերի չափից ավելի թեք լինելուց, որն այս նկարներում նույնպես զգալի է:

Քանի որ շիինչ ի վիճակի չէ այնպես ամբողջությամբ վերարտադրել լեռան հսկայական տպավորությունը, որքան վերջինս ճշգրիտ պատկերել, ուստի ես էլ, ստա, ջանք բախեցի նկարել այն, ինչպես նր կա, ինչն այստեղ ներկայացնում են հասարակությամբ: Նկարեցի՝ ամենից առաջ փորձելով տալ նրա բնական ճշգրտությունը, և եթե իմ նկարները, ճիշտ հարաբերություններից բացի, ունեն նաև շատ բնական, հարազատ գծեր, ապա դա պարոն Հագենի ծառայությունն է, որը, առարկաների հեռավորության մասին ճշգրիտ տվյալներ տրամադրելով, ինչպես և իր միջամտությամբ ու անձամբ իր կողմից ստեղծելով պղնձե փորագրություններով, մեծապես օգնում էր ինձ: Ահա թե ինչու ես համոզված եմ, որ Էջմիածնի նկարը վանքի հետ չի փչացնում լայնատարած, միասպաղող դաշտի տպավորությունը, որտեղ վաճառք բարձրանում է իբրև մի կղզի մեծ ծովի մեջ, նրա կողքին ս. Գայանեի փոքրիկ վանքն է, իսկ հեռվում՝ թեթև ուրվանկարը Մեծ ու Փոքր Աբրահամների, վերջինս՝



Փոքր և Մեծ Աբարատները Սուրբահան գյուղից հյուսիս – հյուսիս-արևելքից
(Պարբոտ)

իր կտրտված ձյունասահմանով և խորխորատով: Այս դաշտա-
նկարի մեջ վանքի գտնվելու տեղը երևակայական է, քանի որ
այն բարձունքը, որտեղից, ինչպես որ պատկերված է նկարում,
ամբողջ վանքը կարող էր ընդգրկվել, մտտերում չկա: Պակաս



հաջողված չէ նաև Քանաքեռից արված ջրաներկ նկարը, որն
ին երիտասարդ բարեկամ Խաչատուր Աբովյանի ծննդավայրն
է: Այդ նկարի մեջ՝ առջևի պլանում, բարձր կայանատեղից
երևում են պարսկական պատերազմի օրերին ավերված գյուղի
փլատակները: Աջ կողմում՝ լեռնալանջի հետևից, նկատելի են

Երևանի բերդի պարսպատամները: Լայնամիտ դաշտի վրա մատախտոյի մի բերկ քող է երևում, որն, ինչպես նկարել եմ, իջել է Արարք գետի վրա: Վերջապես, իբրև հիմնական նյութ, երևում է Մեծ Արարատը՝ ձյունն գազաթով և ժայռեղեն խորխորատով, ապա Փոքր Արարատը՝ անպերի բնորոշ երթով: Ոչ մի տեղ ծառեր չկան, դրան հակառակ, այ չկողմում մասամբ պատկերված են լավային կուտակումներից գոյացած և ամենորեն սխմված բլուրներ: Բայց ես համարող երկուսից առավել բարձր եմ գնահատում այն նկարը, որն արվել է Մորազյան գյուղից, քանի որ այն Արարատի մասին քաղմզազան և ճշգրիտ մանրամասնություններ է պարունակում: Նկարի առջևում պատկերված է Արարատի և Արարսի միջև ընկած քարաբլանկան այն գյուղը, որտեղ տեղավորված էր մեր արշավախումբը: Տափակ կտուրի վրա տղամարդիկ կան, որոնք ծխում են, և կանայք, որոնք զբաղված են իլիկներով և սեխերով: Գյուղում կան նաև հատուկներ ծառեր՝ ձիթենի, սլացիկ ուռենի, կան քիեր, երևում է բարձր աճած խտուղ, հետո շուրջ 15 վերտա լայնությամբ դաշտավայրը և ապա երկու վիթխարի լեռները՝ իրենց մեծ ու փոքր խորխորատներով, վիհերով, ճեղքավազներով ու ծորակներով, այսինքն՝ այն ամենը, ինչ կարելի է գտնել հանգած հրաբուխի վրա:

Սուրբ Հակոբի վանքից նկարելիս կայանատեղ դարձավ մեծ խորխորատի սկզբնամասում տեղավորված վանքի գերեզմանատունը, որը հենց լեռան դեմ-դիմացն է: Այս նկարը պատկերում է նախ միայնակ վանքը՝ իր գեղեցիկ կեչիներով, եկեղեցիով, դրան կից խցերով և վանքի այգով՝ բոլորն էլ առնված շրջափակ պարսպի մեջ: Երևում են նաև ծիսահան ծառեր, ջահել, սլացիկ բարդիներ, բարձրաբուն ընկուզենիներ, ճեղտերև ուռիներ: Դրանցից այն կողմ հովտի պատկերն է, որտեղով հոսում է Արկուռի գետակը, իսկ վերջում, խորխորատից վերև, ինքն է լեռան վեհամիտս, սառչե գագաթը:

ԱՌԱՋԻՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՈՒՆ ՀԵՏ

Սուրբ լեռան պակակապարդ կատարը օր առաջ տեսնելու իմ փափագն ինձ հանգիստ չէր տալիս վանքի խաղաղ պատերի ներսում: Հապաղել ես չլի կարող: Ինձ մտահոգում էին նաև տարվա ուշ եղանակի հետ կապված հնարավոր անակնկալները, և պարզ երկինքը արագացրեց վճիռս՝ հենց հաջորդ օրն իսկ պետք է մի փորձնական վերերք կատարել դեպի գագաթը: Երբ այս ամենը նկարագրելիս ես խոսում եմ նաև այս և հետագա վերերքների դժվարությունների մասին, որ ավելի ծանր էին, քան ես սպասում էի, ապա ինչ-որ մեկին դրանք կարող են հնարավորի քվալ, քանի որ իմ իսկ ձեռքով արված Արարատի նկարներին նայելով՝ այնտեղ նա չի տեսնի լանջերի այդքան մեծ թեթություն, ուստի հակված կլինի կարծելու, թե լեռը բարձրանալու համար էական դժվարություններ չեն կարող լինել: Բայց նման կարծիքի հիմքում ընկած է տեսողական խաբկանքը, որը շատ հաճախ է պատահում և որից՝ որպես վնասակար մի բան, յուրաքանչյուր լեռնագնաց ճանապարհորդ պետք է հնարավորին չափ գերծ մնա: Ամեն անգամ լեռ բարձրանալիս, երբ առջևը տեսնում ես նրա լանջերը, վերելքի անկյունը ավելի մեծ է քվում, քան թե այն իրականում կա:

Սեպտեմբերի 12-ին առավոտյան ժամը 7-ն անց երեսուցին պարոն Շիմանի ուղեկցությամբ ես ճանապարհ ընկա: Սեզ հետ վերցրիք նաև կողակներից մեկին և Արկուռի փորձառու գյուղացիներից մի որսորդի: Մենք նախ ուղղություն վերցրեցինք դեպի խորխորատի կողմը, ապա նրա աջ լանջն ի վեր բարձրացանք մինչև այն տեղը, որտեղ իբրև կողք կողքի կանգնած են քառակուսի բարեբով կառուցված երկու փոքրիկ շինություններ: Դրանցից մեկը ժամանակներ առաջ մատուռ է եղել, իսկ երկրորդը կառուցվել է ի պահպանություն սրբազան աղբյուրի: Հայերն այս մատուռին շատ հին ծագում են վերագրում՝ այն կապելով անգամ սուրբ Գրիգորի անվան հետ: Այս-

տեղ գալիս են շատ հաճախ և նույնիսկ շատ հեռու վայրերից: Երբ մենք այնտեղ էինք, բազմաթիվ հայեր եկան Բայազետից, կատարեցին իրենց երկրպագությունը և այն վերջացնելուց հետո իջան ցած՝ Արարատի հովիտները և սկսեցին զբաղվել հրացան արձակելով և զանազան զվարճություններով:

Աղբյուրը, որ բխում է քարաժայռից, սովորական համի խմելու վճիտ ջուր ունի: Արդեն իսկ դա պատճառ է, որ նրա հոչակը ամենուրեք ավելի բարձր լինի, քան մյուս աղբյուրներինը, քանի որ Արարատի վրա, առհասարակ, մշտական աղբյուրներ շատ չկան: Իմ շրջագայության ընթացքում ես այդպիսի մեկ ուրիշը չգտա և ոչ էլ իսկից մնաց աղբյուրի մասին: Հավանաբար, այս աղբյուրն է ի սկզբանե եղել պատճառ, որ այստեղ գա ու իբրև ճգնաժողով բնակվի մի քարեպաշտ վանական, որի սրբությունը շուտով հաղորդվել է նաև աղբյուրին, սակայն հարյուրամյակների ընթացքում, քաղաքական իրադարձությունների փոքրիկների մեջ մոռացվել է այդ լուսկյաց վանականը և միայն հրաշագործ աղբյուրն է մնացել իբրև պատճառների և կոյր հավատի մի վայր բոլոր հայերի համար, որտեղ էլ որ նրանք սփռված լինեն աշխարհիս երեսին:

Իսկ աղբյուրի հրաշագործ ուժի մասին ավանդությունն այս է. մորեխների երանը, որ ժամանակ առ ժամանակ անչափելի բազմությամբ, համատարած աղետի մնաց անցնում է Կովկասի այս ու այն երկրներով և հաճախ մեկ օրվա մեջ հսկայական տարածություններ անայացնում, այլ կերպ չի ունչանում կամ դրավում, քան յուրահատուկ մի թռչնի միջոցով, որ ես չկարողացա տեսնել, սակայն, ըստ նկարագրությունների, կեռնելիս մի տեսակը պիտի որ լինի: Այս կողմերում ապրող ուսները նրան սարյակ են կոչում: Թռչունը մեծ չէ, սև գույն ունի, մեջքը և կուրծքը դեղնասպիտակ են: Այն ժամանակ, երբ թուրք հասնանում է, չգիտես որտեղից դրանք մեծ երաններով թռչում գալիս են Արաքսի կողմերը և թուրք ոչնչացնելով՝ երկրին մեծ վնաս պատճառում: Հայերը նրան անվանում են տարմ, նաև՝ թուրի դուշ: Մուշ թուրքերեն նշանակում է թռչուն, իսկ հայերեն Կուր-ը՝ թքի ծանց է: Թարաքները նրան անվանում են դազիր-չախ: Հենց որ այս թռչունը երևում է այն վայրերում, որտեղ մորեխն է իջել, ուրե՛նք դրանք փրկված են և կարճ ժամանակում ազատվում են մորեխից, քանի որ սա նրան հալածում է որպես անողորմ թշնամի: Իսկ բարեգործ այդ թռչունին հրապուրելու

համար բավական է Արարատի սուրբ աղբյուրից ջուր վերցնել մի կավե ամանով կամ մի շշով և դա հասցնել այն վայրը, որտեղ մորեխն է իջել: Պետք է զգուշ լինել, որ ճանապարհին ջրամանը ցած չդրվի, թե չէ նույն պահին էլ ամանը ջրից կցատարկվի: Իսկ եթե այն հասցնում այնտեղ, ուր որ անհրաժեշտ է և դե՛նք ազատ մի տեղ, սապա բնավ չի դատարկվի այլևս, այլ նրանով հրապուրված՝ շատ շուտով կթռչնե կզան թուրի դուշի երանները և երկիրը կազատեն մորեխի ատետից:

Այս մատուցից մենք անցանք խորխորատի աջակողմյան խոտածածկ լանջը: Ցեղեկվա տառք սկսեց այնպես նեղել մեզ, որ տափաստանում երեք օր անընդհատ ձիու վրա դիմացող մեր կողակը մի երկու ժամ ժայռերը մագցելուց հետո ուժասպառ վայր ընկավ: Ստիպված նրան ետ ուղարկեցինք: Երեկոյան ժամը վեցին, երբ մենք նույնպես հոգնել էինք և համարյա թե հասել էյունի սահմանին, քարակույտների մեջ գիշերակացի տեղ ընտրեցինք: Մենք հասել էինք 11675 փարսիզյան ոտնաչափ բարձրության, մեր անկողինը սառած քարերն էին, իսկ վառարանը՝ ցրտից քարացած լեռան սառցե գագաթը: Մեր շուրջը, սովորաբար տեղերում արդեն բարձր էյուն կար, օդի ջերմաստիճանը հասել էր սառած սահմանին: Պարոն Շիմանն ու ես դեռ մի քառու նախապատրաստվել էինք վերելքի համար, մեզ ջերմացնում էր նաև այն ուրախությունը, որ զգում էինք մեր գործի համար, բայց արկուտեցի մեր հաղթանակառ քրտորը՝ Սահակը, ցրտից լրիվ կուշ էր եկել, որովհետև վրան ավելի ոչինչ չունեք, քան իր ամառային հագուստը: Ամբողջ պարանոցը, ինչպես և ոտքերը՝ ծնկներից մինչև ոտնամանները, մերկ էին, իսկ գլուխը փաթաթված էր ընդամենը մի հին վաղշամակով:


Մասվոտյան, հենց որ գիշերային մթությունը փոքր-ինչ մեղմացավ վաղորոյան լույսերից, շարունակեցինք մեր ճանապարհը դեպի լեռան արևելյան կողմը և շուտով հասանք այն լեռնամասին, որ ցած է իջնում անմիջապես լեռան գագաթից: Ս. Հակոբի վանքից արված նկարի վրա այն երևում է ձախից կլոր, դեռ խոտածածկ բլրի հետևում: Այն կազմված է խիտ կտրված ժայռատամներից, որ ցած են իջնում վերևի և իրենց արանքում գոյացնում են բավականին խոր անդունդներ, որոնց մեջ կորչում են գագաթից իջնող սառցադաշտերը: Բազմաթիվ ժայռատամներ և սառցային վիհեր վայրից այն ու լեռ-

նալանջի այն կողմի միջև, դեպի ուր մենք բարձրանում էինք: Առաջին ժայռատամի հաջողությամբ անցնելով՝ անցանք նաև դրան հաջորդած շատ գեղեցիկ սառցադաշտը: Տեսնելով երկրորդ ժայռատամի բարձրությունը՝ նույնիսկ Սահակը կորցրեց իր քաջությունը: Տուրտ գիշերվաճից հետո նա դեռ չէր հասցրել տաքացնել իր սառած անդամները, իսկ երբ տեսավ համատարած սառցադաշտները, լայն-լայն քայլերով մեզ առաջնորդող խեղճ մարդը տաքանալու բոլոր հույսերը կորցրեց: Այդպիսով մենք՝ շոգի, մյուսը՝ ցրտի պատճառով մեզանից հետ մնացին: Չնայած անուղիղ դժվարությանը, միայն պարոն Շիմանը ոչ մի ակնբարք չկորցրեց քաջությունն ու զվարթությունը՝ մնալու ինձ հետ և երիտասարդական ավուճով ու դիմացկունությանը բաժանեց այն բոլոր չարքարանքներն ու վտանգները, որ շուտով պիտի հանդիպեին մեզ: Հետ մնացած որսորդի աչքերի առաջ անցնելով երկրորդ սառցադաշտը՝ հասանք երրորդ ժայռատամին, ընդ որում՝ կտրուկ փոխեցինք շարժման ուղղությունը դեպի վեր, անցանք ժայռատամի հետևը և հստակ մի բարձրության, որ 13180 փարիզյան ոտնաչափ էր: Մենք գտնվում էինք հենց այն սառցադաշտի ներքևում, որն այստեղից արդեն առանց ընդհատվելու ձգվում էր մինչև գագաթը: Այժմ պետք է բարձրանայինք հավերժական սառույցներով պատված այս լանջով: Ուղիղ բարձրանալը, քեև քեթությունը հազիվ 30 աստիճան լինելը, երկու հոգու համար անհնարին բան էր: Այդ պատճառով էլ վճռեցինք փոքր-ինչ շեղվել և հասնել երկար, սառածանոց մեր ժայռատամին, որը շատ սե՛ծ բարձրություն ուներ և հասնում էր գագաթին: Մ. Հակոբի վանքում արված նկարում, որի մասին հիշեցի վերը, ինչպես և Սրբազյան գյուղից արված նկարի ձայն կողմում այդ ժայռից միայն մի փոքրիկ հետք է երևում: Մեզ հաջողվում էր բարձրանալ՝ սառցադաշտի վրա գավազանով կանոնավոր փոսեր փորելով: Դրանք մեզ համար ծառայում էին որպես ոտնատեղի: Սառցադաշտի վրա բարակ, հենց նոր եկած ձյուն էր դրել: Այդպես առաջանալով՝ մենք հասանք վերջին ժայռատամին, որի վրա փոքր-ինչ ավելի շատ քարձ ձյուն էր նստած: Թեև դեռ սպառված չէին մեր ուժերը, և մենք պատրաստ էինք շարունակելու վերելքը, սակայն երևի անբնական կյանքը, որ մեր սպասումներին հակառակ այդպես արագ ու միանգամից կատարվեր մեր ցանկությունը: Առանց այդ էլ այդ օրը շատ բանի էինք

հասել, քանի որ կեսօրից հետո արդեն ժամը երեքն էր, ուստի ստիպված էինք նաև մտածել գիշերը մի հարձաք տեղ գտնելու մասին: Մենք համարյա քեև հասել էինք ատանմանաշտի ամենավերին ծայրին, որը ծովի մակերևույթից 14550 փարիզյան ոտնաչափ բարձրություն ուներ, և, անկասկած, հավասար էր Մոնբլանի բարձրությանը: Այդուամենայնիվ, Արարատի գագաթը դեռ վերևում էր՝ մեզանից զգալի չափով հեռու, և երևում էր կատարյալ պարզությամբ: Հանձնված են, որ եթե շարունակեինք ճանապարհը, չէինք հանդիպելու որևէ անանցանելի խոչընդոտի, սակայն մեր կողմից մեծ հանդգնություն կլիներ մեր նպատակին հասնելու վրա մտխառել նաև օրվա մնացած այն ժամանակը, որ դեռ ունեինք մեր տրամադրության տակ: Գագաթի վրա գիշերելու համար մի փոքրիկ ժայռախուց անգամ չէինք գտնի, եթե չհաշվենք և այն, որ մեզ հետ հեռու ճանապարհի համար չէինք վերցրել ուտելիքի պաշար:

Գոհ այն արդյունքից, որ իմացանք լեռն այս կողմից բարձրանալու ոչ այնքան էլ արտակարգ դժվարությունների մասին, ծանրաչափական մի քանի դիտարկումներ կատարեցինք, ապա սկսեցինք իջնել դեռ, սակայն ճանապարհին ընկանք մի փորձանքի մեջ, որ բարձրանալիս չէինք կանխատեսել:

Ցանկացած դեպքում լեռներից իջնելը պակաս ապահով է, քան բարձրանալը, և բոլորովին դժգույն է ինքն իրեն տիրապետելը, երբ վերևից միայն ձյունի ու սառույցի հարթություններ են տեսնում, ինչպես որ մենք էինք մեր ոտքերի տակ տեսնում ավելի քան մեկ վերատ երկարությամբ ձգվող սառցադաշտերը: Սայթաքելու կամ վայր ընկնելու դեպքում այնև ոչինչ չէր կարողանա կասեցնել դեպի ցած մեր գահավեժ ընթացքը, եթե չհաշվեինք այն սրածայր քարակույտները, որոնց մեջ կորչում էին հավերժական սառույցները: Վտանգն այստեղ ոչ քեև իրական դժվարության, այլ անսպասելիության մեջ էր: Առաջին անգամ ճանապարհորդող իմ երիտասարդ բարեկամը, որի ուժն ու քաջությունը շատ դաժան փորձության էին ենթարկվում, չկարողացավ դիմանալ այս ամենին: Մի անգույշ քայլից նա տապալկեց ցած, քայց քանի որ ինձնից մի քան քայլ վերև էր, ուստի ես դեռ ժամանակ ունեի որքան հնարավոր է արագ գավազան խրելու իմ առջև սառույցի մեջ և հեծնվելով երկաթյա խրոցներ ունեցող կոշիկներին վրա՝ աչ ձեռքով բռնել գավազանից այն խոյակ, որ գուցե ձախտվ կարողանան պահել ցած



E. Imhof
1872

Մեծ Արարատը հարավ-արևմուտքից:
Լանջին հովիվների ամառային վրաններ (Իմհոֆ)

գահավիժող պարոն Շիմանին: Ես հենց այդպես էլ արեցի, և իմ դիրքը վատը չէր սահրի ուժին դիմանալու համար: Սակայն կոշիկներիցս մեկի երկաթազամ ներքանների ջուղերը չլինեցան,



քեւ այնքան աճուր էին կապված կոշիկից, ասես մեկ լինեին նրա հետ: Դրանք միանգամից, ասես դանակով, կտրվեցին, և այլև չկարողանալով պահել կրկնակի ծանրությունը՝ ես էլ նրա հետ գլորվեցի ցած: Պարոն Շիմանը ավելի շուտ, քան ես, բարեհաջող կանգ առավ բարակույտերի մեջ: Տարածությունը, որ

ես անցա գրեթե ուշակորույս, մի կես վերստ կլիներ և ավարտվեց քարակույտների մեջ, սառցադաշտի ներքին եզրից ոչ հեռու: Ճանրաչափիս խողովակը փշրվել էր, ժամացույցս դուրս էր ընկել և արճուոված էր, մոտս եղած մյուս գործիքները կենտրոնախույս ուժով նետվել էին այս ու այն կողմ, իսկ ինձ գրեթե ոչինչ չէր պատահել:

Հենց որ առաջին սարսափի փորք-ինչ ուշքի եկանք, շնորհակալ եղանք Աստծուն մեզ պահպանելու համար, սկսեցինք որոնել մեր իրերից ամենակարևորները, ապա շարունակեցինք վայրէջքը: Փոսեր փորելով՝ սառցադաշտերից մեկը իջնելուց հետո մոտերքում լսեցինք մեր բարի Սահակի ձայնը և անչափ ուրախացանք, որ նա, խելքը գառվելով, գուշակել է մեր վերադարձի ճանապարհը և հենց այդտեղ էլ սպասել է մեզ: Նրա հետ միասին գլշեղն անցկացրեցինք մի տեղում, որ թեթև ծածկված էր խոտով, և Սահակը, թեև շատ էր մսել, բայց մեծ քանակությամբ չոր մսցատներ հավաքեց ու կրակ վառեց, որ գոնե մի քիչ տաքանա: Երրորդ օրվա առավոտյան ժամը 10-ին հասանք մեր սիրելի վանքը և քարմնացանք քաղցրահամ սալորներով և ընտիր նախաճաշով: Մենք աշխատում էինք խնամքով թաքցնել մեզ պատահած փորձանքը և այդ մասին չխոսել հայերի հետ, քանի որ նրանք անմիջապես դա կհամարեին աստվածային պատիժ՝ գազաքր բարձրանալու մեր հանդգնության համար, մի բան, որ Նոյի ժամանակներից մի վեր, իբր աստվածային օրենքով, արգելված է եղել բոլորին: Ամեն մի հայի մեջ այսօր էլ այն անխախտ համոզմունքը կա, որ Նոյի տապանը մինչև հիմա էլ պահպանվում է Արարատ լեռան գագաթին, և որպեսզի այն պահպանվի հավիտյանս, ոչ մի մարդ իրավունք չունի մոտենալ նրան:

Այս վերջին երթադրության հիմնավորման համար մեզ նյութ են տալիս հայոց պատմության մտայնվածները՝ հետաքրքիր ավանդություններ պատմելով Հակոբ անունով մի վանականի մասին, որը հետազայտն դառնում է Մծբինի եպիսկոպոս և իբրև թե ժամանակակիցն ու ազգականը էր սուրբ Գրիգորի: Այս վանականը Մուր Գրիկ արժանահավատության և հատկապես Նոյի պատմության վերաբերյալ վեճերից վերջ տալու համար վճում է անձամբ բարձրանալ Արարատի գագաթը և տեսնել տապանը: Սակայն լեռան լանջին մի քանի անգամ մինչ է իջնում վրան, և երբ արբանձում է, գզում է, որ

կարծես քնի մեջ բնագործն, մեծ չարաչարանքով բարձրացել է գագաթը և ապա իջել ցած: Երբ Աստված տեսնում է նրա անպատու չարաչարանքները, խղճում է, և մինչ նա բնած էր, մի իրեշուակ է ուղարկում՝ սասելով, որ նրա տանջանքներն իզուր են, քանզի գագաթն անհասանելի է: Այդուհանդերձ, իբրև վարձատրություն նրա եռանդուն ջանքերի և մարդկանց գոհացում տալու համար, Աստված նրան ուղարկում է գագաթին գտնվող Նոյի տապանից մի կտոր, հենց այն մի կտոր փայտը, որ էջ-միաձմին Մայր Տաճարում պահպանվում է իբրև ամենաթանկահին մատուրք: Եկեղեցու կողմից հավանության արժանացած և վավերացված այս պատմության շնորհիվ Արարատ լեռան անմատչելիության մասին կարծիքը հայոց մեջ դարձել է, մի տեսակ, հավակառ օրենք, որին հոժարակամ տրվում են նրանք, և դա նրանց ազատում է ավելորդ գլխացավանքից: Մի մոլորություն է դա, որից հայ մարդը չի կարողանում հրաժարվել անգամ այն ժամանակ, երբ ինքն է անձամբ բարձրանում Արարատ լեռան գագաթը:

Բայազետի փաշաներից մեկը՝ այժմյան Մեհմեդ Փախուլի հայրը և նախորդը, որի համար նշանակություն չունեին քրիստոնյա հայերի կրոնական նախապաշարմունքները, մի անհաջող փորձով սակայն ավելի է ամրապնդում Արարատի անմատչելիության մասին կարծիքը: Փաշան թեև շատ լքջորեն է մտադրվում հասնել իր նպատակին, նույնիսկ իրեն օգնողներին դրամ է խոստանում, բայց սրանց հետ կարողանում է բարձրանալ ոչ ավելի, քան ձյան սահմանից մոտ 2400 ոտնաչափ ներքև, մի բարձրություն, որ կարելի է բարձրանալ ջանկացած դեպքում և անգամ ձիով: Պարսից չափ կողմից խոստացված դրամը նույնպես նրա հպատակներից ոչ մեկին չի հրավարում, քանի որ ջերմության և հարմարավետության ընտել պարսիկը այն մարդը չէ, որ այդ վտանգավոր ձեռնարկում հանձն առնի:

Գիտական աշխարհում նույնպես Արարատի անմատչելիության մասին կարծիքը որոշ համարում ունի: Ես ի նկատելի չունեմ այն բազմաթիվ ճանապարհորդներին, ովքեր ժամանակի, տրամադրության և միջոցների պակասության հետևանքով կամ էլ վախենալով ժողովրդի վերաբերմունքից, չեն հանդգնել գագաթը բարձրանալու փորձ անել և ստիպված են եղել լեռան ազդեցիկ տպավորությունը նրա արժաթափայլ գագաթը բարձ-

րանալու անհնարինությանը հաստատել: Ես ի նկատի ունեմ Թուրնֆորին, որի վրա հատկապես հենվում է Մորիերը՝ իր երկրորդ ճանապարհորդության մասին գիրքը գրելիս: «Ջրհեղեղից հետո, - ասում է նա, - դեռ ոչ ոք չի բարձրացել Արարատի գագաթը, և ինչպես երևում է նրա ձյունե կատարի խիստ թեք լանջերից, նրան հասնելու բոլոր ջանքերն ավելորդ են և իզուր: Մենք կարող ենք հավաստել, որ նոր ժամանակներում նույնպես ոչ ոք չի բարձրացել նրա գագաթը: Եթե իրեն՝ համառ ու անվախ Թուրնֆորին անգամ չի հաջողվել վերելքը, ապա ինչպես կարող էին դա անել այդ վայրերի երկչոտ ու սնահավատ բնակիչները»: Սակայն անհրաժեշտ է կարդալ և այն, ինչ Թուրնֆորն անձամբ է ասում իր ճանապարհորդության մասին՝ նկարագրելով վերելքի իր փորձը և համոզելով, որ իբր իր նպատակը ոչ այնքան լեռան գագաթը բարձրանալն է, այլ, ինչպես ինքն է շատ միամտորեն արտահայտվում՝ «բուսաբանության նվիրյալի անուն վաստակելը», - ապա շարունակում է. «Մենք հավատացնում էինք մեր առաջնորդներին, որ ավելի հեռուն չենք գնալու, քան մինչև այն կուտակված ձյունաթումբը, որ ցույց էինք տալիս նրանց և որն ավելի մեծ չէր երևում, քան կարկանդակը: Միայն թե երբ հասանք կարկանդակի մեծության թվացող այդ ձյունաթմբին, պարզվեց, որ այն ավելի մեծ է, քան պետք էր մեր ծարավը հագեցնելու համար: Նրա տրամագիծը մի երեսուն քայլ կլիներ: Մենք դրանից կերանք այնքան, ինչքան մեր սիրտն էր ուզում: Եվ հենց այստեղ էլ պարզվեց, որ մեզանից ոչ մեկն այլևս առաջ գնալ չի ուզում: Եվ մենք վերադարձանք մեր ուղևորությունից՝ լի կայտառությամբ և ուրախ, որ մեր խոստումը կատարել ենք և այլևս անելիք չունենք, քան թե վանք վերադառնալը»: Այս ամենը կարդացվում է իբրև վերին աստիճանի ծիծաղելի և, անշուշտ, ոչ այնքան էլ լուրջ ուղևորության նկարագրություն: Ահա մի հատված ևս. «Մենք այս կանաչաձածկ գետնի վրայով՝ մեջքի վրա պառկած, մոտ կես ժամ ցած էինք սահում և անչափ հաճելի այդ հնարքով ավելի շատ ճանապարհի անցանք, քան եթե օգտագործեինք մեր ոտքերը: Մենք շարունակեցինք ցած սահել այնքան, որքան որ թույլ էր տալիս տեղանքը, և երբ խճաքարեր էին հանդիպում, որ այնքան էլ հաճելի չէր մեր մեջքի համար, շրջվում էինք փորի վրա կամ էլ առաջ էինք գնում՝ գործի դնելով մեր ոտքերն ու ձեռքերը»: Հասկանալի է, որ Թուրնֆորը

պատվախնդիր չէ և իրեն չի դասում նրանց շարքը, ովքեր Արարատի գագաթը կարող են բարձրանալ ուժով և համառությամբ: Առհասարակ, նա իր նպատակով չի խանդավառվում այնպես, ինչպես հետագա ժամանակների ճանապարհորդները, որոնցից շատերը, երևի, դժվարությամբ համաձայնվեին Թուրնֆորի հետևյալ խոսքերի հետ. «Այս լեռը, որ ընկած է երեք վանքերից հարավ, հարավ-արևելք, ամենատխուր և նողկալի տեսքն ունի այն ամենի համեմատությամբ, ինչ ես տեսել եմ աշխարհում»:

Վերադարձիս օրը ես հիվանդացա ծանր տենդով: Հավանաբար, դա հետևանք էր հոգեկան ու ֆիզիկական ուժերիս այն ուժեղ ցնցմանը, որ զգացել էի վերելքի ժամանակ: Ես ստիպված էի լրջորեն մտածել ապաքինվելու մասին: Թեև գիտեի, որ ընդմիջվող տենդ է, սակայն խուսափեցի դեղ ընդունելուց, որ մի ամբողջ ունցիա ունեի ճամփորդական դեղատուփիս մեջ: Ինձ համար սահմանեցի սնման խիստ ռեժիմ՝ ոչ մի տեսակ միս, ոչ սրգեր և ոչ էլ կաթ, միայն սովորական թեյ և որպես բուժամիջոց, որ նախկինում էլ մեծ հաջողությամբ օգտագործել էի, սխտոր՝ աղի և մի փոքր հացի հետ: Տենդը փարատվեց, ես առողջացա և սկսեցի նորոգել իմ ծանրաչափը, որ շատ շուտով գլուխ բերեցի, քանի որ հետներս՝ իբրև պահեստի պաշար, ջերմաչափի խողովակներ ու սնդիկ էինք վերցրել: Եվ, առհասարակ, սկսեցի հոգ տանել բոլոր այն նախապատրաստությունների մասին, որոնք անհրաժեշտ էին հատկապես գագաթը բարձրանալու համար: Վարձեցի ուղեկցողներ և զրաստներ, հոգացի սննդի մասին, ամուր կապարե մի տախտակի վրա պատրաստեցի արձանագրություն, որ մտածում էի վերցնել ինձ հետ և ամրացնել գագաթ հասցվելիք խաչի վրա: Այդ խաչը պատրաստել էինք դեռ Էջմիածնում, եղևնու փայտից: Նա տասը ոտնաչափ երկարություն և մոտ վեց դյույմ լայնություն ուներ, ներկված էր սև գույնով և բաղկացած էր երկու կտորից: Մեպտեմբերի 18-ի վաղ առավոտյան մենք պատրաստ էինք ճանապարհ ընկնելու: Ես հավաքել տվեցի խաչը և այն բերելով վանքի սրահը՝ հայկական ծիսական օրենքների համաձայն՝ պատվարժան վանահոր կողմից օրհնվեց աղոթքով և մյուռոնով: Հետո նորից նրա մասերն անջատեցինք իրարից և կապեցինք զրաստների վրա: Ընդ որում՝ նկատեցի, որ դրանով զբաղված հայերը վերին աստիճանի զգույշ էին, որ չլինի՝ հան-

կարծ վայր գցեն երեք տեղով կապված այն բանբալը, որ թաքախմբած էր սուրբ մյուռոնով:

Յոթն անց կեսին ճանապարհի ընկամբ: Արշավախմբում, ինճանից բացի, պարոն Ֆոն Բեհագեն էր, պարոն Շիմանը, սարկավազ Արովյանը, Արկուտի գյուղից չորս հայ շինակամներ, 41-րդ եզերյան գնդից երեք ռուս զինվոր և մեկ եզնարած: Բայց արշավախմբի հիմնական անդամը վերն արդեն հիշված մեկիք Ստեփանն էր՝ Արկուտի գյուղի տանուտերը, որն անձամբ էր խնդրել մասնակցելու վերելքին, և, ինչպես շուտով պարզվեց, անչափ օգտակար եղավ վերելքը թեթևացնելու համար: Ես հաճույքով հետևեցի հիսուներեքամյա այս փորձառու մարդու խորհրդին՝ այս անգամ վերելքն սկսել լեռան հյուսիսարևմտյան կողմից, որտեղով բեև ճանապարհն ավելի երկար էր, քան արևելյան կողմից, սակայն թեթևությունը քիչ էր: Երբ արդեն մոտ մեկ վերստ առաջ էինք գնացել խորխորատի ճախակողմյան լանջով՝ լայնությունը կտրելով այն, առանց դժվարության անցանք լեռան արևմտյան կողմը, քանի որ այն կողմում տեղանքը անհարթություններ չուներ, անգամ արահետներ էին հանդիպում, որոնցից օգտվում էինք: Սկզբում գետինը ծածկված էր չորացած խոտով և նոր-նոր ծաղկել սկսող բույսերով, ապա սկսվեցին հրաբխային ավազով և չեչաբարի խճով պատված տարածություններ: Հավանաբար, դրանք հենց մի տարածքներն էին, որոնք մասին Թուրքիորը, փորքինչ չափազանցված, աուս է. «Պետք է խոստովանել, որ այժի համար շատ խարսխիկ է որև լեռ ներքևից մինչև վերև չափելը, հատկապես երբ անհրաժեշտ է լինում անցնել ավազների վիջով: Դա նույնքան հոգեհեցուցիչ է, որքան աֆրիկյան անապատներով անցնելը: Անհնար է վստահորեն քայլել ավազոտ տեղերով, մանավաճ, եթե դրանք հանդիպում են այսպիսի լեռան վրա: Սա անհամեմատ ավելի հոգեհեցուցիչ է, քան եթե քայլես ամուր գետնի վրայով: Անշուշտ, երջանիկ ճամփորդություն է այսպես քայլել այն մարդկանց համար, ովքեր ստամոքսում ոչինչ չունեն ջրից բացի և ստիպված են մինչև ստանակոճերը թողված առաջ գնալ ավազուտներով»: Այս ավազածածկ լանջերով մշտապես դեպի արևելք գնալով և միաժամանակ սակավ առ սակավ վեր քարծրանալով, որն ինձ համար էլ փոքր-ինչ դժվարին է, շուտով հասանք մի քարքարոտ տեղանքի, որ հավերժական ձյունների սահմանից փոքր-ինչ

ցած մի լայն գոտի էր կազմում լեռան շուրջը և բաղկացած էր հրաբխային ծագում ունեցող սլանկյուն, սև գույնի մեծ ու փոքր քարակույտներից: Դրանք խառնիխտում լցված էին իրար վրա և նմանվելով մեկ խորդուրդ պարսպի, մեկ՝ սանրանման առապարների, իրենց արանքում նեղ կիրճեր ու սառցադաշտեր էին քարցնում: Այստեղ ճիշտ ժամանակին մեզ դեմ առ դեմ ելավ մի կաճան, որ, հավանաբար, բացել էին դշտարի փոքր հոստերը: Ամռանը խոտի պակասից նրանք, հավանաբար, իրենց կերը փնտրում են լեռնային այս քարծր վայրերում: Բարակ կաճանը մեզ հասցրեց քավական ընդարձակ, խոտածածկ և գրեթե հորիզոնական մի տափարակ, որ, կարծես, կանաչ սամոդոք լիներ լեռան արևմտյան քարքարոտ լանջի վրա: Պարոն Ֆոն Բեհագելը, պարոն Շիմանը և ես վաճրից մեկական ձի էինք վերցրել, և նրանք ճանապարհի սկզբում լավ ծառայեցին մեզ: Բայց հենց առաջին քարքարոտ վերելքներին հանդիպելով և տեսնելով, որ ձիերը չեն կարող հաղթահարել դրանք, մի կոզակի հետ դրանք հետ ուղարկեցինք: Ես զարմանքով տեսնում էի, թե մեծ ձիերին հսկառակ մեկիք Ստեփանի պարսկական փորքի մին իր հաղթանակում տիրոջը ինչ անխնջություն էր եռանդով է տանում դժվարագույն ու վտանգավոր տեղերով, անհավատալի թեք լանջերով: Տափարակը, ովր հասել էինք, քարաբերեն կոչվում էր Քիպ-գյոլ, այսինքն՝ Քիպ լճակ: Այդ անունը դրվել էր պարսկական կառավարության կողմից այստեղ կառուցվելիք ջրամբարի պատճառով: Ջրամբարը պիտի ծառայեր Արարատից իջնող ձնհալի ջրերը հավաքելուն: Այդ նպատակով էլ ջրամբարի անցնելիք տեղերից մեկում՝ Բայանդուտ տանող ճանապարհի վրա, նախապես կառուցվել էր Դորդան գյուղը: Հիմա արդեն այդ գյուղն անբողջովին քված ու ավերված էր, քանի որ, չգիտես ինչու, ջրամբարի ջուրը գնալով ցամաքել էր: Հինգ ժամ անընդհատ քարծրանից հետո բոլորիս համար էլ հաճելի էր հանգստանալ մի վայրում, որը մեզ կրկին հիշեցնում էր ծանոթ ու սիրելի բնությունը: Եվ մինչ գրաստները կարածեին դեռ կիսանաչաչ խոտերի մեջ, մենք ճաշի նստեցինք և վերականգնեցինք մեր ուժերը շատ հասարակ, բայց սնունդաբար կերակուրներով, նույնիսկ ապուր եփեցինք արարի կրակով, քանի որ ամռանը իրեր արուտավայր ծառայած այդ աճրոջ տարածքում շատ մեծ քանակությամբ չոր արար կար: Դա շատ լավ այրվում է: Այս տա-

փարակից, որ ծովի մակերևույթից բարձր է 10862 փարիզյան ոտնաչափ, Արարատի լանջը սկսում է բարձրանալ շատ մեծ բերրությամբ: Վերելքը մինչև այստեղ շատ հեշտ էր, քանի որ գետինը բիշ թե շատ հողածածկ էր, ուստիև բուսածածկ ուներ: Շուտով, սակայն, շարունակելով վերելքը, մտանք ժայռոտ ու ամալի տարածություններ, որ այլևս չէին ավարտվելու մինչև հավերժական ձյունների սահմանը: Այդպես հասանք Քիպ ջրամբարից ոչ հեռու ընկած մի լայնատարած սառցադաշտի, որը, հավանաբար, ոչ ուշ կկորչի ճանապարհորդների աչքից, եթե լեռը շարունակի, ինչպես որ հիմա, այն ծածկել հրաբխային ավազով ու խճով: Սառցադաշտը հիմա արդեն հազիվ է երևում գետնի ճեղքերից և ակամա հիշեցնում է անսովոր ու ճոխ բուսածածկով պատված այն այսերգը, որ հայտնաբերել է Էշուրը Բերինգի նեղուցի մյուս կողմում՝ Կոցբերուի ծովածոցում¹⁹: Ինձ թվում է, որ այս սառցադաշտը ոչ մի կապ չունի Արարատ լեռան գագաթի հետ, այլ առանձին է, եթե միայն նրանց կապող սառցն շերտերը խոր թաղված չեն քարերի տակ: Ես չկարողացա բավականաչափ մոտենալ նրան և այդ մասին ճշգրիտ տեղեկություններ ստանալ: Չյան համատարած առաջին նստվածքին, որն առանց ընդհատման իջնում է սառցեղեն սահմանից, ես հանդիպեցի ծովի մակերևույթից 11844 փարիզյան ոտնաչափ բարձրության վրա: Քանի որ արդեն երևկոյան ժամը վեցն էր, երբ մենք հասել էինք 12346 փարիզյան ոտնաչափ բարձրության և այնքան էլ հեռու չէինք ձյան սահմանից, ուստի ստիպված էինք հոգ տանել ժայռերի մեջ գիշերակացի մի տեղ գտնելու մասին, մանավանդ որ գնալով ավելացող դժվարությունների հետ միասին այլևս անհնար էր դառնում մաև մինչև այդտեղ հասցված փայտի մեր փոքրիկ կապոցը վերև բարձր տալը: Մեր ուժեղ ու համբերատար գրաստներն անհավատալի ջանքերով ստիպված էին մինչև այդտեղ հասցնել մեր բեռները և կտրել անցնել այդքան դժվարին մի ճանապարհ՝ հետևելով մեզ: Մանավանդ մեկիքի ձին մեծ հաջողությամբ հաղթահարեց քարքարոտ տեղանքի բոլոր խոչընդոտներն ու վտանգները և իր տիրոջը հասցրեց այդքան մեծ բարձրության վրա: Բայց երբ խելճ կենդանիներին ազատեցինք բեռներից և ազատ արձակեցինք, այս ամալի վայրում նրանց քաղցը հագեցնելու համար ավելին չկար, քան հատու-

կենտ բույսերն ու արմտիքը, իսկ ծարավի համար՝ սուկ ձյունը: Նրանց վիճակն ինձ անկեղծորեն վշտացրեց:

Մի փոքր կրակ արեցինք, բայց օդն էլի սառն էր, և ճամբարում ցուրտ էր: Այս անգամ գիշերն անհանգիստ անցավ, հոգիս լցված էր ավելի շատ մտահոգությամբ, քան թե հույսերով: Ես չգիտեի, թե ինչը ինձ մղեց նման կանխազգացման: Հավանաբար, դա իմ հիվանդությունից էր, քանի որ այն վերքերը, որ

Արարատի գագաթի մոտ՝ ամենավերին գաղթիպալի առաջ (Իսնիֆ)



E. Imhof

ստացել էի անսի 13-ի վերելքի օրը, չնայած բեթև էին, բայց դեռ չէին լավացել: Դրանցից մեկը այդ նույն օրը աչ ազդրիս ստացած ուժեղ հարվածը, իրեն զգացնել էր տալիս ամբողջ ճանապարհին: Տենըը նույնպես ինձ փոքր-ինչ թուլացրել էր: Կարճ ասած՝ ես թեև արչավախմբումս վերջինը չէի և ոչ մի դադարի առիթ չէի տվել, սակայն դեռ չէի գտնւմ այն ուժն ու առույգութիւնը, որ պետք էին հաջողօր օրերին սառեց անմատչելի տարածություններն անցնելու համար, մի քան, որին ես արդեն ծանոթ էի վաղուց և գիտեի, որ նպատակին հասնելու համար պետք է դիմանալ մեծ դժվարությունների:

Այսպես անցավ գիշերը և առավոտյան վեցն անց կեսին, մեկուկես աստիճան ցրտի տակ, մենք նորից առաջ շարժվեցինք: Երկու ժամ անց հասանք հավերժական ձյունների ու սառույցների սահմանին, այսինքն՝ այն սահմանին, որին, լանջերն ի վար առանց ընդհատվելու իջնելով, հասնում է սառցային տարածքը և կանգ առնում երևաբար տարածքներից դեպի իրեն բարձրացող ջերմության շնորհիվ: Այդ սահմանը գտնվում էր ծովի մակերևույթից 13448 փարիզյան ոտնաչափ բարձրության վրա: Մեր գիշերային ճամբարից մինչև այդտեղ ճանապարհը դժվարանում էր հատկապէս ժայռոտ առապարների թեքության պատճառով: Դրանք գրեթէ անանցանելի էին, քանի որ բաղկացած էին իրար վրա կուտակված ժայռեղեն զանգվածներից: Դրանց սուր-սուր եզրերը և անկյունները շատ հարմար էին ոտքերով և ձեռքերով հենվելու համար, բայց հակառակի պես շատ էին խանգարում մեծ խաչափայտը տանելուն: Իզուր կլինէր այն երկու հոգով տանել, քանի որ տեղանքն այնպիսին էր, որ շատ սահմանափակ էր շարժման հնարավորությունը, խաչը տանողներից մեկի քայլերը խանգարում էին մյուսին, բացի այդ, տասը ոտնաչափ երկարություն ունեցող փայտը, քարակարկառների նեղ միջանցքներով տանելիս, ամեն ակնթարթի խվիվում էր քարերին ու վնասվում: Բայց հայ շինականներից մեկի սրբազան եռանդն այնքան մեծ էր, որ երբ անհրաժեշտություն ստեղծվեց խաչը բողոնել, նա այն շեղակի դրեց իր ուսին, քիկուներից կապեց հագուստի փեշերով և առջևից ձեռքով բռնելով (այդպիսով՝ պահպանելով նաև մյուսոմով օձված բանրակը), մի գարձնաճակ նարպուլոյանք, խորդուրդող քարակույտերի միջով ըմբիշի նման առաջ տարավ իր բեռը:

Հասնելով սառցի սահմանին՝ մենք մի ակնթարթ կանգ առանք սանդուղքի մոտ վիթխարի սառցաբուրգի, որ մեր հայացքի տակ իրաշափոթե՛ն գծազրկում էր երկնքի կապույտ ֆոնի վրա: Ընտրելով մի քանի անկարկտր իրեր և դրանք բողոնելով ժայռերից մեկի մոտ՝ մենք անխոտ լցութայանք և ոչ առանց սրբազան երկյուղի ոտք դրեցինք այն տարածքը, որտեղ, Նոյի ժամանակներից սկսած, մարդկային ոտք դեռ չէր դիպել: Սկզբում առաջ գնալը հեշտ էր, քանի որ լանջը շատ թեթ չէր, բացի այդ, բեթևակի ծածկված էր նորէլ ձյունով, որի վրայով քայլելը դժվար չէր: Առանց մեծ դժվարության անցանք նաև լայնակի փոքրաքիվ սառցանեղերի վրայով, քանի որ դրանց լայնությունը աննշան էր: Սակայն մեր ոգևորությունը երկար չտևեց: Մի քանի հարյուր մետրից հետո այնքան մեծացավ լանջի թեքությունը, որ անհնար դարձավ ձյան վրա ոտքն ամր դնելը: Չյան տակ եղած սառույցի վրա շայքաբեղու համար ստիպված էինք դիմել ինձ ու ուղեկիցներես արդեն ծանոթ միջոցին, այսինքն՝ սանդուղքներ փորելու համար: Թեև այն, ինչ նման լեռների վրա անվանում են սառույց, սովորաբար, տակ սառած, այսինքն՝ ջրով ներծծված և նորից սառած ձյուն է, որը, չունենալով իսկական սառույցի ամրություն, շատ վատ է դիմանում ոտքի տակ: Սանդուղքներ փորելու համար մեծացնից մի քանիսը իրենց մոտ փոքր բլունգներ ունեին, մյուսները՝ կաշին, մի քանիսն օգտվում էին ճանափողական գազլագանից: Առհասարակ կարգ էր, որ առջևից գնացողը սանդուղքը փորձում էր այնքան մեծ, որքան որ անհրաժեշտ էր իրեն առաջ գնալու համար, բայց նրանից հետո եկող յուրաքանչյուրն իր հերթին պարտավոր էր այն մեծացնել, մասամբ առջևից գնացողի գործը թեթևացնելու, մասամբ էլ այն նպատակով, որ վայրէջքի համար, սովորաբար, ավելի մեծ սանդուղքներ են անհրաժեշտ լինում, քան թե վերելքի: Այս աշխատանքը, որ անհրաժեշտության թեղադրանքն էր, երբ գրկված ես մեկ քայլից ավելին անելու հնարավորությունից, ինչպես և խաչը բարձրացնելու դժվարությունները, մեր առաջընթացն այնքան դանդաղեցրին, որ եթե դժվարանց ժայռոտ տարածքում ժամում բարձրանում էինք մոտ 1000 ոտնաչափ, ապա հիմա այդ նույն ժամանակում հազիվ կարողացանք վեց հարյուր ոտնաչափ բարձրանալ:

Մենք պետք է բարձրանայինք այս լեռնամատի ուսի վրա, սակայն ճանապարհին հանդիպեցինք սառույցի մեջ լայնակիրորեն բացված մի ճեղքվածքի, որ հիվեզ ոտնաչափ լայնություն ուներ և այնքան երկար էր, որ չէր երևում, թե որտեղից կարելի է շրջանցել: Մեր բախտից ճեղքվածքի մեջ՝ մոտորքում, բավական չափով հողմահար ձյուն էր լցվել: Դրա վրայով էլ հենց, իրար օգնելով, անցանք այն կողմը: Ի՞նչն էր այդ միջոցին խանգարում մեզ, դիմացի սառցակողմը, որի վրա պիտի բարձրանայինք, ավելի բարձր էր, քան մա, որի վրա գտնվում էինք: Այս ոչ դժվարին անցումից և մի թեք լանջ ևս բարձրանալուց հետո հայտնվեցինք ձյունե մի տափարակի վրա, որը գրեթե հորիզոնական դիրք ուներ և Արարատի այս կողմից երևացող ամենամեծ լեռնասանդուղքն է, որ ամմիջապես երևում է իմ բոլոր նկարներում, եթե այն փնտրելու լինեք լեռան այ կողմով, հորիզոնական այն լանջի վրա, որ մոտ է զագաթին: Այդ գագաթը բարձրանալն էր մեր ջանքերի նպատակը, և թեև սովորական աչքաչափով մենք ունեինք ընդամենը երեք ժամվա աշխատանք, սակայն, ի ցավ մեզ, բարձրացավ ուժեղ ու խոնավ մի քամի, որ ձյունահողմի նշան էր և մեզ գրկեց գագաթը բարձրանալու հույսից ու քաջությունից: Ես հարմար գտա մեր բերած խաչը կանգնեցնել այս տափարակի վրա և այդ նպատակի համար փնտրում էի մի տեղ, որ վանքից կամ գոնե Երևանից տեսանելի լիներ: Մոտ մեկ վերստ, առանց բարձրանալու, դեպի արևելք գնալով, մենք գտանք այդ տեղը: Եվ մինչ մեզանից մի քանիսը կացիններով և ճանփորդական զավագաններով զբաղված էին սառույցի մեջ փոս փորելով, մյուսները երկաթյա երկու մեծ գանձերով իրար միացրին խաչի մասերը և նրա հատման տեղում մեխերով ամրացրին քսանյոթ ֆունտ ծանրությամբ կապարե տափտակը: Ապա միասին կանգնեցրինք խաչը և փոսի մեջ նրա շուրջը լորն առատորեն սառույց ու ձյուն լցրեցինք: Նա ճակատով նայում էր Երևանի կողմը, իսկ հետևում գագաթի թեք, սառցե պատն էր, այնպես որ իր սև գույնով նա պետք է տարբերվեր նրանից և տեսանելի լիներ լավ հեռադիտակով նայելիս:

Կապարե տափտակի վրա գրված էր.

Nicolao Pauli filio	Հավատարիմ հրամանին
totius Rutheniae autocratore	Նիկոլայ Պավլովի ցարի՝
jubente	Համայն Ռուսիայի
hoc asyllum sacrosanctum	Մեծազույն տիրակալի,
armata manu vindigavif	Այս սուրբ լեռը
fidei Christianae	Հանուն քրիստոնեական հավատի
Johannes Friederici filius	1826 թ.
Paskewitsch ab Eriwan	Չեմքի գործրոյսմբ գլավեց
Anno Domini MDCCCXXVI	Իվան Ֆյոդորովիչ
	Պատկերի երևանցին:

Ապա խաչի վրա ես կախեցի իմ ծանրաչափը՝ ծովի մակերևույթի համեմատությամբ տեղիս բարձրությունը չափելու համար: Այն կազմում էր 15138 փարիզյան ոտնաչափ կամ մոտ 42/3 վերստ, որը, անկասկած, 350 ոտնաչափով բարձր էր, քան Մոնթբլանի գագաթը:

Ասես թե մի հանրնդիտոր զգացողությամբ սղված՝ մենք մեր հայացքները կրկին ուղղեցինք դեպի գագաթը, և ես անկառող էի իմ մեջ թաքցնել այն հարցը, թե մենք, իրո՞ք, այս անգամ էլ ստիպված ենք հրաժարվել գագաթը բարձրանալու մտքից: Նայելով ժամացույցին, որը ցույց էր տալիս կեսօր, երկնքին, որ գնալով մտայնվում էր և մեր անբավարար միջոցներին, զգում էի, որ գագաթի վրա գիշերելու ոչ մի հնարավորություն չկա: Վարանման մեջ էր և մեր առաջնորդ մեկից Ստեփանը:

– Մենք քիչ ժամանակ ունենք, թե չէ հաջողությամբ կարճաբանայինք գագաթը,– ասաց նա և դա լիովին հանգստացրեց մեր ընկճված հոգիները, բայց չկուտրեց մի նոր և ավելի բարեհաջող փորձ անելու իմ հույսը:

Սանդուղքները, որ մեզ վեր էին բարձրացրել, օգնեցին իջնել ցած, և մենք, առանց սիհա պատահարների, մութն ընկնելուց առաջ հասանք այնտեղ, որտեղ մեր ճանապարհին դադար էինք առել, այսինքն՝ հոգմած ճանփորդների համար սիրելի Քիպ ջրամբարին: Այստեղ գտանք նաև մեկիս ձի, եզներին և եզնարածին: Նրանք հարմար էին գտն ժայռոտ ու սառցապատ տարածքներից, որտեղ թողել էինք նրանց, իջնել ցած և հանրերույթյամբ սպասել մեզ: Մենք էլ էինք ուրախ՝ թե՛մ կրակի

շուրջ տարածալու համար, քանի որ ցած իջնելիս հազիվ էինք դուրս եկել ճյան սահմանից, երբ այդ ամբողջ տեղանքի վրա, որտեղ մենք էինք, սկսեց առատորեն քայց ձյուն տեղալ, որը սակայն հաջորդ օրը հալվեց: Թեյով և տաք ընթրիքով քարմանալուց հետո ամեն մեկս մեզ համար գիշերակացի տեղ գտանք մեծ-մեծ ժայռերի արանքում, որ ամենուրեք սփռված էին այս տափարակում: Եվ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 20-ին, առավոտյան ժամը տասին մտանք սուրբ Հակոբի վանք:

ՍՈՒՐԲ ՀՎԱՌՔԻ ՎԱՆՔՈՒՄ

Ես դեռ իմ ընթերցողին չեմ պատմել վանքի մեր կենցաղային հարմարությունների և ապրելակերպի մասին, այն բաների մասին, որ քեւ հասարակ, բայց օգտակար կարող են լինել ապագա ճանապարհորդների համար: Սուրբ Հակոբի փոքրիկ վանքը գտնվում է ծովի մակերևույթից 6000 ոտնաչափ բարձրությամբ վրա և տեղավորված է լեռան վիթխարի խորխորտակ ստորին մասում, 600-800 ոտնաչափ խորությամբ հասնող կանաչապատ ու ժայռոտ ձորի մեջ, Արևուրի գետի աջ՝ 25 ոտնաչափ բարձրությամբ ափին: Վանքը պատկերված է Մեծ Արարատը ներկայացնող նկարներից մեկում²⁰: Այն բաղկացած է կիսագնդաձև գմբեթ ունեցող խաչաձև եկեղեցուց, որը հիմքից մինչև տանիքը շինված է հրաբխային քարով, բայց եկեղեցուն կից կառուցված խցերի պատճառով գլխավոր մուտքն այնպես է փակված, որ օրը ցերեկով առանց պատերին խփվելու անհնար է առաջ գնալ նեղ ու ոլորուն միջանցքով: Այդ միջանցքը եկեղեցու հյուսիսային կողմում գտնվող մութ նախաբաբից տանում է դեպի տաճարի մուտքը, որն արևմտյան կողմում է: Արևելյան կողմում է գտնվում երկարավուն, բոխարիկ ունեցող սենյակը, որն առաջին օրերին մեզ ծառայում էր որպես ընդհանուր սենյակ և մնջատեղի, բայց շուտով գտնվեց ավելի մեծ, չոր ու լուսամուտներով ապահովված մի սենյակ, որ մոտ էր վարդապետի խցին: Վանախարը մեզ հետ քերականի ժանրբանալուց հետո չհասպաղեց այնտեղ գտնվող ցորենի պարկերը մեկ այլ տեղ տեղափոխել և սենյակը տրամադրել մեզ: Մեր անկողինը բաղկացած էր հետներս բերած ծածկոցներից, բուրբերից, վերաբլուներից և բարձերից: Մեր ճաշասեղանը մի զարմանալի տեսք ուներ: Այն պատրաստված էր ճեղքված ու իրար կողքի շարված մանր տափաակներից և ավելի ցածր էր, քան սովորական սեղանը: Աշխատասեղան լինելու համար այն չափազանց երերուն էր, Ուստի մենք ավելի հարմար էինք

գտնում ծնկների վրա կամ էլ անկողիններին պատկած գրելը: Իսկ եթե պետք էր կարգին գրել, ապա գրում էինք շտատիվի կամ էլ գործիքներից մեկի վրա: Ով ցանկանում էր, ասե՛նք, նստած ուտել, ապա ստիպված էր իբրև արոտ օգտագործել որևէ խոշոր քար:

Եկեղեցու շուրջ եղած սենյակները բավական հաստ, կավածեփ պատեր ունեին, և բոլորն էլ ծածկված էին տափակ, հաստ կտորներով: Այսահովոթյան համար յուրաքանչյուր սենյակ իր մեջտեղում ունի սյուն: Դրանց վրա մենք խփել էինք մեխեր և օգտագործում էինք իբրև շատ հարճարավետ կախիչներ մեր հագուստների համար: Մեր քազմաթիվ ու մշտապես պետք եկող գործիքների համար ընդհանրում սենյակը շատ մեղ ու անհարմար էր, այդ պատճառով էլ դրանց համար հարճար գտանք մեր բարեկարգ վրաններից մեկը, որ պատրաստված էր պարուսիհից ու սպիտակ, բրդյա կտորից և տեղավորված էր բակի մեջտեղում: Ամեն անգամ օգտագործելուց հետո այդ վրանում էինք տեղավորում մեր գործիքները, իսկ դրանք պահպանելու համար գիշերները ես քնում էի այնտեղ: Անկյունաչափի համար տեղակայման կետ էր ծառայում պարսպի մեծ անկյունաքարը, որն ընկած էր բակում՝ վրանին շատ մոտիկ: Դա պարոն Ֆյոդորովն էր ընտրել իր ցանկությունը: Դիտարկումների հարմարավետության նպատակով մե քարի շուրջը կո խոր փոս էր փորել, որի մեջ հնարավոր էր կանգնել և այդպես պատրաստել էր իր աստղադիտարանը:

Ի շարք այլևայլ հոգսերի, պակաս չէր և մեր սննդի հոգը: Մենք գիտնականներով հինգ հոգի էինք, մեզ հետ էին երիտասարդ վանականը, ֆելդեգերը, փեց կոզակ և չորս զինվոր, այսպիսով, բոլորս միասին տասնյոթ մարդ: Մեզ հետ ունեինք նաև տասնմեկ ձի, որոնցից հինգը՝ սեփական: Կռակներից երկուսը մեզ հետ էին Թիֆլիսից, իսկ մյուս չորսը ուզեկցում էին մեզ Երևանից՝ զինվորական կառավարչի հրամանով, որը մեր տրամադրության տակ դրեց ևս չորս զինվորի 41-րդ եգերյան գնդից: Պարենի գործը տնօրինելու, ինչպես և մի շարք այլևայլ գնումներ կատարելու համար ֆելդեգեր արտոն Շյուցին դեռ Էջմիածնից հարկավոր թողրեով և դրամով ևս ուղարկել էի Երևան, ու մինչ մենք զբաղված էինք լեռան վրա առաջին վերելքը ձեռնարկելով, մե բարեխաջող գնումներ կատարելուց հետո շտապ վերադարձել էր սուրբ Հակոբի վանք: Ձիովորեն-

ից մեկին լավ ծանոթ էր խոհանոցային արվեստը, և Արարա-տի վրա գտնվելու ամբողջ ընթացքում նա մեզ կարգին ծառայություն մատուցեց: Երկրորդը, որն արդեն փոքր-ինչ տարիքով էր, պետք եկավ իբրև զերազանց վերակացու, ինչպես և մեր սնունդն ու օրապահիքը բաշխող: Ամեն երեկու և ամեն առավուտ, զինվորական կարգի համաձայն, նա զեկուցում էր խմբի հետ կատարված գիշերային ու ցերեկային անցուդարձերի մասին: Ձիերին կերակրելու համար օգտագործում էինք կամ գալի, քանի որ այս կողմերում ոչ մի տեղ վարսակ չեն ցանում, կամ մեր ձիերն արածում էին դաշտում՝ առանց զգալու մարդու ու մշակված գալու պակասություն, կամ էլ խոտ, որը հավաքելը, սակայն, մեծ դժվարությունների հետ էր կապված, քանի որ տարվա այդ եղանակին, հատկապես ամառվա երաշտի պատճառով, այն շատ սակավ էր:

Մենք սովում էինք խաչպես, ոչխարի մսի պակաս չունեինք, քանի որ պետք էսած ժամանակ գնում էինք Արևուտի գյուղից: Բացի այդ, նվեր էինք ստացել երկու ոչխար, մեկը մեր գալու օրը՝ պատվարժան վանահորից, մյուսը մի փոքր ավելի ուշ՝ մելիք Ստեփանից: Բայց հատկապես համեղ ու սննդարար էր վայրի խոզի միսը, որ հետո մեր կոզակները դրսում էին Սև ջրի եղեգնուտներում: Դրանց մսից մենք անգամ աղ դրած տեսակը պատրաստեցինք՝ օգտագործելով վանքում եղած կավե ամանները: Պարոն Շիմանը մեր սեղանի համար, երբ պետք էր լինում, առատորեն քոչուկներ էր դրում: Հետո ունեցում էինք նաև չորացրած ձուկ, հատկապես համեղ էր դրա մի տեսակը՝ իշխանը, որ վաճառելու համար բերում էին Սևանա լճից: Արևուտիում շատ կար ձու, կաթ, հավ, բայց քանի որ նա կարգադրել էր գյուղի հետ կարասիներային կարգը պահպանել՝ ի նկատի առնելով այն, որ ժանտախտը դեռ տարածված էր կամ էլ շատ զինվորները դեռ նոր-նոր առողջանում էին, ուստի այդ բոլոր մթերքները գնում էինք մեծ զգուշությամբ: Մարդիկ, որ գալիս էին գյուղից, իրավունք չունեին վանքում ավելի երկար մնալու, քան անհրաժեշտ էր: Գնված ոչխարները սրսկվում էին քրդակրով, նույնպես և այն բոլորս պարկերը, ուրոնցով մոտիկ տեղերից ձիերի համար գալի էինք բերում: Մեզ մեկ-մեկ կաթնասեր էր տալիս մեր բարի վանահայրը, մենք էլ նրան ամեն օր հյուրասիրում էինք բեյով և զինիով: Չավարի, ոսպի, չորացրած ձիթանի, չամիչի կամ անկորիգ բիշմիչի, ցո-

րենի, բրնձի, տխի, աղի, ծխախտախի, շաքարի, բեյի և ունի պաշարներ ստանում էինք Երևանից, վերջիններս, սակայն, շատ քանակ գնով: Շաքարի մեկ ֆունտը, օրինակ, գնում էինք երկու կամ երեք ուրբիով: Իբրև միակ ճուխություն՝ ես ինձ բույլ էի տալիս ճաշին փոքր քանակությամբ սուրճ խմել, այն էլ երբ վաճառում էի լիճում:

Ժամանակ առ ժամանակ ստանում էինք նաև խաղողով և զանազան այլ պտուղներով լիքը բքոցներ: Երևանից գինին մատակարարում էին տկերով: Իսկ ահա խմելու լավ ջուր վանքի մոտակայքում չկար, քանի որ Արկուտի գետի ջուրը մշտապես պղտոր էր և պետք էր գալիս միայն ձիերին ջրելու կամ էլ որևէ բան խաշելու համար: Լվացքի համար այդ ջուրը պիտանի չէր, քանի որ հողի մասնիկներ շատ էր պարունակում, և երբ վրացքի անհրաժեշտություն առաջացավ, մեր մարդիկ երկու անգամ ստիպված էին Արկուտից մոտ երկու վերստ ցած իջնել, որտեղ ժայռերի միջից մեր քանի տեղում մաքուր աղբյուրի ջուր էր թխում: Այդ ջրից մենք ամեն օր մի փոքր պաշար էինք վերցնում նաև խմելու համար:

Սակայն մեր համապագօրյա կերակուրներից ամենակարևորը՝ հացը, սկզբում այնքան էլ լավը չէր, քանի որ հայոց մեջ, առհասարակ, օգտագործվում է մի տեսակի հաց, որ շատերի համար, գուցե, կարող է լավը լինել, սակայն եվրոպացու քիմիքի և ստամոքսի համար ոչ բավականաչափ հասն է ոչ էլ սնունդ է պարունակում: Դա, այսպես կոչված, Losch-ն է՝ լայն, բարակ շերտահացը: Քիչ թթված խմորը գրտնակում են այնպես, որ ունենում է մեկ կանգուն երկաթություն, կես կանգուն լայնություն և դանակի բուր կողմի չափ հաստություն, ապա փռում են կաշեպատ դափի վրա և դրանով խմորն րոնրի շիկացած պատին այնպես, որ մնում է դրան կպած մի քանի բուպե: Այդ ընթացքում, երբ հասցնում են ևս երկու-երեք խմորալուծը գրտնակել, րոնրի միջինը լավ եփվում է, նույնիսկ այս ու այնտեղ մի փոքր այրվում է, որից հետո դուրս է հանվում: Այսպիսի հաց թխելու վստարանը նույնպես շատ յուրօրինակ է: Դա բնակարանի կամ նախասրահի մեջ արված մի փոս է, ցածրի մասում՝ լայն, վիթևում՝ նեղ: Այն պատրաստվում է շատ նուրբ կավից և կրակի տակ բրծվում: Դա է հաց թխելու հարմարությունը, որի առավելությունն այն է, որ բնակարանի մեջ տեղ չի զբաղեցնում, քանի որ օգտագործելուց հետո խնամքով

ծածկվում է: Այս լավաշն ընդհանրապես հայոց մեջ ընդունված հացն է, որը բավարարում է նրանց մի շարք այլ կարիքները նաև ոչ իբրև հաց: Երբ նրանք, օրինակ, ճաշում են, լավաշով ծածկում են սեղանը, ընդ որում՝ յուրաքանչյուր սեղանակից իր առաջ ունենում է մի ամբողջ լավաշ՝ փոված անձեռոցիկի պես, որով կարող է և քերանը մաքրել, երբ վերջացնում է ուտելը: Երբ թթու կաթ (մածոն) է մատուցվում, ապա նրա մեջ քաթախում են մի կտոր լավաշ՝ նախապես նրան զղալի ձև տալով, և ավստի միջից վերցնելով «զղալի» հետ միասին ուտում են: Թարմ և թթու դրած կանճաչները և արմտիքը, որ մշտապես կան հայոց սեղաններին, փաթաթում են մի կտոր լավաշով, վրան մի քիչ ձուկ կամ միս ավելացնում և այդ ամբողջ փաթեթը նախանձեղի աստիճակով ուղարկում այնտեղ, որը որ հարկն է: Ինչպես հայտն է՝ ամեն գյուղ իր սովորությունն ունի, և դա շատ լավ է: Կարող են հավատացնել, որ ես լավաշն այդպես ճաշակեցի շատ անգամ, քայց ամեն անգամ շատ կարոտելով մի կտոր սովորական, մեր ճաշակի հացին: Հացի մեկ այլ տեսակը, որից հայերն օգտվում են հազվադեպ և կոչվում է բոբոն, նույնպես չէր կարող փոխարինել մեր ուզածին: Բոբոնի համար նրանք վերցնում են համարյա բոլորովին չբրված խմորը, դրանից պատրաստում են հարթ, մատի հաստությամբ ունեցող կլոր, փորքիկ հացեր և թխում են ածուխի վրա կամ էլ քոճրում: Մեր կղզակները հնարը գտան առանց երկար չարաչրվելու: Վանքի մոտերքում կալվախառն ազգավով մի գաղթիպի բլուր կար: Այդ բլրի վրա խոր ու լայն մի փոս փորեցին, դա փռում էր, մի հարմար քար էլ դարձրինք դրա համար դուռ: Կողքին տաշտաձև մի փոս էլ փորեցին և լավ երեսպատեցին կավով: Դա էլ խմորն առաջն էր, որտեղ հունցում էր խմորը, և ամբողջ երկու օր մնալով՝ թթվում: Հարթ ու ողորկ մակերես ունեցող մի տեղ էլ պատրաստվեց, որ ծառայում էր որպես սեղան-տախտակ: Այդպիսով, ոչ միայն այդ եռանդուն մարդիկ, այլև մենք կարողացանք տարեկանի լավ այտուրից արտակարգ համեղ և օրինավոր հաց ունենալ:

Խոհանոցի մեր բոլոր հարմարությունները բաղկացած էին մի գույգ երկաթյա կարասայից և մի քավայից, որ նույնիսկ առանց ճաշի անհրաժեշտության էլ միշտ դրված էին լիճում սեղանին: Ունեինք նաև անագապատ մանր պնակներ զանազան խորտիկների համար՝ վրացական սվորության հսնամայն

հարմարեցված ճանապարհի համար, ինչպես և մի կես դյուժին անազապատ ափսեներ: Մեզանից յուրաքանչյուր ուներ իր արծաթապատ գդալը, իր դանակը, պատառաքաղը և բաժակը, որ ճանապարհորդության ամբողջ ընթացքում մշտապես կրում էր իր մոտ՝ հակառակ Դիոգենեսի փիլիսոփայության: Խոհանոցի համար փայտ բերում էին բավական հեռու տեղերից, այն էլ միայն ծառերի ջարդված ճյուղեր և արմատներ: Մեր սենյակի բովարդիկի համար, որը վերջին օրերին ստիպված էինք վառել ամեն օր, իբրև վառելիք ծառայում էր քարը, որից տեղի բնակիչները ձմեռվա համար պաշար են հավաքում ճիշտ այնպես, ինչպես որ մենք ենք մեզ մոտ վառելիքայտ հավաքում: Աքարը շորացնում են և շերտ-շերտ դարսում իրար վրա՝ դարձնելով կոնաձև, մեծ ամրոց, ինչպես որ երևում է սուրբ Հակոբ վանքը պատկերող նկարում: Աքարի ամրոցը կանգնած է մեծ պարսպի առաջ՝ առնված մի փոքրիկ ու անտվոր ցանկապատի մեջ: Եվ շատ զարմանալի էր, որ քարեր այրվում էր շատ լավ, արծակելով բարձր ջերմություն՝ առանց գարշահոտության:

Փոքր դադարից հետո ու նորից սկսեցի զբաղվել մագնիսական ասեղի դիտարկմամբ, որը ներկա ժամանակներում ջանադրաբար գործածվում է ճանապարհորդների կողմից, քանի որ ավելի մոտ պատկերացում է տալիս երկրագնդի մագնիսական ուժերի մասին, մի բան, որ շատ կարևոր է: Սակայն այդ նպատակին ծառայող սարքերը տարբեր են սովորական մագնիսական ասեղից և գլխավորապես ծառայում են այն բանին, որ ամենաճշգրիտ չափով ցույց տան բոլոր կողմերով շարժվող մագնիսային ասեղի դիրքը: Եվ քանի որ անշափ դժվար է մեկ մագնիսական ասեղը կարգավորել այնպես, որ մտ հավասար ճշտությամբ ցույց տա բոլոր վիճակները, ուստի ճանապարհորդներն իրենց հետ միշտ ունենում են երկու տեսակի մագնիսական ասեղներ, մեկը, որ մշտապես խոփզոնական վիճակում է կախված և այդ վիճակում հեշտությամբ ուղղվում է դեպի հարավային և հյուսիսային բևեռներ, և մեկ էլ մի ուրիշը, որ թեև նույնպես կարող է ուղղվել դեպի հյուսիսային և հարավային բևեռներ, սակայն առավել հեշտությամբ տատանվում է վեր ու վար, մոտավորապես կշեռքի մման:

Այդ փորձերը են չէի կարող վանքի պարսպի ներսում դնել, ուստի դրանց համար ընտրեցի մի քիչ ավելի ազատ տեղ,

գլխավորապես այն պատճառով, որ խուսափեմ երկաթի ազդեցությունից:

Մինչ ես զբաղված էի մագնիսական ասեղով, պարոն ֆոն Բեհագելը և պարոն Շիմանը մի հետաքրքիր ճանապարհորդություն կատարեցին դեպի Կողքի նշանավոր աղահանքերը, որ Արաքսի հոսանքն ի վեր Արարատից հեռու է շուրջ իննսուն վերստ և մոտ է բուրբակյան Երզրումի փաշայության սահմանին: Այնտեղ գրեթե հարյուր ոսոնաչափ բարձրություն ունեցող լեռան տակ գտնվում են քարաղի վիթխարի վաշարներ, որոնք տեղի բնակիչները կողմից թեև օգտագործվում են հնուց առտի, ընդ որում՝ ոչ այնքան էլ խելամուռներն, սակայն բոլորովին չի նկատվում, թե դրանք փորդինձ նվազում են:

ԵՐՐՈՐԴ ՎԵՐԵԼՔ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ

Մինչ այս, մինչ այն՝ լավացավ եղանակը, երկիրը պարզվեց, օդը դարձավ մաքուր ու խաղաղ, հատկապես լեռան վրա ավելի հանդարտվեց, ցած գահավիժող սառույցների ու ժայռեղեն գանգվածների բնյուններն ավելի հազվադեպ էին լավում: Կարճ ասած՝ երևում էր, որ թեև խիստ առաջացած լինելուն, եղանակը մի անգամ էլ նպաստավոր շրջան է մտնում, ուստի ես չհասպաղեցի այն ծառայցնել գագաթը բարձրանալու մի երրորդ փորձ կատարելու համար, քանի որ այս կարգի ծեծաբարկունները չնայած զգուշավորություն են պահանջում, բայց երբ գալիս է նպատատվոր պահը, օգտվելուց չպետք է վարանել: Սեպտեմբերի 25-ին ես հարցրեցի Ստեփան աղային, թե ես արդյոք ցանկանո՞ւմ է ճանապարհակից լինել մեզ, բայց անձամբ գալով սուրբ Հակոբի վանք՝ նա մերժեց ինձ՝ ասելով, որ նախորդ վերելքի չարչարանքներից հետո իրեն դեռ շատ հոգնած է զգում մի նոր փորձ անելու համար, բայց նա ինձ խոստացավ չորս պնդակազմ շինական ուղարկել, ինչի մասին ես արդեն խնդրել էի նրան, ինչպես և մեզ համար երեք եզ վարձել՝ մի եզնարածով: Հաջորդ օրն առավոտյան կանուխ չորսի փոխարեն հինգ շինական եկան՝ մասնակցելու վերելքին: Ես, ի հարկե, բարեհաճությամբ ընդունեցի նաև հինգերորդին, որը կամավոր էր եկել, վերցրեցի նաև մեր երկու զինվորներին: Մարկավազն այս անգամ նույնպես ուղեկցում էր մեզ, գալիս էր և պարոն Հենը, բայց ոչ ձյան ասեմանն անցնելու մտադրությամբ, այլ վերին բարձրություններում բուսատեսակներ ուսումնասիրելու համար: Նախորդ փորձերից ես արդեն գիտեի, որ ամենակարևորն առաջին գիշերը, որքան հեմարավոր է, ձյան ասեմանին ավելի մոտ անցկացնելն է, որպեսզի հաջորդ օրվա ընթացքում գիշերային ճամբարից կարողանայինք հասնել գագաթը և վերադառնալիքն ունյա տեղը: Դա պահանջում էր իրերից վերցնել միայն ամենանհրաժեշտները, իսկ մարդ-

կանցից՝ ամենակարևորներին: Այդ պատճառով էլ ես վերցնել ավելի եզներից միայն երեքը, մի քանի տաք հագուստներ, անհրաժեշտ սնունդ մեզ համար և փայտի մի փոքր պաշար: Վերցրեցի նաև մի ոչ մեծ խաչ: Այն մոտ երկու դյույն երկարություն ուներ, պատրաստված էր կաղնեփայտից և այնպես, որ նրա երկայն մասը կրողի համար կարող էր ծառայել նաև իբրև գավազան: Մենք ճանապարհ ընկանք այն նույն ուղղությամբ, որով անցել էինք նախորդ անգամ: Մեր ուժերը հնարավորին չափ խնայելու համար այս անգամ ես և Արովյանը ծիով առաջ անցանք, և արագ, որքան թույլ կտար այդ խիստ քարքարոտ տեղանքը, հասանք Քիպ ջրամբարի խոտածածկ տափարակին: Բայց այստեղ մեր ձիերը չարձակեցինք, ինչպես որ արել էր Ստեփանը, այլ դրանք, հենց այդ նպատակով մեզ հետ վերցրած մի կողակի հետ, ուղարկեցինք հետ: Պարոն Հենը նույնպես այստեղից հետ դարձավ: Դեռ մտք 12-ը չկար, երբ մենք հասանք տափարակին և նախաճաշելուց ու մի փոքր դադար առնելուց հետո, նախկին ուղղությունից փոքր-ինչ շեղվելով, շարունակեցինք վերելքը: Սակայն բեռնված անասուններն այլևս արագ չէին կարող սալ մեր հետևից: Դրանցից մեկը հատկապես ավելի թույլ էր երևում, քան մյուս երկուսը, և եթե քարձրանայինք իր ընթացքով, ապա բավականին հետ կընկնեինք: Ժայռապատ մի բլրի առաջ, որ խիստ լանջ ուներ, և որը եզներն այլևս չկարողացան բարձրանալ, մենք կանգ առանք, ազատեցինք նրանց բեռներից, դրանք հավասարապես բաժանեցինք մեր մեջ այնպես, որ յուրաքանչյուրն իր մասն առնացավ հագուստից ու փայտից, ապա եզնարածին իր եզներով նույնպես ուղարկեցինք հետ: Երկույան հինգն անց կեսին մենք արդեն մոտ էինք ձյան ասեմանին և զգալիորեն ավելի բարձր, քան նախորդ փորձի ժամանակ: Մենք հասել էինք ծովի մակերևույթից 13036 փարդվան ոտնաչափ բարձրությամբ: Վիթխարի ժայռերը, որ կային մեր շուրջը, հուշում էին, որ այստեղ պետք է լինի մեր գիշերակացի տեղը: Շուտով կրակ արեցինք և տաք կերակուր պատրաստեցինք: Ինձ համար դա սխալ բանապարհ էր, որ կարող եմ խորհուրդ տալ լեռնագնաց ճանապարհորդներին ուտելու այսպիսի պայմաններում իբրև խիստ ջերմացնող և զորավոր սնունդ: Այն ավելի ուժեղ է, քան մաի արգանակն ու սեղեն ուտելիքները, քանի որ դրանք մարմանն համար ավելի ուժ են պահանջում, քան թե տալիս են


մարմնին, և այն էլ ոչ այնքան արագ, որ մարդ կարճ միջոցում իր ներսում դրա արդյունքն զգա: Ցավոք սրտի, Արտվյանն այս գերազանց կերակուրից չկարողացավ ուտել, քանի որ նրան այդ բանն անել արգելում էր եկեղեցական ծեսը: Ջարմանալի էր, որ նա կարողանում էր պաս պահել այդ զրկանքների ու չարչարանքների մեջ և այն էլ՝ առանց ուժերի նկատելի լարման ու անարտունց, առանց անգամ ինձ հայտնելու նախօրոք, այլապես ես նրա համար պատճի համապատասխան ուտելիք կպատրաստեի, որևէ հյոք կամ էլ թե՛ մանրացրած պղպեղով, որոնցով նա կարող էր ամրապնդել իր ուժերը՝ շխախտելով եկեղեցական կարգը: Մյուս հայ շինականները մույնպես խստորեն պահպանում էին եկեղեցական պասի օրենքը և այդ պատճառով էլ բավարարվում էին հետևերը բերված հացով և իրենց ու զինվորներին անձամբ իմ կողմից որոշակի չափով արվող օղիով, որոշակի, քանի որ խթանիչ միջոցներ թեև պետք է օգտագործել այնտեղ, որտեղ դրանք անհրաժեշտ են, ինչպես, օրինակ, լեռ բարձրալսալիս, բայց դա պահանջում է բացառիկ գզուշություն, այլապես շատ հեշտությամբ սպասվածի հակառակը կարող է լինել, այսինքն՝ հոգևձուրթյան զգացում և քնելու ցանկություն:

Մի փառավոր երեկո էր դա, որ այդ օրը անցկացրեցի՝ նախելով բարձր տրամադրությունից փայտող իմ ուղեկիցներին, գեղեցիկ երկերին և նրա վրա հրաշալիորեն գծագրվող գազաբիծ: Ես նայում էի հեռու, մեզինք ներքև ընկողմանած մութ գիշերին, և իմ սիրտը լցվում էր հանգստության, հպարտության, սիրո, գոհունակության և նվիրվածության զգացումներով: Անցյալը խաղում էր իմ աչքերի առաջ, ապագան մեղմ հայացքով նայում էր ինձ: Մի խոսքով՝ անպատմելի այն ապրումները, որ այլևայլ հանգելի հույզերի հետ միասին, առիտարակ, համակում են ճանապարհորդներին բարձր լեռների վրա, քիչ-քիչ քուն բերեցին, և ես թեցի գլխս վերև կալված հրաբխային ժայռերի մեջ, որտեղ ջերմությունն աննշան էր, հազիվ 4,5 աստիճան, մինչդեռ իմ ընկերները, կրակի շուրջ նստած, դեռ երկար ժամանակ սրտաբաց գրույց էին անում:

Երբ լույսը բացվեց, մենք վեր կացանք, և ինձգձ անց կեսին արդեն պատրաստ էինք ճանապարհի ընկնելու: Մի կես ժամում անցանք վերջին քարածածկ լանջերը և կրկին մտանք հավերժական ձյունների սահմանը մոտավորապես նույն այն տեղում, որտեղով որ անցել էինք նախորդ անգամ՝ կրկին վերջին ժայ-

ների մոտ բողոնելով մեր ունեցած իրերի ավելորդ մասը: Մակայն ծյան տարածքը մեզ համար ոչ այնքան նպաստավոր փոփոխության էր ենթարկվել: Վրա հասած ջերմության հետևանքով նոր եված բարձ մայրեց, որ նախորդ վերելքի ժամանակ շատ օգտակար եղավ, յուս անգամ այնպես էր հավելել ու ստացակավել, որ թեև լանջի չնչին բեռությամբ, արդեն ներքին ստիպված էինք սանդուղքներ փորել: Դա դժվարացրեց առաջ գնալը և մեզինք պահանջեց ամբողջ ուժերի լարում: Շինականներից մեկին մենք ստիպված էինք դեռ գիշերային ճամբարում բողոնել, քանի որ իրեն լավ չէր զգում: Մյուս երկուսը, ստացային լանջը վերջից մի կերպ բարձրանալով, խիստ հոգնեցին, մեկը մյուսի հետևից նախ պատկեցին հանգստանալու, ապա վեր կացան և նույնպես իջան գիշերային ճամբար: Դա բոլորովին չկատեցրեց մեզ, մնացյալներս, հետևելով մեր նպատակին, հաղթահարած դժվարություններից ավելի ուժ առանք, բան թե նուսահատվեցինք: Շուտով կրկին հասանք մեծ խորխորատին, այսինքն՝ մեծ ստացալանջի վերին եզրին, որի վրա բարձրացել էինք նախորդ անգամ: Ժամը 10-ին մենք կրկին այնտեղ էինք, որտեղ անցած անգամ եղել էինք ճաշին, այսինքն՝ ձյունն այն մեծ տափարակի վրա, որն Արարատի գագաթին մոտ ընկած առաջին ամենամեծ սանդուղքն է: Մոտ մեկ վերստ հեռավորությունից մենք նայում էինք սեպտեմբերի 19-ին տնկված խաչին, որով իր սև գույնի պատճառով, հավանաբար, ինձ անմոզող շափով փոքր էր թվում, այնքան փոքր, որ սկսեցի կասկածել, թե հնարավոր է այն Արարսի հովտից սովորական հեռավորությունով գտնել ու ճանաչել:

Գագաթի ուղղությամբ մեր առջև ավելի կարճ, բայց ավելի բեռ մի լանջ կար, քան հետևում բողածը և նրա ու վերջին գագաթի միջև երևում էր ես մի փոքր բլուր: Կարճ դաղաբրից հետո մենք անցանք դիմացի լանջը, որ ամենաբեթք էր բլուրից, ու դրանից հետո՝ նաև հայտնող բարձունքը: Մակայն մեր համընդհանուր ջանքերի նպատակակետի փոխարեն մեր առաջ հայտնվեցին մի ամբողջ շարք նոր բլուրներ և ժածկեցին գազարը: Մենք, որ ոչ մի կնկրաք չէինք տատանվել և կարծում էինք, թե դժվարություններն արդեն հետևում են, մի փոքր ընկձվեցինք, և մեր ուժերը, որ ծախսել-սպառել էինք սանդուղքներ փորելու դաժան աշխատանքի վրա, տեսադաշտից կորած մեր անմատչելի նպատակին հասնելու համար թվացին այլևս անբավարար: Մակայն ի միտ առնելով անցած ճանապարհը,



Նոյի տապանը՝ արձարի վրա դրվածք

տեսնելով իրար հաջորդող բյուրեղի մտտիկությունը և ապա մի հայացք գցելով իմ խիզախ ուղեկիցների կողմը՝ բուլաարտություն անցավ, և կրծքիս տակ զգացի ներքին կանչը՝ առաջ... Առանց կանգ առնելու՝ մենք անցանք ևս մի քանի բլուր, և ահա վերջապես սկսեց փչել զազարի քամին: Ես անցա վերջին ճյուղաբլուրը, և ծայրագույն գմբեթը՝ Արարատի ամենաբարձր զագաթը, հայտնվեց իմ ցնձալից հայացքի առաջ: Լարելով մեր վերջին ուժերը և սանդուղքներ պատրաստելով՝ մենք բարձրացանք ևս մի սառցալանջ և 1829 թվականի սեպտեմբերի 27-ին, ժամը երեքն անց 15 րոպեին կանգնեցինք Արարատ լեռան զագաթին:

Ինձ համար այդ պահին ամենամեծ ուրախությունն ու հաճույքը հանգիստ առնելն էր, ուստի վերաբրկուս փռեցի և նստեցի:

Ես գտնվում էի փոքր-ինչ ուռուցիկ, համարյա շրջանաձև մի հարթության վրա, որի պարագիծը կլիներ շուրջ 200 քայլ: Եզրերի կողմից, հատկապես հյուսիսից և հարավից, այն խիստ զառիթափ էր: Հենց դա էր Արարատի քարացած, հավերժական սառույցներից բաղկացած արձարափայլ զագաթը, որտեղ չէին երևում ոչ քար և ոչ էլ ժայռեր: Արևելյան կողմում զագաթն ավելի թեք էր իջնում, քան մյուս կողմերում: Այնտեղ երևում էր հավերժական ճյուղերով պատված մի զոգավորություն, որ կապված էր ավելի ցածր մեկ ուրիշ զագաթի հետ: Նրա հեռավորությունը այն զագաթից, որի վրա մենք գտնվում էինք, կլիներ մոտ մեկ վերստ, սակայն պարոն Ֆյոդորովի հաշվումներով միայն 187 թիթե՞ն կազմեց կամ մեկ վերստի մի երրորդից մի քիչ ավելի:

Եթե ենթադրում ենք, որ զագաթի որևէ կետի վրա իջել է Նոյի տապանը, ապա դրանից բխում է հետևյալը. քանի որ, ըստ

Ծննդոց գրքի (6, 15), տապանը ունեցել է երեք հարյուր կանգուն երկարություն և հիսուս կանգուն լայնություն, ուրեմն նա կարող էր գրադեցնել գազաթի մակերեսի հազվի մեկ տասնեորդ մասը: Հարց է ծագում նաև Արարատի վրա Նոյի տապանի մնացորդների մասին: Բնագիտությունը չի կարող նման հնարավորությունը մերժել, քանի որ Արարատի գագաթը ջրհեղեղից հետո արագորեն սկսել է ծածկվել հավերժական աստույցներով, և տարակուսելի չէ, որ նրա վրա այժմ հիմնահողի հետք անգամ չի երևում, հատկապես երբ ի նկատի ենք առնում, որ սառույցի ու ձյան ավելի քան հարյուր ոտնաչափ խոտրոթյամբ շերտը բարձր լեռների բաժանար սովորական երևույթ է, ուրեմն Արարատի գագաթի գոգավորության մեջ նույնպես հեշտությամբ կարող էր լինել այնքան սառույց, որքան անհրաժեշտ է երեսուն կանգուն բարձրություն ունեցող տապանը ծածկելու համար:

Գագաթից իմ առջև բացվել էր մի ընդարձակ համայնապատկեր, որտեղ, սակայն, անչափելի հեռավորության պատճառով պարզ գանձագանձում էին միայն ամենախոշոր գանգավածները: Արաքսի ամբողջ հովիտը ծածկված էր գորշ մառախուղով, որի միջով, իբրև ձեռնափի սեծուքյան հովիտներ, երևում էին միայն Երևանն ու Սարդարապատը: Հարավային կողմում ավելի պարզ երևում էին այն բլուրները, որոնց հետևում, հավանաբար, Բայազետն էր: Հյուսիս, հյուսիսարևմուտքում շողշողում էր Արագածի ատամնավոր գագաթը, մի հրաշալի ու անմատչելի ժայռեղեն թափի մնամ: Ծածկված ձյան զանգվածներով: Արարատին շատ մոտ, հատկապես հարավարևելյան, ինչպես արևմտյան կողմում, բայց մի փոքր ավելի հեռու, ձգվում էին մանր լեռների շղթաներ, գրեթե բոլորն էլ կրնան զագաթներով և գագաթների փոտրակներով, որ հիշեցնում էին նրանց երբեմնի հրաբխային խառնարանների մասին: Մեծ Արարատից հարավ-արևելք Փոքր Արարատն է, որի գագաթն այստեղից չի երևում իբրև մի սովորական կրնի ծայր, ինչպես որ ցածից, այլ ունի բառանկյուն, սեղմված բուրգի տեսք, որի անկյուններում և մեջտեղում ծայռեղեն գանգավածներ կան: Սակայն ի՞նձ ամենից շատ զարմացրեց Գեղամա լճի մի փոքրիկ կտորը, որը հանկարծ շողշողում, մուգ կապույտ հայելու նման երևաց հյուսիս-արևելքում, այն բարձր լեռնաշղթայի հետևում, որն անմիջապես հարավից շրջափա-

կում է լինը: Այդ լեռնաշղթան այնքան բարձր էր, որ ես երբեք չէի կարող սպասել, որ Արարատի գագաթից նրա վրայով կարող եմ տեսնել լճի հայելին:

Այս ամենը դիտելուց հետո ես հայացքս ուղղեցի ցած՝ դեպի իմ ուղեկիցները և նկատեցի Արովյանի բացակայությունը: Ասացին, որ նա խաչն է կանգնեցնում: Այդ բանը ես ինքս էի մտադիր անել հենց գագաթի կտր տափարակի մեջտեղում, որն ամենից հուսալի և արժանավոր տեղն էր նրա համար: Սակայն Արովյանը, սրբազան եռանդից մղված, գործը ինքն էր ձեռնարկել, և խաչի համար տեղ էր ընտրել գագաթի հյուսիսարևմտյան կողմում: Եթե խաչը կանգնեցվեր գագաթի մեջտեղում, ինչպես ճիշտ մտածել էր նա, Արաքսի հովիտից տեսանելի չէր լինի, քանի որ ընդամենը ինձ ոտնաչափ երկարություն ունի: Եվ որպեսզի այն տեսանելի լիներ ոչ միայն Արաքսի հովտից, այլև Արևոտիցի և սուրբ Հակոբ վանքից, կյանքը վտանգի ենթարկելով, գաղթից փախչելուց նա մի երեսուն ոտնաչափ ցած էր իջել գագաթի տափարակից, այդ պատճառով էլ խաչը մեզ չէր երևում: Ես այնտեղ միայն նրան տեսա աշխատելիս, նա սառույցների մեջ փոս էր փորում՝ խաչը դրա մեջ ամրացնելու համար: Անկասկած, այդ տեղը խաչը կանգնեցնելու համար ամենաանճապաստն էր, քանի որ մակերևույթի մեծ թեքության պատճառով սառույցն այստեղ կարող էր ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ցած շարժվելու կամ էլ ցած գահավիժելու վտանգին, մի բան, որ անհասարակ լայն և պատահալուծ մեծ լեռների սառցային զանգվածների հետ, հետևաբար մի քանի տարուց հետո, երկի, այստեղ մեր ներկայության մասին վկայող այդ միակ նշանը պիտի անհետանար: Սակայն, չգիտես ինչու, իմ մեջ հաղթեց այն միտքը, որ այդ նշանը դեռ երկար ժամանակ իզուր սպասելու է որևէ նոր ճանապարհորդի ժամանմանը, և որ դրան հակառակ, մեզ համար պակաս պատվավոր չէ նաև այն, որ նա հենց այսօր էլ Արաքսի հովտից երևացող մի նշան է՝ ի սպախույց մեր այս ձեռնարկի, որ կարողացանք գլուխ բերել և եղանք երջանիկ: Բայց ամենի վելի կարևոր էր խաչն այդ տեղում բողնել այն պատճառով, քանի որ ես մտադիր էի լեռը չափելուս չափ օգտագործել պարուն Յոդոդրովի եռանկյունափակական չափումների համար: Ես թույլ տվեցի Արովյանին խաչն այդտեղ տնկել, իսկ ինքս գնացի նայելու ծանրափաչս, որ տեղավորել էի ուղիղ գագաթի

մշտեալուն: 3,7 աստիճան ցրտութեան պայմաններում սնդիկի սույնը կանգնած էր ոչ ավելի բարձր, քան 15 դիւյն և 3/4 խազն է փարփայան չափմամբ: Դա համեմատելով այն չափումների հետ, որ պարոն Ֆրոդորովը պատրաստական եղավ միաժամանակ կատարելու վանքում, գտանք, որ լեռան բարձրությունը վանքի նկատմամբ 10272 փարփայան ոտնաչափ է, իսկ վանքի բարձրությունը գումարելով դրան՝ տեսանք, որ Արարատի գագաթը ծովի մակերևույթից բարձր է 16254 փարփայան ոտնաչափ կամ մոտ հինգ վերստ:

Գագաթի վրա մենք վեջ հոգով էինք, ինձնից բացի խաչատուր Աբովյանն էր՝ Էջմիածնի վանքի սարկավազը, որ Երևանից ոչ հեռու գտնվող Քանաքեռ գյուղի շինականներից մեկի որդին էր, 41-րդ եզրերակ գոյի զինվորներ Ալեքսանդր Ջոդովենկոն և Մատվեյ Չալպանովը, ինչպես և Արկուսիի գյուղացիներ Հովհաննես Այվազյանն ու Մուրադ Պողոսյանը:

Սարկավազը մոտ 20 տարեկան էր և վարժված վանքի խաղող կյանքին, սակայն ոչ մի սակարար շխտսափեց այն զրկանքներից, որ պահանջում էր վերելքը: Արարատի գագաթը բարձրանալու ամբողջ ընթացքում նա մշտապես համարձակութեամբ, տոկունությամբ, ինչպես և նպատակին հասնելու բարձր ոգևորվածությամբ էր հանդես բերում: Սրբազան այն եռանդը, որ նրան Էջմիածնից ստիպեց ուղեկցել մեզ, առաջնորդում էր նրան՝ ի հեճուկս վանականի հանդերձներից, որ բաղկացած լինելով երեք երկար ու լայն պարեգոտներից՝ մեծապես խանգարում էին նրան: Նա իրեն երջանիկ էր զգում՝ տեսնելով Արարատի քարակարկառները և սառցադաշտերը, այդ սրբազան եռանդը նրան կանչում էր դեպի գագաթը՝ անդադար, առանց հանգստի մտածել տալով խաչի մասին: Նա իր համար այդ սրբազան վայրերից թաչկիմանի մեջ փաթաթած մի մեծ կտոր սառույց հասցրեց մինչև վանք, որտեղ հալել տվեց և իբրև սուրբ ջուր՝ լցրեց մի շշի մեջ:

Ալեքսեյ Ջոդովենկոն, որ մի քաջասիրտ զինվոր էր, այժի էր ընկել անդրկովկասյան բանակում թշնամու դեմ մղած կռիվներում՝ հանուն քրիստոնեական հավատի: Նա ուներ պարզ ու հավատարիմ սիրտ, որտեղ չկար ոչ կեղծություն և ոչ էլ նվաստություն, միաժամանակ համեստ էր և հանրաբարար: Ինչպես առաջին փորձի ժամանակ, այնպես էլ այս անգամ, նա տղամարդու պես դիմացավ ամեն մի չարչարանքի ու վտանգի:

Մատվեյ Չալպանովը իսկական պատանի հերոս էր՝ լի սիրտով և համեստությամբ, և ինչպես իր ընկերը՝ հեռու նվաաս շողորթությունից: Նա իր ընկերոջ նման, ինչպես և պատշաճ էր, մեծ պատկառանք ուներ իմ հանդեպ, շատ էր գնահատում իր նկատմամբ ցուցաբերած իմ վստահությունը: Մարկանց օգնելու մեջ նա պատրաստ էր անգամ ինքնամոռացությամբ, մի քան, որի կարիքը նա զգում էր վերելքի ժամանակ: Երևում էր նաև, որ նա իր սրտի մեջ կրում ու հասկանում է մեր գործի ու նպատակի վեժն գաղափարը, քեև այդ բանը ցույց էր տալիս իր հասակին ու կարգին համապատասխան, բայց և շատ ինքնատիպ ձևով: Գագաթը բարձրանալիս, օրինակ, իր վերարկուի տակ փոխանակ հագնելու որևէ տաք ու հարմար շոր, հագել էր ամառային համազգեստ, խնամքով մաքրված ու կարգի բերված, ասես թե շքերթի գնալիս լինեք:

Հովհաննես Այվազյանը 26 տարեկան ցափեղ տղամարդ էր՝ անսովոր ուժի և ճարակության տեր, գեղեցիկ, բարձր հասակով և հաճելի դիմագծերով: Այս անգամ նրան բաժին ընկան ամենամեծ չարչարանքները, ընդ որում՝ ավելի հաճախակի և երկար, քան թե որևէ մեկին մեզանից, քանի որ մեր խմբի առջևից նա էր գնում:

Մուրադ Պողոսյանը, որ երեսուն տարեկան էր և բոլոր նկարներում գանգազանվում է իր հայրենակիցներից՝ փոքր կազմվածքի ու կյոռ դիմագծերի շնորհիվ, հենց այն անկոչ հյուրերից մեկն էր, որ սեփական նախածոնությամբ եկել էր վանք՝ մասնակցելու արշավանքին, որի ներկայությունից, սակայն, նյութական իմաստով, արշավախումբը քիչ օգուտ ստացավ: Նա դիմանում էր ծայրահեղ դժվարություններին և մեզ ներդրում չէր պատճառում, նույնիսկ ինքն էլ փորձում էր, որքան կարող է, ներդրումները թեթևացնել, ընդ որում՝ մշտապես շարքի վերջում էր և օգտվում էր արդեն պատրաստի փորված սանդուղքներից, ու մինչև մենք, աշխատանքով տարված, մի կերպ առաջ էինք գնում, մե մեկ-մեկ հասցնում էր նույնիսկ հանգստանալ: Լավ գվարձախոս էր և դրա համար սիրելի առհասարակ բոլորի համար, կարճ ասած՝ մի տեսակ ծաղրածու, որն իր համար աշխատող ընկերներից գվարձալի կատակներով միշտ բարձր տրամադրություն էր հաղորդում:

Մի երեք քառորդ ժամ հանգստից հետո ստիպված էինք մտածել վերադարձի մասին: Միայն թե դրա համար մենք

նախևառաջ մի քիչ հաս կերանք և հետոներս մինչև զագաթը հասցրած գինիով Հայր Նոյի համար երախտագիտությանը մի փոքրիկ հեղում կատարեցինք, ինչպես պատշաճ է աստվածներից: Ապա արագորեն իջանք ցած՝ օգտագործելով բարձրանալիս մեր փորած սանդուղքները: Սակայն վայրէջքը նույնպես շատ հոգնեցուցիչ էր և հատկապես, ինձ համար, քանի որ ծնկիս մտո ուժեղ ցավեր էի գտնում: Մենք շտապում էինք, քանի որ արևն արդեն բավականին մտո էր հորիզոնին, և մինչ մենք կհասնեինք մեծ խաչի ծյունատափարակին, արևը մայր մտավ: Դա մի հրաշալի ներկայացում էր ամենից առաջ մութ ստվերները տեսնելու համար, որ արևնուտքում մեզանից ցած կանգնած լեռները գցել էին դաշտավայրի վրա: Ապա իջավ խոր խավարը, որ ընդգրկեց բոլոր հովիտները և դանդաղորեն սկսեց բարձրանալ Արարատն ի վեր: Այդ ընթացքում միայն Արարատի սառցե գագաթն էր փայլվում մայր մտնող արևի շողերից: Շուտով, սակայն, դրանք էլ փոփոխվեցին գագաթից վեր, և մեր արահետն ընկղմվեց խավարի մեջ: Իջնելը դարձավ վտանգավոր: Քիչ անց, սակայն, երկնականարի մյուս կողմից դուրս եկավ լուսինը և սիրով սկսեց լուսավորել մեր ճանապարհը:

Այսպես ահա, առանց դժբախտ պատահարների, վեցն անց կեսին հասանք մեր գիշերային ճամբարը, որտեղ լավ կրակ արեցինք մնացած փայտով, փոքրիկ ընթրիք պատրաստեցինք և անցկացրեցինք մի ուրախ ու տաք գիշեր, ինչպես որ միստորդ օրն էր եղել: Այդտեղ գտանք մահ մեզ հետ ուղարկված ուղեկիցներին այն բոլոր իրերի հետ, որ բողբ էինք ներքևում: Հաջորդ օրը՝ ժամը վեցին, կրկին ճանապարհ ընկանք, ուրն անց կեսին հասանք Քիպ ջրամբարին, որտեղ մեզ սպասում էին մեր գրաստները, և սեպտեմբերի 28-ի կեսօրին բարեհաջող ուտք դրեցինք սուրբ Հակոբի վանք, ինչպես որ 4000 տարի առաջ նախահայր Նոյն է իջել Արարատ լեռից և նրա հետ էլ «... իր որդիքը և իր կինը և իր որդկանց կանայք»: Վերադարձի հաջորդ օրվա ցերեկը կիրականջա աղոթքով գոհաբերություն կատարեցինք առ տերն Աստված, հավանաբար, ոչ հեռու հենց այն տեղից, որտեղ Նոյը «... մի սեղան շինեց Եհովայի համար, և սեղանի վրա ողջակեցներ մատուցեց»: Իսկ մեր վերադարձի երեկուն մենք նշեցինք փառավոր հրքիռներ օդ արձակելով, որ խճորել էինք Երևանում հիետամային ծառայության կապիտան ֆոն Դունանտից:

ՏՀԱՆ ԱՐՉԱԳԱՆՆԵՐ

Ընթերցողին, որը, ինչպես իրավունք ունեն հուսալու, մինչև այստեղ առանց կասկածի հետևել է իմ պատմությանը և համոզվել, որ ես, իրոք, եղել եմ Արարատ լեռան գագաթին, պետք է առել միայն ու միայն ճշմարտությունը: Դա, իմ կարծիքով, որևէ լուր հաղորդողի ամենատաշախի պարտականությունն է: Այդ պատճառով էլ, իբրև տհաճ մի պարտավորություն, բայց և ոչ առանց բավարար հիմքի, ես ստիպված եմ այստեղ պատմել մի բան, որ կապ ունի իմ կողմից, իբրև թե, հասարակության դեմ գործած մի հանցանքի՝ խաբեության հետ: Հավանական է, որ երկար տարիներ այլևս Արարատի գագաթը բարձրանալու ոչ մի փորձ չարվի կա՛նք էլ, որն ինձ համար ավելի վատ կլիներ, պայմաններն ու հանգամանքների բերումով, որոնք հաճախ դուրս են ճանապարհորդների իշխանությունից, ձախողվեն մնա՞ն ձեռնարկումները, ուստի միանգամայն հնարավոր է, որ վերականգնանան Արարատի ամառայնիության մասին հին նախապաշարմունքները, և դրանց հետ էլ ծնվեն իմ պատմածների ճշմարտացիության նկատմամբ ամեն տեսակ կասկածներ, կասկածներ, որոնք առանց այդ էլ արդեն կային ուղղափառ և ճշմարիտ հավատացյալ շատ հայերի սրտում, և հենց նրանցից էլ այդ կողմերում իմ գտնվելու օրերին տարածվում էին այս ու այն կողմ, սակայն ոչ հատկապես իմ անձի դեմ: Սակայն ավելի քան ցնցող ու տարօրինակ էր ինձ համար այն, որ այս ճանապարհորդությունից մեկ տարի անց առաջին քարը իմ դեմ նետեց մի մարդ, որը պատկանում է ուսյալ հասարակությանը, մի մարդ, որը ծառայություններ ունի գիտությանը և Կովկասում երկար տարիներ գտնվելու պատճառով, արդարև, իրավունք ունի վստահություն մտահանելու այդ վայրերի մասին ունեցած իր գիտելիքների նկատմամբ: Նա մի բաց մեկնաբանությանը փորձեց սպառցուցել անհնարինությունն այն գործի, որ գլուխ էր բերվել իմ կողմից: Ես վարվեցի այն-

պես, ինչպես պահանջում էր իմ անվան պատիվը: 1831 թվականին Թիֆլիսի հանրահայտ և պատվավոր թերթերից մեկն իր 11 և 22 համարներում տպագրեց նշված մեկնաբանությունը և իմ բացատրությունը, և բժոււմ էր՝ գործը դրանով կարելի էր համարել վերջացած:

Բայց թող ներեն ինձ մարդիկ, որ դրանով ես չբավարարվեցի: Արարատի գագաթը բարձրանալիս մեզ ուղեկցողներից ես պահանջեցի, ինչը իմ հնարավորության սահմաններում էր, իմ և իրենց այժմյան պետերի բարի կամեցողությամբ գործի մասին ճշմարիտ և երդմամբ հաստատված տեղեկություններ տալ: Այդ տեղեկությունները, որոնց բնագրերը ժողովրդական լուսավորության նախարար, պաշտառափայլ իշխան պարոն Լյեներ սիրով ուղարկել էր ինձ, բառ առ բառ²¹ լույս ընծայեցի: Ես դա կատարեցի նախ՝ ճշմարտությանն աջակցելով ինչու՞նի համար և ապա՝ զգուշացած իմ դեմ տպագրված հողվածից: Չորս վկաներից երկուսը՝ արևմտեցիներ Այվազյանը և Պողոսյանը, հավանաբար, մոթ նախապաշարմունքներից ելնելով, ճշմարտությունից հետ կանգնեցին: Ա. Աղոլվենկոն և Մ. Չալպանովը լիովին հաստատեցին ճշմարտությունը:

Ով ավելի մտախկից է գրադվում այս գործով, կարող է առանց դժվարության և առանց իմ պարգարանունների, զանազան վկայություններ համեմատելով մեր ճշգրիտ, ժամացույցի և օրացույցի համաձայն կազմած և տեղում գրանցված նշումների ու տեղեկությունների հետ, տեսնել, թե որ կողմում է ճշմարտությունը: Ցրելու համար կակակամերը իմ ազգնությունն ակատմամբ, որով առաջնորդվել եմ ի սկզբանե, հարկ եմ համարում հիշատակել, որ թիֆլիսյան լրագիրը 1829 թվականի հոկտեմբերին տպագրել է ոչ միայն անմիջաբար իմ կողմից պարոն խմբագրին ուղարկած լուրերը դեպի Արարատի իմ ճանապարհորդության մասին, այլև լեռան բարձրության վերաբերյալ ծանրաչափական տվյալներ, որոնք կարող էին հայտնի լինել ոչ այլ կերպ, քան լեռան գագաթին համապատասխան ուսումնասիրություններ կատարելու միջոցով: Եվ դրանք մինչև 200 ոտնաչափ տարբերությամբ համընկնում են եռանկյունաչափական այն հետազոտությունների արդյունքների հետ, որոնք պարոն Ֆյոդորովը կատարում էր հոկտեմբերի առաջին կեսին Արաքսի հովտից: Մենք այդ արդյունքների մասին իմացանք հետո, քանի որ դրանց հաշվարկները փոքր-ինչ

ծավալուն էին, և պարոն Ֆյոդորովը դրանք իր մոտ եղած լրագրի մի օրինակի հետ անմիջապես ուղարկել էր համալսարանի խորհրդին և միայն մեր վերադարձից հետո, պարոն պրոֆեսոր Ստրուվեի աչքի առաջ, կատարել էր հաշվարկները:

Գագաթից վայր իջնելով՝ սարկավազը սուրբ Հակոբի վանքում ստացավ Էջմիածնի հրամանը՝ թողնել մեզ և անմիջապես վերադառնալ վանք: Թեև այդ հրամանին ես չէի սպասում, քանի որ հակառակ էր Էջմիածնում ինձ տրված խոստմանը, մանավանդ վերադառնալու համար ոչ մի պատճառ չէր վկայակցվում և, ինչպես երևաց, չէր էլ կարող այդպիսի ունենալ, այդուամենայնիվ, ես երիտասարդին անմիջապես ազատ արձակեցի՝ հայր Հովսեփի անունով մի նամակ համձնելով նրան, որով հայտնի էի դարձնում կատարվածի մասին իմ մտառությունը և սպասումները: Էջմիածին հասնելուց հետո սարկավազը անհասպող տարվել էր կաթողիկոսի մոտ: Այստեղ հավաքվել են մեծ թվով հոգևորականներ, և նա ստիպված է եղել լուր տալ Արարատ բարձրանալու մեր փորձերի մասին, ապա իր բարձր, հոգևոր պետերին ներկայացրել գագաթի սառցաջրով լցված շիշը: Մի քանիսը դրանից համոտն են արել, մյուսները քսել են երեսներին, և բոլորն էլ դրա մասին խոսել են իբրև շատ հազվագյուտ ու քանկարժեք գանձի: Տեղ հայրերը, սակայն, բարություն են ունեցել սարկավազին ավելի երկար չլսահելու, և երրորդ օրը նա գոհ սրտով վերադարձավ սուրբ Հակոբի վանք:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՅՑՈՒՆՆԵՐ ԼԵՌԱՆ ՎՐԱ

Արարատ լեռան գագաթը կատարած երեք մեծ փորձերի և բազմաթիվ փոքր շրջագայությունների ընթացքում, որ ես ձեռնարկում էի սուրբ Հակոբի վանքից, հնարավորություն ունեցա բավական լավ ծանոթանալու այս լեռան ժայռերի կառուցվածքային բաղադրությանը: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այստեղ հանդիպող բոլոր տեսակի ապարները, ինչպիսիս տեսք էլ որ նրանք ունենան, հրաբխային ծագում ունեն՝ մեկ ուղղակի հաված լավային գանգվածներ են, մեկ խառն, մեկ տրախիտային ապարներ՝ ժայռեց գույների բազմազան երանգավորումներով, խտությամբ ու կառուցվածքով, որ պարզորոշ ցույց են տալիս հրաբխային ջերմության մի դեպքում՝ ուժեղ, մեկ այլ դեպքում՝ թույլ ազդեցության նշանները: Ժայռերի վրա, այդուամենայնիվ, աչքի է ընկնում ծիրանաբարի խառնուրդը, մի քանիսի վրա՝ շատ, մի քանիսի վրա՝ պակաս պարզություն: Այդ ապարների բազմազանության հետ մեկտեղ չի կարելի չընդունել և նրանց, նույնիսկ մի քանիսի լրիվ նույնությունը այն ապարների հետ, որ պարունակադեմիկոս Կուպֆերը հանդիպել է նկարագրել էր Կովկասում, Էլբրուսի վրա, ապա բարեհաճել էր ուղարկել ինձ՝ կարծիք հայտնելու համար: Նման բաղադրության պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել ժայռերի օրինաչափ, շերտավորված կառուցվածքի մասին, մինչև իսկ անհնար էր որոշակիորեն հաստատել, թե լեռան որևէ մասը ինչ ժայռատեսակներից է բաղկացած: Ավելի շատ այն տպավորություն ես ստանում, որ կարծես փլված գանգվածների վրա կուտակվել են նորանոր փլվածքներ, թե՛ ժամանակ առ ժամանակ այնպիսի ծավալով ու այնքան զան իջեռով, որ դրանք կարելի է ընդունել իբրև մշտապես գոյություն ունեցած և բնավ չտեղաշարժված ժայռային գանգվածներ:

Այստեղ հանդիպող բոլոր տեսակի ժայռերը կարելի է բաժանել հետևյալ տեսակներին.

1. Սևավուն ծիրանաբարի լավա, առանձին մասերում ապակեման դաշտային սփաթի սև գանգվածով, բայց ամբողջովին ծածկված մանր, երկարավուն ծակոտիներով: Այս ապարները պատկանում են Արարատ լեռան անենայրախատուկ հրաբխային գանգվածների թվին:

2. Մուգ գույնի խարամատիպ լավա՝ խոշոր, երկարավուն ծակոտիներով, զգալի շափուկ պատված են երկաթի օքսիդով:

3. Սև ձյուրակտորի նման լավա՝ շատ խիտ և ծանր գանգվածով, որ հանդիպում է լեռան անենաբարձր տարածքներում իրար վրա կուտակված ահեղի կոշտերով:

4. Կուպրե ծիրանաբար:

5. Մուգ, պողպատի գորշություն ունեցող և քարակտորի նմանվող ծիրանաբարի խիտ լավա՝ կարմիր երակներով, ապակեման դաշտային սփաթի խառնուրդով:

6. Ծառ գեղեցիկ, միջին գորշությամբ հրաբխային ապար՝ դաշտային ապակեման սփաթի խառնուրդով, որ նույնպես առանձին գանգվածներով և ամենուրեք հանդիպող կուտակումներով սփռված է Արարատի վրա: Այն շատ լավ կարելի է գործածել կտրելու և իղկելու համար: Միմիայն կրակի տակ փոփոխման ենթարկվող այս ծիրանաբարի վրա կարելի է տեսնել նաև գունային գանգազ երանգներ՝ բաց և մուգ գորշագույն, ապա՝ կարմրագորշից մինչև աղյուսի շիկկարմրություն: Տարբեր է և դրանցից յուրաքանչյուրի ամրությունը:

7. Պողպատագույն կալե ծիրանաբար՝ հրաբխային ազդեցության թույլ նշաններով, գտնվում է 9000-ից մինչև 10000 ոտնաչափ բարձրության վրա՝ սալիկների տեսքով, համարյա միշտ շերտավոր և չտեղաշարժված:

8. Թրաս՝ ծակոտկեն տուֆ, մեծ մասամբ շագանակագույն, ծակոտկեն, դաշտային ապակեման սփաթի խառնուրդով, մեծ ու փոքր, կլոր գանգվածներով, որ քայքայվելով վերածվում են հրաբխային խճի և ավազի:

9. Սևագույն, շատ թեթև, չեչաքարի նմանվող լավա՝ սիտեի հատիկի մեծությամբ ծակոտիներով, հավանաբար, անշարժ մնացած գնդաձև կտորներով, տարածված է ինչպես Արարատ լեռան վրա, այնպես էլ նրանից հեռու, հյուսիսային կողմում ընկած Փամբակի լեռների շրջակայքում:

10. Կաշմիրայ ծիրանաբար, որ շատ տարածված է Արարատի վերին և միջին բարձրություններում:

11. Իսկական կայծքար՝ մեծ և փոքր զանգվածներով, հանդիպում է հատկապես լեռան արևմտյան լանջին:

12. Վերջապես, պարոն ֆոն Բենիգելը սառցադաշտերից մեկի մերձակա մի մտք ձորում լեռնային լճի մեջ, աղի մի խոշոր զանգված գտավ, որի քիմիական բաղադրությունը բարեհաճություն ունեցավ պարզելու պարոն պրոֆեսոր Գյոթելլը՝ նրա մեջ գտնելով 97,3 մաս ծծմբաթթվական կավահող և 2,7 մաս ծծմբաթթվական երկաթի օքսիդ:

Այս շրջագայությունների ժամանակ են չէի կարող հաուրատ ավար խոտտանավ բուսաբանության համար, մասամբ այն պատճառով, որ լեռը մեծ մասամբ ծածկված է ժայռերով, և նրա դաժան, լավային զանգվածների վրա չէին կարող արմատ գցել ոչ քարաքոսները և ոչ էլ մամուռները, մասամբ էլ տարվա առաջացած եղանակի պատճառով, երբ բույսերի մեծ մասը չորացել էր և դարձել անճանաչելի: Այդուամենայնիվ, ես մեծ ջանասիրությամբ հավաքեցի այն ամենը, ինչ հանդիպում էր լեռան հողազուրկ, ցածրադիր լանջերին և վերին տարածքների ժայռերի արանքներում: Ես ամենուրեք տեսնում էի բարձրլեռնային բուսականության կառուցվածքի աչքի ընկնող փոփոխությունների հետքեր, ինչպես և մասնակի շեղումներ: Արդեն վաղուց ի վեր հայտնի է բարձրլեռնային, այսպես կոչված, ավլիհական բույսերի առանձնահատուկ բնույթը: Դա այն է, որ այդպիսի բույսերը, լինեն ծառեր, փփեր քե խոտաբույսեր, իրենց անձան ամբողջ ընթացքում ձգտում են, որքան հնարավոր է, շուտ բարձրանալ գետնից, որի վրա նրանք կանգնած են, և դրան համապատասխան ունենում են կամ - կարճ և ուժեղ, կամ էլ ծածկված ու ցածր բուն կամ ցողուն, որի վրա ճյուղերը, տերևները և ծաղիկներն աչքի ընկնող չափով մոտ են լինում իրար: Ընդհանուր առմամբ, այս փոփոխությունների պատճառն այն է, որ բույսերը որոշակի չափով ցուրտ չեն կարողանում տանել, և քանի որ ամբողջ ջերմությունը օդ է բարձրանում գեանից, որը տաքանում է արևից, ուստի գետնից լեռների վերին բարձրություններում մթնոլորտի պատճառով ավելի սառն է: Այսպիսով հասկանալի է դառնում, քե ինչու են այս բույսերը, օրինակ, աճելով գոգավորություններում, բարձրանում մեկ ոտնաչափ, սակայն որևէ բարձր լեռան վրա, ջերմության այնպիսի պայմաններում, որ մաս պետք է դադարի աճելուց, հանդիպում են գետնից ընդամենը մի դույլ բարձրու-

յամբ: Ահա քե ինչու միակատայ անհետանում են ծառերը, ապա փփերը և այդպես նաև մնացած բույսերը՝ յուրաքանչյուրը մեկ կլիմայի պայմաններում աճելու համար իր սովորական մեծությանը, կարողությամբ և ուժին համապատասխան չափով: Կառուցվածքի այս համընդհանուր փոփոխություններից բացի մեծ բարձրությունների վրա բույսերը հանդես են բերում նաև առանձնահատուկ փոփոխություններ: Արմատները, որպես օրենք, լինում են մեծ և ուժեղ, եթե հողի մեջ պակաս չեն սնող բաղադրատարրերը, որոնց անցումը արմատային հյուսիքի վի խանգարվում բարձր դիրքի պատճառով: Ծաղիկները բացվում են լրիվ շուրջով ու մեծությամբ, ալպիական բույսերի մեջ նրանք նույնիսկ փայլում են մի անսովոր բարմությամբ ու գույներով: Եթե մեկը մեծ բարձրությունների վրա հետևի բույսերի աճին, ապա կնկատի, որ ծաղիկները համեմատաբար քիչ են փոքրացած և ավելի առատոդեմ են աճում, քան սովորական պայմաններում, այսինքն՝ հակառակ բարձրլեռնային պայմանների ազդեցության ավելի է մեծանում նրանց պտղաբերման ուժը, քանի որ ծաղիկաբերքերի ինժնական աշխատանքը օդանման և գոլորշատիպ բաղադրատարրերի արտաշնչումն է, որն ազատ մթնոլորտային մտրացած շերտիվ պետք է ավելի արագան, քան նվազի: Դրան հակառակ՝ տերևները, կեղևը, որ պատում է ցողունը և առիասարակ կանաչ գույնը, բույսերի վրա նվազում են՝ կապված տեղանքի բարձրության հետ: Եվ գարմանալի է տեսնել, թե ինչպես ծառերը, որ ամենուրեք ցարին շատ ավելի դիմացկուն են, քան քե ծաղիկները, բարձրադիր տեղանքներում մշտապես ենթարկվում են իրենց կենսագործունեության ասիմանների նեղացման: Խոտերի և բույր նեղտերև բույսերի վրա դա երևում է ավելի քիչ և ավելի աչքի է ընկնում մյուս տեսակների վրա, որոնց տերևները որքան հեռու են իրարից, այնքան ավելի փոքր են, երբեմն նույնիսկ չեն պահպանում իրենց բնական ձևը: Նրանց մաքուր, բաց կանաչ գույնը փոխվում է մի անորոշ դեղնության, և նրանք ձեռք են բերում մի տեսակ նուրբ բաղադրի տեսք: Նուրբաճ մթնոլորտը, որից բույսերը ներծծում են սննդաիյութեր, իր ազդեցությամբ նրանց դարձնում է անճանաչելի: Տեղանքի բարձրության հետ կապված՝ այս փոփոխությունները են առաջին անգամ նկատեցի և ճշգրտորեն նկարագրեցի Կովկասյան լեռներ կատարած իմ ճամփորդության ժամանակ: Հետո նկատեցի նաև

Շվեյցարիայում, Ալպերի վրա, Իտալիայում, Պիրենեյներում, իսկ հիմա էլ, ահա, ստուգաբար տեսնում են Արարատի վրա և այն էլ այնպես, որ որոշ բուսատեսակներ այս լեռներից շատերի վրա հանդիպում են միաժամանակ՝ հանդես բերելով լիակատար նմանություն, ընդ որում՝ դրանք նույն լեռների ցածրադիր տարածքների նույն բույսերի հետ այնքան շատ նմանություններ ունեն, որ այլ կերպ հնարավոր չէ բացատրել, թան նույն հիմնավորմամբ: Ինձ համար առանձնապես հաճելի էր այն, որ գեղեցկատես ու գարնանալի եղջերվախտը, որը, իրեն յուրահատուկ բոլոր փոփոխություններով հանդերձ, ես գտել էի Կազբեկ լեռան վերին ձյունածածկ տարածքներում, այն եղջերվախտը, որ նաև պարոն Մեյերը Էլբրուսի բարձունքներում գտել էր, ես կրկին գտա Արարատի վրա՝ որպես վերին բարձրությունների բույս և ամբողջ կառուցվածքի գրեթե այնպիսի համընկնումներով, որ եթե իմ հեքրարիումի օրինակները դրվեն իրար կողք կողքի, ապա չի գտնվի արտաքին ոչ մի նշան, որով հնարավոր լինի ցույց տալ, թե որն է Նոյի լեռանը և որը՝ Պրոմեթևս:

Այն տարածքում, որտեղ եղջերվախտ կար, այսինքն՝ ծովի մակերևույթից 12000-13000 ոտնաչափ բարձրության վրա, ես գտա նաև վայրի մուշկ-բարկոտրուկ՝ բազմաթիվ տերևներով, բայց տերևները չափից դուրս մանր, համարյա թե արմատի մոտ փնջված և բաղաճրակերպ, մինչդեռ դրանք փոքր բարձրությունների վրա հանդիպող մուշկներում մոտենում են սովորական չափերին: Գեղեցիկ բույս էր ու սքանչելի զարդարանք այդ դաժան վայրերի համար ավիսիական աստղածաղիկը, որն այստեղ, ինչպես և Կազբեկի բարձրություններում շատ մանր տերևներ ուներ, ցողունը՝ հազիվ մեկ դյույմ բարձր, սակայն մաղիկները՝ թարմ, ամբողջական, բավական մեծ և գեղեցիկ, մանուշակագույն լույսով շրջապատված: Նրա հետ խառնված երևում էր ժայռածաղիկը՝ կիսով չափ ծաղիկներով, կիսով չափ արդեն հասուն սերմերով, ինչպես և գլխահակ ավազածաղիկը, ապա և մի նրբագեղ, լեռնային ծաղիկ, որի ծաղկեպսակը կանգնած էր մանր տերևներով կարճ ցողունի վրա: Նա թեև շատ մոտ էր հավերժական ձյունների սահմանին, սակայն իր պայծառ, գեղեցիկ գույներից չէր զրկվել: Շատ քմուքագրական ձևով էին ներկայանում կլիմայական ազդեցությունները նաև բարկոտրուկ-զանգակածաղիկ վրա, այսինքն՝ ճիշտ այնպիսի փոփոխություններով, ինչպիսիք Կովկասում տեսա ազ-

գակից ժայռային զանգակածաղիկ և սիգամարգային զանգակածաղիկ վրա՝ Պիրենեյներում: Ինչպես Կովկասյան ոսկեծաղիկը Արարատի վրա, այնպես էլ ալպայան ոսկեծաղիկը Պիրենեյներում, մնանապես և փոքրիկ այծամորուսը իր կենսառատ ծաղիկներով ու ժլատ բարկոտրուկը, Կովկասյան լեռների վերին բարձրություններում հանդիպում են երեք տեսակներով: Զերուշ նապաստակապուշի վրա այնև ծաղիկներ չկային, բայց շատ մեծ էին սերմնապատյանները, որ զարմանալիորեն տեղավորված էին մանր, իրար հետ սերտաճած փետրավոր տերևների դիմաց: Մտնուչափիկը նույնպես, ինչպես և մեծապսակ մատնաչափիկը Կովկասում, հանդիպում էր տեղանքին յուրահատուկ տեսքով:

Ոչ մեծ, այսինքն՝ ծովի մակերևույթից 10000-12000 ոտնաչափ բարձրության վրա ես գտա շունամոլիկներ, բացի նախկինում հանդիպածներից: Դրանք նույն տեսքն ունեին, բեև մի քիչ փոփոխված էին և հանդիսանում են Կովկասյան լեռներում Պիրենեյան լեռների անբեր-ծաղիկ և Ռուդոլֆի շունամոլիկ նմանակները: Ավելի ուշ հանդիպեցին ցիցիֆորան, սազաբաք երիցուկը, խլածաղիկը, վայրի մեխակը, փշածաղիկը, կովկասյան եղջերվախտը, մագածածկ երեքնուկը՝ աչքի ընկնող, մեծ, մանուշակագույն ծաղկազգայիկներով՝ շատ մանր տերևների հետ, ապա հանդիպեց այսիտակ զանգակածաղիկը, գեղեցիկ, դեղին տերեփուկը, ճիշտ այնպիսի տեսքով, ինչպիսին տեսել էի Կովկասյան լեռներում: Ցածրադիր տարածքներում, ծովից շուրջ 7000-8000 ոտնաչափ բարձրության վրա, բիսանտակներից հանդիպեցի միայն երկուսին, մեկը՝ սրատերև գիլին, մյուսը՝ միածաղկաբույր, թզուկ հոնեմին՝ հասուն պտուղներով: Արարատի վրա նույնպես կա ծառերի աճման վերին սահման, և դրա պատճառը ոչ միայն կլիմայական, այլև տեղանքի պայմաններին յուրահատուկ արգելքներն են, որ ամենուրեք խանգարում են ծառերի առաջխաղացմանը: Ոչ բարձրաբուն ընկուզեմին, ծիրանին, ուռեմին, բրգաձև բարդին, թեև այս վերջինը, այնուամենայնիվ, կարճ, շատ լավ կարող են աճել 6000 ոտնաչափ բարձրության վրա, եթե գտնում են հող և խոնավություն, երևում է սուրբ Հակոբի վանքից: Եվ որ կեչինները նույնպես, միայն թե արդեն ոչ լրիվ ուղիղ և բարձրաբուն, մտո 7800 ոտնաչափ բարձրության վրա կլիմայի հետևանքով դեռ բոլորովին չեն անհետանում, երևում է Փոքր Արարատի լանջին եղած կեչիների անտառակից: Նշանակալից համապա-

տասխանություն է այն, որ Կովկասյան լեռների վրա ևս կենդանի արձան վերին սահմանը ծովի մակերևույթից 6700 ոտնաչափ է:

Մեկ այլ խնդիր, որ Արարատ լեռը բարձրանալիս աչքի առաջ ունին, վերաբերվում էր հավերժական ձյունների սահմանին: Դրա ծագումը պայմանավորված է նրանով, որ օդի ջերմաստիճանը, կապված տեղանքի բարձրության հետ, նվազում է, քանի որ այն գոյացում է միայն հողի վերին շերտերում արևի ճառագայթների տակ: Մի քի ինչու լեռների վրա, բարձրությանը համապատասխան, ինչպես գետերի վրա, այնպես էլ օդի մեջ, առիասարակ նկատելի է ջերմության անկում: Միջին հաշվով, յուրաքանչյուր 600 ոտնաչափ բարձրանալիս, ջերմությունը նվազում է մեկ աստիճանով: Այդ պատճառով էլ, բնականաբար, յուրաքանչյուր բարձր լեռան վրա կա մի տարածք, որտեղ ձմեռան ընթացքում եկած ձյունը ամռան շոգերին ամբողջովին չի հալվում: Հենց այդ տարածքի ամենացածր սահմանն այն է, ինչ մեք անվանում ենք ձյան սահման: Անշուշտ, նրա բարձրությունը կախված է մի շարք տեղայնային և եղանակային պայմաններից, մասնավորապես՝ ամռան ուժեղ կամ քույլ շոգից, աշխարհագրական դիրքից այն լեռան, որի վրա հետազոտվում է ձյան սահմանը, քերությունից, ձորակների և գոգավորությունների առկայությունից կամ ընդհակառակը՝ համաչափ բարձրացող լանջերից, այդ պատճառով էլ այն մշտապես փոփոխվում է, այնպես որ ձյան սահման ասելով՝ չպետք է անպայման հասկանալ մշտապես հաստատուն և հորիզոնական գծեր, այլ յուրաքանչյուր անգամ պետք է ուշադրություն դարձնել նշված պայմանների վրա, ընդ որում՝ պետք է կարողանալ այդ տարածքի սահմանները հետազոտել, այսպես կոչված, մոտավոր ճշտությամբ:

Այսուհանդերձ, առանձնահատուկ ուշադրության է արժանի տարվա եղանակը, որի ընթացքում ուսումնասիրվում է ձյան սահմանը: Ընդհանրապես, այդ նպատակի համար շատ հարմար է ուշ աշունը, երբ դեռ նոր ձյունը չի եկել և ամառային շոգերն էլ ի վիճակի չեն եղել հին ձյունն ամբողջությամբ հալելու: Այդ դեպքում հետազոտությունները կարող են ծիշտ արդյունքի հանգեցնել: Այնպիսի լեռների համար, ինչպիսիք են, օրինակ, Արարատը, Կովկասը, Ալպերը, Պիրենեյները և առիասարակ քողոք այն լեռները, որոնք գտնվում են աշխարհագրական միջին լայնություններում, միայն ռադաստս և սեպտեմբեր ամիս-

ներն են նպատակահարմար ձյան սահմանը հետազոտելու համար, քանի որ այդ ամիսներին, բեկ ամռան շոգերը մեծ մասամբ անցած են լինում, սակայն ձյան նշանակալից զանգվածները շարունակվում են հալվել, և մինչև իսկական ձմռան վրա հասնելը այդ տարածքներում հալման գործընթացները շարունակվում են, գործընթացներ, որոնց ուժգնությունն ու տևողությունը Արարատի վրա ավելանում են նրանով, որ ամռանը, լեռան ամբողջ շրջակայքում տիրում է անտվոր շոգ, ընդ որում՝ կեսօրվա արևի ճառագայթները լեռան հարավային կողմի վրա ընկնում են ուղիղ, իսկ հյուսիսային կողմում՝ Գեղամա լեռների բարձր լանջերից սկսած և ամբողջ Արաքսի հովտում մինչև ուշ աշուն մի անտվոր շոգ են պահպանում, որը կուլիսին և օգոստոսին մարդկանց բշուռ, հալածում է դաշտավայրից, մի շոգ, որն ինձ հուլյանների երկրորդ կեսին քույլ էր տալիս սովորական բաճկոնով ազատ աշխատել՝ հասնելով նույնիսկ քսան աստիճանի: Շիկացած այս օդը, լինելով շատ երթև, ամռանը կարողանում է բարձրանալ Արարատն ի վեր և ջերմացնելով նրա լանջերը՝ հալեցնել ձյունն զանգվածները: Միայն դրանով են կարող են բացատրել այն ջերմության առկայությունը, որի պայմաններում սեպտեմբերի վերջին օրերին (միշտ մտածում են հին տոմարով), ծովի մակերևույթից 13036 ոտնաչափ բարձրության վրա, բաց, բարեղեն ճամբարում, ամռանց մուշտակի, շատ հանձնի երկու գիշեր անցկացրեցի: Տաք օդի հոսանքին, որ տարվա մեծ մասի ընթացքում բարձրանում է Արարատն ի վեր, պետք է ավելեցնել նաև լեռան մակուսացված լինելը: Նրա սառցապատ գլուխը միակն է իր շրջապատում, որ ամենիցապես բարձրանում է դաշտավայրից և ցածրից եկող ջերմության այնպես ուժեղ չի դիմադրում, ինչպես այդ անուն է, օրինակ, հավերժական ձյունների ընդարձակ զանգվածները Ալպերում: Հիմնավորապես դրանով կարելի է բացատրել Արարատի վրա ձյան սահմանի արտակարգ բարձր լինելը, որը, իմ հետազոտությունների համաձայն, սկսվում է ծովի մակերևույթից 13300 փարկյան ոտնաչափ բարձրությունից: Դեպի գագաթը կատարած իմ երեք ուղևորությունների ընթացքում ես հստակապես ուշադրություն էր դարձնում այն տարածքին, որտեղ ձյան վիթխարի կոնը, որ գրաղեցնում է լեռան վերին բառորդը, հոծ ծածկույթով, համաչափ բեքված լանջերով ցած է իջնում առանց կտրտվածքների և մատնում է իր բարձրությունը: Այսպես, սեպտեմբերի 13-ին, լեռան արևել-

յան կողմում, հավերժական սառնե տանիքի եզրին ես հանդիպեցի ծովի մակերևույթից 13180 ոտնաչափ բարձրության վրա, սեպտեմբերի 18-ին և 27-ին նրա հյուսիսարևմտյան կողմում 13448 ոտնաչափ բարձրության վրա: Անշուշտ, երկու դիտումների միջինը վերը նշված 13300 ոտնաչափ բարձրությունն է: Ի՞նձ չի զարմացնում այն, որ լեռան արևելյան կողմն այստեղ ակնհայտորեն ավելի տաք է երևում, քան հյուսիսարևմտյանը, քանի որ այս կողմը լրիվ բաց է, իսկ արևելյան կողմի հարևանությամբ, աննշան հեռավորության վրա բարձրանում է Փոքր Արարատը, 12284 ոտնաչափ բարձրությամբ մի լեռ, որի լանջերը նույնպես արևի ճառագայթները «չեն զլանում»: Ինչպես նաև, որն էլ այն փոխանցում է Մեծ Արարատի արևելյան լանջին:

Այդ սառցածյունն քարացած պատյանի ցածի եզրից դեպի ներքև են ձգվում բազմաթիվ ճյուղավորումներ, և երբ դրանք Արարատի ժայռոտ ձորերով ձգվում են ցած, լեռան ձյան սահմանը հեռվից դիտողի վրա գեղեցիկ, մուգ ֆոնի վրա երևացող բաց սպիտակ կտորից կարված օձիքի տպավորություն է բողմում: Ինչպես որ դա փորձել են պատկերել այստեղ ներկայացված մեծ ու փոքր փորագործություններում:

Այդ ճյուղավորումները, որոնք, ցանկության դեպքում, սակայն ոչ իրավացիորեն, կարելի է անվանել սառցադաշտեր, իրենցից ներկայացնում են նույն բարձրության ձյուների սոսկ մի մասը: Լեռան արևելյան կողմում նրանցից մեկի ցածի եզրը գտնվում էր 11675, մեկ ուրիշինը հյուսիսարևմտյան կողմում՝ 11844 ոտնաչափ բարձրության վրա, մյուսներն էլ մոտավոր աչքաչափով գտնվում էին նույն բարձրությունների վրա: Սակայն հավերժական սառույցի և ձյան աննացածոր զանգվածները գտնվում էին մթին խորխորատում, ցավոք, ես նրանց մոտենալ չկարողացա, այդ պատճառով էլ նրանց բարձրությունը չեմ կարող հարողդել:

Դեպի զագար իմ վերջին ուղևորությունից քիչ առաջ, ինչպես արդեն ասել եմ, պարծնայք Շիմանո ու ֆոն Բեհագելը մի փոքրիկ ուղևորություն կատարեցին ամբողջ Հայաստանում ու Թիֆլիսում հայտնի արի հանրերը և մի քանի ժամ հետո վերադարձան:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒՐԲ ՀԱՎՈՐԻ ՎԱՆՔՈՒՄ ԵՎ ԱՐԱՔՍԻ ՀՈՎՏՈՒՄ

Արարատի զագարից վերադառնալուց հետո հաջորդ ութ օրերը ես ծառայեցի մասամբ նախկինում հիշատակած մագնիսական դիտարկումները կրկնելու, մասամբ էլ ճոճանակային փորձեր դնելու համար: Միջօրեակահից մագնիսական ասեղի շեղումը, որ Դորպատում կազմում էր ինն աստիճան մեկ ըուպե, Թիֆլիսում՝ երեք աստիճան 47 ըուպե դեպի արևմուտք, Արարատի վրա հասավ չորս աստիճան 29 ըուպե: Հյուսիսային քեռոցի հակումը, որ Դորպատում կազմում էր 70 աստիճան 43 ըուպե, Թիֆլիսում՝ 55 աստիճան 31 ըուպե, Արարատի վրա նույն գործիքով կազմեց 53 աստիճան վեց ըուպե: Ընճանակային փորձեր դնելու համար պահանջվում է ունենալ շատ անուր հիմք, որի վրա հնարավոր լինի կախ տալ ճոճանակը: Այդ նպատակի համար ես օգտագործում էի վանքի պարիսպը, որ կառուցված էր հավաքաբաշտի կտրտված լավայի ծակուկեն քարերից: Դրանք շատ հարմար էին իմ սուր, պողպատյան մեխերը խփելու համար:

Ճոճանակային դիտարկումներով ես զբաղվեցի մեկ շաբաթ շարունակ՝ առավոտյան, երեկոյան, կեսօրին և կեսգիշերին՝ մոտ մեկական ժամ տևողությամբ, այդ պատճառով էլ դրանց միջև ընկած ժամերը օգտագործում էի պակաս կարևոր այլ գործերի համար:

Այդ ընթացքում պարոն Ֆյոդորովը ռայխենբախյան բեռողիտի գերազանց կազմակերպված մի քանի փորձերով ուսումնասիրեց վանքի, իսկ հետո նաև Արարսի հովտում կատարված չափումներով Մեծ և Փոքր Արարատների աշխարհագրական դիրքը: Արագած լեռան և Բայաթ գյուղի տեղադիրքերը նա ուսումնասիրեց այնպիսի մանրամասնությամբ, որ պակաս ոչինչ չմնաց, և երբ ես պատրաստում էի այս տեղանքի փոքր քարտեզը, նրա ուսումնասիրությունները ինձ մեծապես օգտա-

կար եղան: Վանքում աշխատանքները վերացնելուց հետո պարոն Ֆյոդորովը հոկտեմբերի 2-ին իջավ ցած՝ Արաքսի հովիտ, որտեղ, ճախ՝ հարմար դիրք ունեցող երկու կայանատեղ էր փնտրում անլուրճային չափումներ կատարելու համար, իսկ հետո նաև մեկ ուրիշը՝ չափելու համար բազիլը: Շուտով առաջին կայանատեղերը գտավ երկու փոքր բլուրների վրա: Այդպիսի բլուրներ շատ կային հայրաքավայրի այս ու այն կողմերում, իսկ բազիլը չափելու համար հաջողությամբ ընտրեց մի ընդարձակ տարածություն, որտեղ գետինը գրեթե լիովին հարթ էր ու հորիզոնական: Նրան ուղեկցում էին պարոնայք Շիծանն ու ֆոն Բեհագերը: Արշավախմբի զինվորների ու կոզակների մի ջոկատից բացի, ապահովության և հնարավոր դժվարությունները հաղթահարելու համար ես անհրաժեշտ համարեցի հովիտ ուղարկել նաև ֆելդգեյթ պարոն Շյուցին: Բացի այդ, Լեռանի զինվորական իշխանությունները ռուսաց և քաբարաց լեզուներով զրված մի հաստուկ իրանած էին հանձնել մեզ՝ գյուղացիներին ցույց տալու համար, քանի որ Արարատի դիմաց գտնվող Արաքսի հովիտում բեև կային մի քանի վայելչատես հայկական գյուղեր ու վանքեր, սակայն մեծ մասամբ բնակեցված էին այնպիսի ազգերով, որոնք իսլամ էին դավանում և ամեն մի առիթի դեպքում չէին քաղցնում իրենց բջեռամանրն ու ատելությունը մեր՝ քրիստոնյաներիս հանդեպ: Դրանք հիմնականում քաբարներ էին, որ նոր էին բնակություն հաստատել մի քանի գյուղերում: Նրանք զրավզուլ էին շուշտավարությամբ և այգեգործությամբ, բայց առավելապես՝ անասնապահությամբ: Վարում էին քոչվորական կյանք, քանի որ ամռան ամիսներին հեղձուցիչ շոգի պատճառով հեռանում էին այս հովտից և գնում էին Մասվալ քեղդի կողմերը, որի տիրակալ խանին տուրք էին տալիս մինչև օրս: Այս քափառուները շարունակվում էին նաև հիմա, երբ Արաքս գետով Արարատից դեպի հարավ-արևելք անցկացվել էր ասիմանային հաստատուն գիծ, որով ռուսական տարածքները անջատվել էին պարսկականից: Թաքարներից բացի Արաքսի հովիտում որոշ ժամանակով կանգ էին առնում նաև քրդերը, որոնք, սակայն, բոլորովին քոչվորական էին: Նրանք իրենց բեռիքե գործ ու կեղտու վրաններով, բազմաբանակ անասուններով, սեծ ու փոքր ընտանիքներով զբաղեցնում էին այս երկրամասի մեկ այս, մեկ այս անկյունը: Ի սկզբանե քրդերը բնակվում էին Միջագետքի

պտղառատ հովիտներում, Եփրատի ու Տիգրիսի ափերին: Տավրոսի հովիտներում ունեին իրենց քաբարաբանները, սակայն ոչինչ որոշակի հայտնի չէ նրանց ծագման մասին: Թուրքերից ու պարսիկներից նրանք տարբերվում են ոչ միայն դեմքով ու մարմնի կառուցվածքով, այլև կենցաղով ու բնավորությամբ: Դրուսվիլը, որ հիմնավորապես ռուսներովիքել է նրանց, գտնում է, որ քրդերն ազնիվ շատ նմանությամբ ունեն բեղվիներն էին, և հակված է քրդերին համարելու արաբների հետնորդներ: Թեև նրանք պարսկահայատակ են, սակայն չեն ճանաչում մահմեդական կրոնի Ալլիի աղանդը, որ իշխում է Պարսկաստանում, այլ ընդունում են Օմարի աղանդը, որ տարածված է Թուրքիայում: Նրանք չէին խուսափում քախտ որոնել նաև բուրբերի մոտ և ոչ կապաղեպ հաջողությամբ էին գտնում խորանակաբայան և կոլվարաբայան շնորհիվ, որ երբեմն նրանց ամենաբարձր պաշտոնների էր հասցնում: Օրինակ՝ այն ժամանակվա Բայագետի փաշան քուրդ էր: Նրանք մշտապես հարգում են իրենց քրդական ծագումը, ընդ որում կրում են ինքնատիպ քրդական տարազ:

Քրդերը մեր նկատմամբ շատ սառն էին այն պատճառով, որ բջնամանր ունեին քրիստոնեական հավատի դեմ, բայց ահա հին ժամանակներից ի վեր շատ սերտ կապ էին պահպանում հայտնի քրիստոնյա մի ցեղի հետ, որը շատ հետաքրքիր է: Դրանք կրոնի պատճառովից հայտնի նեստորականներն էին, որ քաբարներին, քրդերի և հայերի կողմից անվանվում են եգիլի: Քրիստոնեական այս աղանդի ծագումը վերաբերվում է հինգերորդ դարի առաջին կեսին, երբ Կոստանդնուպոլսի կաթողիկոս Նեստորը, Աստվածամոր կերպարի շուրջ ծավալած կրոնական վեճերի պատճառով, տիեզերական երկու ժողովներում մեղադրվում է, ճգովվում և ապա ազատ արձակվում, բայց դրանից հետո նրա բազմաթիվ հետևորդներ, ինչպես որ հաճախ է պատահում, չեն վիատվում, այլ գերադասում են անբողոքվին անջատվել կաթոլիկ եկեղեցուց, իսկ նրանց նախկին սուրբերը, կազոչությունից ելնելով, փախչում են Պարսկաստան, որտեղ բարեկամական ընդունելություն են գտնում իրենց հավատակիցների կողմից: Այստեղից էլ նրանք իրենց աղանդը տարածում, հասցնում են Եգիպտոս, Սիբիա, Արաբստան, Հնդկաստան, Թաքարստան և մինչև անգամ Չինաստան: Նրանք լավ հիմնավորվում են հատկապես հին Խաղթայում և

մինչև օրս էլ իրենց ժամերգությունները կատարում են խաղա-սիրիական լեզվով: Այժմ նրանք գտնվում են բրիտի անաս-մանափակ գերիշխանության ներքո, ունեն նույն տարազը և տվորությունները, պատերազմների ժամանակ ենթարկվում են նրանց և քաջաբար կռվում են իրենց տերերի համար, որոնց խաղաղ պայմաններում էլ պարտավոր են մատուցել իրենց աշխատանքի պտուղները:

Ես մի քանի օր էլ աշխատեցի սուրբ Հակոբի վանքում և այդ պատճառով ավելի ուշ իջա Արաքսի հովիտ: Թե ինչ իրա-դարձություններ են կատարվել այնտեղ իմ ընկերների տեղ հասնելուց և տեղավորվելուց հետո առաջին օրերին, կարող է պարզել պարոն Շիմանի ներքոբերյալ կարճ տեղեկանքը:

«Սեպտեմբերի 29-ին մեր կոզակներից մեկը, որ ուղարկվել էր Սև ջրի ափին գտնվող քաթարական Բայաթ գյուղը խոտ քերելու, ասաց, որ այդ գյուղի գյուղացիներից մեկը խոստացել է մեզ համար վայրի խոզ խսելի, եթե մենք իրեն վառող և կոտորակ ուղարկենք, քանի որ դրանք փչացնում են իր բրնձի դաշտը: Ես որոշեցի ինքս գնալ այնտեղ: Սեպտեմբերի 30-ին պարոն ֆելդեպեր Շյուցի հետ, երկու կոզակների ուղեկցությամբ, ծիով գնացի այդ գյուղը, որ սուրբ Հակոբի վանքից հեռու կլինի, անկասկած, մի 15 վերստ: Կեսօրվա մոտ հասանք գյուղ: Սկզբոք գետի ափերը ճահճոտ էին, որ շատ տեղե-րում տարածվում էին վերստերով և պատմում էին բարձր ու անանցանելի եղեգնուտներով: Հենց այդ եղեգնուտների մեջ էլ մի մեծ բոլուկով քնավորվել էին վայրի խոզերը: Հազիվ մի կես վերստ էր մնացել, որ հասնեցինք գյուղ, երբ պատահեցինք մի մերումի՝ խոճկորներով: Դրանք ցեխաքաթախ էին և մուգ դեղնագոր-շավուն գույն ունեին: Մենք փորձեցինք նրանց մտնե՞նալ սողալով, բայց դա մեզ չհաջողվեց, քանի որ շարժվելով ճահճուտի մեջ՝ մեծ աղմուկ էինք հանում: Անցանք Սկզ-րի բազուկներից մեկը: Ջուրը անցնում էր մեր ծնկներից: Եղեգնուտների միջով գնալ-գալով՝ վայրի խոզերը լայն արահետ էին քացել, որով էլ հենց այդ պահին գտնու էին դեպի բրնձի դաշտերը: Այդտեղ կոզակներից մեկը, որ բավականին համարձակ էր, տեղավորվեց և հաջող

կրակեց: Խփված խոզը հաջորդ առավոտյան արահե-տով քարշ տվեցինք գյուղ: Նա անտվոր չափով մեծ էր և կլիներ մոտ յոթ փուք կամ 280 ֆունտ²²: Որսը մասերի բաժանեցինք, բարձեցինք երկու եզների վրա և մեր ա-վարով երեկոյան հասանք վանք: Քանի որ պարոն Ֆյո-դորով Արաքսի հովտում պետք է Արարատ լեռան ե-ռանկյունաչափական չափումներ աներ, ուստի նա հոկ-տեմբերի 2-ին գնաց Բայաթ գյուղը, որտեղ ուզում էր մի տուն վարձել: Պարոն ֆոն Բեհագելը, պարոն Շյուցը և ես ուղեկցեցինք նրան գյուղ: Պարոն ֆոն Բեհագելը և ես երկու գիշեր դարան էինք մտել, որ վայրի խոզ որսանք, բայց չկարողացանք: Երկու օր Բայաթում մնալուց հե-տո թողեցինք այն և ձիով գնացինք Բայաթի կողքի Սրբազայն անունով քաթարական գյուղը, քանի որ այն-տեղ՝ գյուղի մոտերքում, մի առանձին բլուր կար, որը շատ հարմար էր պարոն Ֆյոդորովին չափումների հա-մար: Երբ մենք մտանք գյուղ, առաջնորդը մեզ տարակ գյուղապետի տուն, որպեսզի սա մեզ մի կարգին սենյակ տրամադրի: Բայց նա տանը չէր, գյուղում առհասարակ ոչ մի տղամարդ չկար, միայն կանայք էին, որոնք էլ ոչ մի կերպ չէին կամենում մեզ քնակարան տալ: Նրանք հարձակվեցին մեզ վրա՝ տանիքներից քար և բրիք շարտելով և անընդհատ աղաղակելով: Մեզ համար սկզբում ծիծաղելի էր նրանց կատաղությունը, սակայն տեսնելով, որ նրանց հանդգնությունն աճում էր, տանիք բարձրացան երկու կոզակ, որոնք մտրակների օգնու-թյամբ ցրեցին հարձակվողներին: Հիմա արդեն ժխորը դարձավ անտանելի, քանի որ նրանց օգնության եկան նաև գյուղի մնացած կանայք: Մենք պաշտպանվում էինք մտրակներով, թե չէ կտորվեցինք ուրբերի տակ: Քանի որ ոչ մի հնարավորություն չէինք տեսնում մեր նպատակին հասնելու համար, ուստի պարոն Ֆյոդորով մի կոզակի հետ գնաց մոտ մեկ վերստ հեռու գտնվող քաթարական մյուս գյուղը, որ, եթե հնարավոր լինի, տուն վարձի այնտեղ: Բայց այդ գյուղը բաղկացած էր միայն երեք-չորս տնից, որոնք բոլորն էլ ավերված էին: Բախտի բերումով պարոն Շյուցը այստեղ գտավ գրագ-րին և նրանց ցույց տվեց մեր փաստաթղթերը: Դրանք

կարգալուց հետո գրագիրը մեզ նորից բերեց առաջին գյուղը և երկար ժամանակ համոզում էր տեղի ամառոտների մեզ բնակարան ու մի քիչ էլ հաց ու կար տալ: Այս տեսարանը տե՛սք ամբողջ երեք ժամ: Իսկ որ կանայք այդպես համառորեն ու գայրացած հրաժարվում էին մեզ բնակարան տրամադրելուց, պատճառն, հավանաբար, մեր կողակի ծին էր, որ բարձր էր խոզի մտով, ծածկված այդ կենդանու մորթով: Մեծական հարկի տակ խոզի միս ունենալը մահմեդականների համար նշանակում էր ապականել տունը և վիրավորել հավատը: Ահա թե ինչից էին նրանք վրդովված: Մի քանի ժամ հետո, երբ արդեն տուն էինք վարձել, ներկայացան երկու բարարներ, և նրանցից մեկը, ինչպես հետո պարզվեց, մեր վարձած տան տերն էր: Այս բարարները օր ու գիշեր հերթապահում էին մեր բակում, որպեսզի իրենց կանանց պաշտպանեն մեզվից: Նրանք, փաստորեն, համոզված էին, որ մենք գյուղ ենք եկել միայն իրենց կանանց պատճառով: Ամբողջ գյուղում կային ոչ ավելի, քան չորս տղամարդ: Մյուսները գնացել էին պարսկական խանի մոտ, որին ամբողջ ամառը նրանք ծառայում էին աշխատելով և տուն էին վերադառնում միայն ձմռանը: Այս չորս տղամարդը և կանայք ամիսներ շարունակ պետք է անեին գյուղի բոլոր գործերը:

Իսկ գյուղի դաշտերն այնքան քիչ էին, որ չէինք կարող մեր ծիծեռի համար գոնե մի անգամ գարի վերցնել: Հոկտեմբերի 9-ին ես կրկին վերադարձա վանք»:

Յերեկը, մինչեւ ես կվճռեի պարոն Ֆյոդորովի հետևից Արաքսի հովիտ իջնել, խաղաղ վանքում հանկարծ մի անսովոր աղմուկ բարձրացավ: Վաճառայրը, նրա երկու ապաստվորները, երկու օտար շինականներ, սարկավազը, նրանց մոտ մնացած զինվորները վախեցած հավաքվել էին վանքի պարսպի մոտ և խուճապի մեջ ինչ-որ բան էին հարցնում միմյանց: Շուտով ես էլ ստիպված միացա նրանց: Արարատի լանջով հանդիսավոր ես էին իջնում հինգ գայլ, իսկ վանքի պարսպից մի հիսուն քայլ այն կողմ խմբից հետ էր մնացել մի հորդ: Եվ երբ մարդիկ գոռոզոռոզով ու զինված վազեցին, գործն ավելի արագացրին. գայլերը հասցրին պատառառել խեղճ կենդանու որովայնը և

նրան այդ վիճակում բողբեղով օրհնական սիրողը անվիրով շարունակեցին իրենց ճանապարհը դեպի ցած՝ հովիտ կողմը:

Հոկտեմբերի 10-ին՝ կեսօրից առաջ, սարկավազի և մի կրճակի ուղեկցությամբ ես դուրս եկա սուրբ Հակոբի վանքից՝ իջնելու Արաքսի հովիտ: Արկուռի գյուղի մոտերքում մենք թեքվեցինք աջ, այսինքն՝ արևելք և խաղողի ու ծիրանի ընդարձակ այգիների միջով իջանք ցած: Մեկ-մեկ հանդիպում էին մաև փշատի ծառեր: Շուտով երևացին լավային մեծ կուտակումներ, որոնք սիռոված են Արաքսափ լանջով մեկ հավաքածական ձյունների սահանքից սկսած մինչև սուրբ Հակոբի վանքը և ապա՝ Արկուռի գյուղի շրջակայքը: Գետնի վրա սկսեց երևալ կավահող խառնված մանր խճաքարերի և գետաքարերի հետ: Երևում էր Արկուռիի առվի մոտը, որը տարվա այդ եղանակին չոր էր: Սուրբ Հակոբի վանքի մոտ էլ այդ առվի ջուրն այնքան պակաս էր, որ ձիերը հազիվ էին կարողանում խմել, թեև առում զարմանը այնպես է հորդանում, որ բերեցերեքան վեց սաժեն խայք ու երեք սաժեն խորություն ունեցող հունը լցվում է: Ջրի իսկանըր գործերով ցած է տանում ժայռեր և ոչ հազվադեպ իջնում այնպես անսպասելի, որ այդ պահին հունի մեջ գտնվող անասունները չեն էլ հասցնում փրկվել: Այդպես մեր վանախայրը գրեթե ամեն տարի իր փորրիկ նախրից մի քանի հորք է կորցնում:

Հասնելով Արարատ լեռան ստորոտը՝ մտանք մի դաշտավայր, որի միջով անցնում էր մեզ արդեն ծանոթ և, այսպես կոչված, ԱՆՋՈՐ գետը: Մեր ոտքերի տակ գետինը ծածկված էր արցատիկ բուսականությամբ, և որքան իջնում էինք ցած, այնքան ավելի մանրանում էին Արարատից ցած գործված լավայի կտորները և դառնում ավելի թեթև ու ծակոտեղ: Դաշտավայրի մեջ խորանալու հետ միաժամանակ այդ գետաքարերը դառնում էին ավելի մանր ու նուրբ և, ի վերջո, վերածվեցին փոքր-ինչ կուպակում ու թեթև ավազի: Սևջրի ափին արդեն ոչ մի քար չէր երևում: Այն, որ քարեղեն գանգվածները, քստ իրենց մեծությամբ ու ծանրությամբ, սիռոված են Արարատի լանջերին, ունի իր մեկնաբանություն: Այսպես, վերևում ձյան սահմանի մոտ, կանգնած են տուր մեծություն ունեցող, ամուր, խիտ լավայի գանգվածներ, որոնցից հանքաքանի մուրճն անգամ դժվարությամբ է մի կտոր պոկում: Ավելի ցած այդ նույն գանգվածն է, ավալայն փոքր կտորներով, ընդամենը վեց-ութ ոտնաչափ մեծությամբ: Սուրբ Հակոբի վանքի մոտ արդեն

դրանք խառնված են բթև տեսակի և փոքրաչափ լավային ժայռերի հետ: Արկուռից ներքև գտնվում են միայն գետաբարձեր են, բթև, չեչաբարի ման, որոնք, աստիճանաբար քայքայվելով, վերածվում են ավազի: Սա պատահական հանգամանքների հետևանք չէ, այլ երևան է բերում այն բնական ուժը, որ գործում է որոշակի օրենքներով, մի ուժ, որ 6000 տարի առաջ ծնեց ջրհեղեղը, որի «... ջրերը երկրի վերայ շատ շատ զօրացան, եւ բոլոր երկնքի տակ լիճող բոլոր բարձր սարերը ծածկուեցան»: Հետո սակայն «... ահողնորի աղբյուրները և երկնքի պատուհանները փակվեցան և անճորեղ երկնքից դադարեց: Եվ ջրերը գնալով երկրի վրայից բաշվում էին»: Հնգնելով ինքն ինքն բարձրացած և ապա իջած այս ջրհեղեղի ազդեցությունը մի լեռան վրա, որի վերին մակերևույթը ծածկված է եղել տարբեր մեծության և բեթևության քարերի գանգավածներով, հասկանում ենք, որ, ջրաբանության օրենքների համաձայն, իրենց տեղում մնացել են միայն մեծ և ծանր ժայռերը, իսկ փոքրերը, ջրերի երեքում հորձանքից այն ու այն կողմ տարվելով, ստիպված գլորվել են ցած՝ առանց, սակայն, հասնելու ահողնորի հատակը, քանի որ ջրի մեջ յուրաքանչյուր մարմին ավելի բթև է, քան սովորական պայմաններում, այդ պատճառով էլ նրանք ամբողջ ծանրությամբ չեն ընկել: Որքան ցած է իջնում ջրի մակարդակը և որքան շատ են նրանից դուրս ցցվում մյուս լեռնագագաթները, այնքան ավելի թուլանում է պեկոնությունը, ավելի հանդարտ է դառնում ջրերի մակերևույթը և ավելի չնչին՝ քարեղեն գանգավածները շարժող նրանց ուժը: Նրանք կարողանում են միայն փոքր ու բթև քարի կտորները տեղաշարժ անել և լանջի ամբողջ երկարությամբ դեպի ցած պիտել, մինչև որ վերջապես հարթավայրում բթև ու փխրուն քարեղեն այդ սփռվածքները, այս ու այն կողմ ըշվելով, վերածվում են յուրատեսակ ավազի: Այդ ընթացքում այն ամենը, ինչ որ հողեղեն բաղադրություն է ունեցել, լանջերի վրա կտտակվել է մի տեղում և աստիճանաբար նվազող ջրերի հետ գոյացրել այն մեծ ու հորիզոնական հարթավայրը, որ սենք գիտենք իբրև Արաքսի դաշտավայր: Սա մի խոստով հուշարձան է այն մասին, որ այս ամբողջ տարածքը մի ժամանակ գտնվել է ջրի տակ: Եթե սրան ավելացնենք և այն, ինչ էս քիչ առաջ ասացի Արաքսի դաշտ իջնելու վերաբերյալ իմ նկարագրության մեջ գետա-հունների մասին, որ Աջուր անվան տակ ամենուրեք կտրտել են գետինը, ապա դրանք իբրև ջրհեղեղի վերաբերյալ բնական

ապացույցներ, կարող են մատնացույց արվել հիմա էլ և այդպիսով՝ մի նոր, իրեղեն ապացույց լինել այն բանի, որ մարտրաբյուրից բխած այս ճշմարտությունը, ինչ էլ որ այն մասին ասեն անաստվածներն ու անհավատները, հայրուրաժյակներ էլ թեկուզ անցնի, միևնույն է, լույս աշխարհ է գալու:

Երբ մտանք դաշտավայր, են շրջվեցի և նայեցի Արարատ լեռանը: Իմ առաջ բացվեց մի սքանչելի տեսարան: Գրեթե մի քանի օր շարունակ մտայ եղանակ էր եղել, ու բեև ոչ սուրբ Հակոբի վանքում և ոչ էլ դաշտավայրում անձուր չէր եկել, սակայն լեռան վրա ձյուն էր իջել և ձյան աստիճանից ցած ընկած ձյունագուրկ մասերում նստել բթև, թափանցիկ շերտով: Դրա համար էլ լանջերի և հատկապես Փոքր Արարատի ձորակների գեղեցիկ գծագրությունները երևում էին այնպես, որ կարծես զագաթից ցած իջնող երկի ծախքը լիներ:

Մենք դուրս էինք ելել սուրբ Հակոբի վանքից ժամը 10-ին՝ կեսօրից առաջ, և ժամը 4-ին հասանք Մեջրի ավիին տեղավորված քաքարական Սրբազյան գյուղը: Այս գյուղի աշխատանակ տղամարդիկ, որ ամառները ապրում են Պարսկաստանում և նրանց խանգրին, հատկապես, Մակոի խանին, մշակություն են անում, նոր վերադարձել էին տուն, և նրանց հետ իմ ճանապարհորդական ընկերները համաբար թե լավ հարաբերությունների մեջ էին, այնպես որ մեզանից ամեն մեկը կարող էր հանգիստ իր գործով գրավել: Այս քաքարական գյուղերը գրավչության և միաժամանակ անմայության մի զարմանալի հակադրություն են ներկայացնում: Նրանք զարդարված են բարձրաբուն ծառերով, որ փոքր-ինչ հեռվից նայելիս շատ գեղեցիկ տպավորություն են թողնում: Մեծ մասամբ դրանք ուրիմներ են, բրգած քարիմներ, թթենիներ, ծիրանենի և փշատենի, որի պտղահները ուտում են ևս մեծան են արմավենու պտղաղեթին: Գյուղի միջով անցնում է Աջուր գետը կան նրա վտակներից մեկը: Խոշոր եղջերավոր անասունների, ձիերի և ոչխարների հոտեր կան այստեղ, որ արածում են լայնարձակ դաշտում: Երկնքով անցնում են չվող թռչունների երաններ: Վայրի սագեր և բաղեր տեսա են այստեղ հավաքված բազմա-հազար թռչնախմբերի մեջ, որ մի քանի ժամով իջնում են այս դաշտավայրում, որպեսզի Կովկասյան լեռների վրայով կատարած ծանր թռիչքից հետո վայր-ինչ հանգստանան և ապա կրկին, Արարատ լեռան կողքով, շտապեն դեպի հարավ: Մյուս կողմից, սակայն, այս գյուղերում մի անուրախ պատկեր են

ներկայացնում մարդկանց բնակարանները: Այստեղ շկամ ոչ գերաններին շինված գեղեցիկ պատեր, ոչ սպիտակ պատուհաններ, որ շողշողում են հեռվից, ոչ կարմիր աղյուս և կամ մարդու, շերտ-շերտ բարձրացող ծղոտե կտուրներ՝ սպիտակ ծխնելույզներով: Միայն մնալու պատեր են՝ գորշ կավից շինված, որ գրեթե նույն գույնն ունեն, ինչ որ չոր գետինը: Այստեղ փողոցի կողմից չեն երևում պատուհանների գեղեցիկ շարքեր, չեն երևում բարեկամաբար բացված դռներ: Ամեն ինչ փակված է ինքն իր մեջ, և օտարականը սկզբից չի կարողանում հասկանալ, թե դիմացի այդ պատերից ո՞ր մեկը պետք է քանդել՝ իրեն ներս տանելու համար: Ի դեպ, փայտից և քարերից աղբարտիկ այս վայրերում, ինչպես նաև ցածրադիր այլ տեղերում ապրող հայերի ու վրացիների տնաշինական ընդհանուր մտուշների ես հանդիպեցի նաև Թիֆլիսի արվարձաններում: Այս գյուղերում փողոցները գոյանում են մասամբ անդուռ ու անդուսանուտ տների պատերով, մասամբ էլ ցածր պարիսպներով, որ ունեն բոլոր տները բակերը մեկը մյուսից առանձնացնելու համար: Ամեն ինչ ծածկված է լերկ կավով, որն իր գորշ գույնի և չորության պատճառով ամռանը շատ տհաճ տպավորություն է բողնում մարդու վրա: Կավից են շինվում նաև տանիքները: Դրանք հարթ են, հորիզոնական և թաթարների համար ծառայում են իբրև երկրորդ հարկաբաժին, որի կտուրն արդեն բաց երկինքն է: Տան մուտքը բակի կողմից է, դա մի փոքրիկ դուռ է, որի միջով անցնել կարողանալու համար անպայման պետք է կռահալ: Տան ներսում է գտնվում նաև ձիերի և տնային մյուս կենդանիների հսնար հատկացված մասը: Այստեղ մի նեղ սանդուղք տանում է դեպի մի քանի ուռնաչավ բարձրության վրա կառուցված տախտակամածը: Սա գոմից առանձնացվում է անդրելով, որի վրա կախվում են բնակիչների տնային իրերը: Առ տներից մի քանիսը բակի կողմից ունեն նաև կտուրի շարունակություն (ելուստ), և դրա տակ արտիկ պես մի բան, որտեղ ազատ է և սուվրորտ: Պատերից մեկի վրա կան անկյունում գտնվում է բուխարին՝ ծխնելույզով, որ դուրս է գալիս կտուրից: Պատերի վրա արված մի քանի փոքրիկ բացվածքները որոշ չափով թույլ են տալիս, որ մի քիչ լույս քափանցի ներս: Երայն կերպ էին մտապորտապես կառուցված նաև այն տները, որ այդ երեք գյուղերում իբրև բնակարան տրամադրվեցին մեզ և դատելով արտաքին տեսքից՝ մյուս տները նույնպես շատ չէին տարբերվում դրանցից, քանի որ

դրանց ներսին ծանոթանալ մեզ արգելում էին անհյուրընկալ բնակիչները: Երանց մոտ ինձ համար ամենազգալիին կեղծելու շնորհքն էր, մի բան, որ նրանք առավել շատ էին գործածում մեզ հետ հարաբերվելիս: Տղամարդիկ խելոք էին: Մեր փաստաթղթերն ու զինվորական պահակախումբը տեսնելուց հետո նրանք մեր նկատմամբ այլևս բացահայտ ոչինչ չէին ձեռնարկում, ինչպես որ կանայք էին սկզբում փորձել: Ընդհակառակը, նրանք միշտ խոսում էին այն նրախոսության ու բախտավորության մասին, որ, իբր, գագայել էին մեզ ընդունել կարողանալով, և որ մենք, իբր, որք բանի կարիք չենք զգա: Բայց հենց նույն օրն էլ նրանք սկսեցին ամենահասարակ մեթոքները մեզ մերժել, սկզբից չնչին պատրվակներ բռնելով, ասենք թե՛ մոռանալով, թեև մեծ քանակությամբ պահեստավորված ունեին այդ մեթոքներից, հետո նաև նրանով, որ տանտերերը կամ նրա մարդիկ բոլորովին հեռանում էին տնից՝ հնարավորություն չալալով գտնել իրենց: Ես մեր տանտերներից գնել էի ոչխար և հետո ուլ քանի որ շարունակ հաց, կար և կարգալ է գտնու լավ վճարելով. գինը ասանանվում էր միայնայն նրա կողմից: Ընթիվ երկնայան ես նրան խնդրեցի մեզ մի բաժին կար բողնել և ստացա ընդամենը մեկ բաժակ, որ նման էր վիրադրահքի: Երբ ես խնդրեցի կարն ավելացնել, նա մի փոքր էլ ավելացրեց: Հետո ես նրան պատվիրեցի կարի ստվորակալն քանակից հաջորդ առավոտվա համար, միայն թե այնպես լինի, որ կարողանաք շատ շուտ վերցնել, սակայն ստանալ չկարողացա: Առավոտյան մենք ստիպված էինք հաշտվել կար չունենալու հետ, թեև մեր տանտերը բախում ունեին 68 կով և հարյուրավոր ոչխարներ՝ դաշտում: Սրբազյան գյուղում մեր տանտերը մի քանի անգամ ինձնից փորձեց տեղեկանալ, թե մենք ինչքան ենք մնալու, թեև այդտեղ էինք գտնվում ընդամենը մի քանի օր: Ս վերջո, նա խնդրեց ինձ տեղափոխվել մեկ այլ բնակարան, որտեղ, ինչպես ինքն էր հավաստացնում, մեզ համար շատ ավելի լավ էր լինելու: Եվ որպեսզի ինձ համոզի, մտուս ուղարկեց իր մի ազգականին, որ հենց նոր էր վերադարձել քանակից և սպայական համազգեստ ունեց: Ես սակայն այս սպայի միջոցով նրան հաղորդել ավելեց, որ կարող է չանհանգստանալ, մենք ոչ մի ցանկություն չունենք նրա տանը գնալ որ անգամ ակն մնալ, քանի որ կարիքը այդ է պահանջում, սակայն, անշուշտ, ոչ մի թույլ չենք հասպաղի հեռանալու այդտեղից, երբ այդ բանը թույլ տա մեր գործը: Դրանից հետո նա ինձ հան-

գիտ բողոք, բայց արդեն չէր հոգում մեր մասին, և մենք ստիպված էինք մեր փոքրաբանակ սնունդը, որի կարիքը դեռ ունենինք, հայթայթել ուրիշներից: Ինձ համար նորություն էր բարարների նման վերաբերմունքը, քանի որ նրանք ճանապարհորդների նկատմամբ իրենց դրսևորում էին սովորաբար իրև սիրավիր և հյուրընկալ ժողովուրդ, մի բան, որ ես անձանք տեսել եմ Արմի բարարների մոտ՝ մի քանի ամիս շարունակ լինելով այնտեղ: Մակայն Արարատի ստորտոսի երկու գյուղերի բարարները, որտեղ ես կանգ էի առել, պատկանում էին Tsohubankerah ցեղին, այսինքն՝ հովիվներ են՝ առանց մշտական բնակավայրի: Դրան հակառակ, Բայաթ գյուղում, որտեղ սկզբից կանգ էր առել պարոն Ֆյոդորովը, բնակեցված էր տեղի բարարներով:

Ինձ համար այս բարարների մոտ հետաքրքիր էին օգտագործվող սայլերը, որ ծառայում էին խոտ, դաշտային պտուղների և մրգեր տեղափոխելու համար և կառավարվում էին շատ յուրօրինակ ձևով: Այդ սայլի անվաններն իսկական սկավառակների են՝ ամուր միացված տնու հետ, որի պատճառով իրենց հետ պտտեցնում են նաև տեղին: Նրանց կլոր և շատ մեղ անվաներիցի վրա ամրացված է երկաթյա օղ:

Իմ տեղ հասնելու հաջորդ օրը, վաղ առավոտյան մեզանից ամեն մեկն անցավ իր գործին: Ֆելդեգեր Շյուցը մի կողակի հետ ձիով գնաց սուրբ պարեմները: Պարոն Ֆոն Բեհագելը սարքավազի հետ ձեռնարկեց մի ուղևորություն դեպի Կարմիր լեռները՝ Գեղարդականք, Գեղամա լեռների մոտերքում է և նշանակում է վաճառք սուրբ Գեղարդի համար, այնուհետև անցավ Երևան: Պարոն Ֆյոդորովը ինձ տարավ Սրբազանից մի քանի վերստ այն կողմ ընկած մի տեղանք, որն ընտրվել էր շատ բարեհաջող և անչափ նպատակահարմար էր տեղանքի աշխարհագրական դիրքի եռանկյունաչափական չափումների և նշագրման համար, և ապա սկսեց իր անկյունային չափումները, որոնցով նա սկսել էր շատ եռանդուն զբաղվել դեռևս այստեղ գալու օրվանից: Ես զբաղվեցի բազիսի չափումներով, և դրա վրա անցկացրեցի ամբողջ հինգ օր, քանի որ ընտրված տեղանքը մեկուկես վերստ երկարություն ուներ, իսկ իմ միակ օգնակնը մի սովորական կոպակ էր: Բացի այդ, գիշերելու համար ես ստիպված էի ամեն անգամ գյուղ վերադառնալ, և ամեն անգամ ինձ հետ գյուղ տանել իմ չափիչ սարքը:

Այս վայրերի հողը մի խառնուրդ է կավի բերվածքների, բժրահողի և նուրբ, մանր ավազի: Նրա վրա, զոգավոր տեղերում զգալի տարածության վրա հավաքվում է աղային շերտ, որը դեռ հեռվից իր սպիտակ փայլով մատնում է իրեն և, հետագույնությունների համաձայն, որոնց համար ես երախտապարտ եմ պարոն պրոֆեսոր Գյոբելին, 84,6 մասով բաղկացած է կերակրի և 14,5 մասով գլաուբերյան աղից: Խոտածածկույթն ու քիներն այստեղ շատ աղքատիկ են: Մեջրի և նրա վտակների եզերքները ծածկված են բարձր, անանցանելի եղգնուտներով, իսկ գյուղամերձ հարթությունները գերազանցապես օգտագործում են բրնձի մշակության համար, քանի որ բրնձը լավ է աճում ջրի առատ առկայությամբ: Բայց այս վայրերը շատ նպաստավոր են նաև բարարների ամենամեծ բշնամիների՝ վայրի խոզերի համար: Եղգնուտների ու բավտների մեջ դրանք գտնում են անվտանգ ու առը բարստոցներ, որտեղից կարողանում են ապաստոնել դուրս գալ ու սնվել բրնձի դաշտերում: Այս կենդանիների պրծությունը մասին ունեցած կրոնական նախապաշարմունքներում բարարներն այնքան հեռու են գնում, որ, անգամ, չեն որսում դրանց, որպեսզի ստիպված չլինեն զբաղվելու սպանված այդ կենդանիով, և հաճախով հրաժարվում են, որ դրանք ամառացեն բրնձի դաշտերը, դրանով հարևան բրիստոնյաներին հնարավորություն են տալիս որսալու այդ կենդանիները, մի բան, որ օգտավետ է քե՛լ իրենց, քե՛ մահմեդականների համար:

Պարոն Ֆյոդորովի աստղագիտական հետազոտությունները ստիպեցին մեզ մեր բնակավայրը հիմնովին տեղափոխել մոտիկ Փոչո գյուղը, որտեղ հասանք միայն մի քանի օր հետո և հոկտեմբերի 18-ի լուսարացից կեսած մինչև երեկո, ես ծանրաչափական հետազոտություններ կատարեցի բազիսի չափման համար, իսկ պարոն Բեհագելը, որն ինձնից մի քանի օր առաջ վերադարձել էր սուրբ Հակոբի վանք, ծանրաչափի միջոցով միաժամանակյա հետազոտություններ էր կատարել այս նույն տեղում գտնելու Արարատի գագաթից մինչև բազիսն ընկած երկարությունը, որպեսզի արդյունքն օգտագործեինք անկյունային չափում կատարելու համար:

Մեզանից ես վերջինս էի, որ բողոքի դաշտավայրը և հոկտեմբերի 19-ին վերադարձա սուրբ Հակոբի վանք: Ինձ ուղեկցում էր սարկավազը: Արևուտի այգիների մոտ մենք հանդիպեցինք ոչխարի մի մեծ հոտի, ու քանի որ, քեև առաջացած ե-

ղանակին, շուրջ դեռ եղևույթ էր, սարկավազը փորձեց իմ ծարավը հագեցնել ոչխարի կարով: Սիրալիք հավիվը իր համար մի փոքրիկ պաշար էր վերցրել և դրանք հաճույքով ու առատաձեռնությամբ մատուցեց մեզ այնքան, որքան կանեցանք: Դա, իրոք, մի փառավոր ու գովացնող խմիչք էր՝ հրաշալի համով, որը կարելի է օգտագործել անգամ ամենաուժեղ տապի ժամանակ: Շատ հաճելի էր նաև ուշաշնամանյին այդ եղանակին սաղարթավիտ ծառերի ստվերում գովություն փնտրելն ու, ի վերջո, այն գտնելու բավականությունն ունենալը, հատկապես, ճանապարհի աջ կողմում տեղավորված ծիրանի ծառերի փոքրիկ այգում: Այդպես թարմացած ես մտա Արկուտի և մտո մեկ ժամ տրամադրեցի այն բանին, որպեսզի այցելեմ տեղի բահանային՝ փորքինչ մոտիկից ծանոթանալու նրան: Ինչպես հայոց բոլոր բահանաները, նա նույնպես աշխարհիկ ծագում էր ունեցել: Իսկ բահանա ձեռնադրվել էր ավելի ուշ, երբ մի օր ռուռլե էր ընդունել այդ կարգը, բայց ինչպես իր նման շատերը՝ առանց նախնական և հետագա կրթության: Այդ պատճառով այնքան էլ մեծ հեղինակություն և ազդեցություն չուներ իր համայնքում: Բացի այդ, այնքան էլ ունևոր չէր, և հասկանալի էին կենցաղավարության ժուժկալ պահանջները, ինչը ամենաուրախալից էր: Նա շատ ուրախացավ իր տան մեջ ինձ տեսնելով, և սիրալիք առաջարկ արեց, որ համաձայնեմ իր մոտ ճաշի մնալու: Ես բավական քաղցած էի, և մենք շուտով սկսեցինք ճաշկերույթը՝ հայկական խոհանոցին յուրահատուկ բոլոր մանրամասներով, որոնք ես մկարագրել եմ սրանից առաջ և որոնց ես արդեն ծանոթ էի: Իսկ հայկական ճաշկերույթը ավելի շատ բնական է, քան ծանրումեծ: Մեր ճաշատեղանը, այսօրն՝ ցածր պատվանդանի վրա դրված կտոր տախտակը, որ նման է մատուցարանի, լավաշից բացի այլուր էր համադրան ուտելիքներով, կար Սևանա լճի դաղած իշխան, որ լավ մարված էր, ոչխարի՝ ստոր, խաշած միս, կենպսահան խաշած ձու, թթու կար (մամուն)՝ ծան, քարգանջի, պանիր և մի բանիկ մմերով: Այս ուտելիքներից յուրաքանչյուրը, բացառությամբ մմերուկների, մատուցված էին առանձին մետաղյա ախտենե՞րով, իսկ դրանք բոլորը դրված էին մի ավելի մեծ, հարթ ամանի մեջ, որ անագապատ պղնձից էր և գրադեցնում էր սեղանի գրեթե ամբողջ մակերեսը: Ամեն մեկն ուտում էր այն, ինչ ցանկանում էր, բայց՝ մատներով, և այն ավսեից, որից ցանկանում էր: Եվ մի սափոր էլ գինի կար՝ Արկուտիի խաղողի: Այն ոսկե-

գույն էր, այսինքն՝ անխառն Նոյյան գինի, որ զարդարում էր մեր սեղանը: Մի շատ սրտառույժ ձեռքսեղծումով ես բաժանվեցի այդ լավ մարդուց, որը, հիրավի, մեղավոր չէր այն բանի համար, որ իր ժողովուրդը ոչ մի կորչալի հոգևորանալու չուներ, և որը, հավանաբար, հաճույքով կձգտեր ավելի լավին ու բարձրին, եթե միայն նրան ցույց տվելը այդ ուղին:

Շուտով ես ինձ գտա մի սիրելի, փոքրիկ վանքի դիմաց, որից բաժանվել էի կարճ ժամանակով: Ես չգիտեմ՝ առաջիկա բաժանման զգացումն էր ստիպել պատվարժան վանահորը ինձ դիմավորել ճանապարհին, թե՞ ամենօրյա իր սովորույթնք նա գնում էր գերեզմանատուն: Մենք հանդիպեցինք պատահաբար, բայց բավական էր և այն, որ այդ ձեր մարդը վանքից մի փոքր հեռավորության վրա հանդիպեր ինձ և դառնալով իմ կողմը՝ իր պատվելի ու համեմատ դիմագծերով, իր արևելյան ողջույնով այնքան ներքին ուրախություն, այնքան մարտր, մարդկային բարյացակամություն արտահայտեր ինձ կրկին տեսնելու համար, որ ես չէի կարող հավատալ, թե հոգևոր գրկանքների ու ներդրյաան տակ արդեն գերեզմանին մոտ կանգնած այդ ձեր մարդը ուժ կարող է գտնել իր մեջ դրանք պահպանելու և արտահայտելու համար:

Արդարև, մահն արդեն երկար տարիներ էի վեր դարձել էր նրա միակ լուսավոր նպատակը: Աղքատ վանքի մեջ, ձեր Արարատի բարձր լանջի վրա, ամբողջովին կտրված այն ամենից, ինչը Հայաստանում կարող է կոչվել քաղաքակիրք կյանք, շրջապատված երկու ծառաներով, որ հոգ էին տանում նրա չնչին ունեցվածքի, նրա փորրաքանակ անասունների համար, սուրբ Հակոբի վանքի վարդապետը, կարող էր Աստծո գործերի ու կյանքի վրա խորիրոգածություններ հանելով, մի ապահով ու երջանիկ բախտ վայելել, եթե միայն հնարավոր լիներ, երկրային բոլոր բարիքներից հրաժարվելով, ազատ մնալ պարսիկ աստիճանավորների ընչաքաղցությունից ու ճնշումներից: Համընդհանուր այն հանգստարանը, ուր նա առաջնորդել էր իր բազմաթիվ երբայրներին, դեռ կենդանության օրոք նրա համար դարձել էր փափագելի մի վայր, և բանի որ հույս չէր կարող ունենալ, որ իր մահվանից հետո ինչ-որ սնվող ներդրություն կբաշի հոգ տանել իր գերեզմանին մասին, ուստի այդ քաղաք հաճույքով անում էր ինքը: Արդեն մի բանի տարի շարունակ սուրբ Հակոբից ոչ էեռու գտնվող մի քրակի վրա, որտեղ Արկուտիի գյուղի գերեզմանատունն էր, նա պատրաստում էր իր

սեփական գերեզմանը: Փոքր փորել վերջացնելուց հետո նա հիմա գեղեցիկ քարերով ցանկապատում էր այն: Ես ամեն օր տեսնում էի ծերունուն՝ իր հնամաշ, վանական զգեստներով, ձեռքին ծեփիչ կամ շաղախով լեցուն աման՝ գոհ սրտով դեպի բլուրը բարձրանալիս և քարը քարի վրա շարելիս, որքան որ դա թույլ էին տալիս նրա տակը ձեռքերը: Ոչ հազվադեպ նրան կարելի էր տեսնել մի քարի նստած և ընկած նիրհի մեջ, հավանաբար, ներշնչված մոտալուրի և ոչ մի աղմուկով չխանգարվող հանգստության երանելի նախազգացմամբ: Եվ սիրելի ու հասկանալի էր հոգեկան այն պոռթկումը, որ մանկական հայրատարյան պես երևաց ծերունու դեմքին, երբ տեսավ քարտաշի ձեռքով իր համար պատրաստած մեծ տապանաքարը՝ հայերեն գերեզ վրան՝ ի վկայություն նրա անցավոր գոյության: Դա միակ ուրախությունն էր մեր ծանոթության ամբողջ ընթացքում, որ ապրեց վանահայր Կարապետը, եթե միայն ուրախություն կարող է պատճառել սեփական գերեզմանաքարը:

Վանք վերադառնալու հաջորդ օրը ես հետ ուղարկեցի այն չորս կողակներին, որ մեզ հետ էին Երևանից, քանի որ նրանց կարիքն այնու չունեինք: Հոկտեմբերի 21-ին իմ բոլոր ուղեկիցները ֆելդեգերի, սարկավագի, Թիֆլիսից մեզ ուղեկցող մի կողակի և Արկուռի գյուղից մի շինականի հետ, որը գիտեր ճանապարհը, փոքր ուղևորություն կատարեցին սուրբ Հակոբի վանքից մոտ 35 վերստ և Արարատից դեպի հարավ գտնվող Բայազետ բաղաբը, մասամբ հաճույքի, մասամբ էլ այն բանի համար, որ պարոն ֆոն Բեհագելը առիք էր փնտրում Արարատի արևմտյան և արևելյան ստորոտների երկրակազմական բաղադրությանն ավելի մոտիկից ծանոթանալու: Արկուռի գյուղացիներից մեկն ինձ այնքան շատ էր պատմել Բայազետից հյուսիս-արևելք գտնվող սուրբ Հարություն վանքի մասին, որ ես մտածեցի, թե դա, հավանաբար, ինձ ժամանակներից մնացած հուշարձան կարող է լինել, ուստի հույս ունեի ընկերներին ուղևորության միջոցով տանալ այդ հարցի պատասխանը: Սակայն նրանք տեսել էին բաղաբը և նրա շքեղակալը դեռ նոր ավարտված պատերազմական ավերմունքներից ծանրաբեռ, այնպես որ ստիպված էին եղել միայն հեռվից հեռու նայել բաղաբին և այդ պատճառով էլ հրուժարվել էին այնտեղ հասնելու մտքից:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՓՈՔՐ ԱՐԱՐԱՏ

Հոկտեմբերի 26-ին մենք բոլորս կրկին հավաքված էինք սուրբ Հակոբի վանքում և քանի որ եղանակը շատ բարենպաստ էր երևում, վճռեցինք բարձրանալ Փոքր Արարատ լեռը, մանավանդ, որ պատմում էին նրա զագաթին գոյություն ունեցող արձանագրությունների մասին, որոնց բովանդակությունը գիտակ ճանապարհորդներից դեռ ոչ մեկը չէր կարողացել վերձանել:

Պարոնայք ֆոն Բեհագելը, Շիմանը, սարկավագը և ֆելդեգեր Շյուրը միացան ինձ՝ կատարելու այս փոքրիկ ուղևորությունը, որի համար ես վերցրեցի նաև մի կողակի և զինվոր Չալպանովին: Մենք ուղով իջանք մինչև Արկուռի: Մեր կարիքները հոգալու համար այստեղ վարձեցինք հինգ վարգաձի և մեկ բեռնաձի: Արկուռին թողեցինք ժամը երեք անց կեսին և ուղևորություն վերցրեցինք դեպի հարավ-արևելք: Փոքր Արարատին հասնելու համար ստիպված էինք անցնել մոտավորապես վեց լեռնամաստ, որ իջնում են Մեծ Արարատից և իբրև հիմնահող՝ լավային բաղադրության զանգվածներից բացի ուրիշ ոչինչ չունեին, դրանք էլ՝ մասամբ ցարքոցրիվ, մասամբ էլ գետնից վեր ցցված, բայց ոչ ամենուրեք համասեռ բաղադրությամբ: Շատ տեղերում լավային զանգվածն առաջ է եկնում անհարթ պատվարների տեսքով, բարձր բլուրները ծածկում են տեսադաշտը, և թվում է, թե կանգնած ես ինչ-որ բարձր լեռան ստորոտին: Եթե այստեղ ծառեր աճեին, նույնիսկ առանձին խմբերով, այս վայրերը լեռնային գեղեցիկ բնաշխարհի տեսք կտանային: Վեցն անց կեսին, լուսնի լույսով մենք հասանք Փոքր Արարատի հյուսիսային փեշին գտնվող մի տարածքի, որտեղ երեք վերստ պարագծով կեչիների մի անտառակ է աճում: Կեչիներն աճել էին անկաճոճ, և տաք ոտակապիցից ավելի բարձրություն չունեին: Մենք այլ բան չունեինք անելու, բաց մեր իրացաններով, գործիքներով ու մնացած իրերով

հնարավորին չափ շատ փայտ հավաքել: Շուտով հավաքած փայտերից, հուրախություն բոլորիս, դեպի պարզ ու մաքուր երկինք բարձրացավ մի փառավոր կրակ, որ գիշերը լավ տաքացրեց մեզ: Մեզանից ամեն մեկը մի հարմար տեղ էր փնտրում կրակին մոտ լինելու համար և որպեսզի լավ անցկացնի գիշերը, աշխատում էր իրեն ծածկել շոր տերևներով ու մեզ հետ տարած շորերով: Այն բոլոր հրացանները, որ ունեինք մեր կողքին, քանի որ ռուսական բանակի ներկայության օրվանից ավազակախմբներն իրենց հեռու քաթսոտներից թեև դուրս չէին գալիս, սակայն մենք գտնվում էինք հենց այն տարածքում, որտեղով նրանք վտանգավոր անցումներ էին կատարում Պարսկաստանից դեպի այս կողմերը: Դրանք այն տափակ, խտածածկ բլրաշարքերն են, որ մինչյանց են կապում Մեծ ու Փոքր Արարատները: Չգալի ցրտի պատճառով մենք ստիպված էինք պատել, բայց մինչ այդ մի լավ ապուր եփեցինք, որի համար ջուրը բերել էինք Արկուտիի աղբյուրից գիւնու մի մեծ տեղով, քանի որ գտուշացրել էին, որ ճանապարհին ոչ մի տեղ կարգին աղբյուրի չկինք հանդիպելու: Բայց գիշերն այնքան ցուրտ էր, որ ջուրը տկի մեջ առավոտյան մասամբ սառել էր: Դեռ գիշերը, երբ արթնացա մեր փոքրիկ ճամբարն աչքի անցկացնելու համար, նկատեցի, որ մինչ այդ պարզ ու անամպ երկինքը ծածկվում է մութ ամպերով, որ բարձրանում էին Արարատների թիկունքից և սպառնում էին խանգարել դեպի գագաթ մեր վերելքը:

Ամսի 27-ի առավոտյան ժամը յոթին մի փոքր նախաճաշ անելուց հետո մենք բոլորս ճանապարհ ընկանք, բացառությամբ կոզակի և հայ Սահակի, որոնց բողեցիքն իրերի մոտ և քախանձագին խնդրեցինք ու հանձնարարեցինք կեչիների փոքր անտառակը նայելուց բացի ուրիշ ոչ մի տեղ չհեռանալ: Մտտիկից նայելով ես շուտով համոզվեցի, որ Փոքր Արարատը մույնպես հրաբխային ծագման լեռ է, քանի որ նրա ստորոտից մինչև գագաթը այլ բան չէր երևում, բան տարբեր ամրության, գույնի և արտաքին տեսքի լավային զանգվածներ: Սակայն ինձ թվում է, որ այստեղ ավելի գերակշռող են փշրվող, թեթև լավային տեսակները, քանի որ լեռան վրա որքան իջնում եքք ցած, այնքան ավելի, հատկապես ձորակներում, տարածված է այդ կոշտ, լավային ավազը, որի մասին ես արդեն հիշատակել

եմ: Գագաթից ցած իջնող երկզմերը, որոնք այս լեռան վրա հեռվից երևում են շատ ինքնատիպ ու գեղեցիկ, իսկական շերտերն են հենց այդ փխրուն լավայի և, ամենայն հավանականությամբ, առաջանում են զարնանը ձյան հավելու հետ միասին և հետո ընդարձակվում են կամ փոխում իրենց ուղղությունը:

Լեռան հյուսիսարևմտյան լանջը կամ առնվազն նրա վերին մասը, որի վրայով մենք բարձրանում էինք, այնքան թեք չէ, որքան արևելյանը, բայց և այնպես բավական թեք էր և խիստ դժվարացնում էր մեր վերելքը: Վերելքը դժվարանում էր և նրանով, որ փխրուն, ավազոտ գետնի վրա անհնար էր ոտքը հաստատուն դնել, և համարյա միշտ, մեկ քայլ առաջ գնալու համար, ստիպված էինք երեք քայլ կատարել: Ինչ խոսք, վերելքն ավելի դյուրին կլիներ, եթե լանջը ծածկված լիներ ձյունով և կարելի լիներ բարձրանալ սանդուղքներ փորելով, թեև այստեղ մեծ թեքության պատճառով այդ բանն ավելի մեծ վտանգների հետ էր կապված լինելու, քան թե Մեծ Արարատի գագաթը բարձրանալիս: Գագաթի մոտերքում լավային ավազները լցված էին մեծ մասամբ իջվածքներում: Այստեղ ամենուրեք առատ էին տոճև ու խորդուրդը քարածալույթը: Մենք բարձրացանք այդպիսի քարածալույթից մեկի վրա, որի բարձրությունը հասնում էր 40-50 ոտնաչափի: Այդ ժայռը կարելի է տեսնել Արաքսի հովտից, որտեղից այն երևում է սովորական քարի մեծության: Այդտեղից պակաս, գրեթե շրճհատվելով, մինչև գագաթն էր ձգվում մի լեռնամաստ, երկու կողմերից թեք լանջերով

Մեծ Արարատի գագաթը Փոքր Արարատից (Երեւինգ)



և այնքան նեղ, որ կարողանում էինք անցնել միայն մեկ-մեկ, իրար հետևից քայլելով: Այդ անցումը դժվարացնում էր ուժեղ, սուր և շատ սառը արևմտյան քամին: Մեր մատները խիստ սառչում էին՝ չնայած բրդյա ձեռնոցներին, և եթե չլիներ իմ վերարկուն, ես երկի չդիմանայի: Եվ ես կրկին զարմացած էի տաքաբայուն զինվոր Չալպանովի վրա, որն այստեղ նույնպես, ինչպես Մեծ Արարատի գագաթը բարձրանալիս, միայն իր համազգեստով էր և առանց վերարկուի՝ ուրախ հետևում էր մեզ:

Ժամը 11-ին հասանք գագաթը, սակայն քամին փչացրեց մեր ուրախությունը: Չյուն էր գալիս, հետո էլ փչում էր արևմտյան ցուրտ, խոնավ քամին, ամբողջ երկինքն այնպես էր ծածկվել մռայլ ամպերով, որ չէր երևում, թե որտեղ է արևը, քանձր մտախտլուր շրջապատել էր լեռը և ինձ զրկել շրջակայքը դիտելու հնարավորությունից, մի բան, որն ինձ շատ բան էր խոտախում: Ես գագաթը գտա այն նույն տեսքով, ինչպես որ երևացել էր ինձ Մեծ Արարատի գագաթից, այսինքն՝ մոտավորապես քառակուսի բուրգի կորված գագաթի մնամ: Մի խոտքով, դա քառանկյուն մի տափարակ էր, յուրաքանչյուր կողմը 150 ոտնաչափ երկարությամբ, ծածկված առանձին իրարից հեռու ընկած մեծ-մեծ ժայռերով, հատկապես եզրերի մոտ գտնվողներից ամենաբարձր 50 ոտնաչափ բարձրություն կունենային: Դրանցից ամենաբարձրի, հետևապես և Փոքր Արարատի ի ամենաբարձր ժայռակետի վրա ես դիտարկեցի իմ ծանրաչափի: Այն ցույց էր տալիս 17,5 դյույմ, իսկ ջերմաչափը՝ 6,4 աստիճան ցուրտ: Պարուն Ֆյոտրովը նույն պահին սուրբ Հակոբի վանքում պատրաստակամությամբ հետևել էր մեկ այլ ծանրաչափի, և այդպիսով Փոքր Արարատի ուղղահայաց բարձրությունը վանքի համեմատությամբ կազմեց 6302 ոտնաչափ, ծովի մակերևույթից՝ 12284 փարիզյան ոտնաչափ կամ 3 3/4 վերստ, այսինքն՝ 3970 ոտնաչափ կամ 11/5 վերստ պակաս, քան Մեծ Արարատի բարձրությունն է:

Մտախից նստումսահիլելով գագաթի ապարները՝ փխրուն, դեղնագորշագույն լավային զանգվածի վրա ես գտա իրաբխային ապակի՝ մեկ խառնված այդ ապարներից, մեկ էլ ծորած դրանց վրա փայլվում, թափանցիկ, շագանակագույն կանաչավուն երանգի կաթիլների տեսքով, շատ մնամ տվորական 22ի ապակուն, միայն ավելի փխրուն: Դա աչքի ընկնող ապացույց էր ոչ միայն ամբողջ լեռան իրաբխային ծագման,

այլև ստորգետնյա կրակի առկայության, որը, կոնի ծայրից դուրս մղվելով, կարողացել էր հալել դուրս նետված ապարները: Այդ ապակու կոտրներից բիմբակյան տարբալուծումը բարեհաճեց կատարել իմ զիտնական բարեկամը՝ պրոֆեսոր Գյոթելը և գտավ, որ դրանք պարունակում են 63,25 տոկոս կալծարահող, 29,25 տակային հող, 3,5 տոկոս կիր, 2,80 տոկոս երկաթի օքսիդ, 1,00 տոկոս կերակրի սոդա և 0,20 տոկոս մնացանալին օքսիդի մնացորդներ: Սա հաստատում է այն ենթադրությունը, որ իրաբխային զանգվածները մեծ մասամբ առաջացել են դաշտային սփաթեներից:

Երբ ծանր ամպերը, որ ամբողջովին ծածկել էին երկինքը, մի պահ դեպի Մեծ Արարատի կողմը քաշվեցին, նրա հարավարևելյան կողմում ես տեսա կղնածև լեռներ, որոնք այդովս էին ընկել դեռևս սեպտեմբերի 27-ին Մեծ Արարատի գագաթից: Այդ կղնածև լեռներից երկուսի վրա ես նկատեցի գագաթնային իջվածքներ, որ խառնարանի հետքեր էին, բայց արդեն, որքան կարողացա նկատել, ծածկված էին թփերով ու բուսականությամբ:

Այսպես կոչված գերեզմանները գագաթի վրա գտնվում էին մի քանի տեղերում, այնտեղ, որտեղ որ ժայռերի արանքում գետինը հարթ էր և մերկ: Անշուշտ, արտաքին տեսքով նրանք մնան էին մասնեղական գերեզմանների, այսինքն՝ մարդու զվիսի մեծությամբ քարերից գետնի վրա գծված էր շրջան, որի տրամագիծը կլիներ ամենաշատը երեք ոտնաչափ: Այդպիսի շրջաններ գագաթին շատ կային, սակայն մեկը, որ ավելի մեծ էր մյուսներից, երկու թեք հարմարեցված սալերի վրա ուներ մաս նշումներ: Դրանք գրեթե հավասար մեծություն ունեին՝ մոտ 2,5 ոտնաչափ երկարություն և մի ոտնաչափ լայնություն, եզրերը խորդուբորդ էին, երեսները՝ չառված և լի բնական ճաքերով: Քարի տեսակը այստեղ, գագաթի վրա հանդիպող դեղնաշագանակագույն լավան էր, որը կրակի աղեցություն սակ փոխվել էր ծիրանաբարի: Այդ սալերի վրա կային քարառական արձանագրություններ՝ զրված արաբական գրերով: Սկզբնապես էլ փորագրված լինելով ոչ խորը՝ ժամանակի ավելի աղեցություն հետևանքով, սակայն, գրեթե ջնջվել էին, և քարերի վրա նմարվում էր միայն քարաքարի ծածկույթը, որ, առհասարակ, լիքն էր շրջակա ժայռերի վրա: Որքան հնարավոր էր, սարկավազը վերցրեց դրանց ճշգրիտ պատճենները, ո-

րոնք երկուսն էլ ես ներկայացրեցի արևելյան լեզուների քաջ գիտակ մարդկանց՝ իսլավկան պետական խորհրդական Վլադիկին և մայրը Բբրաս Կուլիին՝ այն ժամանակվա Արարաբադի խանի որդուն։ Նրանք երկուսն էլ դիվանագիտական ծառայության քերտումով կոմս Պասկևիչի մոտ էին։ Արժանագրությունների ուսումնասիրությունից երևաց, որ դրանց միայն մի մասն է հնարավոր կարդալ և հասկանալ։ Դա բացատրվում է նրանով, որ քարտերենը երբեմն գրվում է առանց, այսպես կոչված, կետերի, այսինքն՝ ձայնավոր հնչյունների, ինչպես որ այս դեպքում էր։ Բացի այդ, պատճենները, որ ստիպված էինք եղել հասնել ուժեղ ցրտի պայմաններում, ձյունահողմի մեջ առանց մատներով։ Գուցե պարունակում էին առանձին անճշտություններ։ Մի արժանագրության մեջ սկզբից կարդացվեց «Արսալան» բառը, որ վեցերորդ դարում Պարսկաստանում իշխած տոհմի անուն է, բայց այն այսօր էլ արևելքում հանդիպում է շատ հաճախ։ Այնուհետև ներքևում գրված էր. «Մազերե Մահմուդ Մակվեցին»։

Մյուս արժանագրության մեջ, որից նույնպես շատ բաներ մնացին անհասկանալի, կարդացվեց հետևյալը. «Աստված իմ, բող բո որդրմաձուրյունը լինի Մուհամմեդի վրա»։ «Այս դամբարանի կառուցողը՝ Օսմանը, այս բանը գրեց 650 թ. Շևալ ամսին»։ Այս տարեթիվը հիմնվում է քաղաք-թուրքական տոմարի վրա և համապատասխանում է քրիստոնեական տոմարի 1292 թվականին։ Որ այդ քարերը 650 տարվա պատմությունն չունենին, երևում էր նույնիսկ առանց արժանագրությունները ուշադիր կարդալու։ Նրանց զանգվածն այնպիսին էր, որ առանց բայքայանան չէին կարող դիմանալ հողմահարությունը, և անհնազանդ կարող էին օգտագործվել իրար կողքի շարվելով՝ իբրև շրջան կազմող քարեր։ Մանավանդ այնքան կանոնավոր էին դրանք իրար կողքի շարված, և այնքան հարթ գետնի վրա, որ կարծես թե մի քանի օր կամ մի քանի ամիս առաջ էին շարվել։ Այդ պատճառով էլ ես ավելի հաճույքով հավիմ էմ հավատալու Արևուտի գյուղի տաճարիորջ պատմածին, որը պնդում էր, թե այդ քարերի վրա արժանագրություն բողել են ոչ թե գերեզման կառուցողները, այլ, ինչպես ինքն է լավ հիշում, այդ սալաքարերը լեռան գագաթ են տարվել մի ուր տարի առաջ պարսկական սարդարի հրամանով։ Տեսնելով, թե ինչպես են օտարները այս ու այնտեղ արժանագրություն ունեցող քա-

րեր փնտրում, սա մնան հուշարձանների եռանդուն որոնումներ է կազմակերպում և զանազան ձևերով փորձում քարծրացնել դրանց արժեքը։ Մեկիցը պարզորոշ ձևով հասկացրեց մաս, որ այդ խաղի մեջ սարդարի կողմից, հնարավոր է, թույլ տրված լինի և կատակ²³։

Ժամը 12-ին մենք բռնեցինք վերադարձի ճանապարհը։ Երբ արդեն անցել էինք դժվարին, ժայռոտ տարածքը, յուրաքանչյուրը շտապում էր դեպի ցած անհնակարճ ճանապարհով։ Խոր ձորակներից մեկում, որ լեռան վերևից ձգվում էր մինչև ստորուտը և լցված էր թեթև ու շարժուն լավային ավազով, հայ շինականներից մեկը նստեց ձեռնամախայտին ու հետևից ակոս բողնելով՝ սահեց ցած՝ ավելի հեշտացնելով վայրէջքը։ Մենք նույնպես հետևեցինք նրան և քիչ անց՝ մտքը երկուսին, նորից հավարված էինք կեչիների անտառակի մոտ։ Բողբող, ուկրեք մնացել էին ներքևում, այնտեղ էին, ոչ մի բուրդ չէր երևացել, իսկ այն մի քանիսը, որոնց մենք հեռադիտակով կենտրոն էինք Մեծ Արարատի մոտերքում, հավանաբար, խաղաղ հովիվներ էին եղել։

Թևև տարվա ուշ եղանակին, սակայն տարածված բուստեսակներից ոչ մեկը դեռ չէր քառանել։ Փոքր Արարատի վրա նույնպես ես նկատեցի անձան նույն մակարդակը, ինչ Մեծ Արարատի վրա, այն տարբերությամբ միայն, որ բույսերի անձան սահանքը վերջինի վրա հավերժական ձյունների մոտ է վերջանում, իսկ առաջինի վրա տարածված է մինչև քարային զանգվածների տարածքը։ Ես չափեցի կեչիների անտառակի բլրի բարձրությունը, և այն 1807 ոտնաչափով բարձր էր սուրբ Հակոբի վանքի բարձրությունից, իսկ ծովի մակերևույթից կազմում էր 7789 ոտնաչափ։

Ժամը երեքից հետո մենք նստեցինք ձիերը և բռնեցինք վերադարձի ճանապարհը։ Շուտով անցանք Վելիջան փոքր ու բլուրովին լքված գյուղի ավերակների միջով։ Պարսիկ սարդաղը նպատակահարմար էր գտել այդ վայրը, որտեղ հին ժամանակներից ի վեր հայկական եկեղեցի կար և ապրում էին մի քանի ընտանիքներ, կրկին մարդաշատ քնակատեղի դարձնել և դրա համար Արևուտի գյուղից 30 ընտանիք գաղթեցրել էր այստեղ։ Նրա մտադրությունը եղել է այն, որ Փոքր Արարատի փեշին գտնվող անտառակը, ինչպես և մեկ այլ անտառակ, որ պետք է գտնվելու լիներ այստեղից դեպի արևելք, պահպանել

և հսկել տա իր համար՝ իրավունք տալով նաև մի փոքր օգտվելու դրանցից: Երևու Արարաաների միջով ցած իջնող գետակը բաղջրահամ ջուր է բերել այդ գյուղի բնակիչների համար, այդ պատճառով էլ գյուղացիները գոհ են եղել իրենց նոր կյանքից: Բայց շանցան հինգ տարի, վերջին պատերազմի ժամանակ, նրանք լքում են իրենց նորաշեն գյուղը: Բացի այդ, չորսամուս է նաև գետակը, որի հունը մենք, իրոք, ամբողջովին չորացած տեսանք: Հիմքը նոր գցած տների պատերը կանգնած էին գետնի մեջ փոքրված բավական խոր փոսերում, գետնից վերև երևում էին վերին մի բանի շարերը միայն: Սահակը ցույց տվեց իր այժմ ժամանակվա տունը, քանի որ ինքն էլ նորաբնակների մեջ էր եղել:

Ցածրադիր հովիտներում, որոնց միջով մենք անցնում էինք, օդը մեղմ էր ու բևե շատ արագ մտքն ընկավ, բայց հաճելի էր մեր ճանապարհը ճեղքով, քանի որ երկկնքը պարզ էր, և լուսինը ամբողջ շրջակայքի վրա սփռում էր իր բերկրալի լույսը: Իսկ երբ բլուրներից ու հովիտներից հեռոտ մեր առաջ հայտնվեց Արկուտիի լայնարձակ հովիտը, հետվում մեզ սպասում էր մի հրաշալի ներկայացում: Հյուսիս-արևելքում՝ Սևանա լճի դիմաց, բարձր լեռների տարածությունների վրա փառավոր կրակներ էին վառվում: Գիշերը, առհասարակ, հեռուն չի երևում: Սև առափկանքներ և այրվող տափարակները թույլ չէին տալիս չափելու նրանց հեռավորությունը, ուստի սկզբում այնքան ժամանակ, քանի դեռ այդ երևույթի պատճառը անհասկանալի էր ինձ, ես ստիպված էի խաբուսիկ տպավորությունը իմ երևակայության արդյունքը համարել: Բայց հենց դա այդ երևույթին տալիս էր, մի տեսակ, մագալակ գրավչություն, որը տևեց այնքան, մինչև, որ հանգիստ խորիրոգածությունն ու ընկերներիս հետ հարցումիորդը ինձ հուշեցին, որ իրականում վառվող այդ տափարակները պետք է գտնվելիս լինեն Գեղաձա՞նա լեռների լանջերին, որտեղով ավելի ուշ անցնելիս, Արագածի և Փամբակի լանջերին նույնպես, սակայն ոչ այդքան պարզ, հսկայական տարածությունների վրա տեսա դեռևս ծխացող, խոտածածկ տարածությունների վրա տեսա դեռևս ծխացող տեղացիները այդուս են դիտմամբ, ինձ փվում էր, քե դա պատահմունքի կամ անփութության հետևանք է: Ինձ ասացին, որ այրված տեղերում, առհասարակ, հաջորդ գարնանը աննազավ խոտն է բուսնում:

Երեկոյան ժամը յոթին մենք հասանք Արկուտի և նուս մեկ ժամ հյուր եղանք մեկի Ստեփաննին, որը շքաքրեց այդ այցելության համար իր ուրախությունն արտահայտել ճոխ՝ իսկապես հաշկական ճաշկերույթ տալով:

Ժամը ութին մենք նորից սիրելի վանքի կամարների տակ էինք: Այդ պահից սկսած՝ մեր բոլորի մտքերն էլ միմիայն ուղղված էին մեզ համար արդեն շատ բանկ դարձած հանգրվանից առաջիկա բաժանմանը: Պարոն Ֆյոդորովը սկսեց օր առաջ զբաղվել աստղագիտական տարբերը կապկպելով, մի աշխատանք, որի համար, նույնիսկ նրա շաշատասիրությունն ու հնտությունը հաշվի առնելով, պահանջվում էր երկու լրիվ օր, քանի որ ռայխենբախյան բեռնորիշը շատ բարդ կառուցվածք ուներ:

Պարոն ֆոն Բեհագելը, ծանրաչափական կիսատ գնմունքները ավարտելու նպատակով, արդեն հոկտեմբերի 30-ին մի կոզակի և Արկուտի գյուղից մի շինակահի ուղևորությանը էջ միածնի վրայով մեկնեց Երևան: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես էլ հույս ունեի մի վերջին անգամ աչքի անցկացնել Արարատի մասին իմ օրագիրը և օգտվելով հնարավորությունից՝ մի քանի կարևոր գրառումներ և ավելացնել այնտեղ: Ես դեռ չէի կարողացել այցելել ուղի վանքի դիմացը գտնվող բլուրները, քեև այնտեղ արտասովոր ոչ մի քանի չէի սպասում, մի պարզապես կանեմուն էի գնալ և այնտեղից նույնպես մի հայացք գցել երկու լեռների: Նրանց նայելն ինձ միշտ համակում էր քառանկանող այլուտով ու վաբարությամբ:

Ես քարձրացա բլուրներից մեկի վրա, որ տեղավորված էր վանքից հարավ և նրանից քարձր էր 89,4, իսկ ծովի մակերևույթից՝ 6875 ոտնաչափ: Ես փորձեցի կողմնացույցի միջոցով որոշել Փոքր Արարատի աշխարհագրական դիրքը, սակայն մագնիսական ասեղը, որ ես տեղադրել էի լավային մի ժայռի վրա, հարձար մի տեղում, ցույց տվեց բոլորովին սխալ ուղղություն: Ես շարձեցի ասեղը, տեղադրեցի ժայռի վրա այլևայլ դիրքերով և նրանտեղ, որ նա յուրաքանչյուր դիրքում բոլորովին ուրիշ ուղղություն է ցույց տալիս, այսինքն՝ մի ձեռնաչափ տարածության վրա հյուսիսային բեռը ցույց էր տալիս մեկ հյուսիսում, մեկ հյուսիս-արևմուտքում, մեկ հարավում, մեկ էլ արևելքում, կարճ ասած՝ աշխարհի հնարավոր բոլոր կողմերում: Կասկած չկար, որ իմ առջևում մագնիսական ժայռ

էր: Ես շտապեցի դեպի մյուս ժայռերը, որ մեծ քանակությամբ կային այդտեղ և շատերի վրա նկատեցի նույն հատկությունը: Այդ հայտնագործությունը ինձ որքան ուրախացրեց, նույնքան էլ վիշտ պատճառեց այն բանի համար, որ չէի նկատել ավելի շուտ, քանի որ այն արժանի էր կարգին ուսումնասիրության: Միաժամանակ գլխումս մի տհան միտք ծագեց. չլինի՞ թե սուրբ Հակոբի վանքի շրջակայքի, ուստի և եկեղեցու քարերը նույնպես մագնիսական հատկություն ունեն: Այդ դեպքում մագնիսական ասեղի շեղման ու հակման վերաբերյալ այդտեղ կատարած իմ արճաջան ուսումնասիրությունները իզուր են եղել: Ես չգիտեի, թե որտեղից պետք է ժամանակ գտնեմ շարունակելու այդ ուսումնասիրությունները, որպեսզի կարողանամ վերականգնել բաց թողածը, քանի որ պարոն ֆոն Բեհագենը արդեն մեկնել էր և մեր միաժամանակյա ուսումնասիրությունների համար հաշվառված էր նաև իմ մեկնումի ժամանակը: Ինձ միխրաբում էր միայն այն միտքը, որ ես մագնիսական շեղումները դիտարկել էի ոչ միայն վանքի քակում, պարսպի չորս պատերից նշանակալից հեռավորության վրա, այլև վանքից դուրս և այն էլ մի քանի անգամ կրկնելով, ու դրանք միշտ էլ գտել էի չափով միանման: Շուտով մի ճշգրիտ ստուգմամբ պարզեցի, որ վանքի մոտի բլուրը, որտեղ ես դիտարկել էի մագնիսական շեղումը, բնավ էլ միայն մագնիսական հատկություն ունեցող քարերից չի բաղկացած, այլ պարունակում է նաև հրաբխային ավազ, հող, ծածկված է կարմիր քարերով և փխրուն լավայով, որոնք, սակայն, ոչ մի ազդեցություն չեն թողնում մագնիսական ասեղի վրա: Վանքի քարերի վրա նույնպես, չնայած դյուրագգաց մագնիսական ասեղը շատ տեղերում փորձեցի, ամենաչնչին բեռայնության հետք անգամ չգտա, և վանքի քարերի տեսքն էլ բոլորովին նման չէր մագնիսական ժայռերի տեսքին:

Պրոֆեսոր Գյոբելը բարեհաճություն ունեցավ ստուգելու մագնիսական հատկությամբ ուժեղ չափով օժտված մի ժայռակտոր, ինչպես և մեկ ուրիշը, որը բոլորովին չունեւ նման հատկություն և գտավ, որ երկուսն էլ զգալի քանակությամբ երկաթ են պարունակում, մասնավորապես, մագնիսացված կտորից նա ստացավ 10,7 տոկոս երկաթի օքսիդ, իսկ ոչ մագնիսացվածից՝ 10,4 տոկոս: Եթե երկաթը քարակտորի մեջ հանդիպում է ենթօքսիդի ձևով, ապա մագնիսացված ապարներում

կազմում է 9,58, ոչ մագնիսացվածներում՝ 9,33 տոկոս: Ամեն դեպքում սա նույնպես ակնառու ապացույց է այն բանի, որ թեև երկաթը առհասարակ ժայռային զանգվածների մեջ մագնիսականության պայմանն է, սակայն այդ հատկության չափը կախված է մետաղի օքսիդացման աստիճանից, այսինքն՝ մյուս բաղադրատարրերի համեմատությամբ նրա ազդեցատային վիճակից ավելի շատ, քան թե քանակությունից:

Մի քանի օրվա ընթացքում ես արդեն իմ արճաջան ուսումնասիրությունները ինձ որքան ուրախացրեց, նույնքան էլ վիշտ պատճառեց այն բանի համար, որ չէի նկատել ավելի շուտ, քանի որ այն արժանի էր կարգին ուսումնասիրության: Միաժամանակ գլխումս մի տհան միտք ծագեց. չլինի՞ թե սուրբ Հակոբի վանքի շրջակայքի, ուստի և եկեղեցու քարերը նույնպես մագնիսական հատկություն ունեն: Այդ դեպքում մագնիսական ասեղի շեղման ու հակման վերաբերյալ այդտեղ կատարած իմ արճաջան ուսումնասիրությունները իզուր են եղել: Ես չգիտեի, թե որտեղից պետք է ժամանակ գտնեմ շարունակելու այդ ուսումնասիրությունները, որպեսզի կարողանամ վերականգնել բաց թողածը, քանի որ պարոն ֆոն Բեհագենը արդեն մեկնել էր և մեր միաժամանակյա ուսումնասիրությունների համար հաշվառված էր նաև իմ մեկնումի ժամանակը: Ինձ միխրաբում էր միայն այն միտքը, որ ես մագնիսական շեղումները դիտարկել էի ոչ միայն վանքի քակում, պարսպի չորս պատերից նշանակալից հեռավորության վրա, այլև վանքից դուրս և այն էլ մի քանի անգամ կրկնելով, ու դրանք միշտ էլ գտել էի չափով միանման: Շուտով մի ճշգրիտ ստուգմամբ պարզեցի, որ վանքի մոտի բլուրը, որտեղ ես դիտարկել էի մագնիսական շեղումը, բնավ էլ միայն մագնիսական հատկություն ունեցող քարերից չի բաղկացած, այլ պարունակում է նաև հրաբխային ավազ, հող, ծածկված է կարմիր քարերով և փխրուն լավայով, որոնք, սակայն, ոչ մի ազդեցություն չեն թողնում մագնիսական ասեղի վրա: Վանքի քարերի վրա նույնպես, չնայած դյուրագգաց մագնիսական ասեղը շատ տեղերում փորձեցի, ամենաչնչին բեռայնության հետք անգամ չգտա, և վանքի քարերի տեսքն էլ բոլորովին նման չէր մագնիսական ժայռերի տեսքին:

ՎԵՐԱԳԱՐՉ

Հոկտեմբերի 31-ին ամեն ինչ արդեն պատրաստ էր մեկնումի համար, սակայն մենք Արկուտից պետք է դեռ վերցնեինք վեց լծկան և երկու հեծնուոր ձի, ինչը ստիպված էինք անել իրերի բեռումով, քանզի որ մեկից Մտեփանը տանը չէր, և բնակիչներն իրենց ձիերը չէին ցանկանում տալ, բեև գիտեին, որ դրանց դիմաց ստանալու էին պահանջած վարձը: Ես հավատացած եմ, որ մենք այդպես էլ չէինք կարող բնակիչներից մեկի համատարբունը կոտրել, եթե մեր կողակների ու զինվորների երևալով նրա ուշադրությունը դարձնել չտայինք իշխանությունների հրամանի վրա: Առավոտյան ժամը վեցին ես վերջին անգամ տուրք Հակոբի վանքում գննեցի իմ ծանրաչափը իր սովորական տեղում, շնորհակալություն հայտնեցի ծեր վանահորը՝ դրանով մի փոքրիկ նվեր տալով նրան: Վանահորը բողոքեցի նաև մեր տնային իրեղենների մի մասը, որոնք կարող էին նրան պետք գալ, ապա ընդունեցի նրա բարի օրինանքը ճանապարհի համար: Ժամը երկուսին մենք արդեն Արաքսի ափին էինք, որտեղ կանգ առա մտո մեկ ժամի չափ՝ ծանրաչափական գննումներ կատարելու համար: Գետն անցանք այն նույն տեղում, որտեղով որ մախկինում անցել էինք, և այդպես առաջ գնալով՝ երեկոսան, երբ արդեն մթնում էր, հասանք արագահոս Ջանգու գետին: Ջանգուն գալիս է Սևանա լճի և Երևանի կողքով շտապում է դեպի Արաքս: Նրա հունը նույնպես խորն էր, ինչպես Արաքսիցը, այնպես որ գետանցի ժամանակ մեր ձիերն անցան լողի: Գիշերեցիցիք Երևանից 15 վերստ հեռու գտնվող քաղաքական Ուխտան գյուղում:

Հաջորդ օրը՝ կեսօրից առաջ, մենք գտնվում էինք ռուսաց պատերազմների պատմության մեջ հայտնի Երևան քաղաքում: Դանապարհն սկզբից անցնում էր հենց բերդի մոտով, որի պաշտպանական ամրությունները կրկնապատկված էին,

չրջանաձև պարսպի վրա երևում էին հրակնատները: Այն կառուցված էր կավից ու հողից ու բեև այդ պատճառով շատ հաստ էր, և ժամանակի ամենագոր ստամաների առաջ ավելի բույլ, սակայն բշմամական գնդակների առաջ ավելի մեծ դիմացկունությամբ էր կանգնել, քան կկանգնեին սովորական աղյուսից շինված պարիսպները:

Քաղաքը գտնվում էր բերդից մի քանի հարյուր մետր այն կողմ՝ մասամբ հարթավայրում, մասամբ էլ շրջակա բլուրների վրա: Վերջինները Արաքսի նկատմամբ բարձր էին 570, իսկ ժուլի մակերևույթից՝ 3312 ոտնաչափ: Բերդն անցնելուց հետո իմ և ընկերներիս ուշադրությունը չարժեք ընդարձակ շուկան, որտեղ մենք ամեն ինչով լիքը գտանք գործատուներն ու խանութները, բեև միայն վերջերս էր ավարտվել պատերազմը, և հենց նոր էր դադարել ավերիչ ծանոթախոլը: Մեզ շատ զարմացրեց հասկապես քաքմ, չորացրած և մշակման մրգերի առատությունը, բողբոք էլ արտակարգ համեղ և չլված չափով էժան: Լավ տեսակի քաքմ խաղողի ֆունտը, օրինակ, արժեք երկու կոպեկ, իսկ արտակարգ լավ տեսակիցը՝ չորս կոպեկ պղնձով: Դանապարհի համար շատ օգտակար էին նաև չոր ծիրանը, որի հասնը անճման էր, այսպես կոչված, քիչմիշը, որը մի տեսակ չամիչ է, քայց առանց կորիզի: Պարսիկներն այն օգտագործում են հատկապես փլավ կամ փիլավ անունով բրնձն ուտելիքը պատրաստելու համար: Արաքս-արագ գնեցիքը նաև նարգիե կամ դելյան, մի գույգ պարսկական, նրբագեղ հյուսած մորակցեմոր՝ ձիավարության համար, և այլ արևելյան մանրութներ, ու հենց այն է, ուզում էինք դուրս գալ շուկայից, երբ հենց մեր կողքով, իբրև հակադրություն արևելյան այս աղմուկի ու անցորդարձի և իբրև եվրոպական կյանքի մի փոքրիկ կտոր, երկու վայրտներեղայան տիկիններ անցան իրենց երեխաների հետ՝ վարգելով շուկայի միջով և միմյանց հետ խոսելով իսկական շվաբական բարբառով, առանց անգամ ենթադրելու, որ այդ պահին, մարդկային այդ անցուղարձի մեջ կարող է գտնվել իրենց լեզուն հասկացող ականց: Նրանք ԿատարինենՖելդի գաղութից էին, որ պարսկական պատերազմի բռնկման օրերին այնպես դաժամորեն կորոպտվեց և նրա շատ անցամեներ անհետ կորստյան մատովեցին՝ գերեվարվելով բնամուգ: Ես չկարողացա որևէ կերպ այդ բարի մարդկանց օգտակար լինել, քանի որ նրանց



Երևանի տեսարանը Արարատով, մոտ 1680-ին (քառ Շարդինի)


միակ երազանքը հայրենիք վերադառնալն էր, որն արդեն իրականանում էր: Բարեկամակա՛մ ժպիտով նրանք ինձ խնդրեցին իրենցից ավելի շուտ տեղ հասնելու դեպքում այդ մասին լուր տալ գաղութի իրենց հարազատներին:

Քառասուննեկերորդ եգեղյան գնդի չորս զինվորներին, որ Արարատի վրա մշտապես մեր կողքին էին եղել, վարձատրելուց և արձակելուց հետո, մեր փոքրիկ քարավանը, միայն Դոնի երկու կողակների ուղեկցությամբ, սարկավազի քախանձագին խնդրանքով շարժվեց դեպի նրա ճննդավայրը՝ Քանաքեռ գյուղը, որը Երևանից հեռու է վեց վերստ, և որտեղ նրա ճնող-

ները, նրա քույրուեղբայրներն էին սպրում: Գյուղի տները պարսկական պատերազմի օրերին մեծապես վնասվել էին: Քանաքեռը շատ գեղեցիկ դիրք ունի: Այն տեղավորված է Գեղամա լեռների զովասուն լանջին, ծովի մակերևույթից 4148 ոտնաչափ բարձրության վրա: Օդն այստեղ մաքուր է, մեղմ, առողջարար: Երևանի շրջակա բլուրներից Քանաքեռը բարձր է 836 ոտնաչափ: Այստեղից հոյակապ տեսարան է բացվում դեպի Արարատները, որը պատկերված է ջրաներկ նկարում: Կատարյալ է Արաքսի հեռավոր հովտի տեսարանը: Գետը ծածկված է մառախուղի քանձր շղարշով: Խորքում՝ բլրաշարերի հետևում, նշմարվում են Երևանի քերդի պարսպատանձե-


րը, իսկ դեպի արևմուտք (նկարից դուրս) երևում է սուրբ կաթողիկոսական նստավայրը Էջմիածնում, ավելի հեռվում՝ Տավրոսի նախալեռները: Քանաքեռի դիրքը շատ հարմար է նաև

Փոքր և Մեծ Արարատները՝ Քանաքեռից (Պարբուտ)



կողմնացույցի միջոցով անկյունային չափումներ անելու և այս տեղանքի աշխարհագրական քարտեզի մեջ ուղղումներ կատարելու համար:

Սարկավազի հայրը մեզ ընդունեց արտակարգ ջերմորեն ու սրտաբաց, բայց մենք ստիպված էինք մեր ճանապարհի մա-



սին մտածել: Այդ պատճառով էլ օրինական կարգով վարձեցինք հինգ բեռնածի՜ յուրաքանչյուր վերստի համար վճարելով երկու արծաթ կոպեկ: Հեծկան ձիեր այս գյուղից վերցնել մեզ այլևս պետք չէր, քանի որ մեզամից երկուսն ունեին իրենց սեփական ձիերը (մեր երրորդ ձին վաճառել էինք), իսկ մեր երկու կոզակներն այնքան խելացի գտնվեցին, որ վարձով մեզ առաջարկեցին իրենց ձիերը, քանի որ կանեմուն էին ճանապարհն անցնել ոտքով: Այդպես, հոկտեմբերի 2-ին, կեսօրվա մոտ մենք բողեցիներ Քանաքեռը և մտանք Հրազդանի հնայիչ կիրճը, տեսանք կամարակապ, գեղեցիկ ու բարձր մի քարե կամուրջ, որ կառուցված էր այդ գետի վրա, եղանք Ապարանի բարձրավանդակում, որ Արագածի ստորոտին է, այստեղից արդեն մեր ճանապարհն անցնում էր նախկին տեղերով, միայն թե այս անգամ փոքր-ինչ դեպի արևելք: Ընչտն ասած, մենք որոշել էինք Երևանից սկսած այլևս նախկին ճանապարհով չգնալ, որով եկել էինք, այլ Հրազդանի գետի երկարությամբ հասնել մինչև գեղատեսիլ Սևանա լիճ, այդտեղից էլ Ախտև հովտով մինչև Քուռ և ապա՝ Թիֆլիս: Բայց քանի դեռ ստիպված էինք շատ զգուշանալ ժամտախտից, ուստի մի կողմ բողեցիներ այդ հետաքրքիր ծրագիրը և գնացինք սովորական ճանապարհով, որի վրա հիմա արդեն կարանտինը գտնվում էր Գյառգյառ գյուղի մոտ, Բզովիալ լեռան հյուսիսային լանջին:

Թաթարական Լարաջորան գյուղում գիշերելուց հետո, որն անցավ առանց դժվարությունների և տհաճությունների, կոզակական պահակակետի մոտ հանդիպեցինք խոնարիված, բայց շատ հին ու բարձրաշեն մի գեղեցիկ եկեղեցու, որ կառուցվել էր լավային ճեղքված քարերով: Պահակակետի հրամանատար սպան մեզ մերժեց ընդունել, երբ անձրևի պատճառով տեղ խնդրեցինք: Նրա ունեցածը, իհարկե, մի քանի հողաշեն խորհրներ էին ընդամենը, բայց մեկն էլ մեզ համար բավական կլիներ, եթե ցանկանար տրամադրել: Նա հնագույնվեց միայն այն ժամանակ, երբ նրան ցույց տվեցինք հրամանը և պահանջեցինք տեղավորել մեզ: Հավանաբար, նա հասկացավ, որ իմ քաղաքացիական կարգը համապատասխանում է գնդապետի աստիճանին և փորձեց այդ կերպ հիմնավորել հրամանին իր հնազանդությունը: Ես օգտագործեցի այդ հանգամանքը և հրամայեցի նրան, որ բոլար մա իրենց մոտ գիշերենք և որ դա նրան հետագայում ոչ մի տհաճություն չի պատճառելու: Այդ-

տեղ եղած կոզակները պարտավոր էին ապահովության համար Գյումրիից ուղեկցել ուղևորներին, բայց քանի որ ես խուսափում էի զարտուրի ճանապարհներից, ուստի հրաժարվեցի այդ պահպանությունից և ճանապարհը թեքեցի դեպի Փամբակի լեռների կողմ: Դա մեր ճանապարհի վրա եղած ամենահարավային լեռնաշղթան էր, որը մենք այս անգամ կտրեցինք անցանք ամենաթեք, բայց և ամենակարճ ճանապարհով, քանի որ առանց սայլի էինք: Լեռնաշղթայի բարձրությունն այստեղ, անկասկած, հասնում էր ծովի մակերևույթից 7626 ոտնաչափի, այսինքն՝ 271 ոտնաչափով ավելի այն բարձրությունից, որով անցնում է սայլի սովորական ճանապարհը: Ուժեղ տեղատարափի պատճառով մենք հաճույքով մտանք Համանու գյուղը, որտեղ, սակայն, մեզ թույլ տվեցին երկար մնալ: Ստույգ չգիտեմ՝ դա արեցին ժամտախտի վախից, որ մենք մեզ հետ կարող էինք բերել, թե՞ զգուշությունից, որ կարող էինք այն մեզ հետ գյուղից դուրս տանել, քանի որ այդտեղ դեռ իշխում էր ժամտախտը: Վերջապես, մեզ թույլատրեցին ազատորեն մտնել թաթարական Կուրգալ գյուղը, սակայն ստիպված էինք մեր շրջապատում եղած ամեն ինչը, նույնիսկ որևէ չափով ոչ անհրաժեշտ տնային իրերը, պատերը, աթոռները, դրանց ճաղերը, մինչև անգամ գոմի մտորքները սրկել քլոթրակրով, որից ես բավական քանակությամբ վերցրել էի Թիֆլիսից:

Նոյեմբերի 5-ին անցանք Բզովիայի լեռանցքը, որի հյուսիսային լանջին՝ Գյառգյառ գյուղից ոչ հեռու, տեղավորված էր նախկինում Ապարանում գտնվող կարանտինը: Ժամը երկուսին մենք հասանք կարանտինի կարգապահացին և բոլոր իրերով հանդերձ տարվեցինք դեպի ժխային մշակման խցերը: Ես հնազանդությամբ հետևեցի բժշկին, որը մի գերմանացի էր և ամբողջությամբ նրա տրամադրության տակ դրեցի մեր բոլորի և ամձամբ իմ իրերը, միաժամանակ, ուղղվելով ժխախցերի կողմը, նրանից խնդրեցի զթասրտություն հանդես բերել գոմե մեր արժեքավոր սարքերի նկատմամբ: Բայց նրա խոսքի մեջ ես գթասրտություն չգզացի:

— Ժամտախտի պատճառով, եթե պետք է, ամբողջ գյուղեր են այրում, ինչպես կարելի է ինչ-որ սարքեր ուշադրությունից դուրս թողնել:

— Բայց ոչ միայն սարքեր են կորչելու, — ասացի ես, — այլև այն ամենը, ինչ մենք այդ սարքերով ուսումնասիրել ենք, եթե

մեր վերադարձից հետո հնարավորություն չունենանք դրանք մեկ անգամ ևս ստուգելու: Բացի դրանից, կարանտինի կանոնների մեջ նշված են մենտալա այն իրերը, որոնց չի կպչում վարակի բացիլը:

Ու թեև առիթը հարմար չէր, փորձում էի ապացուցել այն հանգամանքը, որ միայն մենք ենք այդ սարքերը մեր ձեռքերում ունեցել և կապոցների մեջ ենք հավաքել մեկ շարք առաջ, ուրեմն ժամատախտից, որի բացիլը մեզ կարող էինք կրել, պետք է որ վաղուց մտահացած լինեինք: Այս ամենից կարևոր էի համարում ավելացնել և այն, որ ես՝ իբրև բժիշկ, սուրբ պարտականությունս են համարել վարակի տրադաբանչուր վտանգից ժամանակին խուսափել և այլն, և այլն... Ես չգիտեմ ինչ հավաստիացումները որևէ ազդեցություն ունեցան, թե ոչ, սակայն պարոն բժիշկը ինձ խոստացավ, որ կրույկարող դրանք, հասկապես ծանրաչափը, քլորի վտանգավոր ծխի մեջ մտցնելու փոխարեն, քաթախել քացախի մեջ՝ միայն արկղերը լրիվ բացված վիճակում: Դա էլ մեծ մխիթարություն էր ինձ համար: Իմ վիճակն, իրոք, ծայրաստիճան վատ էր, քանի որ պարոն բժիշկն արդարացիորեն, օրերի համաձայն, պարտավոր էր բոլոր ճանապարհորդներից պահանջել հանգանդություն: Եվ այդ ծանր ու զավեշտական պահից ինձ օգնություն հասավ եղանակ պատահականությամբ: Երբ կարիքը շատ մեծ է, օգնությունն Աստված ինքն է ուղարկում: Կարիքը ես սրտովս էի զգում, իսկ օգնությունը եկավ լեռներից, մի մեծ քարավանի հետ, որ ցած էր իջնում վաճառականների ապարմքներով, բազմաթիվ ուղտերով ու այլ բեռնակենդանիներով, տասնյակ ուղեկցողների և սայլավանների ուղեկցությամբ: Այդ բոլորը մույճպես պետք է ընդունվել, ախտահարվել և տեղավորվել: Պարոն բժիշկը շտապեց այնտեղ և հանձնարարեց մեր իրերը նայել ոչ բժիշկ իր ծառայակցին՝ պարոն կոմիսարին, որ համեստ ու խելոք պահվածքով էր ռուս էր: Սա մեզ պատվիրեց ժամանակաչափը թեթևակի լվանալ քացախով և պահել մեզ մոտ: Այդպես փրկվեց ժամանակաչափիս կյանքը: Իսկ ինչ վերաբերում է մյուս գործիքներին, ապա դրանք, պարոն բժիշկի կանոնով, մեր կարանտինային արգելափակման ամբողջ ընթացքում, փակվեցին ծխասենյակում՝ իրենց արկղերի մեջ, և ես ուրախ էի, որ բոլորն էլ լավ էին պահպանվել, նույնիսկ իմ ճոճանակային սարքի բաց մնացած սայրը: Ես դրանք բոլորն էլ հետ ստացա՝ առանց որևէ ծանցի հետքի:

Մեր Արարատ ուղևորվելուց հետո ճանապարհի կայանատեղերում մի շատ նպաստավոր փոփոխություն էր կատարվել: Դա այն էր, որ յուրաքանչյուր կայանատեղում որոշակի փոխորդավարձի զինաց ճանապարհորդների տրամադրությամբ տակ էին դրվում տասներկու ձի, որոնք կարող էին օգտագործվել նաև իբրև բեռնածօր, իսկ առանձին տեղերում արդեն կային նաև սովորական ռուսական փոստատեղ սայլակներ, որոնք շատ էին արագացնում տեղից մեկ գնալը:

Ջալալօղլի ամրոցից ճանապարհը շեղեցիմք գետով դեպի ցած՝ այդտեղից վեց վերստ հեռու ընկած հին քաղաք և ամրոց Լոռին տեսնելու համար: Սա հայ իշխանների երբեմնի նստավայրն էր, որն իր նպաստավոր դիրքի շնորհիվ շատ լավ հարմարված էր այդ նպատակի համար: Շրջակա բնությունը, իրոք, շատ հարուստ էր, առողջարար: Իր անտառապատ լեռներով Լոռին Հայաստանի ամենազբեղեցիկ վայրերից մեկն էր: Գեղեցիկ էր և երկրորդ տեսարժան վայրը՝ ամրոցը, որ կարող էր գերազանց պաշտպանվել առանց հրետանի ունենալու, քանի որ բերդի շրջակայքի երեք քառորդն ուղղահայաց, քաղախյա ժայռոտ ափերով, իբրև մի կիսակղզի, հսկայական ու յուրանով օղակալած է գետը, մյուս կողմից՝ մեկ այլ գետահուն գալիս, միանում է առաջինին և կազմում մի կատարյալ ու հուսկապ բերդափոս, որ կարելի է միայն երազել: Քաղաքը և ամրոցը ավերված են, քարծր, հասա պարիսպները ցույց են տալիս վաղեմի փառք և զորություն, բայց ոչ մի խոսուն, հեծոյա հուշարժան իմ աչքով չընկավ, միայն մի քանի քարերի վրա հայկական գրեր կային: Քարե պատերի ներսում բնակվում է հինգ հայ ընտանիք և, ինչպես ինձ քվագ, վարում էին, իրոք, նահապետական կյանք՝ առանց դրախ աշխարհի հետ սերտ կապեր ունենալու, վաղուց ի վեր մտառացված իրենց ավերակներում, իշխանավորների աչքից հեռու, չզգալով նրանց կարիքը և այդ պատճառով էլ ապուրմ էին խաղաղությամբ: Նրանք, ինչպես երևում էր, շատ ուրախացան մեր այցելությամբ, մեզ հյուրասիրեցին իրենց հրաշալի մեղրով, որի մնանք ես ոչ մի տեղ չեմ տեսել: Նրանք մեղր մշակում էին մեծ հեծությունք և առատ պաշար ունեին:

Շուրջվեր գյուղում՝ Թիֆլիսից հիսուն վերստ հարավ, ինձ ասացին, որ այդտեղից ոչ հեռու մի գերմանական գաղութ կա, և ես վճռեցի գնալ այնտեղ: Այդ հետաքրքիր բնակավայրերը

Անդրկովկասում յոթն են: Դրանք են՝ Նոր Թիֆլիսը և Զոն վրա՝ Թիֆլիսից հինգ վերստ վերև, Էլիզաբեթաբլը՝ Թիֆլիսից 25 վերստ արևմուտք, Կատարինենֆելդը՝ Թիֆլիսից մոտ 45 վերստ հարավ-արևմուտք, Մարինենֆելդը և Պետերսդորֆը՝ իրար անմիջապես կապած գյուղեր, Թիֆլիսից և Պետերսդորֆից Թելավիի ճանապարհի վրա, Անենենֆելդը՝ Թիֆլիսից 125 վերստ հարավ-արևելք և Հելենենդորֆը՝ Թիֆլիսից 150 վերստ հեռու, վերջին երկուսը ավելի մոտ են Էլիզավետպոլիս կամ Գանձակին: Գաղութների մարդիկ մեծ մասամբ գյուղացիներ են՝ Վյուրտենբերգից, որ հեռացել են 1819 թվականին, հավանաբար, կրոնական անհամաձայնությունների հետևանքով: Ծանր բափառումներից ու զանազան նեղություններ կրելուց հետո այս երկիրն են ճանաչել և ընտրել իրև իրենց օրինական հայրենիք:

Այս գաղութավայրերը, առհասարակ, իրենց շինարարական արվեստով, հողամշակութայնությամբ, փոխադրամիջոցներով, գործիքներով, կենցաղով, տարագրված և լեզվով ներկայանում են իրևի գերմանական բնակավայրեր և այդ պատճառով էլ չափեկանորեն տարբերվում են տեղաբնակների գյուղերից: Դա երևում է հատկապես այն դեպքում, երբ մարդ երկար ժամանակով ապրում է վերջիններին միջավայրում, ինչպես որ պատահել էր ինձ:

Իմ ուղեկիցներին իրերի հետ միասին ճանապարհելով Թիֆլիս՝ ես միայնակ ուղևորվեցի գաղութի կողմ: Շուտով հանդուկեցի, որ նրա հեռավորության մասին սխալ տեղեկություն են ստացել, բացի որ այն ոչ մի կերպ չէր երևում ինձ: Այդ մասին ես հարցրեցի բաթարներից, սակայն հանգստացնող պատասխան չստացա: Շատ չանցած, հասա մի լայնարձակ հովիտ, որ խոտառատ էր և շրջապատված գեղեցիկ ժայռերով: Դա Խրամի գետի վտակներից մեկի հովիտն էր: Այդ վայրի և օտար տեղերով էս դեպի ամհայտ անպակաս էր բշտում իմ ձին և վերջապես հինգժամյա ծիավարությունից հետո գետի ձախ բարձրադիր ափին նկատեցի գերմանական գաղութի ծանր, գեղեցիկ կարգով տարված սպիտակ տները՝ իրենց կանոնավոր լուսամուտներով, դռներով ու ձխելույզներով: Ես ուրախացած՝ արագացրի ձիու ընթացքը և վարձով մտա գյուղ: Դա Կատարինենֆելդն էր: Քարոզիչը՝ պարոն Բոնկիչը, բացականջում էր, գյուղում պանդոկ չկար, և այն մարդիկ, որոնց հետ ես

խոսակցության բռնվեցի, ինձ սկզբից բավական սառն ընդունեցին: Տեսարանը շուտով փոխվեց, երբ ես խոսք բացեցի այն մասին, որ ճանապարհիս այս գաղութից մարդկանց եմ հանդիպել, որոնք վերադառնում էին պարսկական գերությունից: Ուխտադրո՞ւմ մի հարձակման ժամանակ, որը 1826 թվականի հուլիսին բյուրքական և պարսկական սահմաններից դեպի ռուսական հողերն են կատարել ավազակախմբերը, գլխավորապես քրդական, գազրեի բաբբարսների ձեռքն են մասնավոր մախ՝ Հելենենդորֆի և Անենենֆելդի համայնքները, իսկ հետո՝ օգոստոսին, նաև Կատարինենֆելդն է ընկնում մարդկային զգացմունքներից, խղճից ու բանականությունից ելուզակների ձեռքը: Տարբեր սեռի ու սեռական 30 մարդ է սպանվում, իսկ 130-ը տարվում է գերի: Խնացածները՝ տեսածից արտաբանաբար, ունեցած ամեն ինչը թողնելով, փախչում են Էլիզաբեթաբլի գաղութ: Կատարինենֆելդում այն ժամանակ ապրում էր 85 ընտանիք: Երբ ես այնտեղ եկա, գերեվարությունից դեռ 65-ը չէր վերադարձել: Այդ պատճառով էլ նրանք շատ ուրախացան, երբ ես հաղորդեցի այն յոթի հայրենիք վերադառնալու մասին: Առանձնապես մեծ էր բշտա Վիդմայերի ուրախությունը, որի կինը և երեք երեխաներն այդ խմբի մեջ էին: Նա անմիջապես սկսեց հոգ տանել իմ ձիու համար, մտաանից ինձ համար խաղող բերեց և մի բաժակ էլ զինի:

Հայրենիք վերադառնողների բախտը բերում է այնքանով, որ իրենց առևանգած ավազակների կողմից երկու անգամ վաճառվելով՝ նրանք, ի վերջո, ընկնում են մի հարուստ քաթար ռաջճորդի ձեռքը, որ կհանց մոտ այդ երկու տիկնայք, տնային աշխատանքներում պատրաստական լինելու շնորհիվ կարողանում են փոքր տանիչ կյանք վարել: Բայց նրանց հաճախ ճնշում են լիտիություններով, ստիպում են ուրանալ քրիստոնեական հավատը, ինչը նրանք համատարժեն մերժում են, ուրից հետո նրանց հանգիստ են բուրձում, նույնիսկ սի առանձին վրան են տալիս՝ ապրելու համար: Երբ կնքվում է խաղաղությունը՝ Պարսկաստանի հետ, գերեվարվածները օգտվում են ազատ լինելու իրենց իրավունքից և անչափ երջանիկ են զգում իրենց, երբ տիրոջից փոշ ու միջև իսկ զգեստ են ստանում վերադարձի համար: Մյուս գերիների մասին, որ, հավանաբար, վաճառվելով՝ տարվել էին Փոքր Ասիայի խոլոքերը, դեռ ոչ մի լուր չկար, սակայն գերի կանանցից մեկը բախտ էր ունեցել

դրոք գալու մի պարսիկ հոգևորականի, նա էլ նրան էր դուր եկել, որից հետո կինը գրել էր իր ամուսնուն, թե ինքը ամուսնանում է Մուհամմեդի հետնորդներից մեկի հետ, ուստի ազատ է համարում նրան նորից ամուսնանալու համար:

Երկու ժամ այստեղ մնալուց հետո ժամը մեկին մի գյուղացի տղայի հետ ես դուրս եկա Կատարիներենֆելդից, և նա ինձ ցույց տվեց Էլիզաբեթբալի գանապարհը, որտեղ հույս ունեին գիշերել և գտնել այս երկու գյուղերի բարոզին: Շանապարհն սկզբից անցնում էր խրամիի գեղեցիկ ու ժայռոտ հովտով: Այս գետի ափերը կազմված են այն նույն սև, ծակոտ կեն, լավային զանգվածից, որն այնքան շատ հանդիպում էր Արարատի վրա: Այնուհետև ճանապարհը մտավ Ալեքտիկի կիրճ, որտեղ, սակայն, ես մոլորվեցի, քանի որ կորցրեցի գրպանիս կողմնացույցը, որ բազմաթիվ ճանապարհորդություններս ընթացքում իմ հավատարիմ ու անբաժան ուղեկիցն էր եղել: Հավանաբար, այդպես էլ ամբողջ գիշեր մոլորված շրջել, եթե մթան մեջ ինձ չհանդիպեր մի հովիվ իր փոքրիկ հոտի հետ և ցույց չտար բոլորովին մոտիկ գտնվող գյուղը, որ ես չէի կարողանում գտնել: Բայց ես առատորեն վարձատրեցի այդ տանջալից չարչարանքի դիմաց՝ տեսնելով երկշարք ցածր տները՝ դեպի փողոցը բացվող իրենց սիրելի պատուհաններով: Եվ բոլորի լույսերն էլ վառվում էին: Այն, ինչ-որ իրաչալի մի բան կար այդ բնակավայրերում, որ վկայում էր կարգուկանոնի, մաքրության և աշխատասիրության մասին: Ես կանգ առա Յակոբ Մետցգերի տանը: Նրա տան կողքին պարոն պաստոր Վոլդրի տունն էր, որ հիմա ծանր հիվանդ պառկած էր անկողնում: Մենք գիտեինք միմյանց դեռ Նոր Թիֆլիսից: Այդ պատճառով էլ նա խնդրեց իր մոտ տանել ինձ, և ես փորձեցի նրա մեջ փորք-ինչ ապրելու հույս արթնացնել: Ցավոք, այն ժամանակներից հետո նա արդեն շատ էր փոխվել: Երկու տարվա պաշտոնական գործունեության շնորհիվ, որ լի էր զանազան հոգսերով, միայն 65 ընտանիքից բաղկացած նրա համայնքն իր միջոցներով մի արտակարգ եկեղեցի էր կառուցել գյուղի մեջտեղում: Պարսկական պատերազմը նրանց էլ մեծ նեղությունների մեջ էր գցել: Բացի վախ ու զրկանքներ ապրելուց, նրանք երկար ժամանակ իրենց հարկի տակ էին ընդունել Կատարիներենֆելդից փրկվածներին և ապաստան տվել, մինչև որ Նորին մեծության ողորմածությամբ փախստականներին զգալի փոխհատուցում

էր տրվել, և նրանք կարողացել էին կարգավորել իրենց վիճակը:

Երկու գաղթավայրերում էլ օղջ մարտ էր, կլիման առողջարար: Կատարիներենֆելդը ծովի մակերևութից բարձր է 1680, իսկ Էլիզաբեթբալը՝ 2130 ոտնաչափ: Հուլիս, օգոստոս ամիսներին Թիֆլիսից շատ են գալիս այս կողմերը:

Դաշտավարությունից բացի այս գաղութարանակները զբաղվում են նաև մարգագետնամշակությամբ: Մա ձեռնտու է նրանով, որ Թիֆլիսում խոտը շատ բարձր գին ունի և լավ վաճառվում է: Օրինակ՝ գերմանական բառածի մեկ ֆուրգոն խոտը՝ լավ բարձած, վաճառվում է 8-9 ոտրի արծաթով: Գյուղատնտեսական գործիքներ գործածելու մեջ գաղութարանակները մտնեցել են տեղաբնակների սովորություններին: Նրանք էլ, ինչպես վրացին, օգտագործում են մեծ գութան և վերը նկարագրված ցախավելային փոցի:

Կատարիներենֆելդից մի կարճ ճանապարհ, որ շուրջ 25 վերստ երկարություն ունի և անցնում է քրաշառ ու գեղեցիկ մի տարածքով, տանում է դեպի Թիֆլիս: Ապահովության համար այդ ճանապարհը պետք է անցնել տեղանքը լավ իմացող մարդու ուղեկցությամբ: Այդ պատճառով էլ ես 13 վերստ գնացի դեպի Կողիի փոստակայանի կողմը, իսկ այնտեղից էլ, Թելեֆիի վրայով՝ Թիֆլիս, որտեղ և հաջողությամբ հանդիպեցի իմ ճանախորդական ընկերներին:

ՎԵՐՋԱԲԱՆ

(Տպագրվում է կրճատումներով)

1829 թվականին դեպի Անդրկովկաս ձեռնարկած Պարրոտի ճանապարհորդության նկարագրությունը, որը պատմուն է Աստվածաշնչից հայտնի Արարատ լեռան վերելքի մասին, այսօր էլ՝ հարյուր տարի անց, արժանի է ընթերցման: Գրքի 1834 թվականի հրատարակությունն այսօր արդեն համարվում է հազվագյուտ մնուշ: Շիշտ է, դրա հիման վրա հետագայում 1845 թվականին, լույս տեսավ «Ճանապարհորդության» անգլերեն թարգմանությունը, սակայն գիրքը բնագրով այլևս չվերահրատարակվեց:

Այս հրատարակությունը հետևում է քնագրին: Առաջին հատորը, որ ներկայացնում է ճանապարհորդության բուն նկարագրությունը, ինչպես և բնագիտական ու ազգագրական հետազոտություններ, ենթարկվել է որոշակի համառոտման: Պատմական պատկերացման հեշտացման նպատակով առանձին անձանց, իրադարձությունների ու փաստերի վերաբերմանը տրված են ծանոթագրություններ ու մեկնաբանություններ: Բնագրի առանձին հատվածներ օգտագործվել են իբրև մեկնաբանություններ: Միջակա վերնագրերը մտցված են մեր կողմից, դրանք բնագրում բացակայում են: Ի վերջո, առանձին հնացած տեքստներ և ոճեր բերվել են ժամանակակից տեսքի:

Երկրորդ հատորից, որն ամփոփում է Անդրկովկասի աշխարհագրությանը վերաբերող գիտական հոդվածներ և ուսումնասիրություններ, սույն հրատարակության մեջ ներառված են սակ մի քանի տեղեկություններ:

Քանի որ բնագիրը ուներ միայն մեկ քարտեզ և չորս նկարագրող տախտակներ, ուստի նոր հրատարակության մեջ, դիտողականության բարձրացման նպատակով, մենք գտնողել

ենք նաև այլ նկարներ: Մի շարք նկարներ վերցվել են ավելի վաղ հրատարակված ուղեգրություններից, որոնք մեջբերում է Պարրոտը: Օգտագործվել են նաև ժամանակակիցների՝ Պարրոտի ընկերների կողմից արված նկարներ: Վերջապես, այս հրատարակության համար իր նկարներն է տրամադրել շվեյցարացի նշանավոր աշխարհագրագետ և քարտեզագիր Էդուարդ Իմնոֆը, որը դրանք կատարել է 1954 թվականին՝ Արարատ լեռան գագաթը բարձրանալիս:

*ՊԱՐՐՈՏՆԵՐԻ ԸՆՏԱՆԻԹԸ ԵՎ
ԴՈՐՊԱՏԻ ՆՈՐ ՀՆԱՄԱՍԱՐԱՆԸ*

Պարրոտները 18-րդ դարում ապրում էին Մոսկվայարում, որն այն ժամանակ պատկանում էր Վյուրտեմբերգի մեծ հերցոգությանը: Ֆրիդրիխ Պարրոտի հայրը՝ Գեորգ Ֆրիդրիխ Պարրոտը, ծնվել է այստեղ, 1767 թվականին, արհեստավորի ընտանիքում: Նա 18-րդ երեխան էր ընտանիքում: Հայրենի քաղաքի գիմնազիան ավարտելուց հետո հայրը նրան 1782 թվականին կրթության է տալիս Շտուտգարտի համալսարան: Գեորգ Ֆրիդրիխ Պարրոտի հետ Շտուտգարտի համալսարանում էր սովորում նաև Շոթո՝ Կյուլինեն, որը հետագայում դարձավ հնէաբանության հիմնադիրը: Մինչև 1782 թվականի աշունը դեռևս Շտուտգարտում էր գտնվում նաև ռազմաբժշկական ակադեմիայի սան Ֆրիդրիխ Շյլլերը: Տանը և հայրենի քաղաքի գիմնազիայում Պարրոտը դաստիարակվում է հռոմեական ոգով և հմտանում ֆրանսերենի մեջ, հետագայում, սակայն հիմնականում գործածում է գերմաներենը: Նա հիմնավոր գիտելիքներ ուներ աստվածաբանությունից, փիլիսոփայությունից, մաթեմատիկայից, տնտեսագիտությունից: 1795 թվականին տասնութամյա Պարրոտը՝ իբրև մասնավոր ուսուցիչ, մեկնում է Ռիգա, իսկ 1800 թվականին պրոֆեսորի պաշտոն ստանում Դոբրպատի համալսարանում: Նա բազմաթիվ բնագիտական աշխատությունների հեղինակ էր: Մեծ ծառայություններ մատուցելով Դոբրպատի համալսարանի զարգացմանը՝ Գեորգ Պարրոտը մահանում է 1852 թվականին՝ թողնելով երկու որդիների՝ Ֆրիդրիխին և Վլիխիմի: Հայրը մեծ ջանքեր էր գործադրում զավակների դաստիարակության համար: Մինչ Վլիխեյմն իրեն նվիրում է աստվածաբանությանը, Ֆրիդրիխն անցնում է

հոր ճանապարհով՝ իրեն նվիրելով բնագիտությանը: Ֆրիդրիխ Պարրոտը ծնվել է 1791 թվականին: Դորպատի գիմնազիան ավարտում է 1807 թվականին, որից հետո մասնակցում բժշկագիտական դասընթացների և գիտական հետաքրքիր աշխատանքների համար ստանում ոսկե մեդալ: 1811 թվականին նա ուղեկցում է հանքաբան Մորից ֆոն Էնգելհարդտին Ռուսաստանում կատարած ճանապարհորդության ընթացքում: Պարրոտը լինում է Պոլսովում, Մոզդլովում, Մինսկում, Կամենեց-Պոդոլսկում: Վաղիկավկազից նրանք այցելում են Թերեֆի աղբյուրները և սեպտեմբերին մի վերելք ձեռնարկում Կազբեկի գագաթը: Շատ ուժ և կարողություն են ծախսում Էնգելհարդտը և Պարրոտը Սև և Կասպից ծովերի համեմատական բարձրությունների ուսումնասիրման համար: Այդ ճամփորդության արդյունքների մասին Պարրոտը տպագրում է ընդարձակ տեղեկություններ: Դրանք լույս են տեսնում 1815 թվականին Բեռլինում: 1814-20 թվականներին Պարրոտը Արևմտյան Եվրոպայում է, գիտական մի շարք հետազոտություններ և արշավանքներ է կատարում, որոնք ամփոփվում են «Ճանապարհորդություններ Պիրենեյներում» գրքում (Բեռլին, 1824): 1820 թվականին նա կրկին Դորպատում է, ստանում է համալսարանի ֆիզիոլոգիայի և անատոմիայի պատվավոր պրոֆեսորի կոչում: 20-ական թվականներին Պարրոտի գիտական հետաքրքրությունները հիմնականում առնչվում են ֆիզիոլոգիային և բնագիտությանը: Այս տարիների նրա գիտական նվաճումը, անկասկած, 1829 թվականին ձեռնարկված և հաջողությամբ ավարտած ճանապարհորդությունն է դեպի Արարատ: 1837 թվականին Պարրոտը մի ճանապարհորդություն է ձեռնարկում դեպի ծայր հյուսիս, սակայն վերադարձին ծանր հիվանդանում է, որն էլ հետագայում դառնում է նրա մահվան պատճառ (1841թ.):

Պարրոտը քսան տարի շարունակ կապված էր Դորպատի համալսարանի հետ, բժշկական և ֆիզիոսոփիայական ֆակուլտետների դեկան էր, իսկ 1831-33 թվականներին՝ համալսարանի ռեկտոր: Պարրոտը զգալի գիտական վաստակ ունի իբրև բժիշկ և ֆիզիկոս, սակայն մեծ հռչակ է վայելում Պարրոտ-լեռնագնացը: Նրան հատկապես մեծ համբավ բերեց Արարատ լեռան վերելքը:

ԱՐԱՐԱՏ ԼԵՈՒ ԱՌԱՄՊԵՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արարատի հետ շատ երկար ժամանակ, ինարկե, ոչ ի սկզբանե, կապված է հինկտակարանային ջրհեղեղի, Նոյյան տապանի կանգնածան և ապա այդ լեռից մարդկության՝ երկրի վրա տարածման ավանդությունը: Ավելի, քան մեկ այլ լեռնագագաթ, Արարատը, արդեն լուսավորության դարաշրջանից, հետազոտությունների կիզակետում է: Բայց նաև անկախ աստվածաշնչյան ավանդությունից, Հայկական բարձրավանդակի այս հրաբխային գագաթը՝ իր հավերժական ձյուներով ու հանդիսավորության արժանի և շուշաղթյալ: 5165 մետր բարձրությամբ նա Առաջավոր Ասիայի ամենաբարձր գագաթն է, որ գերազանցում է շրջակա լեռները ամենափոքր 1000 մետրով: Նա 100 մետրով բարձր է Կազբեկից, սակայն ցածր է Էլբրուսից: Ի տարբերություն այս և գրեթե բոլոր մյուս բարձր լեռնագագաթների՝ Արարատի երկու գագաթները բարձրանում են համեմատաբար ցածրադիր հիմքից, գրեթե առանց նախալեռների: 4300 մետր համեմատական բարձրությամբ Արարատն ամենաբարձր լեռն է աշխարհում:

Ավանդությունը, որի համաձայն Արարատ լեռը կապվում է ջրհեղեղի հետ, Հայաստանն է թափանցել քրիստոնեության ընդունումից հետո:

Ջրհեղեղի մասին եբրայական սաքը փոխառված է բարելունյան ապքից, որն ավելի հին է և ներկայացված է «Գիլգամեշում»: Բացի դրանից, Առաջավոր Ասիայում հայտնի էին ասիևա առնվազն երկու խաղաղական խմբագրություն նախաքրիստական ժամանակներից: Աստվածաշնչյան մույնպես ջրհեղեղի շարադրանքը հիմնվում է հրեական ծագման երկու ավանդությունների վրա, որոնք, ինչպես ցույց է տալիս տեքստաբանական հետազոտությունը, միայն հետո են ի մի բերվել: Կարելի է վստահորեն ասել, որ Ստորին Միջագետքում ջրհեղեղի մասին ասքերը կապված են անսովոր մակընթացությունների հետ, որոնք երկրաշարժերի հետ միասին հաճախ են մեծ տարածությունների վրա բնակատեղեր ոչնչացրել:

Նման իրավիճակը հուշում էր, որ ամեն ինչ ժամկող ջրհեղեղից փրկություն կարող էր երաշխավորել միայն մեծ մավր, որը կարող էր մեջը տեղավորվածներիև հասցնել շրջակա բարձր լեռների գագաթները: Իբրև «տապանի» ստուովայի՝ եր-

բայական բնագրում անվանվում են «...Արարատի լեռները»: Դրանով հասկացվում է Արարատ երկրի լեռներ, որի տակ հիմ եբրայական ժամանակներում ընդհանրապես հասկացվում էր հյուսիսի ընդարձակ ու բարձր լեռնաշխարհը: Եբրայական Արարատին համապատասխանում է ասորական սեպագրերից հայտնի Urartu, Urardu կամ Urvatri, որն այն ժամանակվա խաղաղական քազավորության անունն է: Հին արևելյան այս ստրկատիրական պետությունը գոյություն ուներ մ.թ.ա. 900-600 թվականներին, Վան և Ուրմիա լճերի միջակայքում: Ծաղկման շրջանում այն ընդգրկում էր որջ Հայկական լեռնաշխարհը, մշակովի էին Արարատ լեռան շրջակա բոլոր մանրույննեմ հովիտները՝ ընդարձակ ռոտզման համակարգերով:

Լեռն անտիկ գրականության մեջ հանդես է գալիս զանազան անվանումներով: Առաջին անգամ Արարատ անունը, սակայն ոչ իբրև լեռան անուն, հանդիպում է Բերոսոսի մոտ (մ.թ.ա. 3-րդ դարի առաջին կես), որը Բաբելոն քաղաքի Բել աստծո տաճարի քրմապետն էր:

Հին հայկական Մասիս անվան հիման վրա լեռը հունական տեքստերում անվանվել է Մասիոս, իսկ լատինականներում՝ Մասիոս: Միջագետքից «տասը հազար հույների» անհանձնի ժամանակ, որի մասին պատմում է Քսենոփոնը (մ.թ.ա. 430-354), գորբերն անցնում էին այն ժամանակ դեռևս կիսով չափ անտառապատ Հայկական բարձրավանդակով, անցել են բնակավայրերով, որոնք լեռան ձյունի գագաթից մոտ հարյուր կիլոմետր հեռավորության վրա են գտնվել, սակայն խոր կտրտված ձմեռային տեղանքի պայմաններում լեռը Քսենոփոնի վրա, որը «Ամասիսում» շատ մանրամասնություններին մասին է խոսում, առանձնապես տպավորություն չի թողել:

Մոտիկ լինելով հին ասորական ina rnat Urartu, որ մշամական է «Արարատ երկրում», հուներոսյան ardra-ն թողնում է իբրև «բերրի, գութանով մշակված» երկրի տպավորություն: Հիերոնիմոս Յեսայաոս գրում է. «Արարատը հարթավայր է Հայաստանում՝ անհավատալի պտղաբերությամբ, որի միջով հոսում է Արաքսը»:

Հույն պատմագիր Նիկողաոս Դամասկոսցու «Համաշխարհային պատմության» մեջ նույնպես Արարատը իբրև տարածք է հիշատակվում գույգ գույգների ստորոտում:

«Հավանաբար, 5-րդ դարում գրված «Աշխարհացոյցում» և 9-րդ դարում կազմված «Հայոց պատմության» մեջ, որը լուսաբանում է մինչև 492 թվականը եղած դեպքերը և գրվել է 5-րդ դարի հայ պատմիչ Մովսես Խորենացու կողմից, խափում է Արարատի մասին: Հայ իշխաններից մեկը Արարատը համարում է աշխարհի ամենամեծ լեռը, և նրա մասին ասում, որ հավերժական ձյունների պատճառով ոչ ոք չի հանդգնի այնտեղ բարձրանալ: Հայերի այն հին հավատը, որ նրա զգալիին դեռևս կարելի է գտնել տապանի մեծագործերը, ըստ Կ. Ռիտտերի՝ արդեն գոյություն ուներ, երբ բյուզանդական կայսր Հենակը 627 թվականին հաղթականորեն անցավ Հայաստանով:

Մինչ Արարատի արմաթափայլ գագաթի նկատմամբ գիտական հետաքրքրություն արթնացումը, լայն տարածում են ստանում նրա՝ իբրև Նոյի լեռ լինելու լուրերը: Կարողիկ միսիոներները և վաճառականները, որ միջին դարերում ճանապարհորդում էին Առաջավոր Ասիայով, Հայաստանում գտնվող այս լեռան մասին բերում են առաջին տեղեկությունները, ըստ որոնց՝ նրա վրա է իջել Նոյյան տապանը ջրիեղելից հետո: Հայաստանով ճանապարհորդել է միսսիսի Յոհաննես Ռուսիքրոնը (1293-1381), որը գրում է. «Մեծ Մասիսի վրա ոչ մեկն իրավունք չունի քարծրանալ, քանզի մա երկրի մայրն է»: Համոզմունքը, որ Էջմիածնի մոտ գտնվող ձյունածածկ գագաթն իրականում բիրիլական Արարատն է, շատ արագ տարածվում է եվրոպայում և հանընդհանուր ճանաչում ձեռք բերում, այն «ստանում է գրեթե կրոնական զոհմայի ուժ»: Դրան հակառակ, արաբական աշխարհում լայն տարածում է ստանում համոզումն այն մասին, որ տապանն իջել է մեկ այլ վայրում՝ Վանա լճի ափին, որի մասին նշում է Նուրանը:

Հայաստանը արաբների իշխանության տակ ընկնելու ժամանակներում (շուրջ 700թ.) կորցնում է ինքնուրույնությունը, քայց այն կարողանում է վերականգնել 9-10-րդ դարերում և հասնում գիտական ու մշակութային մեծ ծաղկման: 11-րդ դարերում Հայաստանը նվճարում են քուրդերը, իսկ 13-րդ դարերում՝ մոնղոլները, ապա երկար ժամանակ բաժանված մնում քուրդերի և պարսիկների միջև և գրեթե ամբողջովին մոռացվում Եվրոպայի կողմից: Արքայա Մեծի կառավարման շրջանում (1588-1629) Հայաստանը կրկին սպրում է ծաղկում, և վերստինվում են նվրոպացիների ճանապարհորդություններն

այս երկրով: Հահը նույնիսկ մարդիկ է ուղարկում Արարատը տեսնելու, որ պարսկերեն նշանակում է *Kuh-i-Nu*, այսինքն՝ Նոյի լեռ: Նրա մարդիկ, սակայն, հայտնում են, որ լեռն անմատչելի է:

Աղան Օլեարտը իբրև անդամ, այսպես կոչված, Գանահական Առաքելության, մեկնել է Պարսկաստան: Իր «Նկարագրություն նոր արևելյան ճանապարհորդության» գրքում (1647) գրում է. «Կովկասին մերձ գտնվում է Հայկական բարձրավանդակը, որի վրա իշխում է Արարատը: Ապա ավելացնում է. «Արարատ լեռ... տեքսից ավելի բարձր է, քան Կովկասը, ամենաբարձրը այն բոլոր լեռներից, որ տեսել էինք ուղևորության ընթացքում: Այն ամբողջովին սև է և խիստ ժայռոտ, ամառ թե ձմեռ գազաքը ծածկված է ձյունով»:

3. Շարոյսը, նկարագրելով դեպի Արարատ կատարած իր ճանապարհորդությունը, նշում է, որ ինքը կանգնել է նրա գագաթին, վերևում հանդիպել մի ճգնավորի, որը նրան լուր է տվել, թե դեռ ինչ է մնացել Նոյի տապանից: Ամհասկանալի է մնում նա եղել է լեռան գագաթի՞ն, թե՞ սուրբ Հակոբի վանքում:

Ժան Շարդինը, երբ 1671 թվականի մարտին Թիֆլիսից մեկնում էր Պարսկաստան, անցնելով «լեռներով ու հովիտներով», հասնում է Երևան, որը «մեծ քաղաք է մի հարթավայրում շրջափակված լեռներով» և «ոչ մի գեղեցիկ շենք չունի»: «Երևանից երկու մղոն հեռավորության վրա գտնվում է երեք եկեղեցիներով վանքը, որը հայ քրիստոնյաների մեծագույն սբրությունն է՝ *Asch-miazim*: Ապա շարունակում է. «Երևանից 12 մղոնի վրա երևում է նշանավոր լեռը, որը, ըստ հանրընդհանուր հավատքի, իր վրա է կրել Նոյի տապանը, սակայն ոչ մեկը դրա համար բավարար ապացույցներ չունի»: Շարդինի կարծիքով՝ Արարատ լեռը «...ամենատխտր տեսքն ունի աշխարհում»: «Նրանք, ում հետաքրքրությունը դեպի այս լեռն է բերում, ավազից ու ձյունից բացի ուրիշ ոչինչ չեն կարող տեսնել»:

Գիտականորեն բովանդակալից են Արարատի մասին 3. Պ. Թուրեմֆորի (1656-1708) տեղեկությունները: Նա գերմանացի բժիշկ Գունդեխայմերի և ֆրանսիացի նկարիչ Աուրրիի հետ 1700-1702 թվականներին ճանապարհորդել է Հունաստանում և Փոքր Ասիայում: Արարատ լեռան մասին նա բողել է միանգամայն ճշգրիտ նկարագրություններ: Բուսաբանական

հետաքրքրություններից ելնելով՝ նա լեռը բարձրացել է մինչև ձյան սահմանը: Լեռան վրա հետագա վերելքը նա համարում է անհնարին՝ ցրտության և խիստ գահավեժ լինելու պատճառով: Թուրեմֆորը հիասթափված էր լեռան աղքատիկ բուսականությունից:

18-րդ դարի սկզբում գիտական միտքը նշանավորվեց Ցեդլերի «Բոլոր գիտությունների և արվեստների համընդհանուր մեծ բառարանով» (1737): «Արարատ» հոդվածի դիմաց, օրինակ, գրված է. «Նշանավոր և չափազանց բարձր լեռ... ..որը ազատորեն բարձրանում է մի անալի դաշտավայրում», բայց նաև. «Արարատը առանձնահատուկ երկրամաս է, որով հոսում է Արարս գետը: Այն պետք է շատ պտղաբեր լինի»:

Արարատ լեռան հետազոտման հետագա ընթացքը պայմանավորվում է երեք պետությունների՝ Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի հարաբերություններով:

18-րդ դարի սկզբում, Պարսկական կայսրության կործանման հետ կապված, եվրոպացիների համար ճանապարհորդությունների հնարավորությունները վատթարանում են: Երբ 1720 թվականին Պետրոս Մեծը սկսում է իր արշավանքները դեպի Պարսկաստան, լեռան վրա վերելքի հնարավորություններն անցնում են ռուսներին և հայերին: Ռուսների նշանակալից հաջողությունն էր Գլբինի նվաճումը (1783), որով ժամանակակից Ռուսիանյալի հարավայն ամբողջությամբ անցավ Ռուսաստանի ձեռքը: 1797 թվականին ռուսները նվաճեցին Դերբենդը, իսկ 1802 թվականին՝ Կրաստանը:

Գրանով ամենից առաջ հնարավորություն է ստեղծվում Կովկասյան և Անդրկովկասյան ընդարձակ, մինչ այդ գիտության համար դեռևս անհայտ տարածքները հետազոտել: Արդեն 1811 թվականին Պարրոտը և Էնգելհարդտը ճանապարհորդում են այս վայրերով: Ռուսաստանի հետագա առաջխաղացումը Անդրկովկասում հանգեցնում է ռուս-պարսկական երկարատև պատերազմին՝ 1804-1813 թվականներին: 1826 թվականին վերսկսված պատերազմի արդյունքում Անդրկովկասի մի հսկայական տարածք և՛ Երևանի և Նախիջևանի խանությունները, անցնում են Ռուսաստանին: 1828 թվականին Թուրք-մենչալում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված

պայմանագրով գրեթե ողջ Վրաստանը, Հարավային Ադրբեյջանը և Արևելյան Հայաստանը միավորվեցին Ռուսաստանին: Յրիդիկա Պարրոտը իր հետազոտական ճանապարհորդությունը դեպի Արարատ սկսեց անմիջապես ռուս-պարսկական պատերազմից հետո:

Քաղաքական նոր կացությունը բարերար ազդեցություն ունեցավ անդրկովկասյան ժողովուրդների վրա: Չնայած ցարական կառավարության գաղութային քաղաքականության, այնուամենայնիվ, զարգանում են տնտեսությունը, մշակույթը: Հատկապես քրիստոնյա հայերի համար ռուսական մշակույթը բարենպաստ միջավայր հանդիսացավ գիտությունների, արվեստների և դպրոցների զարգացման համար:

18-րդ դարի վերջերին և 19-րդ դարասկզբին Արարատ լեռան առասպելն իր ազդեցությունը բոլեց նաև աշխարհագրական գիտության վրա:

Նույն լեռան և մարդկության պատմության համար նրա նշանակության մասին պատկերացումը հիմնվում էր տեղանքի մասին եղած ժամանակի գիտական տեղեկությունների վրա: Կարլ Գեորգ ֆոն Ռաուտերը (1800-1856), ինչպես նաև Կարլ Էրնստ Ադոլֆ ֆոն Հոֆը (1771-1837) Արարատ լեռանը հին աշխարհամասի վրա հատկացնում են կենտրոնական տեղ, քանի որ այն գտնվում է Հին Աշխարհի ամենամեծ գծային լայնության մեջտեղում, ընկած է Աֆրիկայի հարավային ծայրակետի և Բերինգի նեղուցի միջև, միաժամանակ կապակցող օղակ է աֆրիկյան-ասիական անապատային գոտիների: Վերջապես, պարզվում է, որ նա կենտրոնական դիրք է գրավում շրջակա ծովերի նկատմամբ: Արարատից այդ ծովերի հեռավորությունը հետևյալն է՝

Սև ծով	-	308 կմ
Կասպից ծով	-	400 կմ
Միջերկրական ծով	-	780 կմ
Պարսից ծոց	-	1125 կմ
Սեռայլ ծով	-	1180 կմ
Կարմիր ծով	-	1400 կմ

Նրա անմիջական հարևանությամբ գտնվում են Առաջավոր Ասիայի չորս մեծ լճերը՝ Վանա (100 կմ), Սևանա (96 կմ), Ռոմիայի (175 կմ) և Չրդ (160 կմ):

Արարատ լեռան զագաթը Պարրոտի բարձրանալուց հետո, 19-րդ դարի յոթանասուն տարիների ընթացքում, մինչև 20-րդ դարի սկիզբը, ձեռնարկվում են ևս մոտ երեսուն գիտարշավներ, որոնք ուղղակի առնչվում են լեռանը կամ հետապնդում են հարակից նպատակներ: Այդ ընթացքում չորս քսաննեխ անգամ լեռան զագաթը բարձրանալու փորձ է արվել, և հարյուր մարդ հասել է զագաթին: 1833-35 թվականների ընթացքում ձեռնարկվեց հինգ գիտարշավ, որոնցից երկուսը միայն պատկեց հաջողությամբ: 1833 թվականին Արարատ լեռը բարձրանալու միայնակ փորձ արեց ռուս նկարիչ Պոտոլովը: Հոգնաժուրյունը, բարձրացած փոթորիկը և վրա հասած երեկոն նրան ստիպում են կես ճանապարհից ետ դառնալ: Վերադարձին Թիֆլիսում նա համոզված է գիտնական Սպասսիկ-Աուտոնոմովին բարձրանալ լեռը: Սպասսիկ-Աուտոնոմովը լեռը բարձրանում է գրեթե այն նույն ճանապարհով, որով անցել էր Պարրոտը, անգամ կարողանում է օգտագործել վերջինիս կողմից ստեղծված գիշերակացի օջախները: Ավելի ուշ՝ 1835 թվականին, զագաթը նվաճում է Կ. ֆոն Բեռնեմսը: Սանկտ Պետերբուրգի լրագրերում նրա տպագրած տեղեկությունները ոչ մի գիտական նորույթ չեն պարունակում, բացառությամբ մի տեղեկության, ըստ որի Պարրոտի լեռան զագաթին ամրացրած կայանն իսաը գրեթե մինչև ծայրն արդեն ծածկված է ձյունով, այսինքն՝ ձյան գանգվածը լեռան վրա գնալով ալվեաճում է, որը վիճելի է:

1840-ական թվականների սկզբներին լեռան զագաթը բարձրանում է նախ՝ բնագետ Մորից Վազները²⁴, ապա՝ երկրաբան Հերման Աբրիլը: Աբրիլին առաջին անգամ կազմեց մի ընդարձակ ու համակարգված զեկույց Մեծ Արարատի կառուցվածքի և առանձնահատկությունների մասին, որ նա կատարեց Փոքր Արարատի զագաթից՝ չորս անգամ նվաճելով այն:

Մեկ տարի անց՝ 1846 թվականին զագաթը բարձրացավ Դանքի Սեյմուրը, որն առաջին ճանապարհորդն էր, որ բարձրանում էր լեռ՝ ալպինիստական հետաքրքրությունից դրդված:

Բացառիկ գիտագործական նպատակները էր հետապնդում 1850 թվականի գիտարշավը: Գեներալ գեոդապետ Յ. Ի. Խոժժկոն, Անդրկովկասում երկրաչափական աշխա-

տանքներ կատարելու ընթացքում, օգոստոսի կեսերին վեց սպաների և վաթսուներեղ զինվորների հետ շուրջ մեկ շաբաթ անց կացնում է լեռան գագաթին՝ այնտեղից կատարելով շրջակա շուրջ 120 լեռնագագաթների տվյալների երկրաչափական ճշգրտումներ: Արշավախմբին մասնակցում էին մեկ արևելագետ Խանիկովը, տեղաճարակիր Ալեքսանդրովը, բարձրամիջ Շարոյանը և ուրիշներ:

Արիմի պատերազմը որոշակիորեն խանգարեց լեռան հետագա ուսումնասիրությունները: Միայն 1856 թվականին, Փարիզի դաշնագրի կնքումից հետո, անգլիական մի արշավախումբ բուրբակյան կողմից փորձ է անում բարձրանալ լեռը: Փորձը պակասվում է հաջողությամբ:

Հաջող վերելքն իրեն ապաստեցնել տվեց 12 տարի: Լոնդոնցի երկու ալպինիստներ, 1868 թվականին ճանապարհորդելով Պարսկաստանում, Շվեյցարիայում, քազմափվ լեռնագագաթներ նվաճելուց հետո փորձում են բարձրանալ մաս Արարատ լեռը: Ֆրեզֆիլդը և Թուկերն օգտվում են Արիմի անցած ճանապարհից և հենց առաջին օրը հասնում 9000 ոտք բարձրության: Սակայն գագաթին հասնել, այնուամենայնիվ, նրանց չի հաջողվում:

1877 թվականի սեպտեմբերին զարմանալի արագընթաց մի վերելք է նախատեսում Ջեյմս Բրիլը: Հինգնականում միայնակ հաղթահարելով ճանապարհը՝ նա կարողանում է 24 ժամվա ընթացքում բարձրանալ և հասնել գագաթը, ընդ որում՝ առանց գիշերակացի:

19-րդ դարի 80-ական թվականներին Արարատի վրա վերելքները նկատում են: «Կովկաս» ամսագրում տպագրված մի տեղեկության համաձայն՝ 1882 թվականին Երևանում մի խումբ տեղացիներ ձեռնարկում են բարձրանալ Արարատ լեռը և, այսպես կոչված, «շրջագայություն» են կատարում դեպի Արարատ՝ առանց նախապատրաստության: Խմբից միայն մեկին՝ Սիմոնովին է հաջողվում երեք քրդերի հետ հասնել գագաթ:

1888 թվականին լեռան գագաթ է բարձրանում Մարկովը՝ Սևանա լճի հայտնի հետազոտողներից մեկը:

90-ական թվականներին Մեծ Արարատի վրա բարձրանալու նպատակով ձեռնարկվում է 14 վերելք, որոնցից ինը պակասվում է հաջողությամբ:

Այն բանից հետո, երբ շվեյցարացի Լուիս Սելյաքը 1910 թվականին մի հաջող փորձ է ձեռնարկում գագաթը բարձրանալու, 1912 թվականի ամռանը 35 բնագետներ՝ Մ. Ռիկլիի ղեկավարությամբ, ուսումնական ճանապարհորդություն ձեռնարկեցին Շվեյցարիայից Կովկաս: Անիից խումբը գնացրով օգոստոսի վերջինց գալիս է Արտաշատ, ապա անցնելով ծանձաղած Արաքսը՝ մտնում «Մուրք լեռանը»: Խումբը, որը բաղկացած էր 17 մարդուց, և որի կազմում էին վարդապետ Մետրոյը՝ Էջմիածնից և մի գիտնական հայուհի, ուղեկցում էր քուրդ Ամեդե բեյը: Խումբը հաջողությամբ հաղթահարում է վերելքը և գիտական լուրջ ուսումնասիրություններ կատարում գագաթին ու լեռան վրա:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ սա վերջին վերելքն էր Արարատի վրա: Պատերազմի ողջ ընթացքում և դրանից հետո երկար ժամանակ Արարատ լեռան ճանապարհները փակվեցին լեռնագնացների ու հետազոտողների առաջ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դեպի Արարատ արշավանքների մի նոր ալիք սկսվեց: Պրոֆեսոր Էդ. Իմոֆը²⁵, 1954 թվականին թույլտվություն ստանալով, որոշում է այցելել ռազմական փակ գոտում գտնվող Արարատ լեռան տարածք: Իմոֆի, Քելեբրի և Էզլիի առաջին փորձն ընդհատվում է 4600 մետր բարձրության վրա: Շվեյցարական եռյակը, հաջող օրը շարունակելով ճանապարհը, օգոստոսի 15-ին հասնում է գագաթ:

1955 թվականին ֆրանսիացի Ֆ. Նավարրան, որ մինչ այդ, 1952 թվականին արդեն բարձրացել էր Արարատի գագաթը, որոշում է մեկ անգամ էլ բարձրանալ՝ այնտեղ Նոյի տապանը գտնելու հաստատ վճռակառությամբ: Այս անգամ նա իր հետ վերցնում է նաև որդուն: 4200 մետր բարձրության վրա սառույցների տակ նրանք գտնում են ընդարձակ մի քարանձավ: Պատահին այստեղ հայտնաբերում է տաշված փայտե տախտակներ, որոնք լավ պահպանվել էին լավային փոշու և քարակարկատային կիտվածքների մեջ: Նավարրան դրանք մեկնա-

քանեց իբրև փնտրված Նոյյան տապանի մնացուկներ: Հետը բերված 1,5 մետրանոց փայտի հետազոտությունը պարզեց, որ այն հինգ հազար տարեկան կաղնեփայտ է: Որքան կցանկանար նա այնտեղ գտնել այն, ինչ չէր կարող գտնվել այնտեղ, որպեսզի գտածոն համընկներ ըստ աստվածաշնչյան ավանդության 2528 տարի մեր թվարկությունից առաջ տեղի ունեցած ջրհեղեղի հետ: Անհասկանալի է մնում, իբրոք, թե որտեղի՞ց է հայտնվել փայտը, և ո՞վ է այն տաշել:

Այս արտառոց լուրով, որն այն ժամանակ տպագրեցին աշխարհի բոլոր թերթերը, էլ ավելի հարստացան լեռան մասին լեզնդները:

Մարիաննա Շոանս
Վերներ Շոանս

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Էնգելխարդտ Զ. Մ. (1779-1842)* – գերմանացի երկրաբան, Դորպատի համալսարանի հանրաբանության անբժինի վարիչ, ավելի ուշ՝ Յարսկոյե Սեյլի լիցեյի տնօրեն:

2. Դորպատից մինչև Արարատ լեռը օդային հետափորությունը կազմում է 2422 կմ, Պարոտտի անցած այդ նույն ճանապարհի երկարությունը կազմում է 3350 կմ:

3. *Ստրուվե Վ. Գ. (1793-1864)* – Դորպատի համալսարանի պրոֆեսոր, աստղագետ:

4. Դորպատը էստոնիայում ամենահին բնակավայրերից մեկն է: Էստոնական ըստրա Տարտուն գոյություն ունի վաղ միջնադարում: 1030 թվականին այն գրավում է ռուս մեծ իշխան Յարոսլավ Առաջինը և այնտեղ կառուցում Յուրև ամրոցը: Քաղաքը 11-րդ դարում կրկին անցնում է էստոնացիներին: 13-րդ դարում այն գրավում են գերմանացի ասպետները: Այնուհետև անցել է լեհերի, շվեդների իշխանության տակ: Պետրոս Մեծը, Լիֆլանդիայի հետ միասին, այս քաղաքը ևս գրավեց: 1763-1775 թվականներին հրդեհի ետևանքով ամայացում է: Նրա վերածնունդը կապված է Եկատերինա Երկրորդի անվան հետ: 1783 թվականին Դորպատը վարչական, առևտրական և մշակութային կենտրոն է էստոնիայում: 1918 թվականին վերանվանվում է Տարտու:

5. Բոլոր ժամանակային տվյալները բերվում են ըստ Հուլյան տոմարի, որն այդ ժամանակ գործածվում էր Ռուսաստանում (մինչև 1923թ.): Այն, ի տարբերություն Գրիգորյան տոմարի, 12 օրով ևս էր: Այսպիսով, մեկնումը Դորպատից տեղի է ունեցել 1829 թվականի ապրիլի 10-ին:

6. Տրոլիսնները թուրքմենների մի մասն են: Նրանց թվին են պատկանում նոգայները, կումիկները, կալմիկները, բաքարները և այլն:

7. Պարրոտի կողմից գործածվող երկարություն չափից միասնական չեն: Դրանք հիմնականում ունեն հետևյալ համաձայնությունը.

մեկ փարիզյան դյույմ = 27,07 մմ

12 դյույմ = մեկ ոտնաչափ = 32,48 սմ

վեց ոտնաչափ = մեկ թրիզո = 1,948 մ

ռուսական դյույմը ավելի կարճ է, այն ունի 25,4 մմ երկարություն:

8. Ներկայումս՝ Սվեդուդրադ:

9. Դեռևս Ստրաբոնի կողմից նկարագրված այս լեռնային ճանապարհը, որ կորել անցել է Կովկասը, երկար ժամանակ մնակ կամոնավոր երթևեկուրյան ուղին էր: Վերականգնվել է 1799 թվականին: 1801 թվականին սկսվում է ճանապարհի վերակառուցումն ու բարելավումը:

10. Այս ժամանակներում դեռևս նոր-նոր էին սկսվում անտիկ և միջնադարյան ճարտարապետական հուշարձանների և առևտարակ կառուցողական արվեստի հետազոտությունն ու հնագիտական ուսումնասիրությունը: Հայկական հին ճարտարապետության ուսումնասիրությունը սկսվում է միայն 19-րդ դարի երկրորդ կեսից, այս բնագավառում մեծ է հատկապես Մ. Ֆ. Բրուսիի ծառայությունը: Հետագայում Մ. Վ. Նիկոլսկու, Կ. Ֆ. Լևինան-Հաուպտի աշխատությունները հիմք են դնում համակարգի գիտական ուսումնասիրության:

11. Tiflis-ը, որ սկսվեց անց գոյություն ունի ԾՆԱԼԻՍ ձևը, այն ժամանակ Ռուսաստանի ծայրային Վրաստանի մայրաքաղաքն էր: Վրացներն նշանակում է տար ցուր: 19-րդ դարի սկզբներին քաղաքը դեռևս ուներ պարիսպներ, պաշտպանական ամրություններ: Բաղկացած էր հին և նոր քաղաքներից և երեք արվարձաններից: 1840 թվականին Թիֆլիս ուներ 19.000 բնակիչ և իր միատուկացով խիստ արելյան քաղաք էր:

12. 19-րդ դարում Ռուսաստանում միաժամանակ գոյություն ունեին բորադրանով և արծաթ ուռլիներ: Արծաթ մեկ ուռլին, օրինակ, 1884 թվականին հավասար էր 3,24 գերմանական մարկի, իսկ բորադրանով մեկ ուռլին հավասար էր մեկ գերմանական մարկի:

13. Ներկայիս Քասախ գետն է:

14. Հին գրականություններում Արարիի հովիտը պատկերվում է իբրև խիտ բնակեցված տարածք: Հատկապես 18-րդ դարում, մինչև ռուսական տիրապետության տակ անցնելը, բուրբերի և պարսիկների կողմից ուժեղ ճնշման են քարկվելով, տարածքի բնակչությունը մարդազրկված և մշակութային արժանական անկման է հասնում: Թուրքները Արարի ավազանը պատանակված Այրարատը, Եփրատի վերին հոսանքի ավազանի հետ միասին (Էրզրումի շրջակայքը) համարում է աստվածաշնչյան դրամատակարար և այստեղ ենթադրում հնագույն-մարդկային բնակատեղիներ: Հետագայ ուսումնասիրություններն են, փաստորեն, այստեղ հաստատում են երկրագործական մշակույթի շատ վաղ հետքեր՝ զարգացած ռոդոզան համակարգով:

15. Այստեղ իբրև գյուղ գնված Վարդապետաբլուր Պարրոտից առաջ ներկայացված է իբրև հայկական քաղաք: Հնում այս վայրում գոյություն է ունեցել Վարդգեսական բնակավայրը: Սկսած երկրորդ դարի կեսերից՝ քաղաքը կոչվել է Վաղարշապատ, իսկ 3-4-րդ դարերում եղել է Հայաստանի մայրաքաղաք:

ըր: Հետագայում նրա նշանակությունը կապվում է 4-րդ դարում կառուցված եկեղեցու հետ: 1945 թվականին քաղաքն անվանվում է Էջմիածին:

16. *Թավրեզի Ժ. Բ. (1605-1689)* – ֆրանսիացի ճանապարհորդ, առևտրական: 1631-33 թվականներին եղել է Հայաստանում:

17. *Շարդին Ժ. (1643-1713)* – ֆրանսիացի ճանապարհորդ, առևտրական:

18. Խաչատուր Աբովյանը, որը ծնվել է 1805 թվականին Քանաթեռում, Պարրոտի Էջմիածին ժամանելու տարում՝ 1829 թվականին, վաճառի դպիրն էր: Հայնի որ նա, բացի հայերենից, խոսում էր նաև ռուսերեն, պարսկերեն և բուրբերեն, կարողանալով պատկերով դառնում է Պարրոտի ուղևորից Արարատ քարձրանալու ընթացքում: Հետագայում Պարրոտը Խ. Աբովյանի համար Դորաթալիի համալսարանում սովորելու բուլտվություն ստացավ: Այստեղ Աբովյանը խորանում է ոչ միայն եվրոպական, հատկապես գերմանական մշակույթի ու լեզվի ուսումնասիրության մեջ, այլև իր վրա կրում պուշկինյան դարաշրջանի գրականական գործընթացի ողջ քարեքար ազդեցությունը: Վեց տարի անց վերադառնալով Անդրկովկաս Աբովյանը Թիֆլիսում հիմնում է առաջին հայկական դպրոցը: 1843 թվականին նա տեղափոխվում է Երևան: Նա ուղևորվեց էր այն բոլոր ճանապարհորդների, ովքեր 19-րդ դարի 40-ական թվականներին այցելում էին Հայաստան, հատկապես ցանկանում քարձրանալ Արարատ լեռը: Նա հայ նոր գրականության հիմնադիրն է: Հայերեն քարձրանել է Գյոթեի, Շիլլերի, Հունցրոսի, ինչպես նաև Կոլիովի, Կարամզևիի ստեղծագործությունները:

19. Յ. Ֆ. Էշտիցը, իբրև նավի քիմիկ, 1815-16 և 1823-26 թվականներին գերմանացել է Օտտո Կոցեբրոի՝ Հուսավոր Արևելք կատարած հետազոտական արշավախմբին:

20. Պարրոտի կողմից այստեղ տրված սուրբ Հակոբի վանքի նկարագրությունները մնում են իբրև միակ և մանրամասն, քանի որ 1840 թվականին վանքը կործանվեց երկրաշարժից: Մի քանի տարի րահին անց Մ. Վազներն այցելում է նույն վայրերը և նկարագրում Ակոտիի արքեի անաչացած հովիտը:

21. Երդոմանը հաստատված ցուցմունքների մանրամասն նկարագրությունից խուսափում ենք, քանի որ այսօր ոչ մեկն այնև չի կատարում Պարրոտի լեռը քարձրանալու իրողության վրա: Սակայն անհետաքրքիր է իմանալ, որ նրան ուղևորելով Ակոտիի գյուղացիներ Մ. Պոդոպյան և Օ. Ավվազյանը, որոնք Պարրոտիի հետ քարձրացել են մինչև գագաթը, իրենց դասական ցուցմունքներում հայտարարում են, որ գագաթը մինչև վերջ չեն քարձրանալ: Երկու գիմվորները Չալպանովը և Չղուրկեյնը, դրան հակառակ հաստատում են Պարրոտի ցուցմունքները, մինչև իր Աբովյանը, Դորապատում լինելով, ցուցմունք տալու հնարավորություն չի ունենում: Ակոտի գյուղի բնակիչների մեծ պահածը Պարրոտը քաջատարում է Նոյի լեռան անմտաշելիության նախապաշարմունքով, որով համակված էին տեղացիները:

22. Այբ է ծակում որսի կենդանիների առատությունը, որի մասին խոսում են Պարրուտը և ճրա ուղեկիցները: Հետագա ճանապարհորդներից ոչ մեկը, սակայն, մեճան տեղեկություններ չի հաղորդում:

23. Պորֆեսոր Ա. Արծրունին (1847-1998) Բեռլինի երկրաբանական ընկերությունում 1894 թվականին տված մի գեկուցման մեջ այն կարծիքն է զարգացնում, որ Փոքր Արարատի գագաթին, խառնաբանի վրա եղել է գերեզմանոց:

24. Վազներ Մ. (1813-1887) – գերմանացի ճանապարհորդ, երկրաբան, աշխարհագրագետ, բնագետ:

25. Իմինֆ Է. (1895-1980) – շվեյցարացի աշխարհագրագետ, Ցյուրիխի քարտեզագրական ինստիտուտի հիմնադիր և տնօրեն: 1954 թվականին բարձրացել է Արարատ լեռը:

ՔՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Թարգմանչի կողմից.....	5
Նախապատրաստություններ.....	7
Դրոպատից Կովկաս.....	11
Կալմիկական տափաստանում.....	14
Մանչից Թիֆլիս.....	20
Թիֆլիսում.....	26
Թիֆլիսից Էջմիածին.....	32
Այցելություն Էջմիածնի վանքին.....	43
Վերջին պատրաստություններ.....	54
Արարատը գրքերի մեջ և նկարներում.....	68
Առաջին ծանոթությունը լեռան հետ.....	79
Սուրբ Հակոբի վանքում.....	99
Երրորդ վերելք և հաղթանակ.....	106
Տիան արձագանքներ.....	117
Բնագիտական հետազոտություններ լեռան վրա.....	120
Հեռագրություններ սուրբ Հակոբի վանքում և Արաքսի հովտում.....	129
Ուղևորություն դեպի Փոքր Արարատ.....	145
Վերադարձ.....	156
Վերջաբան.....	170
Ծանոթագրություններ.....	183

ՖՐԻԴՐԻԽ ՊԱՐՐՈՏ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ

FRIDRICH PARROT

REISE ZUM ARARAT

ФРИДРИХ ПАРРОТ

ПУТЕШЕСТВИЕ К АРАРАТУ

Խմբագիր՝ *Ս. Ա. Թորոսյան*

Նկարիչ՝ *Գ. Վ. Մարիկյան*

Տեխ. խմբագիր՝ *Մ. Է. Ճանճապանյան*

Սրբագրիչ՝ *Մ. Գ. Ստեփանյան*

Համակարգչային շարվածքը՝ *Ն. Ա. Վարդանյանի*

Համակարգչային ձևավորումը՝ *Օ. Ղ. Թերզյանի*

Չափը՝ 84x108 1/32: Տպագրություն՝ Օջսեր: Տատեստակ՝

«Թայմս Արմենիան»: Թուղթ՝ օֆսեր: 11,75 տպ. մամ.:

Պատվեր՝ 66: Տպարանակ՝ 500: Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն՝ ՓԲԸ, Երևան-9, Տերյան 91
ЗАО "Издательство "Наири", Ереван - 9, ул. Терьяна, 91

«Նաիրի» հրատարակչության տպագրատուն, Կրկան-9, Իսահակյան 28
Типография издательства "Наири", Ереван-9, ул. Исаакяна, 28